ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՀԱՒԵՐ

Ա. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Զ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՃԱՌԵՐ

Երկրորդ վերանայված հրատարակություն

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Սուրբ Էջմիածին – 2021

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37
Ս 970

Հրատարակվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

Թարգմանությունը գրաբարից՝
Մարթա Արաբյանի

Ս. Հովհան Մանդակունի

Մ 970 Ճառեր / Ս. Հովհան Մանդակունի; Թարգմ.՝ Մարթա Արաբյան.– 2-րդ վերանայված հրատարակություն.– Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2021.– 288 էջ:

Սուրբ Հովհան Մանդակունին հարուստ մատենագրական վաստակ ունի. գրել է ճառեր, խրատներ, աղոթքներ, քարոզներ, մաղթանքներ, շարականներ, կանոններ: Հունարենից կատարել է թարգմանություններ: Այսօր էլ սուրբ հայրապետն իր խրատներով շարունակում է ուսուցանել, կրթել, դաստիարակել, քրիստոնյային վայել վարքի մղել իր զավակներին:

Մեր սուրբ հայրապետի խրատների ոչ միայն կարդացողը, այլ նաև գործադրողը լինենք, քանզի դրանք մեզ համար իբրև աստիճանավոր ճանապարհ են, որոնք երկինք են տանում:

Ճառերն ամբողջությամբ առաջին անգամ են գրաբարից թարգմանվել արևելահայերեն *(Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի ճառք, Ս. Ղազար, Վենետիկ, 1860)*:

ՀՏԴ 27
ԳՄԴ 86.37

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

Ա հրատարակությունը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

ISBN 978-9939-59-264-0
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ս. Հովհան Մանդակունի (թարգմանության առիթով) 7

ՃԱՌԵՐ

Ա. Թուղթ հանցավոր վարքի խոստովանության մասին 13
Բ. Թուղթ ապաշխարության մասին 23
Գ. Թուղթ Պահքի պնդության մասին.....35
Դ. Ընդունելի և ոչ ընդունելի աղոթքների մասին.....45
Ե. Թուղթ տնանկներին ողորմելու մասին 57
Զ. Պտուղների [նվիրաբերման], զոհաբերության և ողորմության մասին.....71
Է. Փոխ տալու և վաշխ վերցնելու մասին.....79
Ը. Աղքատներին մխիթարելու մասին 89
Թ. Թուղթ քահանաների՝ ժողովրդի վրա տեսուչ լինելու մասին 99
Ժ. Բամբասողների և վարդապետներին չդատելու մասին.....113
ԺԱ. Սիրո, մախանքի և նախանձի մասին.....123
ԺԲ. Բարկացկոտ բարք ունեցողների մասին.....131
ԺԳ. Ոխ պահողների և վրեժ լուծողների մասին..... 139
ԺԴ. Սակավ գողության մասին, որի համար չեն ապաշխարում..... 147
ԺԵ. Երդվելու չար սովորության մասին..... 153

ԺԶ. Հարբեցողների անօրինության մասին 161
ԺԷ. Անօրեն և դիվական թատերախաղերի մասին 169
ԺԸ. Թուղթ կնաթողների մասին 177
ԺԹ. Անասնամոլների, իգացողների
և արվամոլների մասին 183
Ի. Աստծու թշնամիներին չսիրելու և նրանց հետ
բարեկամություն չանելու մասին 193
ԻԱ. Կարկուտի ահավոր հարվածների մասին 201
ԻԲ. Սուրբ Խորհուրդին զգուշությամբ ու
երկյուղով մոտենալու մասին 213
ԻԳ. Մխիթարության թուղթ վախճանվածների՝
այս աշխարհից [մեկնածների] մասին 225
ԻԴ. Ողբեր 235
ԻԵ. Խրատի [խոսք] զանազան առաքինությունների
մասին 243
Պեսպես ախտերի մասին 245
ԻԶ. Թուղթ հմայության, գուշակության և անօրեն
կախարդների մասին 247
ԻԷ. Տեր Հովհան Մանդակունու կանոնները 269
ԻԸ. Քառասնօրյա պահքի մասին և նրա բաղդատությունը
զատկական քառասուն [օրերի] հետ 271
ԻԹ. Սուրբ Երրորդության և մեր Աստծու՝
Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին 275
Լ. Սիրո մասին 277
ԼԱ. Խրատի խոսք՝ ուղղված ճգնավորներին 281

Ս. ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Սուրբ Հովհան Մանդակունին հինգերորդ դարի մեր Եկեղեցու սյուներից է: Եղել է կրտսեր թարգմանիչների դասից: Ըստ մատենագիտական որոշ տեղեկությունների՝ եղել է Մովսես Խորենացու հասակակիցը: Լինելով իշխանազն ազատորդի՝ ամենայն հավանականությամբ ուսանել է սուրբ Սահակ կաթողիկոսի մոտ կամ սուրբ Մեսրոպ մեծ վարդապետի դպրոցում:

Ինչպես մեր մյուս թարգմանիչների, այնպես էլ Հովհան Մանդակունու մասին մեզ հասած ավանդությունները խիստ սակավ են ու անորոշ:

Նա ծնվել է Արշարունյաց Ծախնոտ գյուղում, հավանաբար 400 թվականին (մեր հին մատենագիրներից ոչ ոք որոշակի չի նշում նրա ծննդյան ճիշտ թվականը): 448-450 թթ. ձեռնադրվել է քահանա: Ղազար Փարպեցին Վահան Մամիկոնյանին հղած թղթում ծանուցում է, թե նա եղբորորդին էր մեծանուն Գյուտ կաթողիկոսի: Ըստ երկու հին և վավերական հիշատակարանների, որոնց առաջինի մակագիրն է՝ *Ժամանակք կաթողիկոսացն Հայոց*, իսկ երկրորդինը՝ *Շարադրութիւն հայրապետացն Հայոց*, նա Տիրոջ 471-472 թթ. ընտրվել է կաթողիկոս, իսկ 483-84-ին՝ կնքել իր մահկանացուն: Իսկ Հ. Բարսեղ Սարգիսեանը, իբրև հաստատուն հենակետ ունենալով Գյուտ կաթողիկոսի մահվան տարեթիվը, այն է՝ 484-485, և մյուս կողմից՝ Մանդակունու՝ նրան անմիջապես հաջորդած լինելը, սուրբ հայրապետի կաթողիկոսության թվականը նշում է 485, իսկ մահը՝ 498-499 թթ.:

Հովհան Մանդակունին եղել է իշխանական տոհմերից հավաքված այն ազատանի խմբի մեջ, որոնց մասին իր պատմության ԽԲ գլխում Ղազար Փարպեցին գրում է, թե՝ *«Ըստ քսելոյ իշխանին Սիւնեաց յառաջագոյն տայր (Յազկերտ) խաղացուցանել ի Տիզբոն»:*

Սեբեոսը, հիշելով Վահանի՝ Պերոզի դեմ տարած հաղթանակի մասին, ասում է, թե՝ «*Այս Վահան ժողովեաց (յետ պատերազմին) և զհարկս աշխարհին Հայոց և շինեաց եկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր պարսից*»: Այս եկեղեցիներից մեկը՝ Տեկորի Սուրբ Սարգիսը, դեռ կանգուն է՝ ի հիշատակ անմահ քաջերի Ե դարի արձանագրությամբ[1], որի մեջ Վահանի և Սահակ Կամսարականի անունների մեջ կարդում ենք նաև իր «արդար հոգու օրհնությամբ» նրանց հաղթությունը պսակողի՝ մեր սուրբ հայրապետի անունը:

Իբրև մեծագործ հայրապետ ու առաքինի հոգևորական՝ Մանդակունին նվիրվել է իր հոգևոր զավակների առավել քրիստոնեացման և իր Եկեղեցու բարեզարդման գործին: Նա հարուստ մատենագրական վաստակ ունի. գրել է ճառեր, խրատներ, աղոթքներ, քարոզներ, մաղթանքներ, շարականներ, կանոններ: Հունարենից կատարել է թարգմանություններ: Վարդան Արևելցին Սուրբ Գրոց թարգմանության մասին խոսելիս հիշատակում է նաև Մանդակունու գործակցությունը՝ ասելով. *«Եւ սա թարգմանեաց զԵրկրորդ Կորնթացուց թուղթն, զՅոհանն եւ այլ բազում օգուտս գործեաց ի կեանս իւր»*:

Այսօր էլ սուրբ հայրապետն իր խրատներով շարունակում է ուսուցանել, կրթել, դաստիարակել, քրիստոնյային վայել վարքի մղել իր զավակներին. «Սրտով սիրե՛նք Աստծուն և երկյուղով պահե՛նք Նրա պատվիրանները. Աստծուն սիրելը Նրա պատվիրանները սրտով պահելն է: Իսկ Նրա

[1] *Տես Հ. Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 132:*

պատվիրաններն այս են, որ ճշմարիտ սիրով սիրենք միմյանց... Քանզի եղբորը սիրելն ավելին է, քան մարգարեության հոգի ընդունելը, առավել բարձրագույն է, քան առաքելական կոչումը, մարտիրոսների պատվից պատվական է և բոլոր առաքինություններից ավելի վեր ու պատվված է երևում, իբրև իր վայելչությամբ փայլող թագավոր է ռամիկների մեջ:

Այնպիսի ծուլությամբ ու անհոգությամբ ենք ապրում, կարծես ո՛չ տանջանք կա, ո՛չ գեհեն, ո՛չ ահավոր Դատավոր, ո՛չ անողորմ դատաստաններ, ո՛չ գործերի քննություն, և ո՛չ էլ հաշիվ պիտի պահանջվի մեր խորհուրդների, մեր վարքի ու դատարկ խոսքերի համար: Ուստիև սրբությամբ և անմեղությա՛մբ ապրենք և փառքով ու պատվով երկինքը ժառանգենք և արժանանանք հասնելու խոստացված բարիքներին մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին վայել է փառք և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Մեր սուրբ հայրապետի խրատների ոչ միայն կարդացողը, այլ նաև գործադրողը լինենք, քանզի դրանք մեզ համար իբրև աստիճանավոր ճանապարհ են, որոնք երկինք են տանում:

Ճառերն ամբողջությամբ առաջին անգամ են թարգմանվում արևելահայերեն:

Մարթա Արաբյան

ՏԵԱՌՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ

ՀԱՑՈՑ ՀԱՑՐԱՊԵՏԻ

ՃԱՌՔ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

ՅԱՄԻ 1860 ՌՅԹ

ՍՈՒՐԲ
ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՃԱՌԵՐԸ



Ա. *Թռղթ հանցավոր վարքի խոստովանության մասին*

Ուրբ Հոգին ցանկացողներն ու աստվածային սերը բաղձացողներն սպասում են Աստծու Որդու գալստյանը և փափագում են անմահ փառքը, մշտապես խորհում են վերինը և հանապազ այնտեղի ուրախությունն են փափագում, արհամարհում, ուրանում են անցավոր [ամեն բան] և ամեն օր ավելի վեր են բարձրանում ոչ միայն հավատի ճշմարտությամբ, այլ նաև վարքի առաքինությամբ, միշտ զգոն են սրտի սրբությամբ և հանապազ պատրաստ են հոգիներն անարատ [պահելու], շարժվում և ապրում են աշխարհում, բայց ոչ այս աշխարհի հաճույքներով, այլ իբրև օտարներ, թափառականներ և ուրիշ աշխարհի մանուկներ՝ նեղվում ու մաշվում են բազում կարիքներից, զորանալով այն հույսով, թե՝ «Ուր ես եմ, այնտեղ և իմ պաշտոնյան կլինի» [Հովհ. ԺԲ 26]: *Այսպիսին են հոգևորների պատիվներն ու աստվածասերների պարգևները։*

Իսկ ես վիրավորվեցի չարի բազում նետերից և հաղթվելով՝ դատապարտվեցի. խոստովանում եմ իմ պարտությունն ու ծանուցում եմ իմ ամբարշտությունը, պատմում եմ իմ անթիվ մեղքերն ու արտասվում եմ իմ հավոր անօրինությունների համար։ Որովհետև վերքերիս ցավերն ստիպում են ինձ պատմել, և աղետներիս տագնապներն ինձ հարկադրում են պաղատել, դեղ որոնել վերքերիս և մշտապես արտասուքի վտակներ խնդրել, որոնցով լաց լինեմ մեղքերս և բժշկեմ վերքերս։ Ուստի և մեծ բաղձանքով հանապազ ցանկանում և ըղձալի տենչանքով հարաժամ հայցում եմ մարգարեական

ողբը, որպեսզի ձայնակից լինելով մարգարեին, ողբամ, արտասվելով՝ աղերսալի գորովի ձայնով միշտ բարբառեմ՝ ասելով, թե՝ «Երանի՛ մեկը իմ գլուխը բազում ջրերի շտեմարան դարձներ, իսկ աչքերս՝ արտասուքի հորդահոս աղբյուրներ, և միշտ՝ օրուգիշեր, լաց լինեի անդադար» [տես Երեմ. Թ 1], *դառնապես արտասվեի իմ ամբարշտության համար և ողբայի չարիքներս, իմ անօրինությունների բազմության համար լաց լինեի, միշտ ողբայի մեղքերիս համար, հեծեծեի անբավ հանցանքներիս համար, անթիվ պղծություններիս համար հառաչեի, ահեղ կործանմանս համար կոծեի և տանջանքներիս աղետների համար ողբայի դառնապես։ Որովհետև հանցանքներիս համար խղճմտանքը հանապազ խեղդում է ինձ, և չարիքներս հարաժամ չարչարում են ինձ. երբ նայում եմ իմ անթիվ մեղքերի բազմությանը, իմ ահեղ ախտերի անօրինությանը, որոնք մշտապես մաշում են մարմինս, խարշատում են ոսկորներս, ճզմում են սիրտս, գալարում են որովայնս, անձս դողում է երկյուղից, և հանապազ հալչում են բոլոր անդամներս։ Քանզի ողբում եմ վերքերիս ցավերի համար, բայց միտքս համառում է ապշած, «որովհետև գիտեմ բարին, բայց չարիք եմ գործում»* [տես Հռոմ. Է 19], *գիտեմ արդարությունն ու անօրինություն եմ գործում, խոսում եմ ճշմարիտը, բայց անիրավություն եմ խորհում, երևում եմ սրբություն, բայց աղտեղությանն եմ մերձենում, ճանաչում եմ ճշմարտությունը, բայց մոլորությանն եմ հարում, տեսնում եմ լույսը և խավարն եմ փափագում։*

Եվ այժմ ո՞վ պիտի լաց լինի, ո՞վ պիտի ողբա ինձ՝ մեղքերի մեջ մեռածիս և անօրինությամբ կործանվածիս, ամբարշտությամբ խավարի խորքերն ու անդունդներն ընկածիս համար, քանզի չարիքներս չարչարում, և պղծություններս սպանում են ինձ։ Եվ արդ, ինչպե՞ս լաց

լինեմ և կամ ինչպիսի՞ ողբով ողբամ անթիվ մեղքերիս բազմությունը, ես, որ իմ իսկ հանցանքների պատճառով եմ հիվանդացել և իմ իսկ ծուլության պատճառով եմ ցավագնել, որովհետև ինձ անմահություն խոստացավ, իսկ ես մնում եմ մահվան մեջ, վերև՝ երկինք հրավիրեց, իսկ ես դժոխքի անդունդն եմ իջնում, փափագելի դրախտը պատրաստեց, իսկ ես խոցոտող փշերն ընտրեցի, մշտնջենավոր կյանք ու փառք [տվեց], իսկ ես իմ մեղքերով սպանեցի ինձ։ Եվ այժմ ո՞ր սուգը կամ ո՞ր ողբը բավական կլինեն՝ այս ամենը ողբալու, ինչպիսի՞ լացն ու արտասուքը, ինչպիսի՞ հառաչանքն ու պաղատանքը, առաքինության ինչպիսի՛ ջանքերը կբժշկեն իմ վերքերը, որոնք անթիվ են ու անհամար։ Իսկ իմ անձը հեղգանում ու ծուլանում է, ահավոր մեղքերի բազմությունից անճարացած՝ թուլանում է և անշեջ գեհենի հրից սարսելով՝ սարսափում։ Քանզի հիշելով ահեղ դատաստանի մեծ Օրն ու սոսկալի ատյանի արհավիրքը՝ անձս դողում է երկյուղով, միտքս ահով զարհուրում է, սիրտս ողբալ է պահանջում, աչքերս արտասուքներ են բաղձում. ահավոր ատյանի ահը շտապեցնում է ինձ ապաշխարել, բայց չարի պատրանքները հանապազ ծուլացնում են ինձ։ Ահա նեղված եմ երկուսից էլ և տագնապած եմ ամեն բանով, որովհետև օրերս մշտապես մեղքերի մեջ անցկացրեցի, կյանքս վատնեցի անօրինությամբ, ոչ մեկին բարիք չարեցի, արդարություն երբևէ չգործեցի, այլ՝ բոլոր անդամներս ապականելով՝ կորստյան մատնեցի բազմադիմի հանցանքների մեջ. բերանս պղծեցի բամբասանքներով, լեզուս աղտեղի դարձրի դատարկաբանությամբ, ականջներս՝ չար բաներ լսելով, աչքերս՝ աղտեղի բաների նայելով, սիրտս՝ զազրելի խորհուրդներով, անձս անպարկեշտ ընթացքով մաշեցի հանապազ։ Եվ մարմինս՝ առողջ, իսկ սիրտս ճշմարիտ չպահեցի

բնավ, այլ մեղքերով՝ ցավերի և հանցանքներով՝ հիվանդությունների մեջ [նետեցի]։ Կամենում եմ զղջալ և խոստովանել, բայց թշնամին հապաղել է տալիս, կամենում եմ ապաշխարել, բայց թշնամին ծուլացնում է, կամենում եմ Աստծու առջև ընկնել, բայց թշնամին հեռացնում է, կամենում եմ պաղատել, խնդրել ու աղաչել, բայց թշնամին կարծրացնում է, կամենում եմ ողբալ ու արտասուքներով լաց լինել, բայց թշնամին ցամաքեցնում է, կամենում եմ ողորմություն տալ աղքատին, բայց թշնամին իմ աղքատությունն է ինձ հիշեցնում, կամենում եմ պահքով մաշել ինձ, բայց թշնամին մարմնով տկարանալս է ինձ հիշեցնում, կամենում եմ խոնարհվել ու եղբորը հնազանդվել, բայց սիրտս համառում է հպարտությամբ, քանզի ինչով որ կարող եմ մեղքերս քավել, [նույնով] թշնամու չարության որոգայթն եմ առջևս գտնում։

Եվ արդ, նեղված եմ ամեն բանով, և անձս հեծեծում է հանապազ. հիշելով մեղքերիս բազմությունը՝ դողում եմ սարսափով և խորհուրդներիս զգրելիությունից վարանում. անմաքրությանս նայելով՝ ողբում եմ հանապազ, անօրինությունս մտաբերելիս տարակուսանքների արհավիրքներն են ինձ վրա ընկնում, և երկունքի ցավերն են ինձ զարկում։ Որովհետև մշտապես տեսնում եմ ահավոր ատյանի ահը, մեծ ու ահավոր բեմի սարսափները, փողի սոսկալի ձայնը, հրեշտակապետի ահալի բարբառը, ծովածավալ հրի բորբոքումն ու ամբողջ երկրի վրա տարածումը, արդարների վեր բարձրանալը և մեղավորների մնալը, բոլոր մեղավորների հավաքվելը և իրենց խոսքերի ու գործերի համար հաշիվ տալը, Դատավորի սոսկալի դեմքը, անխնա դատաստանի Օրը, մեղավորների չար ամոթը և հավիտենական դառն ու անվերջանալի տանջանքները։ Եվ հեծեծում ու դառնապես լաց եմ լինում այս ամենի համար՝ անդադար ողբալով իմ մեղ-

քերը, որովհետև տեսնում եմ, որ խիստ սարսափելի են գեհենի արհավիրքները, տեսնում եմ սոսկալի աղետները, ուր ո՛չ ունեցվածքն ու աղաչանքը կօգնեն, ո՛չ լացն ու արտասուքը, ուր ո՛չ հեծություն և ո՛չ հառաչանքներ են պետք, ո՛չ արդարները կխնդրեն, և ո՛չ սուրբերը կբարեխոսեն մեղքերով ընթացողների համար։ [Այնտեղ] անծանոթ ես ծանոթներին և հեռավոր ես մերձավորներին, ատելի ես սիրելիներին և թշնամի ես բարեկամներին, ամբողջովին մենակ ես և օտար ես բոլորին։ Ոչ ոքի աղաչել չես կարող. ոչ ոք քեզ չի ճանաչում, աղիողորմ կողբաս ու լաց կլինես, և ոչ ոք չի խոնարհվի դեպի քեզ։ Սաստիկ ծարավից կտոչորվես, և ոչ ոք քեզ չի գթա, հանապազ կայրվես և խորովումից [ազատվելու] հնար չես գտնի բոլորովին, մթով պատած՝ հնոցի հրի, խավարով պատած՝ անլույս գեհենի մեջ ես, խավարային գբի մեջ՝ գարշահոտ, որդնալից տարտարոսի ներսում, ուր ներքևից հուրն է բորբոքվում, վերևից հրի ահավոր հոսանքներն են հորձանք տալիս, հորդում իջնում են հրեղեն առատահոս գետերը,ուր խավարը շոշափելի է, և ամենևին չես կարող տեսնել որևէ մեկին, քանզի սև մեգով պատած և կայծակների մեջ ընկած՝ լաց ես լինում ու ողբում ես անդադար, և միայն քո նեղությունն ես կոծում, որովհետև ահաւոր ցավերի աղետների մեջ կարծում ես, թե միայն դու ես տանջվում ու չարչարվում։ Հանապազ հեծում ու առանց հանգստանալու ու մխիթարվելու դառնորեն լաց ես լինում. վշտեր, նեղություններ ու մշտնջենավոր տառապանքներ, դադար չունեցող տանջանքներ ու անդիմանալի տագնապներ, անպատմելի ցավեր ու նմանը չունեցող կսկիծներ, վարանած ես ու ամբողջովին տարակուսած։ Քանզի այնտեղ խոսքերը միայն ճիչն ու վայն են, պաղատանքն ու ողոքանքը, լսում ես միայն ախ ու հառաչանք, հեծեծանք ու տագնապ, անդադար լաց

2 - *Ս. Հովհան Մանդակունի, Ճառեր*

ու ողբ. չկա ողորմություն, այլ միայն խաշվում ես՝ միշտ վշտերի մեջ, հանապազ կարիքների մեջ հալումաշ ես լինում արտասվելով ու պաղատելով, որոնք ոչ ոք չի լսում, և պաղատանքներն էլ չեն ընդունվում, որովհետև անցել է ժամանակը։ Այլ՝ ա՛յժմ է լաց լինելու և ողբալու ժամանակը, ա՛յժմ է ախի ու հառաչանքի ժամանակը, ա՛յժմ է աղաչելու, պաղատելու, թողություն խնդրելու ժամանակը, որովհետև ա՛յժմ է արտասուքների շահն ու օգուտը, ողորմության սերմերն ու ապաշխարության պտուղը, [ա՛յժմ է] ժամանակը հառաչելու և ողորմություն խնդրելու։

Եվ արդ, այժմ է, որ մեր մարմնի սուղ նեղությունը պիտի փոխանակենք անվերջանալի ցավերի ու տանջանքների հետ, որպեսզի այս աշխարհում սակավ պահքով ու չարչարանքով փրկվենք գեհենի բորբոքված բոցից ու ահեղ կայծակներից, փոքր-ինչ տքնելով և աղոթելով՝ փրկվենք հրեղեն հորդահոս գետերից, փոքր-ինչ տրտմելով՝ փրկվենք ահավոր հնոցներից ու չարաժանիք ու խածոտող որդերից, այստեղ [մեր մեղքերի համար] ախով ու հառաչանքով այնտեղ ազատվենք դառը տանջանքներից և անլույս խավարից, այստեղ փոքր-ինչ լաց լինելով ու արտասվելով՝ այնտեղ փրկվենք մշապես լաց լինելուց ու հանապազ ողբալուց, և այստեղ մեկ ապաշխարության փոխարեն այնտեղ ազատվենք միգապատ խավարից, դառը մահից և հավիտենական ամոթից։

Արդ, այս ամենը մտաբերելով, ո՛վ իմ բազմամեղ անձ, մի՛ հեղգանա պահք պահել, մի՛ ծուլանա աղոթել, մի՛ դադարիր զղջալ, մի՛ հապաղիր խոստովանել, մի՛ վհատվիր ապաշխարելիս, մի՛ հոգնիր ողորմություն տալուց, մի՛ դադարիր լաց լինելուց, մի՛ հանգստանա ողբալուց, մի՛ սպասիր վախճանին և հույսդ մի՛ դնիր ծերությանդ վաստակին, մի՛ համարիր, թե երկար ես ապրելու այս

աշխարհում և մի՛ ասա, թե՝ հետո կապաշխարեմ։ Թշնամին գող է ու խաբող. այդպես հապաղել տալով՝ խաբում ու կորստյան է մատնում քեզ։ Ասում ես. «Այժմ [մեղք] գործեմ, հետո կապաշխարեմ»։ Ասում ես. «Երիտասարդությանս օրերին հանգստանամ, հետո կապաշխարեմ։ Այսօր վայելեմ, իսկ վաղը պահք կպահեմ, այսօր հեշտանամ, հետո կպարկեշտանամ, այժմ հավաքեմ, ասում ես, հետո կբաժանեմ աղքատներին»։ Այսպիսին են թշնամու պատրանքները, որոնցով խաբում ու կորստյան է մատնում մեզ՝ տարեցտարի ուշացնելով և ժամեժամ հետաձգելով գործել բարին։

Եվ արդ, մի՛ խաբվեք այսպիսի պատրանքներից. անհայտ է [ձեր] վախճանի օրը, այս աշխարհից ելքն աներևույթ է. երկունքի նման վրա կհասնի, և չես հասցնի զղջալ և ապաշխարել, գողի պես գիշերով վրա կհասնի և կոծել ու ապաշխարել չի տա, հավորսի թակարդի նման հանկարծակի կբռնի և թույլ չի տա լաց լինել, հեծեծել և ողորմություն անել։ Առյուծի պես կհարձակվի, կգոչի ու կհափշտակի, և ամենևին չես հասցնի [փրկվել]։ Եվ արդ, ա՜նձ իմ, ի՞նչ պիտի անես և կամ ի՞նչ պիտի գործես, դո՛ւ, որ խորհում ես բարին, բայց չես անում, կամենում ես ողորմություն տալ և հապաղում ես, ասում ես, որ զղջում ես, բայց արտասուքով չես լվանում անկողինդ, ինչպես Դավիթը, ով նաև ասում էր. «Մոխիրը որպես հաց կերա և ըմպելիքիս արտասուք խառնեցի» [Սաղմ. ԺԱ 9], *ով ամբողջ գիշեր հեծեծում ու դառնորեն լաց էր լինում անդադար։ Հոժարում ես պահք պահել, բայց ո՛չ Նինվեացիների պես քուրձ ես հագնում և ո՛չ էլ մոխրի վրա ես նստում, ովքեր նաև «ետ կանգնեցին իրենց չար ճանապարհներից և անօրինություններից, որ իրենց ձեռքով էին կատարվում»* [Հովնան Գ 8]։ *Ախորժում ես արտասվել ու լաց լինել, բայց այն պոռնիկի պես*

պաղատելով չես ողբում [տես Ղուկ. Է 38], *կամենում ես ողորմություն անել նեղության մեջ եղողներին, բայց ոչ այն այրի կնոջ պես, որ իր ամբողջ ունեցածը տուեց* [տես Մարկ. ԺԲ 42]:

Արդ, այսպիսին է ապաշխարության ջերմությունը, որ չի խնայում ո՛չ ունեցվածք և ո՛չ մարմնի չարչարանք, այլ նեղում է, մաշեցնում, տառապեցնում և միայն մեղքերի թողություն և հոգու՝ ախտերից բժշկություն է խնդրում, որոնցով և մենք պիտի քավենք մեր մեղքերը և պիտի բժշկենք մեր հոգու վերքերը։ Քանզի կարելի է և՛ պահքով ու ծոմաջան տքնությամբ մեր մեղքերը քավել, կարելի է և՛ աղոթքներով ու խնդրվածքներով ու գորովագին պաղատանքներով մեր մեղքերը քավել, կարելի է քուրձ հագնելով, մոխրի վրա նստելով և գետնախշտի անկողնով մեր մեղքերը քավել, կարելի է լաց լինելով, ողբալով ու տնանկներին գթալով մեր մեղքերը քավել, կարելի է ախուվախ անելով, հառաչելով ու անդադար հեծեծանքներով մեր մեղքերը քավել, կարելի է հեզությամբ, խոնարհությամբ ու հնազանդությամբ քավել մեր մեղքերը, կարելի է աղքատությամբ, ինչքեր չունենալով ու մերկությամբ քավել մեր մեղքերը, կարելի է բարի վարքով և բոլորին բարերարություն անելով քավել մեր մեղքերը, կարելի է եղբայրասիրությամբ ու Աստծու երկյուղով մեր մեղքերը քավել, կարելի է ուղիղ խրատով ու վարդապետությամբ քավել մեր մեղքերը, ըստ այն խոսքի, որ ասում է, թե՝ «Ով [մեղավորին] իր մոլորության ճանապարհից ետ է բերում, կփրկի իր հոգին մահվանից և կծածկի իր մեղքերի բազմությունը» [տես Հակ. Ե 20]: *Այլև միայն ճշմարիտ դարձն ու ուղիղ խոստովանությունը բավական են փրկության ու արդարության համար, ըստ այն խոսքի, որ ասում է. «Նախ դու խոստովանի՛ր քո անօրինությունները, որ արդարացվես»* [Ես. ԽԳ 26]:

Եվ այժմ ի՞նչ ունես ասելու, ո՛վ իմ բազմամեղ անձ, եթե չես բժշկվում այսքան դեղերով. փութա՛, մի՛ հապաղիր, զարթնի՛ր դառը նիրհիցդ, դարձի՛ր կորստյան տանող ճանապարհիցդ, փարատի՛ր անգիտությանդ խավարը, սթափվի՛ր անզգա մոլորությունիցդ և ե՛կ դեպի քեզ, հեռացրո՛ւ քեզնից մեղքերիդ սաստկությունը, թեթևացրո՛ւ անօրինությանդ բեռների ծանրությունը, քավի՛ր անթիվ հանցանքներիդ բազմությունը, բժշկի՛ր չարաչար վերքերիդ խոցոտումը և լվա՛ ամբարշտությանդ գարշահոտ տիղմը, որպեսզի սրբված ու մաքրված հոգով, լուսազարդված ու պայծառ մարմնով, համարձակ դեմքով ու զվարթերես անցնես տիեզերական ահավոր ու անհամար բանակների բազմության միջով, կանգնես Աստծու ահավոր ու մեծ Բեմի առջև և աշխարհատես հրապարակում Նրանից լսես այն քաղցր ու երանելի խօսքը, թե՝ «Եկե՛ք, իմ Հօր օրհնածնե՛ր, մտե՛ք և ժառանգեցե՛ք երկնքի բարիքների վայելչությունը» [տես Մատթ. ԻԵ 34] *Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ, Որին փառք և պատիվ հավիտյանս հավիտենից. ամեն։*

Բ. *Թռղթ ապաշխարության մասին*

Բժիշկների դեղերն ու [բույսերի] արմատները առողջացնում են մարմնի ցավերը, իսկ ապաշխարության արտասուքները բժշկում են հոգու մեղքերի վերքերը, մանավանդ, երբ ապաշխարում են ողորմությամբ և տնանկներին գթալով։ Քանզի բժիշկների դեղերին խառնված շատ արմատներ կան, որոնք դադարեցնում են հիվանդությունները, բայց կա [մի բան], որն առավել ազդեցիկ է ցավերը փարատելու համար։ Այդպես նաև սրա՝ ապաշխարության դեղերի մեջ մեղքերը մաքրելու համար բազում ճգնություններ կան, բայց մեղքերը քավելու և վերքերը բժշկելու համար ամենակարևորն ու ամենաազդեցիկը բոլոր առաքինությունների մեջ ողորմությունն է. [ողորմությունը]՝ ողբերի, հառաչանքների ու գթագին արտասուքների հետ. չհապաղե՛նք դրանցից, շտապե՛նք ապաշխարությամբ դառնալ մեղքերից և մեր ունեցվածքից ողորմություն տալը չթողնենք վաղվա օրվան։ Որովհետև գող է այն օրը, հափշտակող է վախճանի օրը, անտեսանելի է այս աշխարհից ելքը, հանկարծահաս է ու ստիպող, չի թողնում աղաչել ու խնդրել, լաց լինել ու ողբալ, ողորմություն տալ ու ապաշխարել։ Բռնում է որոգայթի պես, հափշտակում է առյուծի նման և առանց ողորմելու գերեվարում է՝ որպես գերու։ Հառաչում ես արտասվելով ու հեծեծում ես ողբալով, բայց օգուտ չես գտնում։ Որովհետև ժամառժամ [հապաղելով]՝ կորցրեցիր ապաշխարությանդ ժամանակը, որով կարող էիր թեթևացնել մեղքերիդ բեռներն ու մաքրել անօրինություններիդ տիղմը, արդարներին երամակից, երկնավոր Հոր որդի և անանց բարիքների ժառանգորդ լինել։

Եվ այժմ կա՛մ ըղձալի փափկության փափագով և կա՛մ ահավոր տանջանքների սպառնալիքների [սարսափով] շտապե՛նք ապաշխարել։ Բեռների վրա բեռներ չկապե՛նք և ցավերի վրա ցավ չավելացնե՛նք։ Թող մեզ չխաբի սատանան, թե՝ երկար է այս կյանքը, թող մեզ պատրանքի մեջ չգցի երիտասարդության օրերին՝ [ներշնչելով], թե՝ ծերության ժամանակ կապաշխարենք։ Չսպասե՛նք աննրելի վախճանին և անողորմ պահանջողներին, անվաստակ չծուլանա՛նք ու անվարձ չգնա՛նք։ Այլ քավե՛նք մեր հանցանքները և ապաշխարե՛նք մեր մեղքերը, նախանձողնե՛ր լինենք քաջերի քաջությանն ու առաքինիների առաքինությանը, որոնց սրտերը սրբված են, իսկ մտքերը՝ լուսավորված, որոնք ամեղ են մեղքերից ու անարատ են անօրինություններից, որոնք մշտապես վերինն են խորհում ու հանապազ երկնայինի մասին են հոգում, որոնք հողեղեն մարմին ունեն և հրեշտակային կենցաղավարություն, որոնք կարիք չունեն վարդապետական գրքերի և ուղեցույց օրինակների, որովհետև գրքերից առավել է նրանց մտքի ուղղությունն ու վարքի առաքինությունը։ Եվ արդ, եթե միմյանց հետ համեմատենք մեր և մեր երանելի նախնիների գործերը, կտեսնենք մեր վատթարությունն ու առաջին սրբերի քաջությունը։ Նրանք իրենց անձերը նվիրեցին Քրիստոսի սիրո համար, արհամարհեցին իրենց ունեցվածքն ու հայրենիքը։ Աստվածպաշտության համար նրանք թողեցին իրենց ծնողներին, կանանց ու զավակներին, միայն թե չզրկվեն Աստծուց։ Իսկ մենք, որ մեզ մի բան ենք կարծում, այդպիսին չենք. այլ մեր մարմնի հանգստության համար անում ենք ամեն ինչ. հարստանում ենք, մեր սիրած բաներն ավելի բարձր ենք համարում, քան Աստծու պատվիրանները։ Եվ ի՞նչն ենք սիրելի համարում. այգու

որթատունկն ու բանջարանոցի բույսերը, պարտեզի ծառերը, գինու կարասն ու չնչին անոթներն առավել հարգի ու պատվական ենք համարում, քան Աստծու սերը։ Նրանք հալածվում էին, քարշ էին տրվում, նախատվում էին, բանտերի ու կապանքների էին մատնվում Քրիստոսի համար, իսկ մենք Քրիստոսի համար ո՛չ նախատինքներն ենք տանում, ո՛չ թշնամիների խոսքերին ենք համբերում և ո՛չ էլ եղբոր զայրույթն ենք հանգցնում քաղցրությամբ, այլ ավելի ենք գազանանում նրա դեմ։ Դարձյալ՝ Քրիստոսի համար ժուժկալության կապանքներով չենք կապում մարմնական ոչ մի ցանկություն, Քրիստոսի համար մեր տան մեջ իսկ մեկ ամբողջ օր չենք բանտարկվում, ո՛չ արտասուքներով հանգցնում ենք մեղքերի բոցը և ո՛չ ժուժկալությամբ, իբրև երկաթե եղունգներով, մեզնից քերում ենք մեր անօրինության թարախը։ Նրանք [իրենց] թշնամիներին էին սիրում, մենք [մեր] բարեկամներին էլ ենք ատում, նրանք իրենց հալածողներին էին օրհնում, իսկ մենք մեր բարերարներին ենք բամբասում, նրանք իրենց հայրերից ստացած ունեցվածքն էին բաժանում, իսկ մենք ջանում ենք ձեռք բերել՝ ինչ որ չունենք։ Նրանք այս երկրավորից երկինք փոխվեցին՝ հրեշտակական կրոնավորությամբ կենցաղավարելով, իսկ մենք երկնավոր կենցաղավարությունից երկիր ընկանք և սանդարամետական եղանք։ Նրանք, կատարելով Քրիստոսի պատվիրանները, իրենց մեջ Աստծուն բնակեցրին, իսկ մենք, զանց առնելով Նրա պատվիրանները, բանսարկու սատանայի բնակատեղի եղանք։ Քանի որ ամբողջովին սանձակոտոր եղանք դաշտում, քաղցր լուծը հեռու նետեցինք մեր պարանոցից, թեթև բեռը սասանեցրինք մեր թիկունքից և ամեհաբար ենք շրջում երկրում։ Ո՜վ մեծ աղետ, ո՜վ վշտալի տարակու-

սանք, քանզի հեռու ենք ուղիղ ընթացքից և զուրկ ենք առաքինի վարքից, շեղված ենք թշնամու որոգայթներով ու շաղախված ենք հանցանքների տիղմով։ Կարոտ ենք խրատի, վարդապետության և ուղեցույց օրինակների. թերևս երկյուղենք ահավոր հրի սաստիկ սպառնալիքից և իմանանք տարացույց օրինակների աղետներից, մարմնականով հոգևորը ճանաչենք և երևացողներով աներ-ևույթն իմանանք, ահեղ տանջանքների ահով և անանց բարիքների փափագով զղջանք։ Հոգու վերքերի ցավերի վրա ապաշխարելու համար պետք է օրինակ վերցնել մարմնական հիվանդությունների ցավերը, թե ինչպես է անձը մշտապես ցավագին ողբում մարմնի ցավերի, նեղությունների համար, հանապազ դառնորեն լաց լինում ժամանակավոր հիվանդությունների սաստկացման համար, ահավոր աղետների տարակուսանքից հառաչում, անդադար հեծեծում, և նրա պաղատանքների ու վայերի ձայնը շարժում է [անգամ] անողորմների գութը։

Քանզի ցավերի նեղության սաստկությունից ո՛չ բերկրում է սիրելիների սիրով, ո՛չ զայրանում է ատելիների թշնամանքից, ո՛չ հիշում է կյանքի փափկությունը և ո՛չ մտաբերում գեղեցկության վայելչությունը. տառապալից ցավերի պատճառով անտեսում, ուրանում է այս աշխարհի ամբողջ պատիվն ու պայծառությունը։ Այլ մշտապես սգում, արտասվում է և ողբագին պաղատում, միայն վշտերի նեղությունների համար է վշտագին պաղատում, որի պատճառով նրա մերձավորներից շատերը, նրան խղճալով՝ արտասվում են և շտապում են բժիշկներ ու դեղեր փնտրել՝ միառժամանակ ցավերը փարատելու համար, և ցավի պատճառած տագնապները փարատելու համար բժիշկներին վարձ են խոստանում և դեղեր գնում։

Այս բոլոր նեղությունները լինում են այս ապականացու մարմնի համար, որը թեև բժշկվում է, սակայն պետք է մեռնի։ Իսկ ի՞նչ անենք գեհենի ահավոր կրակի մշտնջենավոր ցավերի համար, որ պատրաստ պահվում է մեր բազում վերքերով պատված հոգիների համար, որոնք միշտ հիվանդացել են մեղքերի մեջ և անբժշկելիորեն ընկել հանցանքների մահիճը. մեր մեղքերի անօրինությունները հանապազ խոցոտում ու վիրավորում են մեզ, մեր աղետների ցավերի տառապանքները առավել սաստիկ են չարչարում մեզ։ Եվ չենք հառաչում, հեծեծում և հանապազ Աստծուն պաղատում, չենք ողբում մեր մեղքերի ցավերը, չենք լվանում մեր հանցանքների վերքերը և անդադար լաց լինելով՝ չենք արտասվում մեր անօրինությունների և մշտնջենավոր տանջանքների արհավիրքների համար, այլ հանապազ վերքեր ենք ավելացնում և ապաշխարության սպեղանիով չենք դարմանում, ո՛չ բժիշկներ ենք փնտրում, ո՛չ դեղեր որոնում, ո՛չ մեր ունեցվածքն ենք ծախում, ո՛չ վարձ ենք խոստանում ծանր վերքերի և անօրինության սաստիկ ախտերի բժշկության համար, երբ ցավերի մեջ են ոչ միայն մեր աղիներն ու որովայնը, այլև մեղքերի վերքերի մեջ է մեր ամբողջ մարմինը։ Մեր աչքերը վերքերի մեջ են՝ անպարկեշտ նայվածքով այս ու այն կողմ դեգերելով, մեր ականջները ցավերի մեջ են՝ անվայելը ախորժելով, մեր լեզուները ցավերի մեջ են բամբասանքով ու երդմամբ, մեր սրտերը՝ չար ցանկությամբ ու պիղծ խորհուրդներով են ցավերի մեջ, մեր ձեռքերը՝ հափշտակելով ու զրկելով, մեր ոտքերը՝ թատերական խաղերի ու անպարկեշտ տեղեր գնալով. մեր ամբողջ մարմինը ջրգողել է մեղքերով և այտուցվել անօրինությամբ։ Եվ այսպես, ցավերի և մեղքերի վշտերի մեջ ենք մեր բո-

լոր անդամներով, չենք մոտենում հոգիների բժշկներին և չենք խնդրում ապաշխարության դեղ, չարչարվում ենք մեղքերի ախտերից և ապաշխարության արտասուքներով չենք բժշկվում։ Ո՛չ ողբով սրբում ենք մեղքերի դառը թարախը և ո՛չ արտասուքով լվանում ենք չար նեխածության փտությունը. եթե աղոթքներով, պահքով և ողորմությամբ այստեղ չբժշկենք դրանք, այնտեղ մեր առջև է ահեղ հուրը և գեհենի բորբոքուն, անշեջ բոցը, պատրաստ են և սպասում են հրահոսանք հրեղեն գետերը և խավարով լի, մութ տարտարոսները, դառը դահիճները և անողորմ չարչարանքները, աղետների բազում տառապանքները և աններելի տանջանքների ահագին արհավիրքները, որոնք պահվում են ահեղ դատաստանի մեծ Օրվա համար։

Եվ արդ, մեզ սպասում է այս ամենը, իսկ մենք աներկյուղ զվարճանում, փափկանում ու մեղանչում ենք, ամբողջովին երկրավոր [կյանքի] մեջ թաղված՝ անհոգաբար անում ենք ամեն ինչ. ուտում ենք, խմում, անհոգաբար քնում, կուտակում ենք անմահների ու մշտնջենավորների պես և երբեք չենք մտաբերում այն Օրը. ո՛չ դատաստանի արհավիրքներն ենք հիշում և ո՛չ հավիտենական դառը ամոթը։ Ամենևին չենք հիշում նաև, թե ինչ ենք կրելու մահվանից հետո, մեծ զգուշությամբ և հանապազ երկյուղելով չենք մտաբերում պատերազմը ամենահնար սատանայի, որն անդադար գաղտնի մարտնչում է [մեզ հետ] և հարաժամ աներևույթ վիրավորում մեզ։ Չենք զգում և չենք զգուշանում նրա դժնդակ նետերից, կարեվեր հարվածներից, այլ անհոգաբար վայելում ենք մեր ցանկությունները և առանց երկյուղելու հանգստանում։ Այնպիսի ծուլությամբ ու անհոգությամբ ենք ապրում, կարծես ո՛չ տանջանք կա, ո՛չ գեհեն, ո՛չ ահավոր

Դատավոր, ո՛չ անողորմ դատաստաններ, ո՛չ գործերի քննությունև ո՛չ էլ հաշիվ պիտի պահանջվի մեր խորհուրդների, մեր վարքի ու դատարկ խոսքերի համար։

Եվ այս ամբողջ ծուլությունը սատանայի չար հնարներից է [առաջ գալիս]. նա մեզ հետ է ընթանում մեր ամբողջ կյանքում և մահվան որոգայթ է դնում այնտեղ, որովհետև սատանան ոչ միայն չարիքով է շարչարում, այլ նաև ուղիղ վարքն է դեպի չարություն դարձնում և երբ մարդուն տեսնում է բարի գործերի մեջ, նրա առջև մահվան որոգայթ է դնում։ Ինչը որ փոքր ես համարում և չես շտապում ապաշխարել, նրանո՛վ էլ կորստյան է մատնում. քանզի կորստյան է մատնում [պահք] պահողին կեղծավորությամբ և ցուցադրաբար ճգնել [տալով], աղոթականին՝ Աստծու առջև արհամարհանքով կանգնե[ցնելով] և նրա մտքերը դրսում դեգերեցնելով, ողորմածներին՝ հիվանդներին տեսության չգնալով։ Կորստյան է մատնում նաև վարդապետներին՝ կեղծավորությամբ ուսուցանել [տալով], որ մեծ երկյուղով չէ, որ ուսուցանում են Աստծու կամքը։ Սատանան կորստյան է մատնում նաև սաղմոսերգուներին, եթե նրանք չեն զգուշանում սնափառության չար ախտից, այլ ցուցադրաբար և գովեստի արժանանալու համար են ասում, Աստծու պատգամները չեն խոսում և Նրա օրհնությունները չեն երգում, ովքեր փառավորողների պես չեն պատվում [Աստծուն]։ Սատանան կորստյան է մատնում նաև լսողներին՝ Աստծու պատգամները և վարդապետական խոսքերը ծուլությամբ և արհամարհանքով լսել [տալով]։ Սատանան կորստյան է մատնում նաև աշխատողների տաժանելի չարչարանքը՝ տրտնջալ տալով և իրենց ծույլերից վեր՝ բարձր կարծել տալով, երբ իրենց արած ծառայությունները նշում և բոլորին հայտ-

նում են, թե ինչպիսի ճիգ է պահանջում իրենց կատարած գործը. նրանք վաստակավորների նման հանգիստ չեն գտնի, այլ կհանդիմանվեն՝ իբրև տրտնջացողներ ու դատապարտվածներ։ Սատանան կորստյան է մատնում հարուստներին, որոնք միայն ժողովելիս են ժիր լինում և ոչ թե տնանկներին բաշխելիս, որոնք ոչ թե իրենց ինչքերով փրկվել պիտի կարողանան, այլ պիտի դատապարտվեն՝ իբրև անողորմներ ու ագահներ։ Սատանան կորստյան է մատնում և աղքատներին՝ հեծեծել ու տրտնջալ [տալով] և գոհանալ չտալով Աստծուց, Ով կամենում է մշտնջենավոր [հավիտյաններում] հարստացնել նրանց։ Սատանան կորստյան է մատնում արհեստավորներին, եթե նրանք իրենց կատարած գործի համար առավել վարձատրություն են վերցնում և կամ նախանձով ու չարակնությամբ իրենց արվեստն ու տաղանդը չեն սովորեցնում նրանց, ովքեր սովորել են խնդրում, նրանք պիտի մեղադրվեն իբրև տաղանդապարտներ։ Սատանան կորստյան է մատնում իշխաններին, որոնք ծանր իշխանություն են բանեցնում և գազանացած սրտով ահաբեկում են ռամիկներին և կամ մեծաշուք տեսքի ու կաշառքի համար գողանում են արդարների իրավունքը։ Կորստյան է մատնում և նրանց, ովքեր [իր] իշխանության ներքո են, եթե իբրև Աստծու սպասավոր՝ չեն հնազանդվում և երկյուղով պատիվ չեն հատուցում իրեն։ Կորստյան է մատնում հարկահաններին հարկապահանջներին, եթե արքունական հրամանից ավելին են պահանջում և նեղում են նեղվածներին...[1] *և բոցավառում են գեհենի կրակը։*

Եվ արդ, սատանան այսպես մահվան որոգայթներ է պատրաստում բոլորի համար, հեռացնում ուղիղ կար-

[1] Օրինակում մեկ տող անընթեռնելի է, որը չկա այլ օրինակներում:

գից ու աստված[ահաճո] վարքից. չար պտուղն ու անօրեն վարձը, որով կարծում են, թե արքայությունը կընդունեն, դրանցով տանջանքները պիտի ժառանգեն։ Սատանան այնչափ հափշտակեց ու հիմարացրեց մեզ, որ մինչև իսկ աղօթելիս, պահք պահելիս և ողորմություն անելիս է մեղանչել տալիս։ Իսկ [մենք] չենք ջանում մեզնից թոթափել սատանայի թմբիրը և պաղատանքներով, ապաշխարությամբ հաշտեցնել Տիրոջը։ Քանզի ապաշխարությունը կարող է սպիտակեցնել մեղքերից սևացածին, մաքրել ցեխի մեջ թաթախվածին, լուսավորել մեղքերով խավարածին և ցրել անօրինության դեզերը։ Այս իմանալով՝ սատանան մոտենում է նրան, ով կամենում է ապաշխարել և ծանրացնում է նրա միտքը, որպեսզի չհոժարի սկսելու ապաշխարել։ Որովհետև գիտի, որ եթե սկիզբը ուղիղ լինի, ապա նաև ապաշխարության շարշարանքը քաղցր կդառնա, ուստի և ապաշխարության հենց սկզբում բոլոր տեսակի հնարներով զգուշանում է՝ ծուլացնելով և օրեօր հետաձգել տալով։

Եվ մենք, իմանալով այս, շտապով փութա՛նք սկսելու ապաշխարել։ Միայն սկսելիս է այն ծանր թվում, հետո գործը հեշտանում է և ընթանում քաղցր ու ցանկալի։ Ինչպես որ այբուբենը [նոր] ուսանել կամեցողը չի համարձակվում սկզբում դպրին հետևել և կրկնել տառերի անուններն անգամ, այլ կմկմալով, ընդհատաբար և բեկբեկելով է [արտաբերում], բայց հետո գիրը գրի հետ կապելով՝ վանկեր է կազմում, այդպես էլ ապաշխարությունն է. եթե միայն սկզբում համբերում են, խոստովանությամբ շնորհներ են ընդունում, իսկ շնորհներով մտքերը լուսավորվում են, և իմանում են տանջանքների երկյուղը, երկյուղով ստանում են արտասուք և սուգ, սուգը պահք պահել է սովորեցնում, պահքը աղոթքների

է տանում, աղոթքները հոժարեցնում են ողորմություն տալ, և սակավ-սակավ բարձրանում ես աստիճանից աստիճան և դյուրությամբ բարձրանում ես երկինք։ Բայց կարող ես արդարանալ նաև սրանցից մեկով միայն, եթե կամենաս։ Քանզի շատերը միայն ուղիղ խոստովանությամբ փրկվեցին, ոմանք փրկվեցին սգով ու տրտմությամբ, ոմանք քրձով ու մոխրով միայն ապաշխարեցին, ոմանք լաց լինելով ու արտասուքով հաշտեցրին Տիրոջը, ոմանք պահքով ու աղոթքներով ապաշխարեցին, ոմանք ողորմությամբ Աստծու ողորմությունն ընդունեցին, ոմանք մարդասիրությամբ և տկարներին ծառայելով ապաշխարություն գտան, ոմանք խոնարհությամբ և հնազանդությամբ մեղքերի թողություն ընդունեցին։ Քանզի ինչպես որ զանազան են մեղքերի ճանապարհները, այդպես էլ զանազան են ապաշխարության դեղերը, որոնցով կարող ես բժշկել մեղքերի բոլոր հիվանդությունները ո՛չ տարիների թվով և երկար ժամանակով, այլ միայն ճշմարիտ դարձով և սրտով չարից հեռանալով կարող ես արդարանալ։

Եվ արդ, իմանալով այս ամենը՝ ապաշխարությամբ քավե՛նք մեր մեղքերը, քանզի մեղքերի պղծությունները ոչ միայն ահեղ [դատաստանի] Օրն են դատապարտում, այլ նաև այստե՛ղ իսկ չարչարում են խղճմտանքով. [և ապրում է մարդը] գաղտագողի շրջելով և մարդկանցից վախենալով, ծանոթներին կասկածելով, սիրելիներից ամաչելով, թշնամիների նախատինքներով, դատավորների սպառնալիքներով, բանտի և պատիժների վախով, Աստծու պատվիրաններից հանդիմանվելով և ահավոր տանջանքների սարսափով։ Իսկ այնտեղ գնալով՝ ո՞վ կարող է պատմել մշտնջենավոր անվերջանալի աղետների նեղությունները, ուր այրվում ու մաշվում են ամոթով ու

նախատինքներով։ Մինչդեռ ապաշխարության պտուղները վայելում ես ոչ միայն երկնքում, այլ նաև այստեղ իսկ ընդունում ես հարյուրապատիկ ուրախությամբ, անհոգությամբ, պատվիրանների գովությամբ, անխղճմտանք մտքի ուրախությամբ, առանց մարդկանցից խրտնելու, առանց ծանոթներին կասկածելու, առանց թշնամիներից պարսավվելու, առանց սիրելիների առջև ամաչելու, համարձակ՝ հրապարակներում, առանց դատավորներից երկյուղելու, զերծ պատուհասներից, խաղաղ կյանք, հեշտ մահ, մշտնջենավոր և փափագելի փափկությունների ակնկալիք։ Իսկ այնտեղի ուրախությունների և անբավ բարիքների վայելչության մասին ո՞ր բերանը կարող է պատմել։

Արդ, ա՛յս է արդարության վարձը, ա՛յս է ապաշխարության պտուղը։ Ուստի և մի՛ վախենա մեղքերիդ բազմությունից մտնել ապաշխարության մեջ. միայն ընկի՛ր Աստծու առջև. դատավոր չէ, այլ՝ Բժիշկ, սպանող դահիճ չէ, այլ՝ գորովագութ Հայր։ Ընդառաջ է ելնում քեզ, ինչպես անառակ որդուն, ընկնում է ապաշխարության դարձողիդ պարանոցով, երկնավոր Հայրը համբուրում է քեզ՝ բերանը աչքերիդ [հպելով], հրամայում է քեզ հագցնել առաջին՝ անմեղությանդ պատմուճանը, կոշիկներով կրկին ամրացնում է քեզ ընդդեմ թշնամու թույնի։ Պատարագով Աստծու Որդու մարմնով ես կերակրվում, ընտիր ծառաները քեզ հետ վայելում են պատարագից, և բոլոր սրբերը երգում ու պարում են քո՝ անառակությունից դարձի համար։ Որի վրա հիացած՝ առաջին՝ թլպատված ժողովուրդը փոքր-ինչ նախանձում է, որ չմտավ Աստծու Որդու զենման ուրախության մեջ. է Աստված մարմնով ելավ և եկավ նրա մոտ՝ աղաչելու Հորը հավատացող հրեային՝ հավատի կոչել ապաշխարող

հեթանոսին և ուրախանալ իր անառակ եղբոր դարձով, միասին վայելել Աստծու Որդու զենումից և ժառանգել անանցանելի բարիքների վայելչությունները Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ։Նրան փառք և պատիվ հավիտյանս հավիտենից. ամեն։

Գ. *Թուղթ Պահքի պնդության մասին*

Զգու, օգտակար ու կարևոր է պահքի պնդությունը և ժուժկալությունը որկրամոլությունից, մանավանդ, երբ խոհեմությամբ են մերձենում նրան և իսկապես ճանաչում են, թե որքան շահավոր է պահքի պնդությունը։ Իսկ նրանք, ովքեր չեն զգուշանում դրանում, այժմ իսկ տեսանելի օրինակներով պետք է իմանան պարկեշտության մաքրությունն ու որովայնը լցնելու վնասակարությունը։ Նրանք գիտեն, որ ինչպես երաշտացած վայրերը տեսակ-տեսակ բույսեր չեն բուսցնում, այդպես էլ ցամաքած որովայնները պիղծ խորհուրդներ չեն ծնում։ Եվ ինչպես աղբոտ հողն է խառնիխուռն բույսեր բուսցնում և աճեցնում, այդպես էլ կերակուրի աղբով փափկացած որովայններն են մշտապես աղտեղի խորհուրդներ վեր հանում։ Քանզի որդերին գեջ հողն է սնում, իսկ պիղծ ախտերը՝ գիջացած որովայնը։ Քանի որ նրանք, ովքեր փափկանում են համադամ [կերակուրներով], նաև զանազան խորհուրդներ են իմանում, իսկ նա, ով սակավ կերակուրով է բավականանում, քաղցի նեղության մասին է խորհում, քանզի թանձրացած որովայնները մաքուր խորհուրդներ չեն ծնում, այլ մարմնի զգայարանները պահում- պատում են ծածկույթի տակ։ Նրանք, ովքեր ծառայում են իրենց որովայնին, անհնարին է, որ լինեն Աստծու հավատարիմ ծառաներ։ Իսկ նրանք, ովքեր նրբանում ու սրբանում են պահքով, ոչ միայն սրբում են իրենց անօրինությունների պղծությունը, այլ նաև իրենց մեջ են բնակեցնում սուրբ Աստծուն։

Եվ արդ, այսպես մեծ է պահքի պնդությունը և պարկեշտության առաքինությունը. այն զսպելով՝ դադարեցնում է մարմնի բոլոր անդամների ցանկություններն ու աղտեղի խորհուրդները և ստեպ-ստեպ մտքերից հալածում դևերի՝ խորհուրդների միջոցով հարձակումը, որոնք կամենում են պղտորել ու պղծել մաքրվածների սրտերը։ Որովհետև պահքի պնդությունը, իբրև երկաթյա ջղերով, ամուր է պահում առաքինի կենցաղավարությունը և հաստատուն հավատը, քանզի հզոր աշտարակ է թշնամու դեմ և ամուր պարիսպ՝ սատանայի բոլոր նետերի դեմ։ Եվ որովհետև մեր բնության համար խիստ կարևոր է պահքի առաքինությունը, և բազում թերություններ շտկվում են պահքի խոնարհությունից, այն ժամանակվանից իսկ, երբ մարդուն ստեղծեց, [Աստված] պահքի պնդությամբ պարսպեց մեր բնությունը և առաջին մարդու համար իբրև առաջին պատվիրան դրեց ամուր պահքը՝ չճաշակել ծառից։ Քանզի եթե [առաջին մարդը] պահեր պահքի պատվիրանը, կժառանգեր անախտ, անմահ ու անմեղ կյանքը և երկնքում՝ երկնային բարիքները։ Քանզի շատերը, ովքեր պահեցին պահքի պնդությունը, բազում նեղություններից փրկվեցին։

Սույն պահքի պնդությամբ նաև մեծն Դանիելը փրկվեց առյուծների ժանիքներից, որովհետև գազանի բնությունը պատկառեց մոտենալ պահողի սուրբ մարմնին։ Եվ որովհետև [Դանիելն] արգելեց իրեն և չմոտեցավ թագավորի սեղանին, որը պիղծ զոհերի պատճառով աղտեղի էր դարձել, արգելվեցին նաև գազանները և չմոտեցան պահողի սուրբ մարմնին։

Սույն պահքի պնդությամբ և երեք մանուկները փրկվեցին բորբոքված բոցից, [որովհետև] հանգցրեցին կերակուրի մոլի ցանկությունը և բավականացան սակավ ոսպով, հանգցրեցին հնոցում բարձրացած ահեղ

հուրը, որովհետև այնտեղ՝ ներսում, զովացուցիչ ցողը մխիթարեց պահողներին, իսկ դրսում բորբոքված բոցը սաստկացավ զեխացածների շուրջը և քառասունինը կանգուն տարածվելով՝ սպանեց բոլորին։

Սույն պահքի պնդությամբ և Նինվեացիների բազմամբոխ քաղաքը փրկվեց, որովհետև նրանք դարձան իրենց բոլոր անօրինություններից և չար ընթացքից, քրձով ու մոխրով ետ դարձրեցին Աստծու խստացած բարկությունը։ Եվ քանի որ նրանք չխնայեցին իրենց անձերը՝ նեղելու դրանք պահքով ու պաղատանքներով, ողբալով և հեծեծանքներով լաց լինելով, Աստված խնայեց նրանց հոգիներն ու մարմինները (տես Հովն. Գ 3)։

Սույնով իսկ՝ պահքի պնդությամբ, և Մովսեսն ընդունեց աստվածադիր օրենքները, որովհետև քառասնօրյա պահքի մաքրությամբ արժանի դարձավ մոտենալու Մաքուրին. և խոսում էր Նրա հետ՝ իբրև բարեկամի (տես Ելք ԻԴ 12-18)։

Սույն պահքի պնդությամբ սրբվեց և Թեզբացի Եղիան և իր բերանի խոսքով բացեց ու փակեց երկինքը և երկնքից կրակ իջեցրեց (տես Գ Թագ. ԺԸ)։

Էլ ի՞նչ ասեմ պահքի պնդության մասին.տերունական Անմեղ ու Անարատ մարմնին անգամ պետք եղավ պահքի պնդությունը՝ մեզ օրինակ լինելու համար։ Դրանով նաև առաջին հայրերն առաքինացան և անմարմին հրեշտակների վարքը մարմնի մեջ ցույց տվեցին. երկրում մեռցրին երկրավոր ցանկությունները և երկնքում կենդանացրին իրենց հոգիները, մերժեցին անցողիկ հաճույքները, որպեսզի ընդունեն անանցանելի բարիքները, հեռացան տնից ու ստացվածքներից, չարչարվեցին բազում նեղություններից և չարչարվելով՝ ամբողջովին մեռցրին իրենց անձերը քաղցով, ծարավով ու նվաստ հագուստներով։ Նրանցից շատերը բավականացան խո-

տեղեն կերակուրով, ոմանք էլ միայն միրգ ուտելով անցկացրին իրենց կյանքը։ Ոմանք միայն ծառերի ծայրերն ու բույսերի արմատներն էին ուտում, ոմանք սակավ հունդերով էին ժուժկալում, ոմանք՝ ժամանակ առ ժամանակ երեք նուկի հացով, ոմանք՝ նկանակի մեկ չորրորդ մասով, և ուրիշները՝ մեկ վեցերորդ մասով, ոմանք ցորենի թեփը իրենց կերակուր դարձրին, ոմանք խոզերի ուտելիքով՝ եղջերենու պտղով էին դադարեցնում քաղցի պատճառած նեղությունը։ Ոմանք օրվա հոգևոր կերակուրներին հաղորդությունն էին բավական համարում մարմնի կարիքների համար և ուրիշ կերակուրների վայելքը ամբողջովին մերժված էր նրանց կողմից։ Ոմանք ժամանակ առ ժամանակ էին ճաշակում, ոմանք՝ երկու, ոմանք էլ՝ երեք օրը մեկ անգամ, ոմանք յոթ օր հետո, և որ ավելին է, հիշում էին կերակուրի անհրաժեշտությունը և կշռով էին այն ճաշակում, նաև ջուր էին չափով խմում։ Անդադար հեծությամբ աղոթում և ծառայությունն էին կատարում, ողջ գիշերն արտասուքով ու ողբով էին անցկացնում և ողբալի խնդրվածքներով ու հառաչանքներով հաշտեցնում էին Աստծուն։ Ոմանք պարանների վրա ընկած էին ննջում, ոմանք ոտքի վրա տքնելով էին գիշերն անցկացնում, ոմանք՝ քիչ նստելով, ոմանք մինչև առավոտ ձեռքները վեր բարձրացրած էին պահում, ոմանք, իրենց պարանոցը խոնարհեցրած, մինչև լուսանալը ժուժկալում էին, ոմանք հարյուրավոր աղոթքներ էին ընդօրինակում։ Ոմանք լռում էին, ոմանք խոսում էին միայն սաղմոսներ, ոմանք առանց իրենց հարցնելու չէին բարբառում, ոմանք ընտրությամբ միայն ընկերոջ օգուտի համար էին խոսում։ Մշտաջան ճգնություններով ու պաղատանքներով էին իրենց օրերն անցկացնում և հոգևոր խրատի համար օտար աշխարհներ էին անցնում, ինչպես բարեկամների՝ սիրում էին թշնամիներին

և խոնարհությամբ իրենց ընկերոջն իրենցից ավելի լավ էին համարում։ Հնազանդության համար անգամ կրակի էին մատնվում և դեպի գազաններն էին դիմում, իրենց անձերն ընկերոջն էին ծառայեցնում և իրենց արդար վաստակով կերակրում էին խեղճերին, տնանկներին ու հիվանդներին։ Չափով էին պահում իրենց մարմինը և իրենց խորհուրդների վրա սանձ էին դնում և այնպես զանազան և մեծ նեղություններով ամուր պահքի [տեսակներ] հորինում, քանի որ այս ամենն են նեղ դուռն ու անձուկ ճանապարհը, որ տանում են դեպի հավիտենական կյանք, որով և՝ ճշմարիտ և մաքուր պահեցողությամբ բազում նշաններ ու հրաշքներ էին գործում. դևերին էին հանում, հիվանդներին էին բժշկում, մեռելներին էին հարություն տալիս, ջրերի վրայով էին քայլում և արեգակի ընթացքն էին դադարեցնում ։ Ամուր պահեցողությունը սրանից առավել մեծ զորություններ էր գործում. քանզի առաջին սուրբերը, երբ կամենում էին մոտենալ Աստծուն, նախ՝ պահքով մաքրվում էին և ապա՝ մերձենում էին Մաքուրին և աստվածատես էին լինում։ Իսկ նրանք, ովքեր հեռացան պահքից, հեռացան Աստծու շնորհներից և բազում չարերով չարչարվեցին։ Ահա Ադամը հեռացավ ամուր պահեցողությունից և դրախտից դուրս՝ փշաբեր երկիրը ելավ։ Նոյի ազգի ծնունդները հեռացան ամուր պահեցողությունից և համայնաջինջ ջրհեղեղով խեղդվեցին ու մեռան։ Եբրայեցի ժողովուրդը հեռացավ ամուր պահեցողությունից, և ընտիրները մեռան։ Սոդոմի բնակիչները հեռացան պահքից, և հրե անձրև ու կայծակ տեղաց նրանց վրա։ Եվ բոլոր նրանք, ովքեր արհամարհեցին պահքը, արհամարհվեցին Աստծու կողմից և հեռացան Նրա ողորմությունից։

Բայց հարկ է, որ պահողները [զինված] լինեն խոհեմությամբ,քանզի սատանան կորստյան է մատնում և՛

պահք պահողներին, և՛ պահողների պահքը, եթե բամբասի անպարկեշտներին և կամ իրեն ուրիշներից առավել բարձր ցույց տա, կամ կերակուրները պիղծ համարի և կամ էլ եթե կեղծավորությամբ պահի. իբրև թե ինքը ուրիշների աչքում ծածկում է իր պահքի պնդությունը, որպեսզի սնապարծ ու կեղծավոր չերևա, բայց կամենում է, որ նրանց կողմից հռչակվի իր ժուժկալությունը։ Եվ եթե ոչ ոք չի իմանում, ապա ինքը կամենում է խստացնել [իր ճգնությունը] պահքի պնդության պատրվակով, որպեսզի իմանան ու զարմանան իր համբերության վրա։ Այսպիսի պահքը չի սրբում ու արդարացնում, այլ պղծում է ու կորստյան մատնում։ Բայց եթե մեկը ժուժկալի կերակուրներով, իսկ մյուս անդամներով չպահի, զուր և ապարդյուն է ջանում։ Այս է, որ ասում եմ. եթե նա չպարկեշտացնի իր լեզուն, չզգուշանա աչքերով, ականջներով, խորհուրդներով, մտքերով, ընկերոջ հետ ոխ պահի, եղբոր հանդեպ ատելություն ունենա և կամ մեկին կեղծավորաբար ցույց տա, թե սիրում է, խոնարհաբար չծառայի ընկերոջը, պատիվ և իշխանություն ցանկանա և կարծի, թե ինքը պահք է պահում, այնպիսին հույժ ապշության և սատանայական խորհուրդների մեջ է։ Քանի որ ոչ թե խոնարհ պահք է այն, այլ խաբեություն ու կեղծավորություն. զուր են նրա ջանքերնու վաստակ չունի նա, որ հրում այրվում և ջրում աղվում է մշտապես, որին ցեցն ապականեց, և գողերը կտրեցին ու տարան, և ոչ մի օգուտ չունեցավ այնպիսի պահքի մրցությունից, այլ հույժ պատժի ու պատուհասի արժանացավ։ Այստեղ պատժվում է կեղծավոր պահքով, իսկ այնտեղ արդար դատաստանում դատապարտվելով՝ չարչարվում է հնոցի հրում և որկրամոլներից ու հարբեցողներից առավել է դատապարտվում, որովհետև անգետ համարեց ամե-

նագետ Աստծուն չարաչար ու կեղծավոր խստակրոնութեամբ։

Ոմանք էլ կան, որ երբ կամենում են պահքի մեջ մտնել, շտապում են լվացվել ու օծվել, խճողում են իրենց պորտն ու որովայնը, շվայտանում են որկրամոլությամբ ու արբեցությամբ, ապա մտնում են պահքի պնդության մեջ։ Եվ արդ, ի՞նչ անվանենք այդպիսիներին՝ պահողնե՞ր, թե՞ հարբեցողներ, պարկեշտնե՞ր, թե՞ որկրամոլներ, ճգնավորնե՞ր, թե՞ զեխացողներ, որովհետև անհնարին է պղծությամբ սրբություն գտնել և մեղքերով դեպի արդարությունը ելնել, և ոչ ոք պոռնկությամբ կուսություն չի ստանում և զեխությամբ ու արբեցությամբ չի ընդունում պահքի սրբություն։ Որովհետև անհնարին է այսպես լինել, թե՝ նախ պոռնկանամ, ապա կուսանամ, և կամ՝ արբեցությամբ զեխանամ ու շվայտանամ, ապա մտնեմ պահքի սրբության մեջ։ Քանզի անհնարին է, որ պոռնիկը կույս դառնա, արբեցությամբ զեխացողը՝ պահք պահող և ճգնող, որովհետև կույսը կուսությամբ է կուսության պսակն ստանում, այլ ոչ՝ պոռնկությամբ, և պահք պահողը ժուժկալությամբ է ընդունում պահքի վարձքը և ոչ արբեցությամբ, զեխությամբ և որկրամոլության շվայտությամբ։

Կան նաև ոմանք, որ քառասնօրյա պահքին ապաղաս[1] են ասում. այդ շաբաթներից կեսը կարևոր են անվանում, պահում և ճգնում են սրբությամբ, իսկ մյուսները ապաղաս են անվանում և թուլացնում են պահքի պնդությունը և անակնկալ կերպով ճաշակում փափուկ կերակուրներից և շատակերությամբ լուծում են քառասնօրյա սուրբ ու երևելի պահքը։ Այս քառասնօրյա կարևոր պահքը նաև Աստծու Որդին պահեց՝ մեզ օրինակ

[1] Պահքը լուծել, պահք չպահել:

լինելու համար և այն ժամանակ չանվանեց ապաղաս։ Նույն քառասնօրյան (քառասունը) պահեց նաև Մովսեսը լեռան վրա և չանվանեց ապաղաս։ Նույն քառասունը անապատում՝ լեռան վրա, պահեց Եղիան, և չանվանեց ապաղաս։ Նույն քառասունը և մենք մեր տկարությամբ օրըստօրե կատարում ենք պահքով, և մեզ վայել չէ քառասնօրյա պահքն ապաղաս անվանել և լուծել սուրբ պահքի պնդությունը։ Քանզի պահքի սկզբից մինչև նրա ավարտը պահք է փափկությունից, եթե կամենում ես ճգնել և պահել, իսկ եթե կամենում ես շատակերությամբ լուծել, ոչ թե թեթև ապաղասը լուծեցիր, այլ՝ կարևոր պահքը, որովհետև ապաղաս ծույլերն ու ոչ կատարյալներն են անվանում, այլ ոչ թե՝ պարկեշտներն ու պահողները։

Ոչ միայն կերակուրներից [հրաժարումն է] պահք անվանվում, այլ նաև բոլոր մեղքերից հեռանալը, որովհետև պահք են նաև բերանի լռությունը և անհարկի՝ առանց իրեն հարցնելու խոսելը։ Պահք է նաև անընչությունն ու աղքատությունը և ավելորդ բաների մասին չհոգալը, այլ օրվա պետքը փնտրելը և նույնը Աստծուց խնդրելը։ Պահք է խոնարհությամբ իր տեղում նստելը և փուչ մեկի պես չշրջելը՝ անառակությամբ թափառելով և դրամաշորթությամբ։ Պահք են փափկություններից հրաժարվելը, խեղճ, ողորմելի հագնվելը, մարմինը ճնշելը և նվաստացնելը՝ առանց լվանալու և օծելու։ Պահք է քրջոտ հագուստներով միայն մերկությունը ծածկելը և ցրտից պաշտպանվելը։ Պահք է խոնարհելն աչքերը՝ անամոթ չնայելու, ականջները՝ [անամոթություններ] չլսելու, սիրտը՝ պիղծ խորհուրդներ [չխորհելու]։ Պահք է պատիվ և իշխանություն չհանգանակելը, չբարկանալը, չաղաղակելը, չնախանձելը, վրեժ չփնտրելը և իրեն ընկերոջ մոտ չարդարացնելը։ Պահք է չագահանալը, մար-

դահաճ չլինելը, հագուստներով սնապարծ չդառնալը։ Պահք են խոնարհությունն ու հնազանդությունը և սուրբ սրտով բոլորին սիրելը։ Պահք է կարճատև՝ միայն քնի կարիքը լրացնող քնով քնելը և հետո արթնանալով՝ գործելը կամ աղոթելը և քնի ցանկություն չունենալը։

Արդ, այս ամենն է ճշմարիտ պահք և առավել, քան կերակուրի պակասեցումը, սրանք և սրանց նման բաները պետք է պակասեցնել պահքի ժամանակ, և ապա միայն ընդունելի կլինի կերակուրների պակասեցումը։ Նաև կերակուրների պակասեցումը ո՛չ միապես [պետք է լինի], այլ ըստ յուրաքանչյուրի կարողության. ոմանք օրվա մեջ մեկ անգամ, ոմանք՝ երկու, ոմանք՝ երեք, ոմանք էլ յոթ օրը մեկ անգամ են ճաշակում պարկեշտությամբ, ըստ յուրաքանչյուրի կարողության։ Ոմանք բավականանում են միայն բանջարով, ոմանք՝ միայն հունդերով, ոմանք սակավ հացով, ոմանք ավելի շատով և անպաճույճ թանիկն էլ են ավելացնում, ոմանք իրենց զրկում են գինուց, ոմանք՝ թանից, ոմանք՝ հացից են իրենց զրկում և փափուկ և համեղ կերակուրներից են խսպառ հրաժարվում և բավականանում են միայն մեկ տեսակի ոգեպահիկ կերակրով, որ միայն իրենց կենդանությունն է պահում, այլ ոչ մարմինն ու արյունն ավելացնում, որոնք բորբոքում են ախտալի ցանկություններ։ Եվ այսպես [ժուժկալեցին]՝ սակավ ուտելով, սակավ խմելով, սակավ քնելով և անդադար աղոթելով։ Մանավանդ հարկ է, որ պահքի օրերին որովայնիցդ զրկելով՝ աղքատներին տաս այն, որպեսզի դու քաղցես, իսկ քաղցողը կշտանա, և քո մեղքը քավվի։ Ա՛յս է սուրբ և Աստծու կամքին համապատասխան պահքը, և սրանո՛վ են ընդունելի լինում վշտամբերությունն ու ճգնությունը, որոնք բժշկում են մեղքերով վիրավորվածին, փրկում են սատանայից գերվածներին, կանգնեցնում են անօրինությամբ կործանվածին, վեր

են բարձրացնում ամբարշտությամբ հիվանդացածին, սրբում են պղծություններով աղտոտվածին, լուսավորում են մոլորությամբ խավարածին, պահողներին մաքրում ու արդարացնում են բոլոր հանցանքներից և մեծապայծառ լույսով կանգնեցնում են Աստծու ահավոր և լուսավոր բեմի առջև։ Եվ նրանով ժառանգում են անանց բարիքներն ու վայելչությունները մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք հավիտյանս. ամեն։

Դ. *Ընդունելի և ոչ ընդունելի աղոթքների մասին*

Ստեր մտքերն ամփոփելով՝ հասկանանք ճառիս խոսքերը, երևացող բաներով ճանաչենք անտեսանելիները և իմանանք, թե ինչպիսի ահուդող ու ծանր պատիժներ են [սպասում] մեղավորներին Դատավորի առջև իրենց մեղքերի ամոթով կանգնելու ժամանակ։ Ինչպես են այլագունում նրանց երեսները, ինչպես են սոսկում, սարսափում, ահից դողում ահեղ Դատավորի դիմաց և [ինչպես են] գլխիկոր, աչքերը խոնարհած և լեզուները կապված կանգնում Նրա առջև։ Իսկ եթե հանդգնում են աղաչել ու խնդրել, սրտի երկյուղով ու անհամարձակ լեզվով հիվանդաձայն բարբառում են և մեծ աղերսանքով ցավագին պաղատանքներ մատուցում, արտասվում, աղաչում, խնդրում, որպեսզի [շարժեն] Դատավորի գութն ու ողորմածությունը՝ փրկվելու իրենց հանցանքների համար պատիժներից։ Ուրիշ ոչ մի բանով զբաղված չեն նրանց մտքերը, նրանց աչքերն ուրիշ տեղ չեն նայում, և ականջներն՝ այլ տեղ [դեգերում]։ Եվ երբ Դատավորը խոսում է նրանց հետ, չեն համարձակվում երեսները դարձնել կամ խոսել ծառայակիցներից որևէ մեկի հետ, այլ մեծ պատկառանքով միայն Դատավորին ան նայում՝ աղաչելու և խնդրելու իրենց հանցանքների թողություն և տանջանքներից [փրկություն]։

Իսկ որքա՜ն առավել մեզ համար է կարևոր մեծ պատկառանքով կանգնել ահավոր ու մեծ Դատավորի առջև, սաստիկ սարսափով ու սոսկալի դողությամբ մտնել, կանգնել Աստծու առջև և ցավագին ողբերով ու հորդահոս արտասուքներով աղաչել ու թողություն խնդրել։

Մեր մտքերն այլ կողմ և խորհուրդներն այլ կողմ չպետք է առաքել, մեր աչքերն՝ այլ ու ականջներն ուրիշ կողմ չպետք է թափառեցնենք, երբ մեկը կամենում է իր մեղքերի ու հանցանքների համար աղաչել ու խնդրել Աստծուն, որպեսզի հեծեծանքներով ու հառաչանքներով հաշտեցնենք Տիրոջը և խոնարհեցնենք՝ [լսելու] մեր պաղատանքներն ու գթալու մեզ, որով քավի մեր մեղքերն ու սրբի մեր անօրինությունները, փրկի մեզ տանջանքների ահեղ աղետներից ու հավիտենական ամոթից մեր աղոթքներով ու պաղատանքներով և գթագին սրտի ջերմությամբ։

Քանզի շատերն աղոթքներով մեծ բարիքներ ընդունեցին և հաճելի եղան Աստծուն, գտան մեղքերի թողություն և հոգիների փրկություն, մանավանդ նրանք, ովքեր արտասուքներով և տնանկների հանդեպ գթով աղոթեցին։ [Այդպիսիները] ոչ միայն մեղքերի թողություն են գտնում, այլև և՛ մարմնի համար անհրաժեշտն են ստանում, և՛ երկնային բարիքները։ Քանզի աղոթականի աղոթքները ձեռք են, [որոնք] բռնում են Աստծու ոտքերից և իսկույն խոնարհեցնում են [Նրան] դեպի խնդրողի աղաչանքները, որովհետև Աստված հույժ կամենում և ախորժում է աղաչողի խնդրանքը. «Խնդրեցեք և կտրվի ձեզ, հայցեցեք և կգտնեք» [Մատթ. Է 7, Ղուկ. ԺԱ 9]։

Եվ արդ, հարկ է, որ բոլոր նրանք, ովքեր ծանրացած են մեղքերով և նեղված են վշտերից, վտանգված են թշնամիներից և չարչարվում են ցավերից, միշտ աղաչեն ու խնդրեն անդադար աղոթքներով ու պաղատանքներով։ Քանզի նրանք, ովքեր պարզ մտքով և աննենգ հավատով աղոթում են Աստծուն և բարին են խնդրում, ստանում են այն ամենը, ինչ խնդրում են, ինչպես որ ստացան մեր առաջին հայրերը։ Իսկ եթե մեկն ասի, թե՝ խնդրեցի, բայց չստացա, աղոթեցի, բայց չընդունեցի. [ասենք, որ] շատ

չխնդրեցիր անիրավ դատավորից խնդրող այն այրի կնոջ պես (տես Ղուկ. ԺԸ 1-6), *և կամ ինչպես այն բարեկամը, որ կեսգիշերին նկանակ խնդրեց* (տես Ղուկ. ԺԱ 5), *որը ոչ թե բարեկամ լինելու, այլ շատ խնդրելու համար ստացավ։ Այդպես Աննան ցավագնած հոգով, արտասուքներով ու աղոթքներով շատ խնդրելով՝ ստացավ Սամուելին* (տես Ա Թագ. Ա)։ *Այդպես ժողովուրդը տրտմության հովտում լաց եղավ Աստծու առջև, և նրանց ջերմագութ աղոթքների ու պաղատանքների համար Աստված նրանց համար հանեց Գեդեոնին և փրկեց Իսրայելը* (տես Դատ. Բ Զ)։ *[Այդպես նաև] Եզեկիայի արտասվագին աղոթքների համար նրա կյանքին տասնհինգ տարի ավելացավ* (տես Դ Թագ. Ի)։ *Եվ դու, եթե այդպիսի արտասուքներով և ամբողջ սրտով աղոթես Աստծուն և չերկմտես, Նա կընդունի քո խնդրվածքները։*

Աղոթողին բազում խոսքեր պետք չեն. մաքսավորը մեկ խոսք արձակեց, նրա աղոթքը ընդունելի եղավ, և նա թեթևացրեց իր մեղքերի ծանր բեռները (տես Ղուկ. ԺԸ)։ *Մովսեսն անշշունջ բերանով աղաղակեց, և ծովը մինչև հատակը բաժանվեց* (տես Ելք ԺԴ 21)։ *Եվ դու, եթե ամբողջ սրտով խնդրես, [ոչ] միայն կցամաքեցնես մեղքերի ծովը, այլ նաև կդադարեցնես բարկության ալիքները։ Քանզի Աստծու՝ [աղոթքները] չընդունելու պատճառն այն է, որ շատ չես խնդրում, ամբողջ սրտով չես աղաչում, կամ էլ [քեզ համար] վնասակարագույն բան ես խնդրում։ Իսկ եթե անդադար աղոթքներով հոգու համար օգտակարը խնդրեք, անհնարին է Աստծուց այն չստանալը։ Ահա Եղիայի աղոթքները փակեցին ու բացեցին երկինքը* (տես Գ Թագ. ԺԸ), *Դավթի աղոթքը կանգնեցրեց հրեշտակի սուրը* (տես Բ Թագ. ԻԴ), *Հովնանի աղոթքը նրան կետի փորից կենդանի դուրս հանեց* (տես Հովն. Բ), *քանանացու աղոթքը նրա դստեր միջից հալածեց դևին*

(տես Մատթ. ԺԵ), *աղոթքները սրբեցին պոռնիկներին, բժշկեցին հիվանդներին, մաքրեցին բորոտներին, լուսավորեցին կույրերին, արդարացրին մեղավորներին։*

Եվ արդ, մեր առջև են ընդունելի աղոթքների այս բոլոր օրինակները, եթե կամենաս, կարո՛ղ ես [նրանց] նմանվել, հանել քեզ մեղքերի բանտից ու արձակել սատանայական կապանքներից։ Միայն աղոթի՛ր Աստծուն արտասվալից պաղատանքներով և կթեթևանաս ամբարշտությանդ ախտերից, կառողջացնես անօրինությանդ ցավերը, կբժշկես հանցանքներիդ հիվանդությունը։ Միայն ամբողջ սրտով աղոթի՛ր Աստծուն և կազատվես սատանայի որոգայթներից, կփրկվես չարաժանիք վիշապից և ողջանդամ կազատվես թունավոր վիշապից։ Միայն անդադար աղոթքներով խնդրի՛ր Աստծուն, և կլուսավորի մոլորությանդ խավարը, կցամաքեցնի մեղքերիդ պղծության աղտեղությունն ու ցանկությանդ տիղմը։ Երբ անբիծ հավատով ամբողջ սրտով աղոթես Աստծուն, կընդունես մեղքերի թողություն և հանցանքների քավություն, կընդունես երկնքի արքայությունն ու անբավ բարիքները, կընդունես մարմնի առողջություն և հոգու փրկություն, կընդունես բարի օրեր և խաղաղ կյանք՝ [ազատ] բոլոր զրպարտողներից։ Աղոթքները դադարեցնում են բռնակալների բարկության ալիքները, ետ են դարձնում Աստծու սրտմտությունն ու ցասումը, աղոթքները հարստացնում են աղքատներին, զորացնում են տկարներին, աղոթքները բժշկում են հիվանդացածներին և հալածում են մոլեկան ախտերը, աղոթքներն ամուլին ծնող են դարձնում, որդի չունեցողին՝ բազմորդի, ազատում են ծովի ալեկոծությունից, փրկում են գետերի հորձանքներից, կերակրում են քաղցածներին, հագցնում են մերկերին, դադարեցնում են տարա-

ժամ մահերը, կատարում են հավատով խնդրողների բոլոր խնդրվածքները։

Այսպիսին է ճշմարիտ աղոթքների զորությունը նրանց համար, ովքեր կամենում են մերձենալ Նրան. այն բանական անարյուն պատարագ է. յուրաքանչյուրի աղոթքն է պատարագ Աստծուն։ Բայց եթե ընկերոջդ չես սիրում, քո աղոթքներն ընդունելի պատարագ չեն, որովհետև Աստծու առջև չեն բարձրանում։ Որովհետև անհնարին է, որ ընկերոջ հանդեպ քեն ունեցողի աղոթքները ելնեն առ Աստված։ Իսկ եթե սրտի սիրով աղոթես Նրան, «մինչև քո աղաղակելը պիտի ասեմ, թե՝ ահա՛ հասել եմ» [տես Ես. ԾԸ 9]։ *Քանզի անարատ արտասուքներով ու ողորմությամբ աղոթքները աղոթականի առջև բացում են երկնքի դռներն ու բարձրանում են դեպի Աստծու լսելիքը, եթե միայն առանց թերանալու են խնդրում Նրան։*

Սատանան, իմանալով այս ամենը (որ աղոթքներով մեծամեծ զորություններ ու անբավ բարիքներ են գործվում), գնում մոտենում է նրան, ով կամենում է աղոթել և նախ մահճում է պատերազմում նրա հետ՝ անկողնի մեջ մնալը հաճելի դարձնելով, քունը քաղցրացնելով, մարմինը ծանրացնելով՝ այս ու այն կողմ շրջել, հորանջել է տալիս։ Մի կերպ վեր կենալով՝ ալարելով գնում է եկեղեցի և ներս մտնելով՝ կանգնում է Աստծու հանդիման։ Սատանան այնտեղ էլ է ծածկում նրա միտքը, որպեսզի չհիշի իր հանցանքների բազմությունը և չիմանա, թե Աստծու առջև է գտնվում [և նա] ո՛չ օրհնությունն է լսում, ո՛չ փառաբանություններն է հասկանում, ո՛չ էլ ընթերցվածքների վարդապետություններն են մտնում նրա սիրտը։ Չի հեծեծում և չի հառաչում իր մեղքերի անօրինությունները, լաց չի լինում և չի ողբում իր հոգու վիրավորվածությունը, չի աղաչում և չի խնդրում Աստծուց, արտասվալից պաղատանքներով չի հաշտեցնում

Տիրոջը՝ խոստովանելով իր չարիքների բազմությունը և հայտնելով իր անօրինության ծածկված դեզերը, որպեսզի փրկվի ահեղ տանջանքներից ու անլույս խավարից։ Փոխանակ լաց լինելու և պաղատելու, մեծ աներկյուղությամբ և արհամարհանքով ենք Աստծու առջև և պատկառանքով, ահով ու դողով չենք աղաչում ու պաղատում, ինչպես դատապարտվածները՝ դատավորների առջև, և կամ ինչպես մեղավոր ծառաները, որոնք իրենց տերերի ոտքերի առջև աղաչում են մեծ երկյուղով ու պաղատանքներով խնդրում։ Ո՛չ հեծեծանքներով, հառաչանքներով ու ողորմագին ողբերով արտասվում ենք մահապարտների պես, որոնց քարշ տալով տանում են իրենց չարչարանքների տեղը, և ո՛չ էլ քրձով, մոխրով ու մեծ սգով ընկնում ենք Աստծու առջև, որպեսզի փրկի մեզ բորբոքված գեհենից ու սաստիկ տանջանքներից, որդերի չարությունից ու անլույս խավարից։

Եվ արդ, ոչ միայն ահով ու խանդաղատագին աղաչանքներով չենք կանգնում Աստծու առջև՝ աղաչելու և խնդրելու վերքերի բժշկություն, այլև աղոթքների ու պաղատանքների ժամանակ մեղքերի թողություն խնդրելով՝ լվացվում, օծվում ենք և զարդարում ենք մեր հանդերձները, կարծես թե պատրաստվում ենք գնալ բոզանոց կամ թատերախաղերի. և եկեղեցի մտնելով՝ կանայք սնափառ պերճանքով ու մոլեկան հպարտությամբ բոզերի կերպարանքով են կանգնում Աստծու առջև, իսկ տղամարդիկ՝ բոզահոմանիների։ Եվ ցոփոգի մեղկությամբ իգանում են պիղծ ցանկությամբ և հափրանալով՝ վավաշոտում են որձ այծերի և իգամոլ ձիերի նման և այնտեղ իսկ՝ եկեղեցում՝ սրբությունների հանդեպ, պղծություն, շնություն ու պոռնկություն են գործում. թեև մարմնով չեն գործում, բայց մտքով նույնն են գործում՝ակնարկելով, անամոթ նայվածքով և քծնող

շան ձայնով։ Տերն ասում է. «Ով ցանկությամբ է նայում, կատարյալ շնացող է» [տես Մատթ. Ե 28]: *Նրանք արժանի են փայլակի, կայծակի ու հրե շանթերի՝ երկնքից իջնելու, այրելու և այնտեղ իսկ նրանց սպանելու, իսկ դրանից հետո՝ հավիտենական հրին, ահավոր խավարին ու անվերջանալի տանջանքներին այն բանի փոխարեն, որ աղոթքների ժամանակ պիղծ ցանկություններ ունեցան իրենց սրտում։*

Ո՛վ թշվառական, եկել ես հեծեծելու և Աստծուն պաղատելու, արտասուք թափելու և խնդրելով ողբալու, հայցելու, հառաչելու և թողություն խնդրելու, իսկ այժմ ա՞յդ է խնդրողիդ կերպարանքը՝ ի տես նայողների զարդարելդ, օծելդ, լվանալդ, ա՞յդ է կերպարանքը հայցողիդ և մեղքերի թողություն խնդրողիդ՝ անառականալդ, հաճոյանալդ և պիղծ ցանկութեամբ ակնարկելդ, ա՞յդ է կերպարանքը Տիրոջը քո չարիքների համար հաշտեցնողիդ՝ ցանկութեան ախտով բոզահոմանիների՝ քո գեղեցկությունն ու հասակը զննե՞լը։ Ինքդ քեզ սատանայացնում ես և աղաչում ես փրկվել սատանայից, դու քո կամքով դիվահարվում ես և խնդրում ես փրկվել դևերից։ Ինչպե՞ս կարող ես այդպիսի կերպարանքով հեծեծել Աստծու առջև և կամ ինչպե՞ս կարող ես այդպիսի խորհուրդներով հառաչել, նաև համարձակվեցիր Աստծու առջև զազրելի մտքով ու սատանայական կերպարանքով մտնել և պոռնկանոց դարձնել Աստծու Եկեղեցին. չե՞ս սոսկում ու դողում Սրբությունն Սրբոցից և Աստծու ահեղ դեմքից։ Մի՞թե չգիտես, որ Սրտագետը քննում է քո խորհուրդները և գիտի ամեն բան,մի՞թե չլսեցիր, թե Նա պիտի դատի մտքերի և [հաշիվ] պիտի պահանջի անամոթ հայացքների համար։

Եվ այժմ զգաստացի՛ր և հեռո՛ւ վանիր քեզնից կեղծավորական մտքերիդ խաբեությունն ու պաճուճանքներդ,

ապա՛ միայն մտիր Աստծու առջև և լսիր։ Երբ մահվան դատապարտվածները մտնում են թագավորների մոտ, չեն մտածում զարդարվելու մասին, այլ խնդրանքներ ու պաղատանքներ [մատուցելու]։ Երբ վիրավորները հիվանդանոց են մտնում, զանազան [բաների մասին] չեն խորհում, այլ՝ միայն վերքի համար դեղ որոնելու և ցավերը բժշկելու։ Այդպես էլ մեղքերով վիրավորին ու անօրինություններով հիվանդացածին եկեղեցի մտնելիս պաճուճանքներ ու պիղծ խորհուրդներ պետք չեն և ոչ օծվել ու մազերը հյուսել է պետք աղոթելու և Աստծուն պաղատելու ժամանակ։ Այլ պետք է նեղել մարմինը, մաքրել խորհուրդները և նվաստ կերպարանքով, բեկված սրտով, խոնարհ անձով մտնել, կանգնել Աստծու առջև և բազում պաղատանքներով ողբալ ու դառնապես լաց լինել, անդադար հեծությամբ աղաչել ու խնդրել, կուրծքը բախել, ձեռքերը տարածել, արտասուքներ հոսեցնել, նեղվող սրտով, անհամարձակ լեզվով, ամոթալից երեսով, ողբալի ձայնով խոստովանել չարիքները, խանդաղատելի խոսքերով հաշտեցնել Աստծուն և մեղքերի թողություն ստանալ։

Սրա՛նք են աղոթքների և խնդրվածքների ձևերը, դեպի որոնք խոնարհվում է Տերը և լսում, որոնցով ներում է հանցանքներն ու քավում է անօրինությունները, որոնցով մաքրվում ենք և սրբվում պղծությունների չար ախտերից և սատանայական խորհուրդներից, որոնցով ընդունում ենք արքայությունն ու անմահ կյանքի փափկությունները։ Իսկ մենք, հիշելով իսկ այս ամենը, մեծ արհամարհանքով ենք մտնում Աստծու մոտ և սատանայի հետ ենք լինում, որ շփոթեցնելով՝ խառնում է մեր մտքերը տեսակ-տեսակ մտածություններով, ցրելով հոսեցնում է մեր մտքերը դեպի այս աշխարհի հոգսերն ու զբաղմունքները. աղոթքների օգնությունն ու շահը հա-

զիվ սկսած՝ գրավվում ենք չարի չար խորհուրդներով. ներսում ծնրադրած աղոթում ենք, բայց մեր մտքերը բազում բանդագուշանքներով դրսում այս ու այն կողմ են թափառում։ Որովհետև աղոթելիս խորհում ենք մեր տան և անդաստանների հոգսերի մասին, աղոթելիս հաշվում ենք մեր արտերի բերքը և այգիների պտուղները, թե քանի կապիճ հաց և կամ քանի մար գինի կլինի ինձ,աղոթելիս մտաբերում ենք մեր խաշներն ու կովերը, թե քանի արջառ կամ ոչխար կունենանք, այդ ժամանակ նաև մեր գործն ու մշակների վարձն ենք հիշում, թե՝ վա՛յ, եթե սա ելնի իմ տնից։ Նաև մեր ընկերոջ դատաստանն ենք հիշում աղոթելիս և դատ[ապարտ]վում ենք Աստծու առջև։ Աղոթելիս խորհում ենք նաև մեր եղբոր կողմից ամբաստանվելու մասին, դեռ Եկեղեցուց չարձակված՝ մեր թշնամուց ենք սկսում գանգատվել՝ լեղու պես դառնացնելով աղոթքների քաղցրությունը։ Սատանան այնպես է հափշտակում մեր միտքը, որ աղոթելիս մինչև իսկ աղտեղի խորհուրդներ է հիշեցնում. սկսում ենք համրել փոխ տվածի վաշխն ու տոկոսները, աղոթքների մեջ հիշում ենք ընկերոջ նախանձն ու թշնամանքը։ Եվ ո՛չ միայն այսպիսի չար խորհուրդներով ենք դատապարտվում, այլ նաև դատարկախոս լեզվից և շատախոսությունից վնասվում և վիրավորվում ենք աղոթելիս, որովհետև վնասում ենք շատերի հոգուն, գերում ենք նրանց մտքերը և հանում ենք աղոթքներից և փառաբանություններից, դարձնում դեպի խավար խոսքերը և իջեցնում ենք կորստյան խորխորատները։ Մի՞թե այս ամենն արժանի չեն ահեղ բարկության և գեհենի բորբոքուն հրի, բազում տանջանքների և անլույս խավարի, որ այսքան անօրինանում ենք Աստծու առջև և աղոթքներից դուրս ենք ելնում պատիժների դատապարտված և ո՛չ թե պատվվում ենք իբրև աղոթողներ, այլ իբրև հայհո-

յողներ ու արհամարհողներ դատապարտվում ու պատժվում ենք։

Իսկ եթե մեղանչում ենք աղոթելու և բարի գործ անելու ժամանակ, ապա որքա՜ն առավել, երբ չարիք ենք գործում, երբ չարիքի խորքերն ենք ընկղմվում ներսում՝ նավահանգստում, ի՞նչ պիտի անենք, երբ ելնելով դուրս՝ հրապարակներ կամ վաճառատեղիներ, մտնենք մեղքերի ծովի՝ երդման, հայհոյության, զրկանքի, սնափառության, բամբասանքի, նախանձի, բարկության, ագահության, հարբեցողության, որկրամոլության, հպարտության և բոլոր ախտերի բազմության մեջ, որոնք առավել, քան ալեկոծված ծովը, ընկղմում և խորասույզ անելով՝ մահվան են մատնում բազմատեսակ մեղքերով։ Եվ արդ, ինչպե՞ս կամ ինչո՞վ կարող ենք փրկվել մեր անթիվ չարաչար գործերից և սատանայի բազում հնարանքներից, որը ոչ միայն դառը չարիքներով չարչարում է և սպանում, այլ նաև հնարներ է գործադրում և սուրբ աղոթքների քաղցրությունը դժնդակ լեղու դառնության է վերածում. ուրիշ կերպ չենք կարող զերծ մնալ չար իժից ու դառը քարբից, այլ միայն մշտապես պատրաստ լինելով սատանայի մեքենայությունների դեմ և զգուշանալով նրա աներևույթ նետերից։

Կարող ենք փրկվել, եթե մշտապես հիշենք մեր վախճանի օրը այն վտանգի երկյուղով, որ մեր հոգին աննեռելի շտապողականությամբ մարմնից պիտի պահանջվի և բռնի կերպով պիտի տարվի խավարային մեգով մթապատած, եթե ամեն ժամ հիշենք սոսկալի մեծ բեմի արհավիրքները, դատաստանի ահագին Օրը, եթե հարաժամ զգուշանալով՝ խորհենք այն ամոթի մասին, որ պիտի լինի տիեզերական հրապարակի առջև, տանջանքների բազմության, թունավոր որդերի դառնության, աղջամղջի շոշափելի խավարի, գարշահոտ տարտարոսի

խորության, գեհենի հրի բորբոքուն կայծերի, հնոցների բարձրաձայն գոչյունի, հրեղեն հորդահոս գետերի սարսափների, մեղավորների՝ հանապազ այրվելու և խորովվելու և աղետների ու ցավերի սաստիկ կսկիծների մասին։

Եթե մշտապես հիշես այս ամենը, կարո՞ղ ես փրկվել սատանայի որոգայթներից, կարո՞ղ ես երկյուղով լինել Աստծու առջև, կարո՞ղ ես սուրբ աղոթքներ մատուցել, կարո՞ղ ես սգալ, լաց լինել և դառնապես ողբալ, կարո՞ղ ես նաև քաղցրացնել Դատավորի հայացքը, խոնարհեցնել դեպի ողորմությունն ու գութը և ընդունել մեղքերի թողություն և հանցանքների քավություն, ժառանգել լուսեղեն խորանները, փափագելի դրախտի փափկությունը, հավիտենական ուրախությունների հեշտությունները, ցանկալի անմահ կյանքը և անվերջանալի բարիքների վայելչությունները Հոր և Որդու և Սուրբ Հոգու հետ. Նրան փառք, պատիվ և գոհություն հավիտյանս հավիտենից. ամեն։



Ե. *Թողթ տնանկներին ողորմելու մասին*

Թող ոչ ոք տղայական բարքով և լավ չքննող մտքով չհամարձակվի մատակարարել Աստծու խոսքը։ Այլ թող միշտ նայի լսողների մտքի՝ [այն ընդունելու կարողությանը] և վարդապետության խոսքը խոպանացած ականջներում թող սերմանի մեծ զգուշությամբ, սկզբում միանգամից ծանր լսելի ու դժվարակիր վարք թող չպարտադրի [հոգևոր կյանքից] ամայացածներին։ Քանզի եթե անվարժ ավանակին հնազանդեցնել կամեցողները սկզբում ծանր ու դժվարակիր բեռներ կախեն [նրա վրա], կա՛մ նրանք կկքեն, կա՛մ բեռի հակերը իրենց վրայից ցած կգցեն։ Այլ թեթև [բեռներով] են ընտելացնում և կատարյալին են հասցնում։ Այդպես նաև հողը մշակող հմուտ մշակները խոպան և փշակալած հողում անխորհրդաբար լավ սերմեր չեն սերմանում, որ [հողի՝] խոպան լինելու պատճառով չկորչեն կամ էլ թռչունները չհափշտակեն դրանք։ Այլ նախ՝ կտրում են փշերը, կակղեցնում են հողը և ապա՝ ցանում են լավ և շահավետ սերմերը։ Նույն օրինակով էլ նրանք, ովքեր կամենում են մշակել բանական հողը, հարկ է, որ նախ խոստովանությամբ արմատախիլ անեն մեղքերի փուշը, պահքով ու աղոթքով կակղեցնեն խոպանացած ու խոտանացածը՝ կուսության, անընչության, ողորմության և մահուշափ չարչարանքների համար։ Թեև ընչասերների համար մահվան չափ ծանր են ողորմության հրամանները, բայց դրանք առավել շահավետ ու օգտակար են, քան վարձատրության արժանի բոլոր առաքինությունները և շատ ավելի բարձր են առաքինության բոլոր

ճգնություններից, այնպես որ վարձքի արժանի բոլոր առաքինությունները չեն երևում ողորմության պտուղների առավել լուսավորությունից։

Իսկ ի՞նչ ասեմ մյուս առաքինությունների մասին. և՛ Հին, և՛ Նոր [Կտակարաններում] պատվված է կուսության սրբությունը, բայց առանց ողորմության այն արհամարհված եղավ և առագաստից դուրս դրվեց։ [Հիմար կույսերը] ո՛չ թե ողորմություն չէին արել, այլ՝ արել էին, բայց քիչ, և այդ բավական չեղավ, որովհետև գիշերվա կեսին պակասեց նրանց [յուղը], և հանգան նրանց [լապտերները] [տես Ղուկ. ԻԵ 6-8]։ *Այդպես նաև նրանք, ովքեր շատ ունեցվածք ունեն, բայց քիչ ողորմություն են անում, այդ կարող է բավական չլինել նրանց փրկության համար, քանզի ողորմությունն ըստ ունեցվածքի չափի է ընդունելի. ովքեր շատ ունեցվածք ունեն, նրանցից շատ ողորմություն է պահանջում, իսկ ում ունեցվածքը քիչ է, նրա սակավ ողորմությունն էլ է ընդունելի։ Ինչպես որ [վկայության] խորանի նյութի համար պետք էր ոսկի, պետք էր և [այծի] մազ։ Նրանք, ովքեր ոսկի ունեին, բայց մազ էին բերում, անընդունելի և պիղծ էր [համարվում], իսկ նրանք, ովքեր ինչքեր չունեին և միայն մազ էին բերում, ընդունելի էր, Աստծուն հաճելի, և նրանք օրհնվում էին* [տես Ելք, ԼԵ 21-29]։ *Որովհետև Աստված ոչ թե ինչքերի չափին է նայում, այլ՝ տվողի կամքին. Նա շատից շատն է ընդունում՝ իբրև շատ, ընդունում է նաև սակավից սակավը՝ իբրև շատ։ Որովհետև եթե մեկը տասը դահեկան ունի և ողորմություն է տալիս մեկ դահեկանը, և աղքատը, որ միայն տասը լումա ունի, և մեկը տալիս է իրենից ավելի աղքատին, Աստծու առջև նույնն են համարվում, բայց չքավորի տվածն ավելի զարմանալի է, որովհետև չքավոր լինելով՝ հարուստի չափ տվեց։*

Սրա վրա նաև Հիսուս զարմացավ, երբ այրի կինը, ով միայն երկու լումա ուներ և այն ողորմություն տվեց, Հիսուս ասաց. «Մեծամեծներն իրենց ունեցվածքից ավելորդը բերեցին, բայց այն տառապյալ այրին իր ամբողջ ունեցվածքը աղքատներին բաժանեց» [տե՛ս Ղուկ. ԻԱ 3]. *այդ երկու լուման նրա ամբողջ ունեցածն էր։ Եվ արդ, սատանան շատ ինչքեր ունեցողներին ու մեծատուններին խաբում է այն բանով, երբ նրանք չեն տալիս իրենց ունեցածի համեմատ և առատ ողորմություն չեն բաժանում, այլ՝ շատ քիչ և սակավ, ինչպես աղքատները, նրանց կարծել է տալիս, թե փրկության համար բավական է այդ։ Իսկ ոմանք իրենց ամբողջ ունեցվածքը բաշխեցին աղքատներին և աղքատացրին իրենց անձերը, որովհետև անանց մեծությունները փափագեցին, ոմանք էլ իրենց ունեցվածքի կեսը տվեցին տնանկներին, բաժանեցին նրանց՝ իբրև եղբայրների։*

Իսկ առաջինները հանում էին տասանորդը, պտուղներ էին տալիս, զոհեր էին մատուցում, ողջակեզներ էին տանում, մեղքերի քավության համար տալիս էին մարդկանց և անասունների անդրանիկներին, կալի, հնձանի և բոլոր պտուղների առաջին բերքը։ Տարեկան Աստծուն նվիրված բազմաթիվ տոներ էին կատարում,շաբաթ օրերն ու ամսագլուխները մեծ ընծաներով Նրան էին նվիրում, այս ամենի հետ միասին նաև չքավոր աղքատներին էին կշտացնում, անթիվ որբերի ու այրիների էին կերակրում, կույսերի [համայնքի] կարիքներն էին հոգում, հյուրերի էին ընդունում, մխիթարում էին նեղվածներին և հոգում էին տկարների բոլոր կարիքները։ Արդ, եթե թերակատար Հին օրենքի ժամանակ էր Աստված պահանջում արդարության այս բոլոր բարեգործությունները, ապա Նորում և կատարյալում այս ամենից որքա՜ն

առավել արդարության և ողորմության գործեր պիտի պահանջի մեզնից։ Քանզի. «Եթե ձեր արդարությունը ավելի չլինի, քան դպիրներինն ու փարիսեցիներինը, Աստծու արքայության մեջ չեք մտնի» [տես Մատթ. Ե 20]: *Եվ հետո մենք՝ քրիստոնյաներս՝ Քրիստոսի կողմից ուսուցանվածներս, որ Նորում և կատարյալում ենք, ինչպե՞ս պիտի ներվենք և թողություն ստանանք, եթե ավելի շատ ողորմություն չանենք, քան թերակատար Հնի և հրեայի ողորմությունները։ Քանզի եթե միայն հրեաների արդարությունը կատարենք, եթե հրեաներից առավել չլինենք սրբությամբ, պտուղներով ու պատարագներով և սիրո պատվիրանով, ապա մեզ համար իզուր է Քրիստոսի գալուստը։ Քանզի այս Նորում աղքատ թե հարուստ բոլորս* «մի մարմին ենք Քրիստոսով և միմյանց անդամներ» [տես Հռոմ. ԺԲ 5]: *Եթե Քրիստոսի ծառան ես և պահում ես Նրա պատվիրանները, հարկ է, որ հոգ տանես ընկերոջդ՝ իբրև քո [մարմնի] անդամի մասին, քանի որ, եթե վշտանում է մեկ անդամը, նրա հետ վշտանում են բոլոր անդամները։*

Եվ արդ, եթե գլուխը Քրիստոսն է, իսկ մենք «Քրիստոսի մարմինն ենք և անդամները Նրա անդամներից» [տես Եփես. Ե 30], *հարկ է, որ հասարակ անդամներս ամեն բան համարենք Քրիստոսինը, Ով [այն] տվել է մեծատունների ձեռքը, նրանց հազարապետներ ու մատակարարներ է դարձրել, որպեսզի մատակարարեն իմաստությամբ՝ իմանալով, թե ում է շատ պետք և ում՝ սակավ։ Ինչպես որ առաքյալների մոտ ամեն բան ընդհանուր էր՝ բոլոր հավատացյալներինը, իբրև մեկ անձինը։ Եվ ոչ ոք իր ունեցվածքի մասին չէր համարձակվում ասել, թե իրենն է, այլ բերում, բաժանում էին և տալիս էին նրան, ով դրա կարիքն ուներ։ Ա՛յն էր սրտանց [արված] ողորմություն, ա՛յն էր աստվածպաշտություն և կատարյալ մարդասի-*

րություն. ովքեր բաշխում էին այդպիսի գթով, որ մինչև իսկ փնտրում էին կարոտյալներին։ Առաքյալների ժամանակ այնքան կարևոր էր աղքատներին այցելելը, մինչև իսկ Քրիստոսին քարոզելու հետ միասին ողորմություն էին սովորեցնում. նրանց ոտքերի մոտ էին բերում և կուտակում էին շատ ինչքեր, որոնց մատակարարներ նշանակեցին Ստեփանոսին [և մյուս սարկավագներին]։ Եվ նրանք, ովքեր անհրաժեշտությունից դրդված և առանց տնանկներին գթալու էին բերում ողորմությունը, մեռան, ինչպես Անանիան ու Սափիրան [տես Գործք Ե 1-10]: *Իսկ Տաբիթան, որ գթով ու հոգածությամբ կերակրում և հագցնում էր որբերին ու այրիներին, նրանց աղոթքներով հարություն առավ մեռելներից* [տես Գործք Թ 40]: *Պողոսն ասում է, թե՝* «Մեզ հրամայվեց, որ հիշենք աղքատներին, և ես հոգ տարա այդ նույն բանն անելու» [Գաղ. Բ 10], *որովհետև այս պատվիրանը Աստծու բոլոր Գրքերի կատարումն է։ Ինչպես որ Քրիստոս ասաց այն հարուստին, թե՝* «Եթե կամենում ես կատարյալ լինել, գնա վաճառիր քո ամբողջ ունեցվածքը և տուր աղքատներին և երկնքում գանձեր կգտնես» [տես Մարկ. Ժ 21]: *Իսկ ագահների մասին ասում է.* «Ավելի հեշտ է, որ պարանը ասեղի ծակից անցնի, քան թե մի մեծահարուստ Աստծու արքայությունը մտնի» [Մարկ. Ժ 25]: *Քանզի նրանք, ովքեր այստեղ բազում ինչքեր են հավաքում և ողորմություն չեն սերմանում, մենակ և դատարկ են գնում այս աշխարհից և առաքվում են անողորմ և անշիջանելի հրի մեջ։ Այս մասին ծանուցելով՝ Տերն ասում է.* «Անիրավ մամոնայից ձեզ համար բարեկամներ արեք, որպեսզի ձեզ ընդունեն հավիտենական հարկերի մեջ» [Ղուկ. ԺԶ 9]: *Այս մասին նաև Պողոսն է ասում, թե՝* «Հետամուտ եղեք սիրո և նախանձախնդիր եղեք աղքատներին ողորմություն տալու, որպեսզի դուք նույնպես ողորմություն ընդունեք Քրիստոսից»

[տես Ա Կորնթ. ԺԴ 1]: *Իսկ մեկ այլ տեղում ասում է.* «Սփռեց և տվեց աղքատներին. նրա արդարությունը մնում է հավիտյանս հավիտենից» [Սաղմ. ՃԺԱ, 9, Բ Կորնթ. Թ 9]: *Պողոսը ոչ միայն թողնում է նրանց կամքին, այլ նաև հրամայում է հարուստներին՝ ասելով.* «Ձեր ունեցվածքի առավելությունը թող լցնի աղքատների պակասությունը, և աղքատների աղոթքների առատությունն էլ թող ձեր մեղքերին թողություն անի» [տես Բ Կորնթ. Ը 14]: *Որովհետև ոչինչ այնպես չի թեթևացնում մեղքերի ծանրությունը, ինչպես ողորմությունն ու տնանկների հանդեպ գութը։ Ինչպես որ այն սուրբը՝ Դանիելը, սովորեցրեց Նաբուգոդոնոսորին, երբ նա հիվանդացել էր իր մեղքերի պատճառով։ Երբ Նաբուգոդոնոսորը մարգարեին հարցրեց, թե՝* «Ինչ հնար կա այս ցավը [բժշկելու]», *Դանիելը, որպես բժիշկ մոտենալով, ասաց.* «Արքա՛, ո՛չ պահքը, ո՛չ հսկումը, ո՛չ քուրձ հագնելն ու մենությունը քեզ օգնել չեն կարող, այլ՝ գնա՛ և ողորմությա՛մբ քավիր քո մեղքերը և տնանկներին գթալով՝ քո անօրինությունները» [Դան. Դ 27]: *Այն կաշառք է, որ արդարացնում է քեզ և ճանապարհ է, որ տանում է դեպի հավիտենական կյանք։*

Տեսնո՞ւմ ես՝ ինչպիսի զորություն ունի ողորմությունը և ինչ համարձակ երեսով է կանգնեցնում Աստծու առջև, մանավանդ, երբ սրտանց են կերակրում քաղցածներին։ Ինչպես Եսային է ասում. «Քաղցածների՛ն բաժանիր քո հացը և անօթևան աղքատներին տա՛ր քո տուն, եթե մերկ մարդ տեսնես, հագցրո՛ւ նրան և քո ազգի տառապյալից երես մի՛ դարձրու։ Այն ժամանակ պիտի կանչես, և Աստված պիտի լսի քեզ. մինչև դու խոսես, Նա պիտի ասի, թե՝ «Ահա հասել եմ» [Ես. ԾԸ 7-9]: *Այսպես արագաթև ողորմությունը բարձրանում է դեպի Աստծու լսելիքը և փութապես խոնարհեցնում է այն՝ օգնելու ողորմածին։ Եվ Աստված ոչ միայն այստեղ է օգնում և փրկում ողորմածին, այլ երբ այս կյանքն ավարտ-*

վում է, և փոխվում ենք հանդերձյալի մեջ, ողորմածին բազմապատիկ առատությամբ վերադարձնում է նրա տված ողորմությունները։ Ինքը՝ Տերն, ասում է. «Աղքատներին տված ողորմության պարտապանը ես եմ» և՝ «Նրանց փոխ տվածի փոխատուն ես եմ»: *Քանզի.* «Ով ողորմում է աղքատին, փոխ է տալիս Աստծուն» [Առակ. ԺԹ 17], *որ անանցանելի բարիքներով մեկի [փոխարեն] հարյուրապատիկ է վերադարձնում, նաև քավում է նրա մեղքերը և փրկում ահավոր տանջանքներից.* «Երանի նրան, ով մտածում է աղքատի ու անօթևանի մասին. փորձանքի օրը կփրկի նրան Տերը» [Սաղմ. Խ 1]:

Իսկ ի՞նչ է [նշանակում] մտածել աղքատի ու տնանկի մասին։ [Նրա մասին] մտածել [նշանակում է]՝ հիշել նրա տառապանքները՝ [ասելով]՝ նա իմ եղբայրն է, իմ անդամն ու մարմինը, և ինձ նման կարիքներ ունի։ Կարոտ է ինչքերի և բնակարանի, քաղցած մնալու վտանգից այս ու այն կողմ է ընկնում և շրջում է անհանգիստ։ Տոթից շոգում է, ցրտից՝ դողում, որովայնը դատարկ է, մարմինը՝ մերկ, մազերը թաղիք են դարձել, դեմքը դեղնել է ու թոշնել, ամբողջ մարմինն հալվել, մաշվել ու խեղճացել է. թափառում է, վարանում, դռների մոտ երերալով ու կանգնելով՝ բղավում, գորովագին կարեկցություն է արթնացնում իր աղետալի վշտերի հանդեպ և իմանալով, որ խիստ դաժան են մեր մտքերը, առանց ամաչելու ցուցադրում է իր խեղված անդամները, որպեսզի մեզ՝ անողորմներիս, խոնարհեցնի՝ գթալու իրեն։ Հանդգնում է, համարձակվում և մեծ չարչարանքով փոքր-ինչ կերակուր է գտնում, դռները, գավիթներն ու տներն է մտնում երկյուղելով, քանի որ տների մոտ վախենում է շներից, երկնչում՝ անասուններից, որովհետև ձիերն աքացի են տալիս, եզները՝ պոզահարում, շները՝ վիրավորում, իսկ

չար ու անողորմ մարդիկ չարախոսում են, անարգում ու խոցոտում՝ ինչպես նետով, մանավանդ երբ [տեսնում են] խեղանդամի, կույրի կամ ցավագարի։ Եվ նա քաղցի պատճառով վարանում է և արկածախնդրության դիմում, գնում հասնում է անողորմների, իբրև գազանների մոտ, որոնց կողմից անարգվում է, ապա եթե կարողանում է ինչ-որ բան ստանալ, այն էլ՝ մեծ չարախոսություններով։

Արդ, աղքատի ու տնանկի մասին մտածած կլինես, երբ մտաբերես այս ամենը, քաղցր խոսքերով ու գթագին ողորմելով՝ մխիթարես կարոտյալներին, հեծեծես ու հոգոց հանես նրանց համար։ Մարգարեն երանի է տալիս այդպիսիներին, նրանց, ովքեր այդպիսի գթով ու խղճով են ընդունում աղքատներին. չարի օրը նրանք պիտի փրկվեն։

Իսկ ո՞րն է անողորմների ու մեղավորների չար օրը։ Ահեղ դատաստանի Օրն է այդ, երբ երկինքը պիտի սասանվի, երկիրը՝ դղրդա, երբ արեգակը պիտի խավարի, և լուսինն ու աստղերը կորչեն, երբ արհավիրքները պիտի զարկեն, և ահավոր սոսկումը՝ սաստկանա, երբ փողի ձայնը սաստկանա ու զարհուրեցնի, և հրեշտակների ձայները հիացնեն, երբ շարժվեն զորությունները, իշխանություններն ու պետությունները, և հրեշտակների գնդերը երկիր իջնեն, երբ աթոռներն ընկնեն, և Քրիստոս Արքային իջած տեսնենք, երբ փառքերի Թագավորի ահից սարսափեն սերովբեներն ու քերովբեները, երբ ժայռերը պատռվեն, և գերեզմանները բացվեն, բազմահույլ ննջեցյալները հարություն առնեն, անթիվ ողջերը նորոգվեն, սուրբերի դասերը ցնծան, արդարների ժողովները պայծառանան, ամբողջ աշխարհը հավաքված՝ կանգնի, և հուրը տարածվի ողջ տիեզերքում, այնժամ խավարային մեգով պատած հրապարակ կբերեն

[իրենց] մեղքերով կապված և [իրենց] անօրինությամբ շղթայված մեղավորներին, ծաղրուծանակով և անտանելի ամոթով ի ցույց կդնեն աշխարհին, [ապա] կկանգնեցնեն սոսկալի բեմի, մեծ ու ահավոր Դատավորի առջև, որի հուրը կայրի, կտոչորի ու բորբոքվելով՝ կբարձրանա, կայծակների ու կրակե հրահոսան գետերի հնոցը, ուր վառված կրակն է, ցած կիջնի, վառվող կայծակները կտարածվեն ներսում, ուր խավարային գբերն են, մութ տարտարոսները, չարատանջ գեհենը, դառնաթույն որդերը, որոնք սպառնում են և պատրաստված են բոլոր մեղավորների համար՝ վրեժ առնելու վերջին ահեղ Օրը։

Արդ, ա՛յս է մեղավորների չար Օրը, որից որոշված մարդուն փրկում է նրա՝ աղքատներին տված ողորմությունն ու տնանկներին գթալը. նրանց Ինքն իսկ՝ Փրկիչն է երանի տալիս՝ ասելով. «Երանի՛ ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն» [Մատթ. Ե 7], *և՝* «Ողորմածությունը բարձրագլուխ պարծենալու է դատաստանի ժամանակ։ Քանի որ անողորմ դատաստան է լինելու նրա հանդեպ, ով ողորմած չի եղել» [Հակ. Բ 13]։ *Անողորմ են նրա դատախազները, անողորմ են տանջանարանները, անողորմ է հնոցի կրակի այրոցը, անողորմ է տապի խորովելը, անանցանելի ու անվերջանալի են ահեղ աղետներն ու չարչարանքները։ Սրա՛նք են անողորմների անողորմ դատաստանն ու անվերջանալի տանջանքները, որոնք ընդունեց նաև այն անողորմ մեծատունը* [տե՛ս Ղուկ. ԺԶ 19-26]՝ *ահեղ հրի խորովումը, անվերջանալի տապակումը,որովհետև ողորմություն չտվեց քաղցածներին, մերկերին ու հիվանդներին, դրա փոխարեն էլ անողորմ հատուցումը ստացավ։*

Եվ արդ, այս ամենը լսելով՝ չհապաղե՛նք ողորմել տառապող աղքատներին, առավելապես խեղանդամներին

ու հիվանդներին, որբերին ու այրիներին, վշտացողներին, օտարականներին, հյուրերին ու ծերերին, բոլոր անհրաժեշտ պետքերի կարիք ունեցողներին, որի միջոցով կարողանան վաստակել և այս աշխարհում ապրելու միջոցը ձեռք բերել։ Եթե աստվածապաշտ ես, նրանց հոգաբարձո՛ւ և վերակացո՛ւ եղիր,եթե կամենում ես մեղքերդ փարատել, կերակրի՛ր և հագցրո՛ւ նրանց,եթե կամենում ես համարձակ երեսով տեսնել Քրիստոսին, մի՛ տրտմեցրու տառապողների ու կարոտյալների երեսները, եթե կամենում ես սուրբերի խորաններն ու օթևանները մտնել և ժառանել անբավ բարիքները, օթևան ու ասպնջակա՛ն եղիր օտարականներին, կարոտյալներին, հիվանդներին ու վշտացողներին, նրանց հանգստացրո՛ւ և մխիթարի՛ր երկրավոր պիտույքներով, որպեսզի նաև դու հանգստանաս ու վայելես հոգևոր կերակուրները և անանց փափկությունը։ Քանզի այն է աստուածպաշտություն, երբ առատ ողորմությամբ օգնում են տառապողներին ու նեղության մեջ եղողներին. այնպիսին ոչ թե ողորմություն է անում, այլ ստանում է անանց բարիքների վայելչությունը, նաև այստեղ է բազում բարիքներ գտնում, երբ բարիք է անում։ Եթե երկրում չլինեին աղքատներ, ո՞վ կարող էր թեթևացնել իր մեղքերի բազմաթիվ բեռները և կամ փրկվել իր ալեկոծվող և ծովի պես ծփացող անօրինություններից։ Աղքատներին տրված ողորմությունը մեզ անցկացնում է այս աշխարհի սահող ու ալեկոծ կյանքի միջով և հասցնում է խաղաղության նավահանգիստ։ Իսկ տառապողների համար արվող աղոթքները արմատախիլ են անում, հանում են մեր մեղքերի փուշը, մաքրում ու սրբում են մեր պիղծ մեղքերի թարախը, բժշկում և առողջացնում են սատանայի [հասցրած] վերքերը, ցրում ու թեթևացնում

են մեր անօրինությունների ծանրությունը և մեզ երկինք են ուղարկում քավված ու արդարացած։ Այսպիսին է ողորմության զորությունը. այն մեզ դուրս է հանում դառը կապանքներից՝ հանցանքների խորքերից, փոքր-ինչ դրամի միջոցով, որ տալիս ենք աղքատներին։

Դու մի՛ տրտմիր, որ պակասում է ունեցածդ, որովհետև դրա հետ միասին մեղքերդ են պակասում։ Եվ երբ հանեցիր քեզնից արծաթդ, նրա հետ հանեցիր նաև մեղքերդ, սրբեցիր պիղծ գործերիդ աղտեղությունը։ Ինչպես [Տերն] է ասում. «Ողորմություն տվեք, և ձեր ամեն ինչը սուրբ կլինի» [Ղուկ. ԺԱ 41, *որովհետև ողորմությամբ սրբվում է ողորմածի մարմինը, սրբվում է նաև նրա հոգին, օրհնվում է ունեցվածքը և հաջողվում են նրա գործերը։ Շատանում են նրա անասունները, բազմանում են խաշները, պտղաբերում են անդաստանները, եթե միայն Աստծու կամքով ողորմություն է տալիս, որովհետև տնանկներին ողորմելով՝ փոխ է տալիս Աստծուն։ Իսկ Աստված փոխարենը ողորմածներին հատուցում է ոչ միայն այն, ինչ վերևում ասացինք, այլև շնորհում է արքայությունը, փրկում է թշնամու որոգայթներից և ազատում դժոխքի ձեռքից։ Թեև կուսությունը մեծ սրբություն է, բայց ողորմածն ավելի պատվական է, թեև մեծ է ամուր պահեցողությունը, և մեծամեծ են բազում առաքինություններ, բայց ավելի մեծ, կարևոր և Աստծու կողմից ընդունելի է ողորմությունը. մեծ և պատվական է ողորմած մարդը։ Աստվածաշունչ Գրքերը մարդ իսկ չեն անվանում նրան, ով ողորմություն չի տալիս, այլ անվանում են շուն, խոզ և միայնակեր գազան։ Որովհետև այդպիսիներն անլույս ճրագ են, չտեսնող աչք, անջուր աղբյուր և գոսացած ծառ, որոնք միայն անուն ունեն և ոչ մի օգուտ չեն տալիս։*

Արդ, ինչպե՞ս իմանանք, թե անողորմը մարդ է. ինչպես որ աղբյուրն է ջրի պատճառով աղբյուր անվանվում, ճրագը լույս տալու պատճառով ճրագ ասվում, այդպես էլ մարդն իր արած ողորմությամբ է իբրև մարդ ճանաչվում, [այն բանով], որ հանապազ խոնարհեցնում է իր սիրտը՝ աղքատի սիրով և գթով, ձեռքերը գործածում է՝ կարոտյալներին ողորմություն տալու և քաղցած աղքատների միջոցով կերակրում է Քրիստոսին, որովհետև Քրիստոս աղքատներին արված ընդունելությունն Իրենն է համարում՝ ասելով. «Քաղցած էի, և կերակրեցիք ինձ, ծարավ էի, և հագեցրիք ինձ, անօթևան էի, ընդունեցիք ինձ, հիվանդ էի և բանտում, այցելեցիք ինձ» [Մատթ. ԻԵ 35-36]:

Եվ արդ, եթե հավատում ես Աստծու անսուտ խոսքին, ճշմարտապես հիշի՛ր, որ երբ կերակրում ես քաղցածներին, Քրիստոսի՛ն ես կերակրում, եթե ծարավածին ջուր ես տալիս խմելու, Քրիստոսի՛ն ես խմեցնում, եթե հյուր ես ընդունում, Քրիստոսի՛ն ես ընդունում, և եթե օտարականին օթևան ես տալիս, Քրիստոսի՛ն ես հյուրընկալում, եթե հիվանդին տեսության ես գնում, Քրիստոսի՛ն ես տեսնելու գնում, եթե սփոփում ես նեղվողներին, Քրիստոսի՛ն ես մխիթարում, եթե օգնում ես անօգնականին, Քրիստոսի՛ն ես օգնական լինում, եթե ծառայում ես տկարներին, Քրիստոսի՛ն ես ծառայում և ամեն բան, որ տալիս ես քաղցածներին, Քրիստոսի ձեռքն ես տալիս, որ բազմապատիկ հատուցելու է քեզ վերջին Օրը, ուր ո՛չ ամբարած ինչքեր կան, ո՛չ սիրելիներ ու ծանոթներ, ուր ո՛չ սուրբերը կարող են օգնել, և ո՛չ արդարները կարող են փրկել, ուր ո՛չ հայրերն են գթում և ո՛չ եղբայրները՝ ողորմում, այլ օգնում են միայն աղքատներին արված ողորմություններն ու բարի վարքը։

Արդ, չսպասե՛նք վախճանին և ագահ չլինե՛նք, աղքատներին կարիքի մեջ չթողնե՛նք և Քրիստոսին

չտրտմեցնե՛նք, այլ կերակրե՛նք որբերին, այրիների մասին հո՛գ տանենք, պանդուխտներին հավաքե՛նք, քաղցածներին կերակրե՛նք, մխիթարե՛նք Քրիստոսին, այս աշխարհում առատ տուրքերով մարդասիրությամբ սերմանե՛նք և երկնքում ողորմություններ հնձենք, երկնային խորաններ բարձրանանք և անանց ուրախությունները վայելենք մեծապայծառ բերկրությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք և պատիվ հավիտյանս հավիտենից. ամեն։



Զ. *Պտուղների [ավիրաբերման], զոհաբերության և ողորմության մասին*

Սատանան բազում գաղտնաձիգ նետերով վիրավորում է մեզ, բայց վերքերը չի երևացնում. [մեր] գործերի սկզբում [մեզ] ցույց է տալիս, թե առաքինի ընթացք ունենք, բայց ավարտում է ահավոր անօրենություններով. մեր չարչարանքների համար վարձատրություն [ստանալու] փոխարեն գցում է անօրինությունների ու մեղքերի տակ, ինչպես որ Կայենին՝ իր ընծաներով [տես Ծննդ. 5] *և Յեփթայեին՝ իր ընծաներով* [տես Դատ. ԺԱ 34-39], *ովքեր բարու կերպարանքով անօրինության գործեր արեցին։ Այժմ էլ սատանան շատերի հետ է նույնն անում՝ ապարդյուն ու դատարկ դարձնելով Եկեղեցուն ընծայաբերված պտուղներից ու զոհաբերություններից։ Եվ տեսնում ենք, որ նրանք ոչ միայն զուր են չարչարվել ու ջանքեր թափել, այլ նաև թշնամանքով հանդիմանվել են և ընդունել են Աստծու պատիժներն ու անեծքը։ Ինչպես Մաղաքիա մարգարեն է ասում.* «Թող անիծյա՛լ լինի այն մարդը, որն ունևոր է, իր հոտի մեջ որձ ունի, սակայն արատավորն է մատուցում Տիրոջը» [տես Մաղաք. Ա 14]: *Պատուհասի է ենթարկում նաև քահանաներին, ովքեր խոտանը կընդունեն ժողովրդից՝ ասելով.* «Դուք, քահանանե՛ր, անարգում եք իմ անունը. դուք իմ սեղանին պիղծ հաց եք մատուցում՝ խոտան, գողացված կամ անօգուտ, այսինքն՝ նիհար [անասուն], կընդունեմ դրանք ձեր ձեռքից։ Ձեզ վրա անեծք կուղարկեմ, կնզովեմ ձեր օրհնությունները, կվերացնեմ դրանք ձեզ հետ միասին, որովհետև ձեր սրտերում չդրեցիք՝ երկնչել ինձնից» [տես Մաղաք. Ա 6-10, 13. Բ 2-3]:

Արդ, եթե նրանք, ովքեր անպիտան զոհ մատուցեցին Հնում, պատժվեցին այսպիսի պատիժներով, ապա ի՞նչ պիտի անեն նրանք, ովքեր Նորում իրենց կալի ու հնձանի խոտանը կնվիրեն Աստծուն և իրենց հոտերի վտիտն ու տկարը կմատուցեն աղքատների սեղանին, որով և՝ խոտան և անընդունելի պատարագով Կայենը կորստյան մատնվեց. «Որովհետև արդար չբաժանեցիր, ասում է, թող դա էլ դեպի քեզ դառնա» [հմմտ. Ծննդ. Դ 7]: *Արդ, մենք պետք է երկնչենք այս խոսքից, քանզի եթե նրանք, ովքեր առանց օրենք ունենալու մեղանչելով՝ այդպես պատժվեցին, ապա որքան ավելի [պիտի պատժվենք] մենք, որ օրենք ունենալով ենք մեղանչում։ Որովհետև եթե Հնում եղողներից և շնորհներից չվայելողներից էր այդպիսի արդարություն պահանջվում, ապա որքան առավել արդարություն պիտի պահանջվի Նորում եղողներից, (եթե անգամ սակավ սայթաքենք), որ խրատվեցինք օրենքներով, վայելեցինք շնորհներից և տեսանք օրինակները։ Արդ, եթե անպիտանը նվիրենք Աստծուն, Նա մեզ ինչպե՞ս կների և թողություն կտա, քանի որ ասում* է. «Քո դաշտի ու հնձանի առաջին բերքը, նաև քո խաշներից ամենաընտիրը մատուցիր քո Աստծուն» [տես Բ Օր. ԺԵ 19], *և՝* «Պատվի՛ր Տիրոջը քո արդար վաստակից և քո արդար բերքից պտուղ հատկացրու Նրան» [Առակ. Գ 9]. *այդ[պիսի ընծան] է ընդունելի Աստծու առջև։* «Բայց նա, ով իր հափշտակածից, գողացածից, զրպարտությամբ, վաշխով ու տոկոսով, բռնի վաճառքով, տառապողներին զրկելով ձեռք բերածից է զոհ մատուցում եզ, ոչխար կամ այծ, իմ առջև պի՛ղծ է այն և նույնն է, թե շուն է մորթում, մարդու գանգ է ջախջախում և կամ խոզի արյուն է թափում» [տես Ես. ԿԶ 3]:

Եվ արդ, ինչպե՞ս որևէ մեկը կհամարձակվի մատուցել այդպիսի զազրելի զոհ, որ գեհենի առիթ է, և կամ աղքատներին ընդունելու և կերակրելու փոխարեն

հարուստներին և կարիք չունեցողներին պատվելով՝ կորստյան [մատնվել]։ Այդ նաև Քրիստոս արգելեց՝ ասելով. «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ոչ քո բարեկամներին, ոչ քո եղբայրներին, ոչ քո ազգականներին և ոչ էլ քո հարուստ հարևաններին, որպեսզի նրանք էլ փոխարենը քեզ չհրավիրեն, և քեզ հատուցում լինի: Այլ երբ ընդունելություն անես, կանչիր աղքատներին, խեղանդամներին, կաղերին ու կույրերին և երանելի կլինես, որովհետև փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Եվ դրա փոխարեն քեզ կհատուցվի արդարների հատուցման օրը» [Ղուկ. ԺԴ 12-14]: *Ո՞ւմն են այս խոսքերն ու հրամանները. մի՞թե Աստծու Որդունը՝ Հիսուսինը չեն։ Եվ արդ, ինչո՞ւ ես արհամարհում Քրիստոսի հրամանները։ Եթե կամենում ես քո մեծամեծներին պատվել, պատվի՛ր. երեք հարյուր վաթսունհինգ օր ունես՝ մարմնիդ տալու, այդ օրերից մեկը հոգուդ նվիրիր։ Ահա այդ մեկ օրն էլ չես կամենում նվիրել հոգևոր գործերի և հոգուդ համար մի հրավերք անել։ Եթե քո վիրավորված հոգու բժիշկ դարձրեցիր աղքատներին և նրանց հավաքեցիր՝ իբրև բարեխոս ու Աստծուն աղաչող, մեղքերդ քավելու համար նրանց քո տուն կանչեցիր, ապա աղքատներին ընդունելուդ օրը, երբ քավվում են քո մեղքերը, դադարեցրո՛ւ մարմնավոր խորհուրդներդ և ունևորներից, մարմնավոր սիրելիներից և քո մարմնավոր հարազատներից ոչ ոքի մի՛ հրավիրիր քո տուն, որպեսզի նրանց սպասավորելով, նրանց հաճոյանալով, նրանց շուրջը պտտվելով, նրանց սեղանի վերև հրավիրելով և առատ կերակուր և գինի տալով՝ մեղքերի թողությունից չվրիպես։ Իսկ քո մեղքերի քավության առիթները՝ հավաքված աղքատները, ներքևից վերև նայեն և դատարկ սեղանի առջև նստած՝ հոգոց հանեն, նրանցից ոմանք էլ իբրև արհամարհված-ներ՝ մնան դրսում և բազմածների ձայները լսեն միայն, իրենց սրտում իրենց արհամարհված լինելը խորհեն,*

թաքնված ու աչքները խոնարհած նստեն։ Արդ, զոհ [մատուցելուդ] օրը այսպիսի խնջույք չանե՛ս, որովհետև արածդ ծախսերի համար անվարձ կմնաս։

Այլ եթե կամենում ես քո մեղքերին թողություն խնդրել, կանչի՛ր որբերին ու այրիներին, նեղվածներին ու տառապողներին, խեղանդամներին, կույրերին ու կաղերին, կարոտյալներին ու գերիներին, բոլոր քաղցածներին և մխիթարություն չունեցողներին, նրա՛նց մխիթարիր, նրա՛նց սփոփիր, նրա՛նց կերակրիր, միայն նրա՛նց սպասավորիր, նրա՛նց շուրջը պտտվիր, նրա՛նց ուրախացրու և քաղցր խոսքերով ծառայիր, որպեսզի քո ընտանիքին մեղքերի թողություն և փրկություն լինի։ Ադպե՛ս կազմակերպիր զոհաբերությանդ հրավերքը և հարուստներին ու մեծամեծներին մի՛ ընդունիր թշվառների և աղքատների հետ, այլ թող նրա՛նք լինեն պատվավոր աթոռին, և նրանք՝ բարձրագլուխ, նրանք՝ [սեղանի] վերևում և նրանք՝ ներքևում, միայն նրա՛նց ընդունիր աղաչանքներով և միայն նրա՛նց ճանապարհիր աղերսանքներով։ Եվ եթե այդպես ընդունես, ոչ թե տվեցիր, այլ՝ վերցրիր,ոչ թե ծախսեցիր, այլ՝ մեծամեծ շահ հավաքեցիր և թողություն ստացար։ Այս ամենի մասին էր Տերն ասում. «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր հարուստներին» [Ղուկ. ԺԴ 12], *որպեսզի նրանց ուշադրություն դարձնելով՝ աղքատները չարհամարհվեն, իսկ դու աչառու լինելու համար իբրև օրինազանց չդատվես, ըստ այն խոսքի, որ ասում է.* «Եթե շքեղ զգեստներ ունեցողին ասեք. «Դու նստիր այստեղ՝ պատվավոր [տեղում]», *իսկ աղքատին ասեք.* «Եկ նստի՛ր իմ պատվանդանի մոտ», այդ ասելով՝ դուք արդյո՞ք ձեր մեջ աչառություն արած և չար խորհուրդների դատավոր չեք լինի» [տե՛ս Հակ. Բ 3-4], *քանզի հարուստներին հաճոյանալով՝ մեղք եք գործում՝ իբրև օրինազանց հանդիմանվելով օրենքից։*

Եվ արդ, աղքատների համար տրված խնջույքին աղքատներին ու հարուստներին միասին հավաքելով՝ այսպիսի դատապարտության մի՛ ենթարկվիր, քանզի հարուստները մտնելով՝ բարձ ու պատիվ են փնտրում, պատվավոր տեղերը, փառաբանություն, հարգանք ու շողոքորթություն են քեզնից պահանջում, իսկ աղքատները նստում են ներսում՝ մոռացված, խոնարհ ու լուռ։ Լավ և ընդունելի կոչունք չէ սա. ոչ ոք որոմը ցորենի հետ չի սերմանի և փուշը որթատունկի հետ չի տնկի, ոչ էլ քեզ է պետք մարդահաճություն ու սնափառություն խառնել խոնարհությանն ու մեղքերի ապաշխարությանը. դրանք խանգարում և ապականում են իրար։ Քեզ համար անհնարին է մի աչքով երկինք նայել, իսկ մյուսով՝ երկիր և այն օրը հաճելի լինել մարմնավորներին ու հոգևորներին միաժամանակ։ Հոգևորներն աղաչում և խնդրում են՝ քեզ երկինք տանել, իսկ մարմնավորները շողոքորթությամբ, սնափառությամբ, բազում սուտ խոսքերով ու սուտ հարգանքով դեպի անդունդ են քարշ տալիս քեզ,հոգևորներն հրավիրում են դեպի լույս, իսկ մարմնավորներն առաքում են դեպի խավարը։ Ահա այսպիսի վնասակար խափանիչ է քեզ համար աղքատների խնջույքին հարուստներին հրավիրելը։ Այլ դու աղքատների՛ն սփոփիր, աղքատների՛ն հանգստացրու, աղքատների՛ն աղաչիր, հացդ քաղցողների՛ն բաժանիր, մերկերի՛ն հագցրու, անօթևանին տա՛ր քո տուն, «և այնժամ կկանչես, և Աստված քեզ կլսի, և մինչև քո խոսելը քեզ կասի՝ ահա հասել եմ» [Ես. ԾԸ 9]։

Այսքան շահավետ է աղքատներին ընդունելը, և Աստծուն մոտ են նրանց աղոթքները։ Այս մասին և մարգարեն է ասում. «Երանի նրան, ով մտածում է աղքատի ու տնանկի մասին. փորձանքի օրը Տերը կփրկի նրան, երանելի կդարձնի երկրի երեսին և չի մատնի նրան իր թշնամիների ձեռքը» [Սաղմ.

Խ 2-3]: *Արդ, կարոտյալներին կերակրելու համար երանությունը այս է. և Քրիստոս [Իր համար արված] է համարում այն։ Իսկ հարուստների համար բացված սեղանից ի՞նչ կշահես և կամ ի՞նչ օգուտ ունի այն. քանզի շահավետ է քաղցածների՛ն ընդունելը և ո՛չ կուշտերին, և Քրիստոսն էլ չի ասում, թե՝* «Կուշտերի՛ն կերակրեցեք», *չի ասում, թե՝* «Հագեցածներին ջուր տվեք», *այլ.* «Տեսեք ծարավածներին և ջուր տվեք խմելու, տեսեք մերկերին և հագցրեք և օտարներին ձեր մեջ ընդունեցեք» [տե՛ս Մատթ. ԻԵ 35-36]: *Այսպիսիներին [կերակրելն] է արժանի վարձատրության և երանության, այլ ոչ թե հագեցածներին ու կարիք չունեցողներին կշտացնելը։ Որովհետև նա, ով կերակրում է աղքատներին ու կարոտյալներին, օտարականներին ու հիվանդներին, ոչ թե մարդկանց, այլ Քրիստոսին է ընդունում, Քրիստոսին է կերակրում, Քրիստոսին է հագցնում, Քրիստոսին է սփոփում, Քրիստոսին է մխիթարում, Քրիստոսին է հանգիստ տալիս և Քրիստոսին է սպասավորում, որովհետև անսուտ է տերունական խոսք* (տե՛ս Մատթ. ԻԵ 40):

Եթե [աղքատներին ընդունելով]՝ Քրիստոսին է, որ ընդունում ես, ապա արժան չէ, որ Քրիստոսի ընդունելությանը զեխացածների բազմությանը հավաքել, նրանց ներս բերել, իսկ Քրիստոսին դրսում թողնել, նրանք մեծարանքով՝ վերևում, իսկ Քրիստոս՝ արհամարհանքով ներքևում, նրանք՝ պատվով բազմոցների վրա, իսկ Քրիստոս՝ արհամարհանքով պատվանդանի մոտ, նրանք՝ այնտեղ՝ վերևում, զվարթորեն սպասավորություն են ընդունում, իսկ Քրիստոս այստեղ՝ ներքևում, նստում է գլուխը կախ։ Չպետք է այսպիսի արհամարհանքով ընդունել Քրիստոսին, որովհետև սրտմտության ու բարկության ես մղում և ոչ թե ողորմության և մեղքերիդ թողության։ Քանզի եթե ընդունելությունդ ողորմություն է, ինչո՞ւ

ես հրավիրում բազում ականատեսների և մարդկանցից հատուցում ընդունում։ Ահա Քրիստոս քեզ սովորեցնում է՝ ասելով. «Ողորմություն անելիս զգո՛ւյշ եղիր՝ մարդանց առջև չանելու այն։ Որովհետև նա, ով մարդկանց առջև է անում, մարդկանցից է հատուցում ստանում։ Այլ թող քո ողորմությունը ծածուկ լինի, և քո Հայրը, որ տեսնում է ծածուկը, հայտնապես կհատուցի քեզ» [տե՛ս Մատթ. Զ 1-4]։

Արդ, մի՛ զրկվիր այդպիսի վարձատրությունից և քո ողորմությանն ականատեսներ մի՛ հավաքիր, այլ զգուշությա՛մբ մատակարարիր՝ ծածուկ, որովհետև մոտ է գողը, կգողանա քո վարձը, դարանակալ է ավազակը, կհափշտակի քո ողորմությունը, մոտիկ են նենգողները՝ նենգելու և քո բարիքը քեզնից խլելու. շուրջբոլորդ ամբարիշտներն են շրջում և ջանում են զուր դարձնել ջանքերդ և անվաստակ թողնել գործերիցդ։ Այլ բոլորից զգուշացի՛ր երկյուղով, զգուշացի՛ր իմաստությամբ, զգո՛ւշացի՛ր մարդահաճության ախտից և սնափառության դևից, որպեսզի քո բարիքը՝ չարիք և քո լույսը խավար չդարձնեն։ «Քանզի եթե քո մեջ եղած լույսը խավար է, ապա խավարը՝ որչա՛փ ևս ավելի» [Մատթ. Զ 22]. *քանզի եթե չարիք դարձավ ողորմությունդ, ապա չարիքներդ ինչ պիտի լինեն։ Ուստիև ծածկի՛ր բոլորից քո ողորմությունները և ինչպես որ չես կամենում մեղքերիդ պղծությունները ցույց տալ, այդպես էլ ապաշխարությանդ ողորմությունը ցույց մի՛ տուր, այլ ծածկի՛ր ապաշխարությանդ առաքինությունը, ինչպես զազրելի մեղքերդ, և ամեն ժամ ընդունելի կլինի քո ապաշխարությունը, և մեղքերի թողություն կգտնես։ [Մարդկանց] հաճելի լինելու ու սնափառության համար ընդունելություն մի՛ արա և ի ցույց մարդկանց ողորմություն մի՛ տուր աղքատներին, չքավոր աղքատներին ընդունելուդ օրը մեծամեծներին ու ունևորներին [նվերներ] մի՛ բաշխիր և ո՛չ էլ հրավիրիր նրանց։ Աստծուն մի՛*

նվիրիր քո կալի կամ հնձանի խոտանը, ծուռ մի՛ նայիր Եկեղեցուն կամ քահանաներին տրված պտուղներին, որի համար հանդիմանվեց Կայենը, մեր հոտի գերն ու լավը մեզ չթողնե՛նք և վատն ու խոտանը մորթենք աղքատներին ու կարոտյալներին ընդունելու օրը, ագահությամբ, հափշտակությամբ, անիրավությամբ հավաքված ունեցվածքից աստվածային ընծաներ չմատուցե՛նք, որովհետև Աստծու առջև պիղծ են բոլոր զրկողներն ու նրանց ինչքերը։ Եվ այս ամենն անենք ըստ Աստծու կամքի, որպեսզի Աստված հաճի, ընդունի և մեղքերի թողություն շնորհի մեզ։ Սրբությամբ և անմեղությա՛մբ ապրենք և փառքով ու պատվով երկինքը ժառանգենք և արժանանանք հասնելու խոստացված բարիքներին մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին վայել է փառք և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։

Է. *Փոխ տալու և վաշխ վերցնելու մասին*

Նչասիրության ախտերը մեծ չարիքներ են, բայց ամենից մեծ չարիքը փոխ տվածի համար տոկոս վերցնելն է. այն մշտապես նախատվում և պարսավվում է և՛ Հին, և՛ Նոր Կտակարաններում, և պատուհասվելով չարապես պատժվում են վաշխ և տոկոս փնտրողները. նրանք, ովքեր Աստծու պատվիրաններին հակառակ՝ իրենց արծաթը վաշխով են տալիս և տոկոսով են պահանջում այն, անամոթաբար ուտում են տնանկների մարմինը, անողորմաբար խմում են նրանց արյունը և չեն լսում Եզեկիել հոգելից մարգարեին, ով մեծամեծ չարիքների մեջ է դնում փոխերի տոկոսները և [այն իր] պղծությամբ համեմատում է կռապաշտության հետ՝ ասելով. «Իսրայելի տունը կուռքերով պղծվեց, որովհետև տոկոս պահանջեց» [տես Եզեկ. ԺԸ 13]: *Իսկ Մովսեսն ասում է.* «Քո եղբորը վաշխով արծաթ չտա՛ս, որովհետև այն անօրինություն է Աստծու առջև» [Բ Օր. ԻԳ 19, *որը և երկնային խորաններից դուրս է դնում նրանց, ովքեր վաշխ և տոկոսներ են պահանջում։ Իսկ [Դավիթ մարգարեն] ասում է.* «Նա, ով իր արծաթը վաշխով չի տալիս և իրավունքի դեմ կաշառք չի վերցնում, հավիտյան չի սասանվի» [Սաղմ. ԺԴ 5]: *Մյուս մարգարեն ասում է.* «Ով լեռների վրա զոհաբերվածը չի ուտում, վերադարձնում է պարտապանի ավանդը, վաշխ և տոկոս չի պահանջում, արդար է նա և ապրելով պիտի ապրի» [տես Եզեկ. ԺԸ 6-9]: *Իսկ նրանք, ովքեր վաշխ և տոկոս են պահանջում, ընդդիմանում են Աստծու պատվիրաններին, հակառակվում են Հոգու հրամաններին, քանզի անօրենություններով չարաչար գործադրում են Հոգու հրամաններով արգելվածը։*

Եվ այնքան անօրեն են տոկոսով փոխ տալու ախտերը, մինչև իսկ բռնությամբ որդի է փնտրում ամուլ արգանդից, պտուղ է որոնում ապառաժ քարերից, առանց սերմերի կամենում է արդյունք ժողովել, արուներից ծնունդներ պահանջել, քարից կաթ կթել, քարերից բուրդ ստանա։ Լիովին վերցնում է արծաթը, որ փոխ է տվել, առանց սերմանելու հանդգնում է արդյունքներ ժողովել և իր տունը լցնել անօրեն ստացվածքներով։ Ապա նստում և խորհում է նախ՝ բազմացնել ու ավելացնել իր ունեցվածքը և ապա՝ անօրինությամբ [հավաքածներից] տնանկներին ողորմություն տալ և հաշտության զոհաբերություններ անել, որ հանդիմանում է Եսային՝ ասելով. «Ով իր հափշտակածն է ինձ զոհ մատուցում, նույնքան զազրելի է, որպես թե շուն մորթի և կամ մարդու գանգ ջախջախի» [Ես. ԿԶ 3]: *Քանզի աւելի լաւ է, որ աղքատներն անտեսվեն և ողորմություն [չստանան], քան թե հափշտակվածից ինչ-որ բան ստանան։ Ավելի լավ է՝ քահանաները սովից մեռնեն, քան թե անարժանների ձեռքով կերակրվեն։* «Ով որ ուրիշից վերցրածն է բաշխում մյուսներին, ասում է, ոչ թե վարձ կստանա, այլ պատիժներ ու սաստիկ տանջանքներ», *որովհետև փոխ տվածի ծնունդներն այրող հուր են ու սպանող սուր։ Իսկ նրանք, ովքեր համարում են, թե անիրավ ինչքերով Աստծուն են ծառայում, առավել են բարկացնում Նրան։ [Քանզի].* «Պատվի՛ր, ասում է, Տիրոջը քո արդար վաստակից և քո արդա՛ր բերքից պտուղ հատկացրու նրան» [Առակ. Գ 9]:

Մի՛ խորհիր հափշտակությունը հավաքել և ապա ողորմություն անել մեղքերի թողության համար, որովհետև երբեք հրով հուրը չի հանգչի, վերքերը վերքերով չեն բժշկվի, մեղքերով մեղքերը չեն սրբվի և ոչ էլ անօրինությամբ կքավվեն անօրինությունները, որովհետև հույժ չար են վաշխերի անօրենությունները, և հղիի եր-

կունքի պես են նրանց պայմանաժամերը։ Եվ եթե պարտապանն աղքատ էլ է, մտածմունքների և հոգսերի մեջ հալումաշ է լինում մշտապես, անքուն կամ դառնաքուն են նրա գիշերները և տխուր, իսկ ցերեկով շրջում է տրտում ու մտահոգ՝ չիմանալով, թե ուր գնա։ Երբեմն ուզում է վաճառել պախրան, որպեսզի հատուցի վաշխ[առուի] տոկոսները, երբեմն անօրեն գողությունն է ախորժում՝ հոգին կորստյան մատնելը և Աստծուն դիմադարձ լինելը փոխերի վաշխերը պահանջողի պատճառով, երբեմն մտածում է գաղտնի հեռանալ օտար աշխարհ։ Թափառական շրջում է պարտքերի բռնության պատճառով և բազում խորհուրդներից վարանում, մտքերի շփոթից մոռանում է աղոթքներն առ Աստված և երբ ոտնաձայն է լսում, նա ներսում երկյուղից սրտաբեկ է լինում, իսկ երբ փոխառուն դրսում է տեսնում փոխատուին, փախչում ու թաքնվում է, ինչպես աղետի տագնապից, սիրտն սկսում է դողալ, գլուխը կախ ու լեզուն կապված են մնումև ամենևին չի իշխում, չի համարձակվում նայել նրա երեսին, որովհետև նրա վրա բազմացան փոխ վերցրածի տոկոսները, և ոչինչ չունի հատուցելու և փոխատուին գոհացնելու։

Եվ արդ, տե՛ս, ո՛վ վաշխերի պահանջողդ, թե որքան տարակուսանքների ու վշտերի մեջ ես դնում եղբորդ և որքան հեծեծանքների ու աղետների պատճառ ես դառնում, դիմադա՛րձդ Աստծու և բազում մեղքերի պարտապա՛նդ, փոխ տվածիդ վրա վաշխ և վաշխերի վրա վաշխ դնելով. չար ծնունդների չար թոռներ ես ծնում. դրանք օձեր են՝ իժերի ծնունդներ։ Իժերի ծնունդները ծակում են իրենց մոր որովայնը և դուրս են ելնում, փոխ տվածի ծնունդները վաշխառուների հոգին են պատռում և սպանում, դառը տանջանքներ ու ահեղ հուր պատրաստում։ Որովհետև դառը արհեստ և անօրեն մշակություն

ունեցավ, որ հանդգնում է առանց հողի տնկել և առանց սերմի հնձել, որի սերմը ժանտ է, իսկ հունձքը՝ դաժան, մշակներն անօրեններ են, և սատանան է սատարողը, վարիչն ու խրատատուն չար փոխերի տոկոսների անօրեն հնձողների, որ հրի պես վառում է անօրեն վաշխերի ցանկությամբ, և նա հանապազ սուր և հուր է ժողովում իր շտեմարաններում, օձերից, իժերից ու քարբի ծնունդներից առավել չարաթույն սպանողներ է ժողովում իր տանը փոխերից ու տոկոսներից։ Նա չլսեց ողբը մարգարեի, ով ըղձում էր աղավնու պես թևեր ունենալ՝ հեռանալու քաղաքներից, որովհետև «վաշխառությունն ու նենգությունը չվերացան նրա հրապարակներից» [Սաղմ. ԾԴ 9-12], *և ոչ էլ առ Աստված նրա աղաչանքը, որպեսզի չար վաշխերից փրկի նրանց անձերը, այլ աչքերը փակած և ականջները խցած՝ անդադար ժողովում է վաշխերի տոկոսները։*

Ո՛վ չար ախտի անօրեն ստացող. ինչից հարկ էր երկյուղով հեռանալ տոկոսներից՝ գթով, նա մոտենում է վաշխի մեծ ցանկությամբ, որ ապշեցնում է միտքը՝ չնայելու Աստծու պատվիրաններին, հիմարեցնում է սիրտը՝ չհիշելու ահեղ դատաստանի Օրը, քարացնում է միտքը՝ չխոնարհվելու՝ գթալու համար տառապող եղբորը, խցում է ականջներն ու աչքերը, չի ամաչում ականատեսներից, այլ հանդգնելով մերկացնել [աղքատին]՝ հավիտենական հուր է հավաքում ու գանձում իր թշվառացած հոգու համար։ Եվ ինչպես որ հողագործներն են Աստծուն աղաչում ու խնդրում անձրևների, սերմերի և աշխարհի լիության համար, այդպես վաշխ հավաքողը աշխարհին աղքատություն, տագնապներ, սաստիկ սով և հարկապահանջներ է ցանկանում, որպեսզի իր ինչքերը ծառայեցնի գործի և վաշխ ու տոկոսներ բերելու։ Փոխ տալու \ամանակ զվարթերես կեղծավորում է, իսկ

երբ հասնում է տոկոսներ [վերցնելու] ժամանակը, տեսնելով պարտապանի տարակուսանքն ու չքավորությունը՝ չի ողորմում և ոչ էլ խնդրողի երդումին է հավատում, չի խոնարհվում վարանածի աղաչանքի առջև, այլ դժոխացած՝ մնում է անխոնարհելի և անհաշտ և փոխատուն իր ծառան է համարում փոխառուին։ Քննում է, թե իրեն արժանի ինչ ունի, հետազոտում է, թե տանելով՝ ուր թաքցնի, դռնից դուրս է պահում, բազմության մեջ նախատում է, սիրելիների մոտ՝ ամաչեցնում, հրապարակներում՝ խեղդում։

Դժնդակ հանդիպում է տեղի ունենում տանը. պարտապանն իր կյանքն ավելի ծանր է տեսնում, քան՝ մահը, ատում է ժամադրության օրը, երկնչում է ամոթից, երեսը խոնարհում է [վաշխը] պահանջողին նայելիս, աչքերը վարագուրվում են բռնված շան նման, ամոթից կուչ է գալիս։ Տեսե՛ք ողորմելի տեսարանը, տեսե՛ք սատանայի դաժան մեքենայությունները, տեսե՛ք նզովքների [արժանի] անօրեն օգուտները, քանզի մոլար ախտով անամոթացած՝ աղքատացնում են ունևորներին, մերկացնում են աղքատներին, խեղդում են մերկին, արտասուքներից արծաթ են հավաքում և բերկրում են, երբ ավելանում է անօրեն շահը։ Ո՛վ անօրեն չար վաշխերին, որ մահվան որոգայթ է ստացողների համար, բայց չգիտեն՝ խեղդող պարան է, հոգու կապանք, գեհենի առիթ, խավարի առաջնորդ և բոլոր տեսակի տանջանքներն ու հավիտենական ամոթը նախապատրաստող։

Ուստիև մեծ զգուշությամբ փախչե՛նք ինչքեր տենչալուց, փախչե՛նք այդ չար ախտից, փախչե՛նք չարաժանիք գազանից, փախչե՛նք սատանայական հնարից։ Քանզի վաշխը չար օձի ուսուցումն է, վաշխը դիվական գյուտ է, վաշխը թշնամու սերմն է, վաշխը տանջանքների առհավատչյա է, վաշխը բարեպաշտության խափանիչ է,

վաշխը գեհենի ճանապարհ է, վաշխը արքայությունից զրկող է, վաշխը վրդովումն է մարմնի և սպանիչը՝ հոգու, մերժումը ամենայն արդարության։ Արդ, փախչե՛նք այդ աստվածամարտ ախտից, խավարի վարդապետից, մարդասպան մորից։ Աղաչում եմ՝ մի՛ հիվանդացեք այդ հիվանդությամբ, իսկ եթե արդեն ընկել ենք այդ ախտի մեջ, դո՛ւրս փախչենք։ Նրանք, ովքեր չարաչար շարժվում են դրանով, արժանի են սգի և ողբալի արտասուքների, որովհետև ախտի չարությունը նման է այն բանին, ինչպես եթե մեկը սուրը վերցրած՝ հոշոտում է ինքն իրեն։

Այդ [ախտը] բազում գլուխներ ունի. ագահ է, որը կռապաշտ է դարձնում, անամոթ է, որը գազանամիտ է դարձնում,անագորույն է, որն անողորմ է դարձնում, անիրավ է, որը հափշտակող է դարձնում, անձնասեր է, որը քրիստոսատյաց է դարձնում և հակառակ է Աստծու կամքին։

Եվ այժմ ի՞նչ ասեմ. քրիստոնյա չէ՛ այն մարդը, որն անիրավությամբ վաշխ է ժողովում, այլ սատանայի բագին է այնպիսին՝ լի մարդկային զոհերով,գերեզման է՝ լի նեխած մեռելներով, նա նման է գեհենի բորբոքուն հրին, որը կուլ է տալիս ամեն բան և երբեք չի հագենում։ Զարհուրե՛նք, սիրելինե՛ր, թե ո՛ւր տարավ մեզ ունեցվածքի ցանկությունը, զարհուրենք և մեծ զգուշությամբ արմատախի՛լ անենք դրա արմատը, որպեսզի ծայրերը աճելով՝ մեզ չհոսեցնեն ցած՝ դեպի անդունդ, դեպի գեհենի կրակը։

Եվ արդ, ի՞նչ անենք և կամ ո՞ր օրինակով արմատախիլ անենք չար արմատը, որովհետև իբրև օձերի ու գազանների հետ ենք խոսում և ոչ իբրև քրիստոնյաների ու քրիստոսասերների, ովքեր Աստծու հրամաններին են հնազանդվում։

Պատերազմում են՝ բարձրաձայն բարբառելով, թե՝ «Եթե մեր արծաթը վաշխով չվերադառնա մեզ, ապա փոխ չենք տա և չենք ողորմի հեծեծացող եղբորը»։ Այդ խոսքը անօրեն է և Աստծու կամքին հակառակ, այդ խոսքը սատանայական կամքի ծնունդ է, որ հեռացնում է Աստծուց. այդ խոսքը չար թշնամու սերմն է, որպեսզի մոլորեցնի ձեզ ճշմարտությունից, քանզի հենց այդ են չարի վարդապետության խորհուրդները ընդդեմ Աստծու պատվիրանների։ Քանզի Քրիստոս ասաց. «Եթե փոխ տաք նրան, ումից ետ ստանալու ակնկալիք ունեք, այդ նաև մեղավորներն են անում, իսկ դուք, ասում է, փոխ տվեք նրանց, ումից ետ ստանալու ակնկալիք չունեք» [Ղուկ. Զ 35], *երբ միմյանց բեռ ենք վերցնում, կատարած ենք լինում Քրիստոսի օրենքը, որն ասում է.* «Ձեր առատությունը թող լցնի չքավորների պակասությունը, որպեսզի երկու կողմում էլ հավասարությունի լինի» [հմմտ. Բ Կորնթ. Ը 14]։ *Եվ այժմ հիշի՛ր, որ ո՛չ թե քեզ հրամայում է չափով ողորմություն տալ աղքատին, այլ քո ունևորությանը հավասարեցնել նրա չքավորությունը, որովհետև Աստված քո եղբայրն անվանեց չքավոր աղքատին և անդամ՝ քո անդամներից։ Իսկ քեզ համար օրենք չէ քո անդամին մերկ տեսնել ու անտեսել, կամ էլ զրկել ունեցածիդ բաժնից, որովհետև նա քո եղբայրը կոչվեց։*

Եվ արդ, եթե նրան քո եղբայրն ես համարում, ապա հեթանոսաբար մի՛ արհամարհիր Աստծու պատվիրանները, այլ քրիստոնեաբար կատարի՛ր Տիրոջ հրամանները.Նա հրամայեց լցնել ոչ միայն աղքատի, այլև շատ շատերի պակասությունը։ Արդ, Աստծուց այս հրամանն ունես, իսկ դու կա՛մ [դրամդ] փոխ ես տալիս չարաչար վաշխով և կա՛մ անօրինաբար ու անաստվածաբար պահում ես այն։ Ավելին՝ դեռ անամոթաբար ասում ես, թե փոխ ես տալիս, սիրում ես ասել, որ ավելի լավ է մեկը տամ, երկուսը ետ առնեմ, քան թե բոլորովին չտամ։ Իսկ

նա՝ [աղքատը], կամենալով փարատել այդ ժամի նեղությունները, նեղության պատճառով ակամայից վերցնում է։ Դու, եթե աստվածապաշտ ես, նայի՛ր Աստծու պատվիրաններին, որ հրամայում է ձրի տալ նեղության մեջ գտնվողին և ազատել նրան [հարկ] պահանջողների բռնությունից, որպեսզի դու նույնպես ազատվես թշնամուց, ով մշտապես չարչարում է քեզ՝ ժողովելու, պահելու և գանձելու ուրիշների ունեցվածքը, բայց երբեք չվայելելու այն, որովհետև. «Ո՛չ աչքն է տեսնելով հագենում, և ո՛չ արծաթասերը՝ ուրիշներինը ժողովելով ու առնելով» [տես Ժող. Ա 8]: *Ագահ մարդու անձը դժոխք է, երբեք չի կշտանում և երբեք չի ասում՝ բավական է։*

Ինչո՞ւ ես տարածվում, ինչո՞ւ ես անօրինություն գործում, ո՛վ թշվառական, ինչո՞ւ ես հավաքում անպտուղ արծաթը՝ հավիտենական գեհենի առիթը։ Դի՛ր քո աչքերի առջև Քրիստոսի դատաստանը. ի՞նչ պատասխան պիտի տաս, երբ շուրջդ հավաքվեն վաշխի պատճառով քո կողմից զրկվածները և ամբաստանեն քեզ Դատավորի առջև, ի՞նչ պիտի անես, ո՛վ թշվառական, ինչպե՞ս պիտի աղաչես։ Այնտեղ ո՛չ աղոթքները, ո՛չ ունեցվածքը, ո՛չ հարստությունը [չեն կարող քեզ օգնել]. բաժանված ես սիրելիներից, հեռու ես օգնականներից, չունես բարեխոս, չունես պատասխան. ամաչելով, տրտում, տխուր, միայնացած ու անհամարձակ ես, որովհետև ուր աչքդ ածում ես, պարզ տեսնում ես այն չարիքները, որոնք գործել ես. այստեղ տեսնում ես որբերի արտասուքը, այնտեղ՝ այրու հառաչանքները, մեկ այլ տեղում՝ քո կողմից կողոպտված աղքատին, ծառաներին, որոնց չարչարեցիր, դրացիներին, որոնց բարկացրեցիր. բոլորը քո առջև պիտի ելնեն և քո պատճառած չարիքներից առավել դաժանորեն քեզ հետ պիտի շրջեն հանապազ, քանզի ինչպես որ մարդու ստվերն է անբաժան նրա-

նից, այդպես էլ մարդու մեղքերն են անբաժանելի հոգուց և հրապարակում հայտնապես ցույց պիտի տան քո բազում մեղքերի կերպարանքները։ Ուստիև ոչ ոք այնտեղ ուրանալ չի կարող իր չար և պիղծ գործերը, այլ պիտի կապվի չարախոս լեզուն, կարկամի անօրեն բերանը, պիտի դողա հանցավոր մարմինը, որովհետև յուրաքանչյուրի մեղքերը, առանց ձայն արձակելու,պիտի վկայեն նրա գործերի մասին, այնպես, ինչպես որ գառների մեջ երևում է այծերի սևությունը, այդպես էլ մեղավորների անձերը խավար հագած և խավարով պատած պիտի երևան լուսազարդ հրապարակում։

Եվ արդ, ինչո՞ւ ես այս անցողիկ կյանքի և կորստյան առիթ արծաթի համար մատնվում անվերջանալի տանջանքներին և հավիտենական ամոթին, ինչո՞ւ չես մերժում ընչասիրության չար ախտը, ինչո՞ւ չես հեռանում տոկոսի շահից, որը քեզ անօրենից առավել պիտի դատապարտի ահավոր հնոցների կրակին։

Բայց կասես, թե. «Եթե բաժանեմ ունեցածիս ավելորդը, կարհամարհվեմ, կաղքատանամ ու կսնանկանամ»։ Մի՞թե չես լսում մարգարեին, որ ասում է. «Չտեսա արդարին արհամարհված և ոչ էլ նրա զավակին՝ հաց մուրալիս» [Սաղմ. ԼՋ 25]: *Իսկ եթե աղքատության հասար, քեզ համար ավելի լավ է հեծեծել ու թափառել, շրջել ու հաց մուրալ ողորմածներից, քան թե կերակրվել անօրեն ու դառը տոկոսներով։ Բայց ունես ձեռքեր, ունես ոտքեր, ունես արվեստ, աշխատի՛ր, վարձվի՛ր, ծառայի՛ր և կե՛ր։ Մարմինը դարմանելու շատ հնարներ կան, եթե կամենում ես վաստակել։ Եթե մրջյունը, որ մի չնչին միջատ է, կարողանում է ինքն իրեն կերակրել, եթե մեղուները, որոնք ո՛չ ձեռք և ո՛չ էլ արվեստի գործիք ունեն, իրենց նշխարները թագավորներին են ընձեռում, քեզ Աստված ձեռքեր, գործիք ու ամենահնար միտք է տվել, առանց*

մեղք գործելու նմանվի՛ր [իրենց] կյանքի սնունդը [հայ-թայթողներին]։

Եվ այժմ ընթացքդ արդարացնելու համար ի՞նչ պա-տասխան պիտի գտնես, որովհետև քեզ հրամայվեց աշխատել և տալ նրան, ով դրա կարիքն ունի, մինչդեռ դու քո անձի [կարիքները] չես կարողանում հոգալ։ Եվ տոկոսով փոխ տալու պատճառով մատնվում ես ահա-վոր աղետների։ Քեզ հոգով նետում են տանջանքների հրացայտ հնոցի մեջ, ուր անդադար լաց է և ատամնե-րի կրճտոց, որից թող փրկի մեզ Սուրբ Հոգու շնորհն ու ողորմությունը։ Նրան փառք և զորություն հավիտյանս հավիտենից։Ամեն։

Ը. Աղքատներին միսիթարելու մասին

Ո՞րն ասեմ, որի՞ մասին պատմեմ և ո՞րը թողնեմ ու արհամարհեմ։ Ինչը կարևոր չեմ համարում, այն է շարժում լեզուս՝ [խոսելու] և շատ բաներ է հավաքում խորհուրդներիս մեջ։ Բայց քանի որ կարևոր եմ տեսնում ճառիս միտքը, իմ կամքով ես կխոսեմ և կպատմեմ [այն մասին], թե որքան են վհատվում տառապողները, չարչարվում՝ չքավորները անօրեն հիմարությամբ, մինչև իսկ հույժ անմտության պատճառով Աստծուն են հայհոյում՝ Նրան ընչասեր հարուստների կողմնապահ անվանելով։ Ասում են. «Աստված մեծատուններին է սիրում և նրանց կողմնակիցն է, նրանց գործերն է հաջողեցնում, չի նայում տառապողների զրկանքներին, այլ արհամարհում ու անտեսում է նրանց»։ Այսպիսի անօրեն խոսքերով ուրանում են Աստծու ճշմարտությունն ու արդարությունը և այնպես են կարծել տալիս, թե Նա՝ Արդարագործը, անօրինության գործակից է։ Դրանով հայհոյություններ են առաքում բարձունքներ և Աստծու մասին անիրավ բաներ են խոսում։ Դրանով ուրանում են Աստծու ճշմարտությունն ու ընկղմվում են հերձվածողների անդունդը։ Ո՛չ հրեան և ո՛չ էլ հեթանոսը չեն կարող ուրանալ Աստծու արդարությունն ու ճշմարտությունը, որն ուրանում է հայհոյողը ամբարշտանալով, և կորստյան մատնված հոգիների վրա արթնացնում է Աստծու սաստիկ բարկությունը։

Արդ, ինչո՞ւ ես անիրավ բաներ խոսում Աստծու մասին, ո՛վ չքավոր և աղքատացած, մի՞թե Աստված զրկեց քեզ Իրեն պատկանող որևէ բանից, մի՞թե հարուստնե-

րին ու աղքատներին, ինչպես եղբայրների, միապես չբաժանեց նույն աչքերը, նույն ոտքերն ու ձեռքերը. արեգակից, օդից, անձրևից բոլորս ենք վայելում, բոլորս էլ հողից ենք և Ադամից, բոլորի համար կա միայն մեկ մկրտություն, մեկ շնորհ, Քրիստոսի մեկ մարմին և արյուն, բոլորի համար կա մեկ երկինք, մեկ երկիր և մեկ բնություն։ Ահա սրանք են Աստծունը, որ շնորհեց բոլորին՝ աղքատներին ու հզորներին։ Արդ, ինչպե՞ս է, որ զրկեց քեզ և աչառու եղավ հարուստներին։ Գիտեմ, որ ասելիք չունես այս մասին, բայց հարցնում ես՝ որտեղի՞ց է սրա հարստությունը։ Հիշի՛ր, Աստված նրան չտարավ, բազում ինչքեր ցույց չտվեց և դրանք չտվեց նրան, իսկ քեզ՝ զրկեց, այլ ոմանց հարստությունը ագահությամբ ու հափշտակությամբ է [ձեռք բերված], ոմանցը՝ անդուլ աշխատանքով, ոմանցը՝ հայրական ժառանգությամբ։

Իսկ ինչո՞ւ ես տրտմում դու՝ աղքատդ, որ անհոգության, հանդարտության ու խաղաղության մեջ ես, որ հեշտությամբ և քչով ես բավարարում մարմնիդ անհրաժեշտ կարիքները։ Մինչդեռ դժվարությամբ է պատրաստվում մեծատունների ճաշն ու ընթրիքը, իսկ նրանց վայելքները լի են բազում հոգսերով, մանավանդ երբ նրանց կերակուրը սպանությունների ու զրկանքների [գնով] է ձեռք բերված, խղճահարությունը մշտապես հալումաշ է անում նրանց, և իրենց որովայնի բազում աղբի պատճառով բազում մրրիկներ վախով են պատում նրանց մտքերը։ Նրանց բոլոր կողմերից սպառնում է խիստ ձմեռը. կասկածը՝ գողերից, վախը՝ ավազակներից, արհավիրքները՝ զրպարտողներից, տագնապը՝ հարկահաններից, թշնամանքը՝ նախանձողներից, չարախոսությունները՝ թշնամիներից, ամեն կողմից նենգություն ու անձկություն, քանզի բոլոր կողմերից վիշապների պես բացել են իրենց բերանները և կամե-

նում են կուլ տալ նրանց։ Ահա հարուստների հոգսերն ու տրտմություններն ավելի շատ են, քան նրանց հանգիստն ու ուրախությունը։ Որտե՞ղ է հարուստների ուրախությունը, երբ մշտապես երկնքից անձրև են խնդրում, մտահոգվում են դառնաշունչ ձմեռվա, դաշտերի պահպանության, գազանաբեկ հոտերի համար, դողում են ավազակներից, տրտմում սատկած անասունների համար, հսկում են իրենց գանձերը և հալումաշ են լինում, երբ դրանք պակասում են, ցեցն անգամ տիրում է մեծատուններին և վախեցնում է նրանց։ Իսկ ի՞նչ ասեմ ահեղ Օրվա արհավիրքների և դառը տանջանքների համար ողբալու մասին, որ այստեղ իսկ սարսափում են պատվիրանների ահից, հանապազ սոսկում են, երբ մարգարեների ու առաքյալների ընթերցվածքները հանդիմանում ու կշտամբում են անողորմ ու ագահ հարուստներին։

Արդ, ո՞ւր է հարուստների ուրախությունը, և կամ ո՞ւր է նրանց մխիթարությունը, որ բաղձում ու ցանկանում ես դու՝ չքավորդ, և տրտմում քո հեշտ ու խաղաղ կյանքի համար, քեզ եղկելի թշվառական ես համարում և արհամարհում ես քո բազմապատիկ [ավելի] իմաստությունը։ Քանզի ո՛չ վախենում ես գողերից, ո՛չ երկյուղում ավազակներից, ո՛չ մտահոգվում ես դաշտերի խոտի և ո՛չ էլ լեռների արոտավայրերի համար, ո՛չ վախենում ես հովիվների խաբելուց և ո՛չ գազանների հափշտակելուց, ո՛չ սարսափում ես բռնակալների բռնությունից և ո՛չ էլ իշխանների հարկերից, ո՛չ քեզ նախանձում են նախանձոտները, և ո՛չ զրպարտում են զրպարտողները, ո՛չ մեկից չես վախենում և խռովվում. ո՛չ իշխանների ահը կարող է զարհուրեցնել աղքատին և ո՛չ տերերի բարկությունը, աղքատին ոչ ոք կողոպտել չի կարող, ոչ էլ խռովվեցնել ու սաստել։ Հարուստներն են խռովվում ու աղմկում, իսկ աղքատը ծաղրում է նրանց, ամբարտավան իշխանները

զայրանում են հարուստների վրա, իսկ աղքատը նրանց ոչինչ է համարում, երկիրը լի է գողերով ու ավազակներով՝ աղքատները չեն վախենում նրանցից, հրապարակները լեցուն են զրպարտողներով ու բռնացողներով՝աղքատին չի մտահոգում այդ, դատավորները գայլ ու գազան են դարձել, բայց աղքատներին չեն կարող լլկել. ոչինչ չունենալու պատճառով խաղաղ ու անհոգ է աղքատի կյանքը, ազատ՝ ամեն բանից և անվախ՝ բոլորից, չի նախանձում, վրեժխնդրություն չի փնտրում և հեռու է շատ ախտերից։ Կարիք չունի բազում շինությունների, ոչ էլ փականքների։ Աղքատի հիվանդության ժամանակ տրտմություն չկա, ոչ էլ խռովություն և աղմուկ կա նրա մահվան ժամանակ, անհոգ է աղքատի կյանքը, և անզբաղ է նրա հանգիստը։ Այս բոլոր ազատություններն ունի նա այս [աշխարհում]։

Իսկ ո՞ր բերանը կարող է պատմել այն մեծությունն ու փափկությունը, անանց բարիքների [այն] վայելչությունները, որ պատրաստված են այնտեղ՝ չքավորությանը համբերելու համար, որոնք շա՛տ ավելի ցանկալի ու փափագելի են, քան այս աշխարհի թագավորների բոլոր վայելչությունները։ Եթե միայն առանց տրտնջալու [մարդն] համբերի աղքատությանը, թեթև ու անհոգ անցնի այս աշխարհի կյանքի միջով, որ խնդրի միայն օրվա կերակուրը, որ մեծ ցանկությամբ ախորժելով ճաշակի արհամարհված [ուտելիքը]՝ իբրև քաղցրահամ, և ննջի անհոգաբար։ Մինչդեռ հագեցած հարուստներին անուշահամ [ուտելիքն] էլ է անհամ, անպիտան ու տաղտկալի թվում։ Նրանք խմում են թանկարժեք գինիներ, հարբում ու կորցնում են բանականությունը, իսկ աղքատը էժանագին ջրով է հագեցնում նույն ծարավը և շատ ավելի զգաստ ու առողջ է, քան [հարուստ] հարբեցողը։

Արդ, ինչո՞ւ ես քեզ խեղճ ու թշվառ համարում. աղքատի կյանքն ավելի անհոգ ու հեշտ, նրա կերակուրը շատ ավելի համեղ ու ախորժելի եմ տեսնում, քան հարուստներինը, որովհետև նրանք հեռու են բոլոր տեսակի նենգություններից, նրանց վայելքը զերծ է ագահների խռովությունից։ Մինչդեռ հարուստների վայելքներն անմաքուր են և անպարկեշտ, նրանց շվայտությունները լի են ամեն տեսակի պղծություններով, և հետո՝ նրանց [հարստությունը] հավաքված է հափշտակությամբ ու զրկանքով, անօրինությամբ ու ագահությամբ։ Նրանց սեղանները նույնպես պատրաստված են շատերի քրտինքով. մեծ է նրանց վախը և սակավ է նրանց վայելքը. զանազան հոգսեր և քիչ հանգիստ, այն էլ՝ մեծ անվստահությամբ, իսկ քաղցող աղքատի կարիքները սակավ են, քունը՝ հանգիստ։ Անկողին մտնելիս, իբրև թշնամիներ ու պատերազմողներ, հարուստին շրջապատում են նրա խորհուրդները, նրան պաշարում են տան և ծառաների մասին մտահոգությունները, երկյուղը՝ գողերից ու քսակահատներից, դրացիների և իշխանների նենգությունը, իր ունեցվածքն ավելացնելու և առավել հարստանալու մասին հոգսերը։ Ահա՛ թե որքան դառն է ագահ հարուստի մահիճը, ամենուրեք տրտմության վրա տրտմություն է ավելանում, որովհետև տրտմում է, երբ տեսնում է վնասն ու կորուստը իր տան մեջ, տրտմում է, երբ տեսնում է կորուստը իր հանդերում, տրտմում է՝ իր հոտերի մեջ կորուստ տեսնելով. ամեն կողմից ալիքների պես [նրա վրա] են խուժում մտահոգությունն ու տրտմությունը։ Իսկ ի՞նչ ասեմ կամ ի՞նչ պատմեմ այնտեղի տանջանքների ու գեհենի կրակի մասին, որոնք պատրաստված են ագահ ու անողորմ հարուստների համար։

Եվ արդ, դու՝ աղքատդ և չքավո՛րդ, ինչո՞ւ ես տրտմում ու տագնապում անընչությանդ նավահանգստի համար

և խնդրում ես հարստության այդպիսի մրրիկներ ու ալեկոծություններ. մի՞թե մեծ բան չէ քեզ համար այն, որ անհոգ ես գիշերով, անհոգ ես ցերեկով, անհոգ ես տանը, անհոգ ես հրապարակում, չես վախենում ճանապարհին, չես վախենում օթևանում, չես վախենում ո՛չ բռնակալներից և ո՛չ քսակահատներից, մանավանդ երբ համբերությամբ ես տանում այս կարճ ժամանակի փորձություններն ու աղքատությունը։ Քանզի ինչքերն աղքատներին բաշխելը մեծ բան է, բայց շատ ավելի մեծ [բան] է խոնարհությամբ իր անձն աղքատացնելը և Աստծուց գոհանալը։ Սա նաև Տերն է գովում՝ ասելով. «Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայությունը» [Մատթ. Ե 3]: *Եթե աղքատությունը վատ բան լիներ, Քրիստոս ամեն բանի մեջ չէր ընտրի աղքատությունը. Նա կարող էր երևալ թագավորական քաղաքում, [կարող էր] աշխարհ գալ մի թագավորի դստեր միջոցով, [կարող էր] ծնվել թագավորների ապարանքում։ Բայց Նա երևաց աղքատ Կույսից, ծնվեց մի աննշան քաղաքում, ուր ո՛չ տուն և ո՛չ օթևան կար, այլ օտարականների համար մի քարանձավ, որտեղ չկար ո՛չ մահիճ և ո՛չ օրորոց, և [սուրբ Կույսը] բոլոր արարածների Տիրոջը դրեց քարանձավի մսուրի մեջ։ Նա մեծացավ հյուսնի հյուղակում, քայլեց ոտաբոբիկ և այնքան խոնարհվեց, որ մինչև իսկ ծառայի պես լվաց Իր աշակերտների ոտքերը։ Այս օրինակով էլ նրանք, ովքեր կամեցան երկնքում հարստանալ, ընտրեցին աղքատությունն ու խոնարհությունը։*

Իսկ դու ինչո՞ւ ես դողում աղքատությանդ մեջ, որի համար կարճ [ժամանակվա] աղքատությանդ փոխարեն անհոգաբար պիտի վայելես երկնքում, երկնքի անբավ բարիքները պիտի ժառանգես։ Քանզի մարդու նեղությունն ու ուրախությունը երկուսն են. մեկը՝ այս-

տեղ, իսկ մյուսը՝ հանդերձյալում. կա՛մ հավիտենական անանց բարիքներն ես ժառանգելու, կա՛մ այստեղինը՝ անցավորը. կա՛մ մշտնջենավոր [կյանքում] ես լինելու աղքատ ու նեղության մեջ, կա՛մ այս կարճ ժամանակում. կա՛մ այստեղ ես սգալու և լաց լինելու, կա՛մ այնտեղ. կա՛մ այստեղ ես համբերելու նեղություններին և տանելու դրանք, կա՛մ այնտեղ։ Եղիա մարգարեն այստեղ նեղվեց ու աղքատացավ, իսկ երկնքում մեծ փառքով փառավորվեց, Հովհաննես Մկրտիչը նույնպես աղքատացավ, քաղցեց ու ծարավեց այստեղ, իսկ երկնքում անբավ բարիքներ ժառանգեց, բոլոր մարգարեներն ու առաքյալներն էլ անցավոր նեղություններով անանց կյանքի վայելչություններն ստացան։ Մեր առաջին հայրերը նույնպես ընտրեցին աղքատ կյանքը, որովհետև գիտեին, որ շատ դժվար է այս աշխարհի հարստությամբ ժառանգել երկնքի հարստությունը, անցողիկ փափկությամբ վայելել անանց փափկությունները, քանզի ասում է. «Որքա՜ն դժվար է փափկասերի համար Քրիստոսի երեսը տեսնելը, և հարուստի համար՝ երկնքի արքայություն մտնելը» [հմմտ. Մարկ. Ժ 23]։ *Այլ [այստեղ] նեղություն ու չարչարանք կրողների համար է այնտեղի հանգիստը, կարոտյալներինն է արքայությունը։ Ովքեր այստեղ աղքատության մեջ են՝ իբրև բանտում, նրանց համար բաց է արքայության դուռը, որովհետև Աստված անիրավ չէ, որ նեղվողներին ու տառապողներին տառապանքների բանտից հանի և դժոխքի բանտը նետի, այլ հանում է այս սին կյանքից և հանգստացնում անսպառ ուրախությունների մեջ։ Եթե միայն գոհությամբ տանեն աղքատությունը, [նրանց համար] բազում հարստություն և անվերջանալի ուրախություն է ամբարված երկնքում։*

Եվ արդ, մի՞թե պակաս է անինչքիդ ու աղքատիդ ուրախությունը, որ հայհոյություն ես առաքում բարձունք-

ներ և Աստծու մասին անիրավ բաներ ես խոսում՝ ասելով նաև, թե հարուստը իր շատ ունեցվածքից է շատ ողորմություն բաժանում։ Բայց [իմացի՛ր]՝ աղքատի ողորմությունն առավել զարմանալի և ընդունելի է, քան՝ հարուստինը։ Երբ մեկը սիրով այցելի տառապողին, իր քիչ ունեցվածքից բաշխի տառապողներին, ուտելիք տա նրանց և կերակրի քաղցածներին, իր նվիրատվություններով գերազանցած կլինի բազում հարուստների, քանզի Աստված չի նայում տվածի չափին, այլ տվողի կամքին և ընդունում է քիչը՝ իբրև շատ։

Եթե չունես ինչքեր, որոնցով մխիթարես կարոտյալներին, ունես տուն, ուր կարող ես հանգիստ տալ օտարականներին, ունես ջուր, որ կարող ես տալ ծարավներին խմելու, ունես գութ և ողորմություն, որոնցով լաց կլինես և կհեծեծես վշտացողների ու հիվանդների համար, որովհետև ողորմությունը շատ ավելին է, քան ունեցվածքի բաժանումը։ Իսկ նախանձում ես, երբ հարուստն իր հարստությունից նվիրատվություններ ու պտուղներ է հանում։ Բայց աղքատն այս բանում ևս կարող է գերազանցել հարուստին։ Քո ա՜նձը պատարագ մատուցիր Աստծուն խոնարհությամբ և անմեղությամբ. «Աստծուն տրված պատարագը խոնարհ հոգին է» [Սաղմ. Ծ 19]։ *Եվ սա ավելի մեծ է, քան խոյերի ու զվարակների ողջակեզները. մարգարեն սուրբ սիրտն ու խոնարհ հոգին է ընդունելի և Աստծուն հաճելի պատարագ անվանում։ Երեք մանուկներն իրենց անձերն ու հոգին պատարագ մատուցեցին Աստծուն։ Իսկ եթե նախանձում ես հարուստի կալի կամ հնձանի նվիրատվությանը. բոլոր բարեգործություններից, զոհաբերություններից, ողորմություններից, խիստ պահեցողությունից առավել մեծ է Աստծուն իրենց արմտքից, կալից ու հնձանից պտուղներ հանելը, քանզի Աստված հոտոտում է անուշ բույրը և օրհնում է նրա*

տունն ու վաստակը։ Իսկ այն տունը, որից չեն ելնում օրհնության պտուղներ Եկեղեցիներին, քահանաներին և Եկեղեցու սպասավորներին, այդպիսի տան մեջ աստվածային օրհնություններ չեն մտնում, ո՛չ էլ՝ նրանց գործերի մեջ, և այդպիսի տանը մշտապես պակասություն կլինի։ Դրա համար Աստված Մովսեսին պատվիրեց, թե՝ «Քո առաջին բերքը ինձ պիտի տաս, քո հոտերի, քո արջառի ու ոչխարի բոլոր առաջին ծնունդներն ինձ կնվիրաբերես, որպեսզի աճեցնեմ ու բազմացնեմ դրանք և հաջողեցնեմ քո ձեռնարկած բոլոր գործերը» [տես Բ Օր. ԻԶ 1, ԺԵ 19, ԻԸ 8]։ *Նաև Սողոմոնն է ասում.* «Պատվի՛ր Տիրոջը քո արդար վաստակից և քո արդար բերքից պտո՛ւղ հատկացրու Նրան» [Առակ. Գ 9]։ *Ասում է.* «Որպեսզի քո շտեմարանները լցվեն առատ ցորենով, և քո հնձաններն ավելի հորդ գինի բխեն» [Առակ. Գ 10]։ *Արդ, եթե ինչքեր չունես, ո՛վ չքավոր, պտուղներ հանիր քո անդամների, քանզի աչքերի պտուղն է կույրերին առաջնորդելը և դյուրին [ճանապարհ] հանելը, ոտքերի պտուղն է կաղին ցուպ լինելը և նրա ոտքերի պահանջը լրացնելը, ձեռքերի պտուղն է անդամալույծին առաջնորդելը և գոսացած [ձեռք] ունեցողին օգնելը, լեզվի պտուղն է մոլորվածին ուսուցանելը, տրտմածին սփոփելը, ականջների պտուղն է եղբոր հրամանը շուտափույթ լսելը և խոնարհությամբ նրա կամքին հնազանդվելը։*

Արդ, այս բոլոր ողորմությունները կարելի է առանց ոսկու բաշխել ամենքին և ավելի մեծ վարձք ընդունել, քան ինչքերից [տրված] ողորմությունից։ Այժմ ի՞նչ ունես ասելու. աղքատների և՛ նվիրատվությունները, և՛ պտուղները, և՛ ողորմությունները ավելի դյուրին են և ընդունելի, քան հարուստներինը։ Ուստիև մեծ ժուժկալությամբ համբերեցե՛ք նեղություններին և գոհությա՛մբ ընդունեցեք [դրանք]։ Իսկ եթե տրտմեք, հայհոյեք, հատուցում կստանաք չար վարձք, որովհետև անսուտ է

այն խոսքը, որ ասում է, թե կան ոմանք, որ տանջվում են և՛ այստեղ, և՛ այնտեղ. այստեղ նեղվում են աղքատությունից և տրտնջալու պատճառով հանդիմանվում ու կշտամբվում են արդար Դատավորի կողմից, հալչում ու մաշվում են գեհենի կրակի մեջ, ինչպես սոդոմայեցիները, ովքեր այստեղ տանջվեցին, իսկ այնտեղ տանջվելու են։

Թող չլինի՛, որ մենք էլ ընկնենք այն տանջանքների ու դատապարտության վայրը։ Այլ ապաշխարե՛նք մեր մեղքերի համար, սիրե՛նք աղքատությունը, համբերե՛նք նեղություններին, վշտերի համար գոհանանք, անընչության մեջ փառաբանենք, բազում առաքինություններով երկինքը ժառանգենք և վայելենք անբավ բարիքների վայելչությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք և պատիվ հավիտյանս. ամեն։

Թ. *Թողեք քահանաների՝ ժողովրդի վրա տեսուչ լինելու մասին*

Ես լեցուն եմ անթիվ հանցանքներով, ունայն եմ առաքինի վարքից և զուրկ՝ բարի [գործերից] ու արդարությունից, մեղքերիս վրա ամեն ժամ մեղքեր եմ ավելացնում, որն էլ չարաչար սպանում է ինձ։ Եվ ո՞վ է [այն մարդը], որ բազում հանցանքներով խավարած և անօրեն ու խավար վարք ունենալով՝ կհանդգնի լուսավորել և կամ մեղքերից հիվանդացած [լինելով]՝ կկարողանա առողջացնել ուրիշներին։ Մեղքերով ծանրացածների համար մեծ հանդգնություն է ուրիշներին թեթևացնել համարձակվելը, խելքը թոցրածների համար՝ ուրիշներին ուսուցիչ լինել ախորժելը. ինչպե՞ս կարող է անօրենությամբ հիմարացածը ուրիշների առաջնորդ լինել։ Բայց քանի որ աստվածային սերը հնարավոր է դարձնում նաև անհնարինը, փրկության համար համարձակվում և լսողների շահի ու օգուտի համար ջանում է մտնել նեղ ու նուրբ ծերպերի միջով, նայել աստվածային այն խոսքի զորությանը, [որ ասում է]. «Գնա դարձի՛ բեր քո եղբորը, որպեսզի քավվեն քո մեղքերը» [հմմտ. Հակ. Ե 19-20], *որովհետև նա, ով ջանում է դարձի բերել մոլորված հոգին, հեռացնում է իր մեղքերի բազմությունը։ Եվ Աստծու բերան պիտի կոչվի Նա, ով պատվականը հեռացնում է անարգից,որովհետև մեծ շահ և օգուտ է, [խիստ] կարևոր է ընկերների փրկության համար ջանք թափելն ու խնդրելը։*

Եվ արդ, հոտերի՛ հովիվներ և Եկեղեցու՛ առաջնորդներ, տեսնում եք սատանային բարձրացած, իսկ Քրիս-

տոսին՝ անարգված, Եկեղեցու փարախն արհամարհված և գայլերին հետևող դարձած, և այդ հոտի հովիվներդ լռում եք, չեք գործում և բոլոր ականջներին անդադար չեք հնչեցնում պատվիրանների հրամանները։

Զորքդ թշնամիների մեջ վտանգվում է, իսկ դու՝ զորավարդ, պառկած ննջում ես, նավդ տարուբերվում է ալեկոծվող ալիքների մեջ, իսկ դու՝ նավապետդ, անհոգ նստած ես, գազանները մտել են այգիդ և ապականում են այն, իսկ դու՝ այգեգործդ, հարաժամ տեսնում և անտեսում ես այդ, գողերը, ներս մտած, փորում են պատերի չորս կողմը, իսկ դու՝ պահապանդ, քնած խոմփացնում ես,ժողովուրդդ ծանր վիրավորված է, իսկ դու՝ բժիշկդ, նրա մեջ չես, ոչխարներդ, գայլերից հոշոտվելով, ցրվում են խորխորատների մեջ և ցած են գլորվում զառիթափերից, գայլերն ու գազաններն անխնա կոտորում, գիշատիչ թռչունները պատառոտում են նրանց, և նրանք ցրված են մնում, իսկ դուք՝ հովիվներդ, չեք երևում։ Չե՞ք զարհուրում ահեղ Հովվապատից, Որն ասում է. «Պիտի դատեմ ոչխար առ ոչխար, խոյ առ խոյ» [Եզեկ. ԼԴ 17],Որը մարգարեների միջոցով ամբաստանում է քահանաներին՝ ասելով. «Քահանաներն անարգեցին իմ օրենքներն ու պղծեցին իմ սրբությունները, որովհետև չտարբերեցին սուրբը պիղծից և չջոկեցին արատավորներին անարատներից» [Եզեկ. ԻԲ 26], *այլ.* «Կաթն ուտում են, բուրդը՝ հագնում, բայց իմ հոտերին չեն արածեցնում, տկարացածին չեն զորացնում, հիվանդացածին չեն բժշկում» [Եզեկ. ԼԴ 3], «Հովիվ եք և ձեր անձերն եք պարարտացնում ևոչ՝ ոչխարներին» [տես Եզեկ. ԼԴ 8], *և՝* «Պիտի շաղ տամ, ասում է, ձեր տոների աղտեղությունը ձեր երեսին» [Մաղ. Բ 3]։ «Եվ արդ, կվերցնեմ ձեզ նրանց միջից և անեծքներ կուղարկեմ ձեզ վրա, կանիծեմ ձեր օրհնությունները, կնզովեմ ձեզ այն բանի փոխարեն, որ ձեր սրտում չդրեցիք՝ երկնչել ինձնից և իմ երեսից չվախեցաք» [տես Մաղ. Բ 2]։

Արդ, տե՛ս, որ Աստծու այսպիսի անեծքներն ու սպառնալիքներն են [կախված] ծուլացող քահանաների վրա։ Վախեցի՛ր Աստծու սպառնալիքներից և մի՛ ծուլանա տեսուչ լինել հոգևոր հոտիդ, այլ գիշեր և ցերեկ անդադար չարչարվի՛ր նրա փրկության և քո սրբության համար։ Հիշի՛ր՝ ինչպես էին ջանում Մովսեսը, Ահարոնը, Սամուելը, քանզի նրանք նույնպես նույն հոտի առաջնորդներ էին։ Հիշի՛ր Պետրոսի ու Պողոսի ճիգերը. նաև նրանք էին նույն հոտի առաջնորդներ։ Հիշի՛ր նրանց հետևող սուրբերի ջանքերը, քանզի նրանք նույնպես նույն հոտի առաջնորդներ էին. նրանք հրով, սրով և զանազան չարչարանքներով չարչարվեցին [իրենց] հոտի վերակացության համար և Աստծո սիրո և իրենց հոտի ջերմագութ տեսչության համար ծեծվելով, բանտարկվելով և բազում կտտանքների ենթարկվելով՝ ելան այս աշխարհից։ Եվ դուք՝ բոլոր քահանաներդ և վարդապետներդ, հարկ է, որ նրանց նմանությամբ նույն գործը կատարեք, մանավանդ նրանք, ովքեր ինքնակամ ստացան վերակացու լինելու [պատիվը], որ գովելի է, եթե որպես իրենց ապրելու միջոց չիմացան այն և զորացել են [Սուրբ] Հոգով՝ շատերի փրկության համար մտնելու մշակության գործի մեջ։ Քանզի գովելի է, երբ Աստծու առավել սիրո համար արժանավորներն ու պատվիրանապահներն են հոգեպես տեսչություն ցանկանում։ Ինչպես որ [մեր Տերը] Պետրոսին ասաց, թե՝ «Սիրո՞ւմ ես ինձ ավելի, քան դրանց, արածեցրո՛ւ իմ ոչխարներին» [տե՛ս Հովհ. ԻԱ 15, 17], *իսկ Պողոսն ասում է.* «Ով եպիկոպոսության է ձգտում, ձգտում է բարի գործի, այլ ոչ թե չար» [տե՛ս Ա Տիմ. Գ 1], *և՝* «Մերոնք էլ թող սովորեն հետամուտ լինել բարի գործերի, կարևոր պետքերի մեջ, որպեսզի անպտուղ չլինեն» [Տիտ. Գ 14], *քանի որ այդ է բարի և մարդկանց պիտանի։ Քանզի ճառագայթ-*

ներով լուսավորող արեգակից առավել մեծ է մեղքերի մոլորությունները հեռացնելը։

Ա՛յս է կարևոր Աստծու համար և ավելին է, քան բոլոր առաքինությունները, սրա մասին է ասում, թե՝ «Երեցները թող արժանի լինեն կրկնակի պատվի, մանավանդ նրանք, ովքեր տքնում են՝ քարոզելով և ուսուցանելով» [տես Ա Տիմ. Ե 17]: *Արդարև, մեծ է քահանայության գործը և դադար չունի, և օգտակար է ուսուցման գործը. քահանան հոգիների բժիշկ է, Աստծու գործերի գործակից։ Աստված մարդուն ստեղծեց չարը կամ բարին [ընտրելու ազատ] կամքով, իսկ քահանան, [դեպի բարին] ուղղելով [մարդու] կամքը՝ զարդարում է առաքինության գործերով։ Աստված ստեղծեց բնությունը, իսկ քահանան, Աստծուն ճանաչեցնելով, լուսավորում է [մարդուն] և հեռացնում սատանայական բոլոր խաբեություններից, հեռացնում, ցրում է մոլորության մեգն ու անգիտության խավարը և ծանոթացնում արարածների Արարչի, ամենայն բարիք Պարգևողի, ծովն ու ցամաքը լցնողի հետ, լուսավորում է ճշմարիտ հավատով, առաքինի և ուղիղ վարքով և դեպի առաքինություններն ու ուրախությունները առաջնորդում աստվածասերներին։ Այդ պատճառով էլ պատվվում են մեծ պատվով և պայծառանում լուսավոր պսակներով։*

Եվ արդ, ամեն ոք, ով քահանայության և վերակացության է կոչված, պետք է շատ ջանք թափի և հարատև աշխատի [իր] հոտի փրկության համար։ Քանզի եթե Հակոբը ոչ բանական ոչխարների համար էր ցրտից սառչում, տոթից տապում, իր աչքերից հեռու էր վանում քունը, ապա որքա՜ն առավել քե՛զ է պետք չարչարվել բանական հոտիդ համար և առանց դադարի մշտապես տքնել, դողալ ու հանապազ հոգ տանել, գթած հորից ու

մատաղածին մորից առավել ջերմագութ գորովով խնամել ու սիրել, նրանց հոգիներին փրկություն խնդրել և հանապազ դաստիարակել Աստծու խոսքի ուսուցմամբ և՛ առանձին, և՛ հրապարակավ։ Եվ նա, ով ուսուցանում է խոսքով, հարկ է, որ գործով կատարի, քանզի առանց գործերի ոչ մի խոսք օգտակար չէ, [քանզի] «Յիսուս սկսեց անել և ապա ուսուցանել» [Գործք Ա 1], *և.* «Ով ինքը կկատարի և կուսուցանի ուրիշներին, երկնքի արքայության մեջ նա մեծ պիտի համարվի» [Մատթ. Ե 19]։

Հիշի՛ր, որ ճրագները վառվող ճրագից են լույս առնում, այլ ոչ թե խավարածներից, իսկ ժողովուրդները սրբվում են սուրբերի միջոցով, այլ՝ ո՛չ մեղքերով աղտեղի դարձածների։ Քահանան ժողովրդի մեջ այնպես է, ինչպես աչքը մարմնի վրա. նա պետք է հսկի բոլոր կողմերը, հարդարի և մաքրի մեղքերի բոլոր աղտեղությունները։ Աշտանակի վրա դրված ճրագի պես է նա և պետք է փարատի թանձրամած խավարը, լուսավորի ամբողջ տունը։ Հսկող է և պահապան և պետք է հանապազ աղաղակի, որպեսզի [խուսափեն] թշնամուց, որ իր մեղքերի սրով չվիրավորի իրենց, և սպանվածների արյունը նրա ձեռքից չպահանջվի։ Սատանայի կողմից վիրավորվածների բժիշկ ես. հանապազ լվա՛, փաթաթի՛ր և հարդարի՛ր։ Համեմիչ աղ ես. սրբի՛ր բոլոր նեխած մեղքերից։ Փրկության աղբյուր ես. բոլորին լվա՛ և մաքրի՛ր չարիքներից։ Հոտերի հովիվ ես. զգուշացի՛ր գայլերից։ Ժողովրդի առաջնորդ ես. տե՛ս, թե ինչպես պիտի առաջնորդես. ահա կան հաշվետվություններ, պատիժներ և ճշտիվ քննություն։

Ո՛վ քահանա՛, երկյուղով զգուշացի՛ր, քանզի [Աստված] մարդուն իզուր չի ստեղծել, և ոչ էլ այս աշխարհի կյանքն է մեր կամքով. Քննություն կա այս ու այն կողմ

նայող աչքերի համար, քննություն կա անպարկեշտ բաներ լսողների համար, դատարկ խոսքերի համար պատիժներ կան, և անվայել մտքերի համար դատաստան կա։ Քանզի եթե եղբորը հիմար կամ մորոս անվանելը դատապարտում է, ապա ի՞նչ կանեն մեծ մեղքերի դեզերը և եթե միայն նայելը պոռնկություն է, ապա որքա՞ն առավել գործը կայրի, եթե երդվելը սատանայից է, ապա որքա՞ն առավել սուտ երդվողները. եթե ամբոխելն ու աղաղակելը վնասում են, ապա որքա՞ն առավել ոխ պահելն է տանջելու գեհենում, եթե ցանկանալն ապականում է, ապա որքա՞ն առավել [կապականի] ցանկության գործը կատարելը, եթե չարակնելը սպանում է չարաչար մահով, ապա որքա՞ն առավել՝ նախանձն ու ոխը, եթե ունեցվածքը չբաժանելն է դատապարտում, ապա որքա՞ն առավել ուրիշներին զրկելը, եթե Աստծուն [իր ունեցվածքից] խոտանը մատուցողը նզովքներ է ընդունում, ինչպես Կայենը, ապա որքա՞ն առավել նա, ով մատուցում է զրկելով ձեռք բերածից, եթե եղբոր մասին գաղտնի խոսելը վնասում է, ապա որքա՞ն առավել՝ նենգությամբ քսություն անելը, եթե իր ընկերոջը բամբասողը կրակի մեջ է առաքվում, ապա որքա՞ն առավել նրանք, ովքեր քահանային ու վարդապետին են բամբասում, եթե ծրարներն ու կախարդությունները կռապաշտության են տանում, ապա որքա՞ն առավել՝ դիվական գուշակություններն ու հմայությունները, եթե ննջեցյալների համար սգալը հեթանոսություն է, ապա որքան առավել՝ լացուկոծ անելն ու մազերը փետելը, եթե լկտիացողներն ու ծիծաղողները, որպես որոմ, նետվում են հրի մեջ, ապա որքա՞ն առավել՝ թատերախաղերի գնացողները,եթե գովելի չէ տան մեջ զարդարվելը, ապա որքա՞ն առավել՝ ի տես բոլորի պճնվելը, եթե սե-

ղանից զրկելն է դատապարտում, ապա որքա՜ն առավել թաքցնելն ու եղբորից գողանալը, եթե գինի շատ խմելը պատուհասում է, ապա որքա՜ն առավել շվայտությամբ զեխանալն ու որկրամոլությամբ հարբելը, որ պատուհասում են և՛ հին, և՛ նոր պատվիրանները։

Արդ, տե՛ս, որ այդ և դրանց նման արարքներն իրենց գործողներին տանջանքների են դատապարտում։ Եվ դու, որ Եկեղեցու վերակացու ես, եթե ծուլանաս և չզգուշանաս այս ամենով ճշտությամբ խրատել և քննել, իմացի՛ր, «որ կորստյան մատնվածի արյունը քեզնից է պահանջվելու» [տես Եզեկ. Գ 18]: *Եվ եթե իր անձի տանջանքներից ոչ ոք չի կարող հանգստանալ, ապա որքա՜ն առավել՝այդքան հոգիների պարտապանը. ո՞ր խավարի մեջ պիտի գնա, կամ քանի՞ հրահոս գետեր բավական պիտի լինեն նրան, խավարային քանի՞ գուբ։ Ուրեմն զգո՛ւյշ եղիր, հանապազ խոսի՛ր, անդադար աղաղակի՛ր, քննի՛ր և լսի՛ր ամեն բան, փութով կանչիր և խրատի՛ր՝ ոմանց սաստելով, ոմանց աղերսելով, ոմանց փափագելի արքայության փափկությամբ հորդորիր, ոմանց չար ու ահեղ տանջանքների ահով վախեցրու, ոմանց խրատիր Եկեղեցու մեջ, որպեսզի մյուսները սովորեն, ոմանց առանձին հանդիմանիր, որպեսզի բազմությունից ամաչելով՝ չժխտեն [իրենց մեղքը] և հանդիմանությունը չարհամարհեն։ Իսկ եթե արհամարհեն անգամ, դու բարձրաձայն մի՛ հակառակվիր, քանզի Տիրոջ ծառան հակառակվող չպետք է լինի, այլ բոլորի հետ՝ հեզ, որպեսզի թերևս այդ ապաշխարության մի բան։*

Բայց դու քեզ մեծարվելու արժանի մի՛ համարիր, այլ՝ արհամարհի՛ր այս աշխարհի փառքը, անարգի՛ր կեղծավորների գովասանքը, հիշի՛ր պատուհասը Հերովդեսի, ով գովասանք ընդունեց [տես Գործք ԺԲ 21-23]: *Ուստի*

և մի՛ փառավորիր քո անձը, քեզ պատիվ մի՛ փնտրիր, այլ, ծառայելով բոլորին, բոլորի սպասավորը եղիր, քեզ ծառա՛ անվանիր։ Հիշի՛ր Քրիստոսի ծառայելը՝ ղենջակը կապելը, ջուրը կոնքի մեջ լցնելն ու աշակերտների ոտքերը լվանալը [տես Հովհ. ԺԳ 4-5]: *Ո՛չ թե մարդը՝ մարդու, այլ՝ Աստված մարդու ոտքերը լվաց, որ ճշմարիտ խոստովանություն է, խոնարհություն և սերտ ծառայություն։* «Չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու» [Մատթ. Ի 28]: *Նա՛ է քո Վարդապետը, այլ ոչ հեծյալներն ու մեծարվողները։ Դու նմանվող եղիր Նրան, և քո հոտերը քեզ կնմանվեն, ինչպես Պողոսն է ասում.* «Նմանվող եղեք ինձ, ինչպես որ ես՝ Քրիստոսին» [Ա Կորնթ. ԺԱ 1]: *Ահա դու նույն ինքը՝ Պողոսն ես, որ քարոզում ես, և նույն ժողովուրդն է, ում ուսուցանում ես։ Նա էլ քեզ նման մարդ էր՝ Կիլիկիայի Տարսոն քաղաքից և քեզնից ավելի ոչինչ չուներ, այլ միայն հոժարություն և չարչարանք, որոնցով Սուրբ Հոգու շնորհները ստացավ։ Քեզ ոչինչ արգելված չէ, այլ միայն հոժարի՛ր և աշխատի՛ր և կստանաս Սուրբ Հոգու շնորհները։*

Արդ, պատրվակ մի՛ բռնիր ու սրան- նրան մեղադրիր, այլ միայն արթո՛ւն եղիր աղոթելու և նախանձախնդիր՝ ուսուցանելու մեջ. Պողոսի նման հիվանդացի՛ր հիվանդների հետ, մեղանչողների համար ողբա՛, գայթակղվածների համար տրտմի՛ր, տկարացածներին զորացրո՛ւ, ջա՛նք թափիր, նրանց համար կտրի՛ր ծով ու ցամաք։ Մի՛ վհատվիր չարչարանքիդ մեջ, ամոթից մի՛ լքիր, մի՛ ամաչիր խոսել, այլ եթե անգամ հարկ լինի սովամահ լինել ու ծարավ մնալ նրանց փրկության համար, ուրախությամբ ընդունի՛ր այդ։ Որովհետև ոչ ոք որկրամոլությամբ մարգարե չեղավ, ո՛չ էլ արբեցությամբ որևէ մեկը առաքյալ եղավ, այլ՝ նեղվելով ու

չարչարվելով բոլոր ցանկություններից. հարկ է, որ դու նույնպես նմանվող լինես քաջերին ու առաքիչներին, ոչ թե գայլ դարձած հովիվներին, ովքեր միայն անվամբ են հովիվ, ովքեր գազանաբար հարձակվում են իրենց հոտի վրա և ցրում ու կորստյան են մատնում նրան, ո՛չ հոգում են նրանց հոգիների համար և ո՛չ մտահոգվում նրանց մեղքերի համար։ Ո՛չ գողերին են փնտրում, ո՛չ պոռնկացողներից հաշիվ են պահանջում, ո՛չ քննում են զրպարտողներին, ո՛չ ուղղում են հարբեցողներին, ո՛չ պատժում են գուշակներին, ո՛չ կախարդներից հաշիվ են պահանջում, ո՛չ դիվական թատերախաղերն են արհամարհում, ո՛չ հեթանոսաբար լաց լինելն են արգելում, ո՛չ նախանձներին են հանդիմանում, ո՛չ ոխ պահողներին են մեղադրում, ո՛չ չար գործերի համար սաստում են, ո՛չ ծուլության համար պատժում, ո՛չ որևէ մեկին խրատում են ողորմություն անել, ո՛չ հորդորում են աղոթել և ո՛չ որևէ մեկին տրտմեցնում են՝ ուղղության հրավիրելով։ Այլ իրենց ողջ նախանձախնդրությունը մարմնավոր բաների մեջ են ցույց տալիս. քահանայությունն ընտրում են այս աշխարհի կյանքը վայելելու, մարմնի հաճույքների, ուտելու, խմելու, հարստություն ժողովելու համար, պատվի ու գահերեցության արժանանալու և սատանայական սնափառության համար։ Ուստիև չեն ողորմում որբերին, չեն խնայում այրիներին, այլ պատիժների դիմելով՝ եկամուտներ են փնտրում և պատուհասներով դրամ են հավաքում Եկեղեցու անունով, բռնությամբ վարվում, իշխանությամբ հրամայում են. քահանայական ոչինչ չի երևում նրանց վրա և երբեք չեն մտաբերում Պետրոսի այն խոսքերը, թե՝ «Արածեցրեք ձեզ հանձնված Աստծու այդ հոտը՝ վերակացու լինելով ո՛չ թե ձեր կամքին հակառակ, այլ՝ հոժարակամ, ըստ Աստծու, ո՛չ թե շահախնդրությամբ, այլ՝ հոժա-

րությամբ, ո՛չ թե տիրելով նրանց, որ բաժին են ընկած ձեզ, այլ բարի գործերի օրինակ լինելով նրանց» [Ա Պետր. Ե 2-3]: *Քանզի եթե ժողովրդից մեկը բյուր անգամ էլ ընկնի, կարո՞ղ է ներման և մեղքերի թողության արժանանալ, իսկ եթե ժողովրդի մեջ մի վարդապետ նույն ախտով վարակվի, պատասխան չի ունենա տալու և ամենավերջին պատիժների տոկոսները կտա, որովհետև մեղավոր առաջնորդների փրկությունը սաստիկ դժվարությամբ է։*

Ուստիև դու, հավատարի՛մ հովիվ, լսի՛ր առաքելական հրամանը և մի՛ նմանվիր պիղծերին ու կորստյան մատնվածներին, որոնց կրակը պիտի այրի, որոնք միայն հովվի անունն ունեն և գայլերի հափշտակածն են հափշտակում, որի համար չարաչար հաշիվ պիտի տան, որ պիտի սովորեցնեն ու խրատեն ըստ Աստծու կամքի, բայց ըստ իրենց կամքի ապրելով՝ ընկան և կերակուր [դարձան] չարաժանիք գազանին, որը ծանր վիրավորում ու չարաչար սպանում է։ Հիշի՛ր Հեղիին, որ թեև անարատ վարք ուներ, բայց որովհետև տեսնում ու անտեսում էր Աստծու օրենքները, ծանր պատժով պատժվեց։ Իսկ դու միշտ խրատի՛ր, հոտիդ փրկության համար անդադար չարչարվի՛ր, որպեսզի նաև դու՝հովիվդ, փրկվես պատուհասների պատժից։ Հիշի՛ր, որ հովիվն է հատուցում գազանների բզկտածի և գողերի տարածի համար. նրանից ճշտությամբ պահանջում են սատկած կենդանու նշանն ու մորթին, հաշիվ են պահանջում բզկտված կենդանու անդամների համար, որովհետև եթե մեկը ճշտությամբ չներկայացնի և վկաներով չհաստատի, սաստիկ պատիժների ենթակա կլինի, մեծ ամոթով կզրկվի իր հոտից։ Արդ, եթե անբան ոչխարների համար այսպիսի քննություն ու պատիժներ են պահանջվում, ապա որքա՜ն առավել ահեղ հաշիվ պիտի պահանջվի քահանաներից կենդանի հոգիների համար, որոնց համար և

Քրիստոս մեռավ։ Բանական հոտի տեսչության մեջ եթե [անգամ] փոքր-ինչ ծուլանան, [միևնույն է], խիստ է լինելու հաշվետվությունը, և սաստիկ են լինելու տանջանքները նրանց, ովքեր առաջնորդությունն են ստանձնում և չեն առաջնորդում։

Տե՛ս, թե զորավարը քանի՛ մահերի համար է պատասխանատու թագավորի առջև, եթե [երկրի] փրկության համար առած զորքին իր ծուլության պատճառով սրի մատնի, և կամ պահակը, որ չզգուշացրեց, մի՞թե բոլոր սպանվածների արյունը նրանից չի պահանջվի։ Նաև նրանք, ովքեր թագավորներից ավանդ են վերցնում, և դրանից մի փոքր մաս կորչում է, պատժվում են սաստիկ պատիժներով։ Տե՛ս նաև արքունական [գանձերին] վնաս հասցնող ծառաների պատիժները, նայի՛ր նաև հոտերի պահապաններին, որ փոսեր են փորում, պարաններ ձգում և լապտերներ դնում, իսկ [նրանց] շները շրջում են հոտի շուրջը, որպեսզի գազանները նրանց չմոտենան, իսկ եթե փոքր-ինչ ծուլանան, իրենց անձերը նինջի տան, գայլերն ու դարանակալած գողերը մտնելով՝ կհափշտակեն հոտերից [ոչխարներ], կցրեն ու կվիրավորեն։ Եվ արդ, տե՛ս որքա՜ն առավել է մարդը ոչխարից. եթե անբան ոչխարների համար նույնքան զգուշություն է անհրաժեշտ, որպեսզի երևացող գայլերը չհափշտակեն, ապա որքա՜ն առավել զգուշություն է պետք մարդկային հոգիները սատանայի անտեսանելի նետերից պահպանելու համար, որ բազմությամբ վրա է հասնում, շրջապատում, պաշարում է բոլորին թակարդներով ու ցանցերով. պտտվում է բոլորի շուրջը և մարդկանց խորհուրդների վրա անձրևի պես նետեր է տեղում՝ ոմանց մեջ՝ ագահություն, ոմանց մեջ՝ այլազգրկություն, ոմանց՝ պոռնկությամբ, ոմանց՝ շնությամբ, ոմանց՝ գո-

ղությամբ, ոմանց՝ ատելությամբ, ոմանց՝ սպանությամբ, ոմանց՝ նախանձով, ոմանց՝ ոխակալությամբ, ոմանց՝ բամբասանքով, ոմանց՝ բարկությամբ, ոմանց՝ նենգությամբ, ոմանց՝ կեղծավորությամբ, ոմանց՝ չարակնությամբ, ոմանց՝ չարախոսությամբ, ոմանց՝ դեղատվությամբ, ոմանց՝ վաճառքի մեջ խաբելով, ոմանց՝ վաշխառությամբ, ոմանց՝ չափի ու կշեռքի մեջ խաբելով, ոմանց՝ մոգությամբ ու կախարդությամբ, ոմանց՝ թատերասիրությամբ, ոմանց՝ պճնասիրությամբ, ոմանց՝ սատանայական սգով ու տրտմությամբ, ոմանց՝ անհուսությամբ, ոմանց՝ անհնազանդությամբ, ոմանց՝ անժուժկալությամբ, ոմանց՝ անհավատությամբ, ոմանց՝ սնափառությամբ, ոմանց՝ ձանձրույթով, ոմանց՝ մոռացկոտությամբ, ոմանց՝ ստախոսությամբ, ոմանց՝ հայհոյությամբ, ոմանց՝ վրիժառությամբ, ոմանց՝ երդմնակերությամբ, ոմանց՝ ստախոսությամբ, ոմանց՝ որկրամոլությամբ, հարբեցողությամբ, աչքածակությամբ, ամբարտավանությամբ, ինքնահավանությամբ, պղծությամբ և այլ բազում ախտերով, որոնք հոսեցնում է սատանան բոլորի սրտերի մեջ, ծանր վիրավորում ու չար մահով սպանում նրանց։

Եվ այս ամենը տեսնելով՝ անտեսում, արհամարհում ու ծուլանո՞ւմ ես, լաց չե՞ս լինում և չե՞ս ողբում այդքան վերքերի բազմությունը։ Սարսափի՛ր և սոսկա՛ հավոր բեմի երկյուղից, թե՝ ի՞նչ աչքերով ու երեսով պիտի տեսնես փառքի Տիրոջը, քո ծուլության համար որքա՞ն պատիժներ ու պատուհասներ բավական պիտի լինեն։ Բայց վախեցի՛ր Հովվապետից, սթափվի՛ր ծուլությունից, ա՛ռ Փենեհեզի նախանձախնդրությունը, խոցի՛ր սատանային ու դևերին, Սուրբ Հոգով վիրավորի՛ր նրանց, հալածի՛ր բանսարկուի բնակիչներին, ցրի՛ր սատանա-

յի զորքերը, խորտակի՛ր չարի աղեղները և նրանց նետերն իրե՛նց դարձրու, խոսի՛ր [աստվածային] վարդապետության խոսքերը և ողորմության դե՛ղ դարձրու [դրանք] քո հոտին՝ ծերերին, այրերին, կանանց, ծառաներին ու տերերին, հիվանդներին ու վշտացածներին, ամենևին մի՛ հապաղիր և անզբաղ մի՛ մնա, այլ անդադար վարդապետի՛ր։ Պահակ ես՝ աղաղակի՛ր, տեսուչ ես՝ խնամի՛ր, Եկեղեցու առաջնորդ ես՝ հետևիր, հովիվ ես՝ ուղիղ հավատով արածեցրո՛ւ, բժիշկ ես՝ բժշկի՛ր մեղքերի վերքերը, նավապետ ես՝ նավդ զե՛րծ պահիր ալեկոծություններից։ Ավանդ ստացար և հաշիվ պիտի տաս, եթե անգամ փոքր-ինչ ծուլանաս։ Վախեցի՛ր Հովվապետից և փնտրի՛ր քո կորած բանական հոտը, բոլորին հավաքի՛ր, պարսպի՛ր վարդապետության խրատով, թշնամիներին հաշտեցրո՛ւ Աստծու հետ, սատանայի հեռացրածներին միավորի՛ր, Եկեղեցուց հեռացածներին մոտեցրո՛ւ, աղոթքի մեջ թուլացածներին հորդորի՛ր, ճշմարտությունից խոտորվածներին փնտրի՛ր, մոլորվածներին դեպի արդարությո՛ւն դարձրու, թշնամու ախտերով հիվանդացածներին բժշկի՛ր, սատանայից վիրավորվածներին առողջացրո՛ւ, անօրինությամբ գլորվածներին կանգնեցրո՛ւ, անգիտությամբ խավարածներին լուսավորի՛ր, Աստծու պատվիրաններից հեռացածներին ընտանի՛ դարձրու, կռապաշտությամբ աղտեղի դարձածներին լուսավորի՛ր, մեղանչածներին ապաշխարությամբ արդարացրո՛ւ, քաղցողներին Քրիստոսի մարմնով կերակրի՛ր, ծարավածներին Քրիստոսի արյունից խմեցրո՛ւ։ Առաքինության այսպիսի գործերով բոլորին արժանի՛ դարձրու մտնելու վերին քաղաք, հորդորի՛ր, որ պարկեշտ վարք ունենան, զորացրո՛ւ ուղղափառ հավատի մեջ, պատվիրի՛ր լինել հեզ և խոնարհ, սո-

վորեցրո՛ւ պահել Տիրոջ պատվիրաններն ու օրենքները, ունենալ սուրբ սիրտ ու ճշմարտախոս լեզու, ցած նայող աչքեր և պարկեշտ մարմին, հորդորի՛ր լինել ժուժկալ և համբերող, պահք պահել, աղոթել և առավել շատ ողորմություն տալ պատվիրի՛ր բոլորին։ Եվ այսպես, ամեն բանով կատարյալ, սրբված ու լուսավորված կանգնեք Քրիստոսի առջև և ընդունեք փառքի անթառամ պսակը։ Մեզ նույնպես թող արժանի դարձնի վայելելու այն և փառավորելու Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։



Ժ. *Բամբասողների և վարդապետներին չդատելու մասին*

Բազում հոգսերն ու խավար տրտմությունները հանապազ դիզվում, կուտակվում են ինձ վրա, որովհետև չար ախտերն ու ահավոր անօրինությունները, Եկեղեցի մտնելով, դեպի վեր բարձրացող բորբոքված հրի պես այրում են բոլորին, և սատանան մեր մտքում [այդ ամենը] փոքր բան է կարծել տալիս. Մարիամին էլ բամբասել տվեց Աստծու ծառային[1]*. սատանան նրա մտքում փոքր բան կարծել տվեց այդ, որպեսզի զղջման չգա, և նա [իրեն վրա հասած] պատուհասների պատիժն ստացավ* (տես Թվեր, ԺԲ 1-10): *Նաև Քամին բամբասել տվեց իր հոր՝ Նոյի մերկությունը և նրան կարծել տվեց, թե փոքր բան է այդ, մինչև որ նա ընդունեց [իր եղբայրների] ծառան լինելու անեծքը* [տես Ծնն. Թ 25]: *Այս հուրը, նաև այժմ Եկեղեցի մտնելով, այրում ու կորստյան է մատնում առհասարակ բոլորին. [սատանան] նաև որոգայթներով [է կորստյան մատնում], որովհետև մեկը շնանում է, մյուսը՝ բամբասում. երկուսն էլ հավասարապես են անօրինանում. մեկը գողանում է, մյուսը՝ բամբասում. միապես են պատժվում. մեկը հարբում է, մյուսը՝ հարբեցողին բամբասում. միանման են դատապարտվում։ Մեկը գործում է բոլոր տեսակի մեղքերը, մյուսը բամբասում է, երկուսն էլ հավասարապես դատվում են ու տանջվում։ Քանզի Պողոսը գողանալն ու*

[1] Նկատի ունի Մովսես մարգարեին. նրա քույրը՝ Մարիամը, վատաբանեց Մովսեսին այն բանի համար, որ նա ամուսնացել էր եթովպուհու հետ, որի պատճառով Աստված բարկացավ Մարիամի վրա եւ պատժեց առժամանակյա բորոտությամբ: (Ծ.Թ.)

շնանալը առավել [մեծ] անօրինություն ցույց չի տալիս, քան բամբասելն ու հարբելը, այլ միանման չարիք. երկուսի՝ միահավասար կերպով արքայությունից ելնելը մեկ խոսքով նշելով՝ ասում է. «Ո՛չ գողերը, ո՛չ պոռնիկները, ո՛չ հարբեցողները և ո՛չ բամբասողները Աստծու արքայությունը չեն ժառանգելու» [Ա Կորնթ. Զ 10]:

Եվ արդ, ահա սատանան բոլորի բերանը լցրեց բամբասանքի անօրեն ախտով, և բոլորի լեզուները հանապազ անդադար բորբոքվում են եղբոր բամբասանքով ու հայհոյությամբ։ Տեսնում եմ, որ աներկյուղ ու անհոգ են այս անօրինությունը գործողները և [բնավ] չեն շտապում ապաշխարությամբ լվանալ ու սրբել այն, ինչպես գողության ու պոռնկության չարիքները։ Եթե գարշում ես շնությունից, գարշի՛ր նաև բամբասանքից, քանզի եթե շնությունը չարիք է, ապա դրան հավասարեցվում է և բամբասանքը։ Բայց օրենսուցյց առաքյալը բամբասանքների անօրինությունն առավել մեծ է ցույց տալիս՝ ասելով, թե՝ «Ով բամբասում կամ դատում է իր եղբորը, չարախոսում է օրենքի մասին և դատում է օրենքը» [Հակ. Դ 11]: *Եվ ի՞նչն է առավել անօրենություն, քան այն, որ Աստծու օրենքները չեն կատարում, այլ տեր ու դատող են լինում*: «Կա մե՛կ Օրենսդիր ու Դատավոր, որ փրկում է, ապրեցնում և կորստյան մատնում» [տես Հակ. Դ 12], *դու ինչո՞ւ ես դատում ուրիշի ծառային։ Եվ արդ, տե՛ս, թե քանի տեսակի մահվան է պարտական նա, ով հափշտակում է թագավորի իշխանությունն ու պատիվը և դատում է դատավորի դատը, քանի որ ասում է.* «Իմն է վրեժխնդրությունը, և ես եմ հատուցելու, ասում է Տերը» [Հռոմ. ԺԲ 19]: «Դու ինչո՞ւ ես դատում քո եղբորը կամ ինչպե՞ս ես արհամարհում քո եղբորը» [Հռոմ. ԺԴ 10]:

Եվ արդ, դու՝ դատվա՛ծդ ու մեղքերով դատապարտվա՛ծդ, չե՞ս սոսկում ու դողում ուրիշի դատաստանը դատելուց, որովհետև ո՛չ թե մարդու արհամարհեցիր ու

անարգեցիր, այլ՝ Աստծուն, և հափշտակելով Նրա պատիվն ու իշխանությունը՝ Նրա դատաստանն ես դատում՝ չհիշելով Սուրբ Ավետարանի այն խոսքը, որ ասում է. «Մի՛ դատեք, որպեսզի չդատվեք, որովհետև ինչ դատաստանով որ դատում եք, նույնով դուք եք դատվելու» [Մատթ. Է 1]: *Սուրբերինն է դատելը և անարատներինն է հանդիմանելը, և այն էլ՝ առանձին և աղաչանքներով, այլ ոչ թե հրապարակավ հանդիմանելով որևէ մեկի մեղքը և կամ նրանից գաղտնի ուրիշի մոտ բամբասելով նրան: Եվ [այդ] մեղքերն ու անօրինություններն ահավոր են, քանզի եթե մեկը խեղություն ունի և անարգում է ուրիշներին խեղության համար, մի՞թե նրանից առաջ ինքն իրեն չի անարգում: Նաև եթե ինքը բյուր չարիքներ է գործում, ծածկում- քողարկում է դրանք, իսկ եթե եղբայրն է փոքր-ինչ մեղանչում, հուզվում է, շրջում, բոլորին պատմում է և իր եղբոր հանցանքների դառը դահիճն ու դաժան քննիչն է դառնում: Իր աչքում գերան կա, որը ծածկում է, և որոնում է եղբոր աչքի շյուղը. այդպիսիներին Քրիստոս ոչ միայն մեղավոր, այլ նաև կեղծավոր է անվանում՝ ասելով.* «Կեղծավո՛ր, հանի՛ր նախ գերանը քո աչքից և ապա կմոտենաս՝ հանելու եղբորդ աչքից շյուղը» [Մատթ. Է 5]:

Եվ արդ, ո՞վ է ավելի անամոթ, քան նա, ով գիտի իր մեղքերն ու սխալները և դրանք անտեսելով՝ քրքրում է եղբոր սխալները և շատերի մոտ բամբասում նրան: Նա չգիտի, թե ինչ հանցանքի համար բամբասում է եղբորը, նույն մեղքի տանջանքով և ինքն է պատժվում: Եվ հանապազ անդադար բոլորի լեզուները բամբասում են եղբորը. և սակայն նրա գործած բոլոր մեղքերի համար տանջանքները հավասարապես պատրաստված են նաև բամբոսողների համար: Արդ, ինչո՞ւ դատապարտվես այդպիսի տանջանքների, կամ ի՞նչ օգուտ ստացար բամբասանքներից, կամքիդ ո՞ր ցանկությունը կատա-

րեցիր և կամ ի՞նչ հարստություն շահեցիր. քա՞ղցդ հագեցրեց բամբասանքդ, թե՞ մերկությունդ ծածկեց։ Ոչինչ ավելի չես գտնում, այլ միայն սատանային ես տեսնում բամբասողների մտքում, որոնք հանապազ լցված, հղացած են չարիքով. ծննդկանի նման երկնում և դուրս են հոսեցնում բամբասանքներ, ուղիղ շրջում և եղբոր մասին չարություն են խոսում։ Կա՛մ իրենց չար մտքից են հանում, կա՛մ ուրիշից են լսում և ավելացնելով չարաչար ու զազրելի սերմեր՝ եղբորն ատելի են ներկայացնում բոլորի աչքում՝ շատերին գայթակղեցնելով նրա դեմ։ Նրանց գայթակղեցնելու համար իրե՛նք են դատապարտվելու։ Ամենքի ականջին եղբոր մասին չար կարծիք հնչեցնողների մասին [Գիրքն] ասում է. «Վա՛յ նրան, ով դատում է, և եղո՛ւկ նրան, ով իր դատաստանը ուրիշին է հայտնում»։ Տերն է Հատուցողն ու Դատավորը. բարի գործողներին՝ բարիք, չարիք գործողներին՝ չարիք։ Դու ինչո՞ւ ես դատում քո եղբորը, ինչո՞ւ ես արհամարհում ու բամբասում նրան. ահա Դատավորը դռան մոտ է և յուրաքանչյուրին հատուցում է ըստ գործերի։

Եվ արդ, ինչպիսի՜ տանջանքների պիտի դատապարտվեն նրանք, ովքեր կբամբասեն ոչ միայն եղբայրներին, այլ նաև վարդապետներին ու քահանաներին, քանզի անօրինացել ու սաստիկ անառակությամբ են լցվել և ամբողջովին սատանային են հնազանդվում։ Քանզի նա է իր ամբարշտացած թույնը թափում նրանց վրա, մինչև որ կործանում է ահավոր անօրենություններով. ինչպես որ անապատում ժողովրդին նախ՝ նախատել տվեց Մովսեսին, ապա՝ արհամարհել տվեց Աստծուն, այդպես նաև հրեական ազգին, որ նախ՝ կոտորեց մարգարեներին, ապա՝ սպանեց Քրիստոսին, այդպես նաև Հուդային նախ աղքատներից գողանալ և ապա Տիրոջը մատնել տվեց։ Այս նույն օրինակով էլ բամբասողներին նախ՝

իրենց ընկերներին, ապա՝ վարդապետներին ու քահանաներին բամբասել տվեց. նրանց բամբասանքներն առ Աստված են բարձրանում, ինչպես որ Ինքը՝ Քրիստոս է ասում. «Ով ձեզ է ընդունում, ընդունում է ինձ, և նա, ով ձեզ է անարգում, ինձ է անարգում» [Մատթ. Ժ 40, Ղու. Ժ 16]։ Եվ նա, ով բամբասում է քահանաներին ու վարդապետներին, Քրիստոսին է անարգում։

Աշխարհական ես՝ մի՛ բամբասիր ու մի՛ հայհոյիր քահանայության պատիվը։ Նայի՛ր Կորխին, Դադանին և Աբիրոնին, ովքեր անարգեցին քահանայության պատիվը. տե՛ս, որ երկիրը բացվեց և կուլ տվեց նրանց, [երկնքից կրակ իջավ] և ճարակեց նրանց բանակը [տես Թվեր ԺՁ 32-33, 35]։ *Զգուշացի՛ր, որպեսզի նաև դու, որ անարգում ես քահանայության պատիվը, նրանց փորձանքը չստանաս։ Քեզ չհրամայվե՛ց բամբասել առաջնորդներին, այլ [հրամայվեց] լսել ու պատվել նրանց.* «Լսեցե՛ք ձեր առաջնորդներին և հնազանդվեցե՛ք նրանց, որովհետև նրանք հսկում են ձեր հոգիների համար, քանի որ հաշիվ են տալու ձեր փոխարեն» [Եբր. ԺԳ 17]։ *Իսկ դու հայհոյությամբ ու բամբասանքով պատերազմում ես նրա դեմ։ Տե՛ս, որ մարտնչում ես ո՛չ թե նրա, այլ՝ Աստծու դեմ, Ով նրան շնորհեց քահանայության պատիվը։ Քանզի բոլոր նրանք, ովքեր պատվում են քահանային, փառավորում ու պատվում են Աստծուն, իսկ նրանք, ովքեր արհամարհում են [քահանային], անարգում են Աստծուն։* «Մեծարի՛ր քո քահանաներին» [Սիր. Է 31], *և՝* «Մի՛ արհամարհիր քո ժողովրդի իշխաններին» [Ելք ԻԲ 28]։ *Քանզի եթե քահանան անպիտաններից մեկն էլ լինի, Աստված տեսնում է, որ Իր համար մեծարում ես նաև անարգներին։ Քանզի սուրբից ակնածում ես նրա սրբության համար։ Իսկ Աստծու համար պատիվ է այն, որ անարգին մեծարես, բայց քահանան անարգ չէ.* «քանի որ Ամենակալ Տիրոջ պատգամաբերն է» [տես Մաղաք. Բ 7]։

Իսկ եթե արհամարհում ես նրան, մեղք ես գործում Աստծու հանդեպ, Ով նրան ձեռնադրությունը տվեց, և Նրանով է ինքը կատարում [սուրբ Պատարագի] Խորհուրդն ու մկրտությունը, թեև նրանք արժանի չեն մերձենալու ահավոր Խորհուրդին, բայց ժողովրդի փրկության համար չի արգելում Սուրբ Հոգու շնորհները։ Քանզի եթե ժողովրդի փրկության համար խոսեց Բաղաամի էշի միջոցով և նրա դյութությամբ [տես Թվեր ԻԲ 28-30], *ապա որքա՜ն ավելի քահանայի միջոցով է Ինքը ամեն բան անում մեր փրկության համար։ Եվ դու, եթե սրբությամբ հաղորդվես սուրբ Խորհուրդին, քահանայի պղծությունը չի վնասի քեզ, ինչպես որ նրան, ով պղծությամբ է մոտենում, չի օգնում քահանայի սրբությունը։ Իսկ եթե համարում ես, թե արատավոր քահանայի պատճառով Հոգու շնորհները չեն իջնում Պատարագի վրա, և Աստված նրա միջոցով չի գործում, հիշի՛ր, որ դու քակտում ես Եկեղեցու կարգերը և քո քրիստոնյա անունը։ Եթե այդպես է, ապա, ըստ քեզ, ո՛չ Պատարագն է Պատարագ, ո՛չ ձեռնադրությունն է ձեռնադրություն, ո՛չ էլ քահանայության կարգն է հաստատուն. ահա ուրեմն սնոտի է քրիստոնյայիդ հույսը, որովհետև բոլո՛ր ենք մեղքերի ենթակայության տակ։*

Եվ արդ, այդպիսի բաներ մտքո՛վդ իսկ չանցկացնես. մի՛ քննիր առաջնորդի վարքը և մի՛ բամբասիր քո քահանաներին ու վարդապետներին։ Հրաման չստացա՛ր քննելու որևէ մեկի մեղքերը, ուր մնաց թե՝ քահանայինը. Աստված է քննողն ու դատողը, դու ինչո՞ւ ես քննում, դատում և հայհոյում։ Քանզի եթե հրաման չստացար դատելու, քննելու և բամբասելու ընկերոջդ, ապա ուրեմն որքա՜ն առավել՝ քահանաներին ու վարդապետներին։ Քննիր և դատիր քո՛ վարքը, ո՛չ թե առաջնորդների։ Իսկ եթե նա ուղիղ չէ հավատի մեջ և սխալ բաներ է ու-

սուցանում, փախի՛ր նրանից, մի՛ մոտենա, մի՛ ճաշակիր և մի՛ հաղորդակցվիր նրա հետ և մի՛ շփվիր։ Քանզի եթե նա թերահավատ է, թյուր բաներ է ուսուցանում, եթե Պողոսն իսկ լինի կամ հրեշտակ, մի՛ հաղորդվիր, որովհետև առանց պատժի չի մնում անխտրաբար հաղորդվելը։ Որովհետև հավատը քննելը քոնն է, իսկ վարքը դատելը՝ Աստծունը։ Բայց եթե քահանան առողջ հավատ ունի, հնազա՛նդ եղիր նրան, իսկ վարքի համար մի՛ բամբասիր։

Աշակերտ ես՝մի՛ դատիր վարդապետին. Քրիստոս է, որ քննում ու դատում է։ Քանզի եթե մի դատարկ խոսքի համար պատասխան պիտի տանք և կամ եղբորը մորոս կամ հիմար ասելու համար հրի մեջ պիտի առաքվենք, ապա որքա՜ն առավել պատիժների արժանի պիտի համարվենք վարդապետին և Աստծու քահանային հայհոյությամբ բամբասելու համար։ Պատիժներից ազատ չէ նա, ով [անմաքուր] խղճմտանք ունի և հանդգնում է սպասավորել սուրբ սեղանին, այլ դատվելու է և ահավոր հրի և անվերջանալի տանջանքների [է մատնվելու]։ Քանզի [Գիրքն] ասում է, թե չկա ավելի ծանր մեղք, որ արթնացնում է Աստծու ամբողջ բարկությունը, քան այն, երբ մեկն անարժանաբար քահանա է դառնում, քանզի հարկ է, որ Անարատի սպասավորը հոգով ու մարմնով անարատ լինի, որպեսզի անարատի միջոցով արատավորներս փրկվենք։ Իսկ արհամարհող քահանաները, որոնք [անմաքուր] խղճմտանք ունեն և արհամարհանքով են մոտենում սուրբ սեղանին՝ ահեղ Խորհուրդի առջև, մեծամեծ ու սաստիկ պատիժներ ու տանջանքներ են պատրաստված նրանց համար՝ Աստծուն արհամարհողներից վրեժ առնելու համար։ Հիշի՛ր Ահարոնի որդիներին, որոնք արհամարհանքով էին մտնում սպասավորելու. բարկության հուրը կերավ նրանց։ Հիշի՛ր Հեղիի որ-

դիներին, որոնք անարժանությամբ էին սպասավորում սրբություններին. սուրը կերավ նրանց։ Նրանց պատճառով կորստյան մատնվեց նաև Հեղին, և Իսրայելից շատերը մեռան։ Եթե Հնում էր այսպես, ապա որքա՜ն առավել Նորում ահավոր վրեժխնդրություն պիտի պահանջվի նրանից, ով անօրինությամբ մոտենա՝ սպասավորելու ահավոր Խորհուրդին։

Այսպիսին են տանջանքներն այն քահանաների, որոնք փոքր-ինչ հանցանքով մոտենում են սուրբ Խորհուրդին։ Բայց դու հրաման չստացա՛ր բամբասելու և արհամարհելու, որովհետև ոչ թե մարդուն, այլ՝ Աստծուն ես հայհոյում և արհամարհում։ Ժողովուրդը Մովսեսին արհամարհեց, և Աստված Իրենն համարեց, Իսրայելի որդիները Սամուելին արհամարհեցին, Աստված Իրենն համարեց. «Ոչ թե քեզ են անարգում, այլ ինձ են արհամարհում» [տես Ա Թագ. Ը 7], *քանի որ բոլոր նրանք, ովքեր քահանային բամբասում և արհամարհում են, մեղք են գործում Աստծու առջև։ Մի՛ ասա, թե՝ ճիշտ է բամբասանքս, և բոլորը գիտեն։ Քանզի եթե ճիշտ է, ապա ոչ թե մեր, այլ Դատավորի քննելու բանն է։ Տե՛ս, որ մահապարտին բոլորը չէ, որ քննում ու դատում են, այլ միայն՝ դատավորները։ Ուրիշի դատաստանը դու մի՛ դատիր, ոչ մեկի մասին մի՛ խոսիր և մի՛ լսիր ուրիշի մասին։ Իսկ եթե եղբորդ մասին ինչ-որ բան լսեցիր, մեռցրո՛ւ այն քո սրտում, որ չծակի և դուրս չելնի։*

Եվ արդ, մի՛ բամբասեք իրար. մեր ամեն մի արարքի համար Աստծու առջև ենք կանգնելու և յուրաքանչյուր գործի համար հաշիվ ենք տալու. յուրաքանչյուրն իր բեռն է տանելու, ընկերոջը ոչ ոք չի կարող օգնել։ Քանզի գեհենի բազում աղետների, կրակե հորդառատ գետի ահեղ հոսքի և սաստիկ կսկծացող ցավերի պատճառով յուրաքանչյուրը կարծելու է, թե միայն ինքն է տան-

ջանքների մեջ, քանզի բորբոքուն գազանացած հուրը շնչավորի պես շանթերով հարձակվում է՝ Աստծուն արհամարհողներից վրեժ լուծելու։

Եվ արդ, ում այսպիսի ահեղ արհավիրքներ ու դառը դատաստաններ են սպասում, պետք է հոգ տանի, կոծի իր մեղքերը, քննի իր հանցանքները, որոնի իր չարիքները, իր աղետները մտաբերի, իր [մեղքերի համար] լաց լինի ու ողբա, հանապազ ի՛ր անօրինությունները բամբասի, այլ ո՛չ ընկերոջ հանցանքները որոնի, մանավանդ քահանաներինն ու վարդապետներինը։ Քանզի քահանան քեզ համար է դեգերում եկեղեցում, քեզ համար է պաշտամունք մատուցում և սպասավորում, ընթերցում և վարդապետում է քեզ համար, ձեռքերը վերև է բարձրացնում քեզ համար, քեզ համար է խորհուրդը մատակարարում, հանապազ քեզ համար է պատարագ մատուցում, քո ուխտն է ընծայում Աստծուն, քո տոնն է կատարում մշտապես, քո մոլորվածին է ուսուցանում և դարձնում, քո երախաներին է մկրտում, մեղավորներին է ուսուցանում , ապաշխարողների համար թողություն է խնդրում, զգուշացնում է աստվածապաշտ լինել, քո հանգուցյալներին է օրհնությամբ հուղարկավորում, քո և քո որդիների հարսանիքն է ուրախությամբ պսակով կատարում, շքեղացնում և թշնամուն ամաչեցնում, քո կյանքի ու փրկության համար է աղաչում, յարաժամ Աստծու առջև է ընկնում քո պատիժների համար, մշտապես պաղատում է՝ քո փրկության համար Տիրոջը քեզ հետ հաշտեցնելու համար, անդադար թողություն է խնդրում քո մեղքերի համար, ամեն ժամ հոգ է տանում քո հոգու համար և հանապազ սպասավորում է քո մարմնին և ծառայից առավել հնազանդվում է քեզ։

Եվ արդ, այսպիսի և սրանցից առավել ծառայություն է մատուցում քեզ և այս ամենի փոխարեն լսում է հայ-

հոյությունն ու բամբասանքներ. ինչպիսի՜ կրակներ ու ահավոր անվերջանալի տանջանքներ են քեզ սպասում։ Այս բոլոր երախտիքների փոխարեն հարկ էր, որ ծառայեիր քահանային, աղաչեիր և աղոթեիր [նրա համար], որդիներիդ հետ միասին սպասավորեիր և պատկառեիր՝ իբրև երախտավորից, սիրեիր նրան, ինչպես քո անձն ու հոգին, նրա տրտմությունը սփոփեիր և նրա վաստակի համար երանի տայիր, իր վարդապետության մեջ զորացնեիր, թեթևացնեիր նրա տկարությունը, կերակրեիր ու հագեցնեիր, հոգայիր նրա մարմնավոր կարիքները և նրան միայն հոգևոր գործերով զբաղվել տայիր։ Հարկ էր, որ այս և այսպիսի բազում այլ երախտիքներով հատուցեիր քահանային նրա ծառայությունների փոխարեն, այլ ոչ թե բամբասեիր, հայհոյեիր ու արհամարհեիր առանց ակնածելու։

Արդ, այս ամենը լսելով՝ հանգցնե՛նք հայհոյության բորբոքուն հնոցը, դադարեցնե՛նք արհամարհանքների հուրը։ Սանձե՛ք ձեր լեզուն՝ չչարախոսելու, մաքրե՛ք ձեր աչքերը՝ անամոթ չնայելու, ուղղե՛ք ձեր սիրտը չար խորհուրդներից, ծառայե՛ք Տիրոջը երկյուղով։ Պատվե՛ք վարդապետներին, հնազանդվե՛ք քահանաներին, սպասավորե՛ք հիվանդներին, հագցրե՛ք մերկերին, հագեցրե՛ք քաղցողներին, սփոփե՛ք նեղվողներին, օգնե՛ք տնանկին, անդադար տքնե՛ք աղոթքներով, պահքով ու ողորմությամբ։ Սա՛ է ձեր փրկության ճանապարհը, որ հանում է դեպի վերին քաղաք՝ դեպի փափագելի անանց վայելչությունները. թող նաև մենք արժանանանք վայելելու դրանք և փառավորելու Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և հավիտյանս. ամեն։

ԺԱ. *Սիրո, մախանքի[1] և նախանձի մասին*

Սիրո մասին նորագույն բաներ փնտրելու անհրաժեշտություն չկա, որովհետև մեզ սիրո վարդապետ ունենք նույն Իրեն՝ Քրիստոսին, Ով ասաց. «Սիրեցե՛ք միմյանց» [Հովհ. ԺԳ 34], *և՝* «Եթե ինձ սիրեք, կպահեք իմ պատվիրանները» [Հովհ. ԺԴ 15]: *Քանի որ սերն է պատվիրանի գլուխը, և նա, ով կամենում է մոտենալ աստվածպաշտության, հարկ է, որ բոլոր պատվիրաններից առաջ սեր ստանա.* «Նրանով բոլորը կիմանան, որ իմ աշակերտներն եք, եթե դուք սիրեք միմյանց այնպես, ինչպես որ ես ձեզ սիրեցի» [Հովհ. ԺԳ 35]: *Քանի որ Աստված Ինքը սեր է (և Հովհաննեսն էլ Նրան սեր է անվանում* [Հովհ. ԺԳ 34]*), նա, ով մնում է Աստծու սիրո մեջ, բնակվում է Աստծու մեջ, և Աստված բնակվում է նրա մեջ, որովհետև կատարում է Նրա՝ սիրելու հրամանը։*

Սիրել քարոզվում էր նաև Հնում,իսկ Նորում Քրիստոս հրամայում է սիրել [ոչ միայն] մեզ սիրողներին, այլ նաև մեր թշնամիներին, նաև անձը դնել մեր սիրելիների սիրո համար (տես Մատթ. Ե 44): *Նա Իր անձը դրեց և՛ թշնամիների, և՛ սիրելիների համար, որպեսզի ոչ միայն խոսքով, այլ նաև գործով մեր մեջ հաստատի սիրո պատվիրանը։ Ուստիև մենք սրտով սիրե՛նք Աստծուն և երկյուղով պահե՛նք Նրա պատվիրանները. Աստծուն սիրելը Նրա պատվիրանները սրտով պահելն է։ Իսկ Նրա պատվիրաններն այս են, որ ճշմարիտ սիրով սիրենք միմյանց. ամեն ոք, ով ճշմարտապես սիրում է իր եղբորը, պահում է Նրա պատվիրանները։*

---

[1] մախանք - չար նախանձ, չարակնություն:

Իսկ ճշմարտապես սիրելն այս է, երբ սիրում ենք ոչ թե [մեզ արված] երախտիքի համար, ոչ թե ըստ ընտանեկան սովորության, ոչ թե նրա գեղեցիկ դեմքի, ոչ թե գութի համար և ոչ էլ, որովհետև նա սիրում է մեզ։ Այլ միայն Աստծու պատվիրանի համար պիտի սիրես բոլորին և բոլորի հետ խաղաղություն պիտի ունենաս, բայց ունեցվածքիցդ պիտի բաշխես միայն կարիք ունեցողին, իբրև սեփական վշտացած անդամի՝ պիտի հոգաս աղքատի մասին, քանի որ բոլորս միմյանց անդամներ ենք, և հարկ է, որ ինչպես Պողոսն է ասում. «Մեկ վշտացած անդամի համար վշտանան մյուս բոլոր անդամները» [տես Ա Կորնթ. ԺԲ 26], *և անձդ չարչարանքների պիտի տաս ընկերոջ սիրո համար, ինչպես որ Քրիստոս Իր անձը չարչարանքների տվեց մեզ համար։ Քանզի եթե Նա, որ Աստված էր, մեզ և մեր թշնամիների համար իջավ այսչափ անարգության, ի՞նչ պատասխան պիտի ունենանք տալու, եթե չսիրենք միմյանց ըստ [Նրա կողմից] մեզ տրված պատվիրանի՝ սիրել [մեր] թշնամիներին, օրհնել մեզ հալածողներին, բարիք անել նրանց, ովքեր ատում են մեզ և աղոթել մեզ հալածողների համար* (տես Մատթ. Ե 44-45)։ *Քանզի սիրո փոխարեն սեր հատուցում են նաև մաքսավորները, բայց այն է պատվիրանի համար, որ սիրեն թշնամիներին, ըստ կարողության՝ օգնեն բոլորին, մխիթարեն կարոտյալներին, սփոփեն տրտմածներին, զրկվածին հատուցելու մասին խոսեն, օգնեն անօգնականին, սպասավորեն հիվանդացածին, մոլորվածին [ճշմարիտ] գիտության դարձնեն, շտկեն եղբոր թերությունները, ինչքերն ու կարողությունը ծառայեցնեն բոլորին, եթե հավատացյալների համար ամեն բան ընդհանուր է։*

Եվ արդ, քրիստոնյան և Քրիստոսի աշակերտն այնպես պիտի սիրի իր եղբորը, որ. «Եթե դուք միմյանց սիրեք,

դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն եք» [Հովհ. ԺԳ 35]: *Քանզի եղբորը սիրելն ավելին է, քան մարգարեության հոգի ընդունելը, առավել բարձրագույն է, քան առաքելական կոչումը, մարտիրոսների պատվից պատվական է և բոլոր առաքինություններից ավելի վեր ու պատվված է երևում, իբրև իր վայելչությամբ փայլող թագավոր է ռամիկների մեջ։ Թեև մեծ է կույսերի վայելչությունը, բայց սիրո պայծառության առջև նվազում է [այդ] առաքինության ամբողջ լուսավորությունը. ինչպես արեգակի ճառագայթներից ծածկվում է աստղերի ամբողջ պայծառությունը, ուր ողորմություն է լինում առանց սիրո։*

Արդ, ինչպե՞ս է ողորմություն լինում առանց սիրո։ Եթե մեկը [ողորմություն] անի սնափառության ախտով՝ ի ցույց մարդկանց, կամ եթե նույն ախտով գանահարության և բանտերի մեջ մաշվի կամ կրակի մեջ այրվի, ոչ մի օգուտ չի ունենա, ինչպես Պողոսն է ասում. «Եվ եթե իմ ամբողջ ունեցվածքը տամ աղքատներին և իմ այս մարմինը մատնեմ այրվելու, բայց սեր չունենամ, ոչ մի օգուտ չեմ ունենա» [Ա Կորնթ. ԺԳ 3]: *Քանզի եթե մարդը սրտում սուրբ սեր չունենա, թեև մարգարեական հոգի և առաքելական շնորհներ էլ ունենա, սաստիկ ճգնությամբ չարչարի իր անձը և վարդապետության խոսքով լուսավորի շատերին, հավատով մեծամեծ նշաններ գործի և լեռները տեղաշարժի, ոչ մի օգուտ չի ունենա այդ ամենից, որովհետև սերն է բոլոր առաքինությունները համեմող աղը, և ապականվում է այն [տեղը], ուր որ սերը մուտք չի գործում, և դուրս են մնում արքայությունից։ Նա, ով սրտանց սեր ունի, սիրում է ողորմությունը և [կամավոր] աղքատությունը։ Քանզի հարկ է, որ սեր ունեցողը հրաժարվի հարստությունից. սերն ու հարստությունը չեն բնակվում միևնույն անձի մեջ, որովհետև սերը ցրում*

է հարստությունը՝ կարոտյալներին օգնության հասնելու համար։ Սերը հալածում է ագահությունն ու չարակնությունը, նենգությունն ու թշնամությունը, նախանձն ու բարկությունը, ամբարշտությունն ու սնափառությունը, բոլոր ախտերը չքանում են սիրո [պատվիրանը] պահողից։ Սիրուն միավորված ու կապված են խոնարհությունը, հեզությունը, քաղցրությունը, ողորմությունը, անընչությունը, անկեղծությունը, անանձնասիրությունը, խաղաղությունը, ճշմարտությունը, սրբությունը, անմեղությունը, բարերարությունը. բոլոր առաքինություններն ու կատարյալ պատվիրանապահությունը կատարում է սիրո [պատվիրանը] պահողը։

Սատանայի բոլոր չար խորհուրդները, բոլոր ախտերի բազմությունները լցվում են նրա մեջ, ով սրտով հաստատված չէ սիրո մեջ, որովհետև սատանայական ախտերի գլուխը անձնասիրությունն է. նրա վրա են շարվում բոլոր ախտերի բազմությունները, քանի որ անձնասերը երբեք ընկերասեր լինել չի կարող։ Իսկ պատվիրանի գլուխը սերն է, և նրա վրա են շարվում բոլոր առաքինությունները, քանի որ ընկերասերը չի փնտրում իր կամքը, այլ [կամենում է] ընկերոջ համար հաճելին և բարին անել, նաև Աստծու պատվիրանի համար ծառայության է տալիս իր անձը, որովհետև գիտի, որ Աստծու պատվիրանի լրումը սերն է։ Եվ բոլոր առաքինությունները, որ առանց սիրո են [գործվում, արժեք չունեն]. երկնային առագաստի դռները փակվում են նրանց առջև, և նրանք լսում են այն սոսկալի ձայնը, թե՝ «Չեմ ճանաչում ձեզ» [Մատթ. ԻԵ 12], *և գեհենի կրակին են մատնվում պոռնիկների ու մարդասպանների հետ.* «Որովհետև, ասում է, ով ատում է իր եղբորը, մարդասպան է» [Ա Հովհ. Գ 15]: *Իսկ նա, ով չարակնում ու նախանձում է, ո՞ր խավարի մեջ պիտի գնա և կամ ո՞ւր պիտի սուզվի, ինչպիսի՞ տանջանք-*

ներով պիտի խաշվի ու մաշվի, քանզի ախտերի սկիզբը նախանձն ու չարակնությունն են. նրանցո՛վ սատանան ընկավ փառքերից, նրանցո՛վ Ադամը ելավ դրախտից, և անեծքն ու քրտինքը, փուշն ու տատասկը, մահն ու մեղքը տիրեցին Ադամի բոլոր ծնունդներին, նրանցո՛վ Կայենը երերման ու ահուդողի մատնվեց։

Իսկ այժմ շատերն են, որ միշտ այրվում են նախանձից, երբ տեսնում են եղբոր հաջողությունը, որ կա՛մ հարստության, կա՛մ իր արվեստի, կա՛մ վարդապետության խոսքի շնորհիվ հարգվում է շատերի կողմից, այդ տեսնելով՝ նախանձորդները հալչում ու մաշվում են, նրա մասին բամբասանքներ հորինում՝ հակառակվելով Աստծու կամքին, որ նրան հաջողություն շնորհեց։ Ուստի և եթե նախանձոտը բազում ճգնություններ էլ կրի և բյուր առաքինություններ էլ ստանա, նաև կուսության սրբությունն ունենա, պահքով ու բոլոր ճգնություններով ինքն իրեն մաշի հանապազ, քրձով, մոխրով ու մշտահեղ արտասուքներով ողբա գիշեր ու ցերեկ, ողորմություններով աղքատանա, մեծամեծ նշաններ գործի, մշտաջան աղոթքներով և փառաբանություններով նմանվի վերին զվարթուններին, անգամ եթե մարտիրոսվի և հրով այրվի և իր սրտում նախանձ և չարություն ունենա, բոլոր սպանողներից ու շնացողներից առավել պիղծ և մեղքերի մեջ թաթախված բոլոր ամբարիշտներից առավել անիրավ կհամարվի։ Եվ արդ, ո՞ր չարիքներն են առավել ժանտ, քան նախանձն ու չարակնությունը, որովհետև հրից առավել այրող և սրից առավել սպանող են. իրենց ունեցողներին են սպանում։ Եվ ո՞վ կարող է դիմանալ այն բոցին, և կամ այդպիսի սատանայական անձինք ի՞նչ ներում և թողություն պիտի ունենան։ Քանզի ոչ մի չարիք նախանձի և չարակնության նման չէ, որովհետև [դրանք ունեցողը] մշտապես մեղքերի մեջ է. գիշեր

և ցերեկ հանապազ չի դադարում սպանելուց, քանզի մշտապես բարձած՝ իր հետ է կրում իր չարությունները։

Եվ արդ, ո՞վ կարող է փարատել այն թանձրամած խավարը, որ տարածվել ու թանձրացրել է նախանձողների մտքերը, քանի որ նրանց սրտից երբեք չի հեռանում մարդասպանի[1] *նախանձի դառը նստվածքը։ Քանզի այդպիսիները եթե անգամ եկեղեցի էլ մտնեն և աղոթքներ ու խնդրվածքներ անելով մաշվեն, եթե արտասվեն ու ողորմություններ էլ անեն, երբեք չեն սրբվի սպանության [մեղքից]։*

Արդ, ինչպիսի՞ ներում և թողություն պիտի գտնեն այդպիսիները, և կամ ինչպիսի՞ ահավոր չարության կկարողանանք նմանեցնել այդպիսի անմեկնելի անօրինությունը. ո՞ր չարաժանիք գազանին, ո՞ր խայթող սողունին, ո՞ր իժը կամ ո՞ր քարբը կունանան այդպիսի սարսափելի թույն։ Չկա, և անհնարին է գտնել չարակնողներից ու նախանձոտներից առավել անսուրբ ու անօրեն անձինք, որովհետև[2] *նա իր մտքում մշտապես այրվում-բորբոքվում է մտատանջությամբ։ Դողում ու դեղնում է, երբ տեսնում է իր եղբայրներին ու դրացիներին, որոնք ընտանիք և զավակներ ունեն,և դևերն ավերում են տունը, հատուցում են կա՛մ քարկոծությամբ, կա՛մ այրելով, կա՛մ ջրի մեջ ընկղմելով, սատանայի կամքը կատարելով, այդպիսի մարդու համար պետք է հանապազ արտասվել ու ողբալ։ Նրա համար ավելի լավ է երկու աչքով կույր լինել, քան բոլոր անդամներով առաքվել հավիտենական հրի մեջ։ Նա հեթանոսներից առավել պիղծ է երևում և չար նախանձությամբ լծակիցն է սատանայի,*

---

[1] Նկատի ունի առաջին մարդասպանին՝ Կայենին:

[2] Օրինակի մեջ բացակայում է մեկ էջ, որում այս ճառի ավարտն է և հաջորդ ճառի սկիզբը, մինչև «նա»: Երկուսի թերին վերցվեց երկու օրինակների բաղդատությամբ:

որի հետ էլ պիտի ժառանգի հրացայտ տարտարոսը և անշեջ գեհենը։

Եվ եթե բոլոր բարի գործերն ու զանազան առաքինություններ, բարի վարք ու առաքինի կենցաղավարություն ունենա, այդ ամենից ոչ մի օգուտ չի ունենա, եթե ատելության խավարը, չարակնությունն ու նախանձը պահի իր սրտում։

Ուրեմն այսուհետ շտապի՛ր և հեռո՛ւ փախիր խավարամած մեղքերիցդ և արտասուքներով Տեր Աստծուն ասա՛. «Մեղավո՛ր եմ», որպեսզի կարողանաս լսել Քրիստոսից այն խոսքը, որ ասում է. «Եկեք, իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցեք պատրաստված արքայությունը» [Մատթ. ԻԵ 34]: *Նրան փառք հավիտյանս հավիտենից. ամեն։*



ԺԲ. - *Բարկացկոտ բարք ունեցողների մասին*

Բոլոր տեսակի մեղքերը, պիղծ ու անօրեն ախտերը ջանում են մարդկանցից ծածկել իրենց անօրինությունը։ Իսկ բարկության ախտի մոլուցքը անամոթ է ու վայրենաբարո, չի ակնածում և գազանամիտ է, մրգապահների խրտվիլակի նման երերում է արագ ու աղմուկով, և քամին դեռ չշարժած՝ սկսում է կարկաչել՝ ցույց տալով իր բնության թեթևությունը։ Այդպիսին է նաև բարկացող մարդը. մինչև իր խոսքերի ընդդիմությունն իր սրտին հասնելը աղաղակում է՝ կրակի պես այրվելով, բորբոքվում է և առանց ամաչելու բոլորին ցույց է տալիս իր բնության թեթևությունը, իր կատաղի գազանության պատճառով չի կարողանում թաքցնել իր անօրեն մոլորությունը, այլ հրի մեջ թափանցած քամու նման իր անօրեն բարկությունն ու ցասումը ուղղում է իր կողմից զրկվածների վրա և արշավող ավազակի պես բոլորին ցավ է պատճառում իր գոռգոռոցներով։

Երբ մեկը հնազանդվում է բարկության դևին, այն մոլեգին է դարձնում նրա բոլոր զգայությունները. ինչպես որ ինքն է կամենում, բռնկում է նրա լեզուն չարությամբ, բերանը լցնում է անարգանքով, ցասումով գազանացնում է միտքը, բարկությամբ խռովեցնում է սիրտը, կռվազանությամբ կարծրացնում է լարդը, եռացնում է արյունը, դողացնում է մարմինը, այլագունեցնում է աչքերը, փոխում է գույնը և մարդուն ամեն բանով վայրենի երևալ, բազում հիմար խոսքերով գոռգոռալ է տալիս՝ վայրի գազաններից առավել գազանացնելով նրան։ Սակայն ո՛չ գիշատիչ գազանները, ո՛չ էլ թունավոր սո-

դուններրը չունեն այդպիսի դժնդակ բարք, ո՛չ իժերի ու քարբերի դաժանությունն է հավասարվում բարկացողների մոլությանը, ո՛չ մահաբեր թույներն ու կարիճի խայթոցներն են նման բարկության հարվածներին, ո՛չ թրի կտրելն ու ո՛չ կրակի այրելն են կսկծեցնում առավել, քան բարկացողներինը, և ո՛չ էլ դիվահարներն[1] *են այնքան մոլեգին, որքան այդ դևերից բարկացողները։ Քանզի դևը հանապազ բարկությամբ այրում է նախանձ մարդուն, նրան դարձնում է անհաշտ ոխակալ և մշտապես նրա սրտում է պահում նախանձի թանձրամած խավարը։ Եվ ինչպես որ թունավոր [սողուններն] են իրենց թույնն իրենց մեջ կրում մշտապես, այդպես էլ բարկացողներն են [մշտապես իրենց մեջ կրում] ցասումը, նախանձն ու քենը և կատաղի շան պես հարձակվում են բոլորի վրա. նրանք մշտապես խայթում են կարիճի պես, կծում են օձի նման և բարկության թույնով լցված՝ չեն կարողանում շուտ խոնարհվել միմյանց առջև։ Նրանք իժեր և իժերի ծնունդներ են անվանվում, անհաշտ են և իրար անհնազանդ։ Յուրաքանչյուրն ինքն իրեն արդարացնելով՝ բազում խոսքեր է ստեղծում, իր անձը իրավացի ցույց տալու համար բազում պատմություններ է հորինում և ջանում է մեղքը ընկերոջ վրա բարդել՝ բոլորի առջև նրան մեղավոր ցույց տալով։ Քանզի տրտմության դևը նրան ստիպում է չզղջալ, խստացնում է նրա միտքը, որ չկամենա ապաշխարել, քարացնում է նրա սիրտը՝ չլսելու եղբոր խրատն ու [Սուրբ] Գրքի ուսուցումները. սատանան, հիմարացնելով նրա զգայարանները, նրան թույլ չի տալիս ճանաչել իր մեղքերը, այլ նրա մտքում*

[1] Երկու օրինակ այս տեղին ունեն այսպես. «Եվ դևերից մոլեգնողներն այնպես չեն չարչարվում, ինչպես բարկացողները։ Քանզի։ Իսկ մի երրորդ օրինակ ունի. «Մարմիններն այնքան չեն չարչարվում դևից, ինչքան բարկացողը՝ դևերի ցասումից, քանզի»։

կարծել է տալիս, թե ինքն անմեղ է, և ընկերն է մեղավոր։ Այդպես նաև նրա ընկերոջն է նրան մեղավոր համարել տալիս, իսկ իրեն՝ ամեն բանում անմեղ։ Եվ դարձյալ՝ սրան այստեղ է խստացնում՝ [ներշնչելով], թե՝ «Նա՛ պետք է խոնարհվի քեզ, որովհետև նա՛ է մեղավորը», իսկ նրան այնտեղ է խստացնում, թե՝ «Արժան չէ՛, որ դու նրան հնազանդվես, որովհետև անմեղ ես»։ Եվ այսպես սատանան երկուսին էլ թշնամությամբ հեռացնում է իրարից՝ թողնելով առանց զղջումի ու ապաշխարության։ Բազում օրեր ծանրացնում է եղբոր սիրտը և ընկերոջ առջև խոնարհվելն ամոթ ու անարգանք է համարել տալիս, քանզի ասում է. «Եթե առաջ ես խոնարհվեմ, բոլորը կկարծեն, թե ես եմ մեղավորը, իսկ նրան անմեղ կհամարեն», ուստի և գազանանալով՝ չի հնազանդվում։

Քանզի երբ բարկության անօրեն ախտը մի անգամ բռնում է [մարդու] խորհուրդները, հափշտակում է նրա միտքը և գազանացնում, ամենևին թույլ չի տալիս իմանալ Աստծու երկյուղը, ահեղ դատաստանի ահը, այլ հեռացնում է արդարությունից, և նա երբեք չի մտածում դատաստանի մասին, չի մտածում իր մահվան օրվա, սոսկալի բեմի արհավիրքների մասին, այլ համառորեն մաքառում է՝ կատարելով իր անձի կամքը։ Եվ ո՛չ եղբայրների ամոթը, ո՛չ վարդապետների խրատը, ո՛չ պատվիրանների հրամանները, ո՛չ Աստծու երկյուղը, ո՛չ արքայության փափագն ու տանջանքների արհավիրքները նրան չեն պատկառեցնում՝ զղջալու և ապաշխարելու։ Այլ համարձակվում և եկեղեցի էլ է մտնում, աղոթում է Աստծուն, Ում չի ընդունում, և նրա աղոթքներն առ Աստված չեն բարձրանում։ [Զէ՞ որ] Ինքը՝ Տերն է քեզ ասում. «Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելու լինես և այնտեղ հիշես, թե քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի, քո ընծան թո՛ղ սեղանի առաջ և գնա՛ նախ՝ հաշտվի՛ր եղբորդ հետ և ապա՝ ե՛կ քո

ընծան մատուցիր» [Մատթ. Ե 23-24], *և այն ընդունելի կլինի։ Եվ յուրաքանչյուրի աղոթքն է պատարագ. դրանք ընդունելի չեն Աստծուն, եթե [մարդը] նախ չի գնում և չի հաշտվում տրտմության մեջ գտնվող եղբոր հետ և ապա միայն գալիս և աղոթում է Աստծուն, և [այդժամ միայն նրա աղոթքը] ընդունելի է լինում։*

Նաև ասում է. «Արեգակը թող ձեր բարկության վրա մայր չմտնի» [Եփես. Դ 26], *որպեսզի չլինի թե դևերը գիշերը քեզ դրդեն՝ հաջորդ օրը չհաշտվելու ընկերոջ հետ և չար խորհուրդներ, ոխ ու նախանձ, տեսակ-տեսակ նենգություններ չգցի քո մտքի մեջ։ Այլ գիշերը դեռ չհասած՝ գնա՛, հաշտվի՛ր քո եղբոր հետ։ Քանի դեռ այս աշխարհում ես, հաշտվի՛ր քո թշնամու հետ, որպեսզի.* «Չլինի թե նա քեզ մատնի դատավորին, իսկ դատավորը՝ դահիճներին, [և դու բանտ նետվես], որտեղից դուրս չես գա» [տե՛ս Մատթ. Ե 25]։ *Այդպես նաև դու, քանի դեռ օրը առջևումդ է, շտապի՛ր հաշտվել ընկերոջդ հետ, մի՛ սպասիր հաջորդ օրվան, որովհետև անհայտ է մեր՝ աշխարհից ելնելու [օրը], չգիտենք՝ վաղվա օրը ժառանգելո՞ւ ենք, թե՞ ո, սակայն ժառանգում ենք վաղվա օրը, [բայց] չենք շտապում հաշտվել մեր եղբոր հետ։ Հեթանոսների հետ ենք համարվելու, որովհետև առանց մեր եղբոր և ընկերոջ հետ հաշտվելու անընդունելի է [մեր աղոթքը]։*

Իսկ ինչպիսի՛ դառը տանջանքներով պիտի դատվեն նրանք, ովքեր ընկերոջ հետ թշնամություն ունեն և սուրբ խորհուրդին են մոտենում,ինչպիսի՛ կրակն ու խավարային ինչպիսի՛ գեհենն են նրանց սպասում։ Հաղորդվում ես Տիրոջ մարմնին և կամենում ես գողանալ Աստծուն՝ թաքցնելով ընկերոջդ հետ թշնամությունդ։ Այո՛, Կայենն էլ էր ուզում գողանալ Աստծուն՝ եղբոր սպանությունը թաքցնելով, իսկ արդ, տե՛ս նրա երերումն ու ահուդողը՝ չար խորհուրդի պտուղը։ Ով մոտենում է Տիրոջ մարմնին

և ընկերոջ հետ թշնամություն ունի, նրա համար այն կենարար մարմին չէ, այլ՝ այրող հուր, քանի որ նա ուտում և ըմպում է իր անձի դատաստանը։ Բայց ոմանք, փափագելով սուրբ Խորհուրդը, չեն շտապում հաշտվել ընկերոջ հետ, այլ երկար ժամանակ հեռու են մնում սուրբ Խորհուրդից և ընկերոջն աղաչելն ու նրա հետ հաշտվելը ավելի ծանր են համարում, քան հեռանալն ու սուրբ Խորհուրդը՝ Քրիստոսի մարմինն ու արյունը չընդունելը։ Եվ ընկերոջը չխոնարհվելու համար արհամարհում են տերունական Խորհուրդը։ Նրանից հրաժարվելով՝ կարծում են, թե պատիվ են անում Աստծուն՝ Խորհուրդին չմոտենալով։ Եվ չեն իմանում, որ ավելի են արհամարհում՝ չփութալով հաշտվել ընկերոջ հետ Քրիստոսի փափագելի մարմնի սիրո համար, որի մասին Պողոսն ասում է. «Ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց. նեղությունը, թե՞ մահը, դրանցից ոչինչ մեզ Քրիստոսի սիրուց բաժանել չի կարող» [տես Հռոմ. Ը 35]: *Իսկ քեզ ընկերոջդ հետ փոքր-ինչ թշնամանքը բաժանեց Քրիստոսի սիրուց և հեռացրեց սուրբ Խորհուրդից։ Քանզի եթե մեկը թշնամացավ քեզ հետ, իսկ դու խոնարհվեցիր Աստծու պատվիրանի համար, մի՞թե վնաս կրեցիր. [ամենևին], այլ մեծամեծ վարձատրություններ ընդունեցիր։ Քեզ մեկը անարգ ու արհամարհվա՞ծ անվանեց, դու քեզ նաև հող ու մոխիր անվանիր։ Մեկը քեզ նվաստ ու ցնցոտիավո՞ր կոչեց, դու ասա.* «Մերկ եկա այս աշխարհ, և մերկ էլ այստեղից պիտի դառնամ» [Հոբ Ա 21]: *Այսպիսի խոնարհությամբ կապեցիր անօրենների լեզուները, փակեցիր անարգողների բերանը, քակտեցիր սատանայի ջղերը, ցրեցիր նրա խորհուրդները, և քեզ անարգողներից ոչ ոք չի կարող վնասել քեզ, եթե միայն առողջ միտք ունենաս։ Ահա շատերն անարգվեցին ու համբերեցին և իրենց անարգողների համար աղոթեցին. Ստեփանոսն աղոթեց իրեն քարկո-*

ծողների համար, Մովսեսը, Սամուելը, Դավիթը և Քրիստոս՝ Աստծու Որդին, անարգվեցին, և [Քրիստոս] Հորը աղոթքներ էր մատուցում Իրեն անարգողների համար։ Արդ, դու նմանվո՛ղ եղիր երևելի այրերին։ «Դադարի՛ր բարկանալուց, հանդարտվի՛ր սրտմտությունից և մի՛ նախանձիր չարամիտներին» [Սաղմ. ԼՋ 8], *ասում է մարգարեն, քանզի ուր բարկություն և սրտմտություն են մտնում, այնտեղ չեն մտնում Հոգու շնորհները, ոչ էլ բարկացող սրտից արդար խորհուրդներ են ելնում։ Ինչպես որ [առաքյալն] է ասում.* «Մարդու բարկությունը Աստծու արդարությունը չի անում» [Հակ. Ա 20]։

Կա նաև արդար ցասում և արդար բարկություն. երբ վրեժ ես լուծում Աստծու պատվիրանների համար, ինչպես Սամուելն ու Փենեհեզը, և կամ զրկված եղբորդ համար։ Իսկ սրանից ավելի բարկանալը կամ իր անձի համար վրեժ փնտրելը զուր բարկություն է. այդ մասին Տերն ասում է, թե՝ «Դժոխքի կրակին պիտի դատապարտվի» [Մատթ. Ե 22]։ *Քանզի անտեղի բարկությունը ճանապարհ է [բացում] բազում ախտերի համար, որովհետև բարկությունը աղաղակ և կռիվ է, ատելություն և թշնամություն, նախանձ և ոխակալություն, վրեժխնդրություն և սպանություններ և բազում այլ չարիքներ։ Եվ երբ մարդը հաղթում է բարկությանը, դադարում են այս ամենը, ինչպես այն կրակը, որի մեջ այրվելու նյութ չկա։ Քանզի երբ մեկը բարկանում է, իսկ դու համբերությամբ տանում ես, հանգցնում ես նրա բարկությունը։ Եթե մեկը քեզ դիվահար է անվանում, մի՛ բարկանա, եթե բարկանաս, ուրեմն ճիշտ ես համարում քեզ անարգողին, որովհետև բարկությունը դևից է, այլ ոչ Աստծուց։ Ահա Տիրոջն էլ դիվահար կոչեցին, և Նա չբարկացավ, այլ հեզությամբ պատասխան տվեց, թե՝* «Իմ մեջ դև չկա» [Հովհ. Ը 49]։ *Քեզ անարգեցին ու արհամարհեցի՞ն, Տիրոջն ավելի*

անարգեցին ու արհամարհեցին։ Քեզ բռնցքահարեցին ու ապտակեցի՞ն, ահա նաև Տիրոջը բռնցքահարեցին ու ապտակեցին, նաև չարչարեցին ու խաչեցին, որ քեզ չարեցին։ Ցասմանդ պահին հիշի՛ր այս ամենը։

Մեզ բավական է սատանա թշնամին, մեր եղբայրներին մեզ թշնամի չդարձնե՛նք, այլ փութանք հաշտեցնել մեզ հետ, որպեսզի նահատակության պսակ ստանանք՝ եղբոր առջև ընկնելով և հաշտվելով նրա հետ։ Քանզի պսակներն ու պարգևները զետեղված են ոսոխների ու հակառակորդների միջև, և ով որ առաջինը խոնարհվի եղբոր առջև և աղաչանքներով հաշտեցնի իր տրտմած եղբորը, նա՛ կհափշտակի պարգևները և պսակները իր՝ առաջինը խոնարհվելու համար, որովհետև իր խոնարհվելով՝ վիրավորեց չար թշնամուն՝ սատանային, և իրեն ու իր եղբորը ազատեց նրա ձեռքից և փրկեց հավիտենական մահվանից։ Ուստիև նա համարձակությամբ ընդունում է մեծ վարձ և անանց բարիքների վայելչությունը։

Արդ, փոքր-ինչ չխոնարհվելու պատճառով չկորցնե՛նք հավիտենական փափկությունները,որովհետև շատերը հավիտենական կյանքի համար արհամարհեցին իրենց անձերն ու ինչքերը, ամուսնական սերն ու իրենց զավակների գութը, համբերեցին զանազան տանջանքների և կրակի մատնվեցին, որպեսզի միայն Աստծու արքայությունն ընդունեն։ Իսկ քո առջև ո՛չ հուր կա, ո՛չ սուր, ո՛չ էլ զանազան տանջանքներին համբերություն, այլ՝ միայն խոնարհվել տրտմած եղբորդ առջև, աղաչանքներով հաշտեցնել նրան և նահատակության նույն պսակն ընդունել։ Ինչո՞ւ ես ծանրացնում սիրտդ՝ չաղաչելու եղբորդ. կրակի մեջ չես մտնում, այլ՝ խոնարհվում ես։ Նախ դո՛ւ փութա, աղաչանքով ընկիր ընկերոջդ առջև և ստացիր լուսո պսակն ու նահատակության պարծանքը, երկնքի արքայության անբավ վայելչությունները։

Արդ, այս ամենը լսելով՝ մեղմացնե՛նք մեր տրտմութիւնը, հանգցնե՛նք մեր բարկութիւնը, դադարեցնե՛նք մեր աղաղակը, սիրե՛նք սերը, ստանա՛նք խոնարհութիւն, ընդունե՛նք հնազանդութիւն և ընկերոջ հետ հաշտվելու համար ընդառա՛ջ գնանք, որպեսզի համարձակութիւամբ ժառանգենք երկնային բարիքները մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք հավիտյանս. ամեն։

ԺԳ. *Ոխ պահողների և վրեժ լուծողների մասին*

Ոխ պահողների ու վրեժ լուծողների անօրինությունն ու չարությունն առավել ահավոր ու սաստիկ ենք տեսնում, քան [մյուս] բոլոր մեղքերի անօրենությունները, որովհետև բոլոր [մյուս] մեղքերն ու անօրինությունները երբեմն սաստկանում ու բորբոքվում են, երբեմն՝ դադարում, իսկ չարի կողմից հրահրված քինահանությունը, երբ ընկերոջից իրեն ընդդիմացող խոսքեր է լսում, բորբոքվում է անօրեն ու նենգ խորհուրդներով։ Քինախնդիր ոխապահների մտքում ամեն ժամ առանց հանգչելու բորբոքվում է նախանձի բոցը և հանապազ կսկծեցնում նրանց սիրտը, նրանք հալումաշ են լինում ու չարչարվում են իրենց մտքում, ոմանք անգամ այլագունում են իրենց չար խորհուրդների և սրտի նենգության պատճառով։ Եվ մարդկանց մեջ շրջում է խորամանկ իժը՝ [ոխակալը] իժի թույնի նման իր սրտում կրելով նենգությունը։ Նրա միտքը մշտապես սատանայի օթևան ու բնակարան է։ Նա լսում է, ինչ որ սատանան է ասում, և շուտափույթ կատարում է նրա կամքը. տեսքից մարդու է նման, իսկ բարքով՝ չարաժանիք գազանի։ Հրապարակներում նստում է իբրև մարդ, բայց նրա խորհուրդներում չար դևի խորամանկություններն են։ Մտնում է Եկեղեցի՝ իբրև քրիստոնյա, բայց նրա աղոթքները պիղծ են առավել, քան պիղծ զոհերը, քանզի ոխ պահողների աղոթքները չեն բարձրանում Աստծու առջև, որովհետև չարությունը նրանց սրտերում է, և մշտապես անօրեն նենգություն են խորհում։

Այդպիսի մարդը եթե անգամ մեծ գումարներ ողորմություն բաժանի, [աղոթքներով] լուսացնի և պահք պահի, սաստիկ ճգնություններով ցամաքեցնի իր մարմինը, այդ ամենից ոչ մի օգուտ չի ունենա, եթե ոխ պահի իր ընկերոջ հանդեպ և իր սրտում չարիքը թաղված ունենա։ Նա նստում և հանապազ [ընկերոջ] չար պատահարների ու փորձությունների մասին է խորհում, փափագով [չարիք] է կամենում նրան։ Շրջում է մտախոհ և ծննդկանի պես երկունքով ծնում, չարիք է նյութում նրան, ցանկանում է, որ նա սովի մատնվի, սրով ընկնի, ավազակների ձեռքն ընկնի, մեռնի. բոլոր տեսակի չարիքներն ու չար լուրերն է ցանկանում նրան։ Նրա տեսությունից ծածկում է իր դեմքը, չի ախորժում նրա տան մոտով իսկ անցնել։ Երբ նրան տեսնում է ճանապարհին, փոխում է ճանապարհը, որ նրան չհանդիպի։ Երբ Եկեղեցում է տեսնում, չի ուզում Եկեղեցի մտնել, եթե հրապարակում է տեսնում, նրա աչքերն այնպես են մթագնում, որպես թե չի կարողանում նրա երեսին նայել, խոնարհեցնում է գլուխը, իբրև գետնի հետ է խոսում և կամենում է չար բան խոսել նրա մասին, ում նախանձում է։ Եվ եթե մեկը նրա մասին չար բան է խոսում, նա, վերև նայելով, զարթնում է, զվարթանում, հաճույքով լսում և նրա չարախոսությանը [նորանոր բաներ է] ավելացնում՝ մեծ ուշադրությամբ խոսելով նրան չարախոսողի հետ։ Բայց եթե բարի խոսք է լսում նրա մասին, տրտմում, տխրում է նրա դեմքը, հալումաշ է լինում նրա միտքը։ Սիրելի է նրա թշնամիներին և թշնամի է նրա բարեկամներին։ Ատում է նրա որդիներին և չարախոսում նրանց նմաններին և ոչ միայն մարդկանց, այլ նաև նրա անասուններին է ատում, նրա անդաստաններին է նախանձում՝ ցանկանալով դրանց պատուհասներ ու երաշտ։ Սրանք և սրանցից առավելն է խորհում ոխապահը իր սրտում,

բայց մարդկանց առջև ցույց չի տալիս իր թշնամությունը։ Այդպիսի սատանայամիտներին չպե՛տք է մարդ անվանել, այլ՝օձ և իժ, և եթե դրանցից ավելի դաժանը գոյություն ունի, դրա անունով,որովհետև նրանք ավելի չար գազան են, քան՝ օձն ու իժը,քանզի օձն ու իժը բնությամբ են դաժան, իսկ ոխ պահողները սեփական կամքով են ընդունել սատանայի չար խորհուրդները, որի պատճառով էլ ժառանգելու են անշեջ հուրն ու անլույս խավարը նրա հետ։

Իսկ ես զարմանում եմ Աստծու ներողամտության վրա, որ մոլեգնող այդպիսի ամբարշտությունների պատճառով երկնքից նույն պահին կայծակներ չի առաքում. քանզի ոխ պահողն իր չարությամբ ու անօրինությամբ գերազանցում է ավազակներին ու մարդասպաններին, քանի որ ավազակներն ու մարդասպանները երբեմն սպանում, երբեմն էլ դադարում են սպանել, իսկ ոխապահը երբեք չի դադարում սպանելուց. նա իր [բոլոր] գործերում է մարդասպան, որովհետև սրտում ոխ ունի իր ընկերոջ հանդեպ. մարդասպան է անկողնում, երբ հիշում է ընկերոջ հանդեպ ոխը, մարդասպան է տանը, մարդասպան է Եկեղեցում, հրապարակներում, նաև ճանապարհին է մարդասպան, մարդասպան է ցերեկը, գիշերը, ամեն ժամ, որովհետև հանապազ իր սրտում կրում է նախանձն ու ոխը։ Եվ ապա սատանան, ավելի աճեցնելով ոխապահի անօրեն ամբարշտությունը, նրան հոժարեցնում է քինահանության՝ վրեժ լուծելու իրեն զրկողից։ Եթե փոքր էլ լինի զրկանքը, սատանան այն նրան մեծ է ցույց տալիս, մինչև հարվածներ էլ հասցնել է տալիս նախանձորդի այգիներին ու անդաստաններին։ Սատանայի ամբարշտությունն այնքան է զորանում, որ նրան հանդգնել է տալիս առավել անօրինություններ

գործել, մինչև իսկ հրդեհով վնաս հասցնել նրա տներին ու բերդերին։

Արդ, գեհենի ինչպիսի՜ անդունդները, ինչպիսի՜ հուրն ու թանձրամած խավարն են սպառնում այդ անօրեններին՝ նրանց, ովքեր այնքան ամբարշտացան, որ հրդեհեցին մինչև իսկ մարդկանց բնակարանները, մահվան երկյուղով սարսռեցրին ու դողացրին, անգթորեն ու անամոթաբար սպանեցին նույնիսկ ծերերին ու մանուկներին։ Արդ, սրանից առավել ի՞նչ ամբարիշտ անօրինություն կա, ո՞ր մեղքն ու չարագործությունն են սրանից ավելի չար, ո՞վ է այն մարդը, որ ընկել է այսչափ անօրինության ու ահավոր ամբարշտության մեջ։ Ո՛վ չար ու անօրեն սատանա, [դու ես], որ այսչափ խորը խորխորատներն ես ընկղմում մարդկանց՝ այսպիսի ահավոր անօրինություններ գործել տալով, շատ արյուն թափել տալով, մարդկանց սրտերը մոլորեցնելով այնպիսի խելագարություններով, որ մինչև իսկ քանդում են բոլոր ստացվածքները, հրդեհում են տները և բնակիչներին սպանում դաժան, անգութ և անողոք մահվան սրով։ Այս ամենը զարմացնում է անգամ անօրեն հեթանոսներին։ Այսպիսի բան կռապաշտներից ու բարբարոսներից ոչ ոք չի գործում։ Ո՞վ է, որ միաժամանակ այսքան մահ ու վնասներ է պատճառում մարդկանց, ինչպես անօրեն ու մոլորված քինախնդիրները։ Թեպետև բնակիչները փրկվում են կրակից ու մահվանից, միևնույն է՝ նա մտքով ու գործով սպանեց բոլորին, թափեց նրանց արյունը և այդ բոլոր սպանությունների համար հաշիվ պիտի տա և տանջալից պատիժների պիտի ենթարկվի։

Արդ, ի՞նչ ես անում, ո՛վ թշվառական ու անօրեն մարդ, որ ընկել ես այսպիսի ամբարշտության անդունդները, սատանայի գործակից ես դարձել, մոլորվել ես դևերից առավել, անօրեն վնասներ գործել և շատերի

արյան պարտապան եղել։ Եթե Կայենը մեկ սպանության համար դատապարտվեց այնքան տանջանքների պատժին, ապա որքա՜ն ավելի հնոցներ ու հրեղեն գետերի հոսանքներ են քեզ սպասում։ Քանզի Աստված մեղավորի ձեռքից առավել խստությամբ է պահանջում նրա ընկերոջ արյունը, մանավանդ այնպիսի սպանությունների, որոնք կատարվել են կսկծեցնող և տգեղ խոսքերի և կամ սակավ պարտքի պատճառով վրեժ լուծելու համար՝ մեծամեծ վնասներ և ահեղ արյուն թափելով։ Եվ արդ, հիշի՛ր, ո՛վ թշվառական, քո անօրինության հիմարությունը. քո ապարդյուն անօրինության պատճառով ամբարներ են այրվել, տներ են հրդեհվել, մեռել են նրանց բնակիչները, կորել են ինչքերը, և փչացել բոլոր ստացվածքները։

Եվ արդ, ի՞նչ շահեցիր այդ սատանայական անօրինությունը գործելով, եթե ոչ միայն հոգուդ կորուստն ու գեհենի երկյուղը, հուրն ու խավարը և հավիտենական տանջանքները։ Դու չարչարեցիր նրանց հանգչող կրակով, քեզ համար պահվում են բորբոքված անհանգչելի հնոցները, որտեղ ներքևից խավարային հուրն է վառվում, իսկ վերևից հոսում են հրեղեն գետերը։ Դու փոքրինչ անցողիկ ցավ պատճառեցիր, [փոխարենը] քեզ ահավոր ախտերի կսկիծներն ու թունավոր ու դաժան որդերն են մշտապես կսկծացնելու անտանելի ցավերով. այնտեղ աչքերի անդադար լաց է և ատամների անվերջ կրճտոց, անտանելի տառապանքիներդ ամենևին վերջ չունեն, որովհետև [ուրիշի] փոքր սխալին [ի պատասխան]՝ մեծամեծերը գործեցիր։ Քանզի եթե նա քեզ փոքր-ինչ զրկանք պատճառեց և ցավեցրեց քեզ, հարկ էր, որ համբերությամբ սպասեիր վրեժխնդիր իշխանին և Աստծու մեծ դատաստանին [թողնեիր], ոչ թե անձամբ վրեժ լուծեիր։ Քանզի եթե ծառան համբերությամբ տա-

նում է իր ընկերակցի՝ իրեն պատճառած նեղությունները իր տիրոջ ահից, տերը դատում է նրա դատաստանը։ Բայց եթե նա չի սպասում իր տիրոջ վրեժխնդրությանն ու դատաստանին, այլ ինքն է վրեժ լուծում իր ծառայակցից, բարկացնում է իր տիրոջը, որի համար և այս աշխարհի դատավորներն են խստությամբ [հաշիվ] պահանջում։ Եթե զրկվածներից որևէ մեկը չսպասի դատավորի վրեժխնդրությանը, այլ արհամարհելով նրա իշխանական պատիվը՝ ինքը վրեժ լուծի իրեն զրկողից, տե՛ս, թե դատավորը որքան կբարկանա նրա վրա։ Այդպես է նաև Աստծու դատաստանի ժամանակ։

Եթե որևէ մեկը զրկվի ավելի զորավոր մարդու կողմից և Աստծու երկյուղով համբերի, իրեն զրկողից վրեժ չլուծի իր կրած զրկանքի համար, նրա վրեժխնդիրը Տերն է, և նրան նեղողներին նեղություն կհատուցի, նրան չարչարողներին՝ չարիք, նրան զրկողից վրեժ կլուծի գեհենի հրով և զանազան տանջանքներով։ Իսկ նա, ով Աստծու երկյուղի համար համբերի զրկանքներին, կընդունի կատարյալ համբերողների պսակները և սուրբերի ու արդարների հավիտենական բարիքները։ Նա, ով Աստծուն չի թողնում իրեն զրկողից վրեժ առնելը և չի լսում Նրա դատաստանին սպասելու [հորդորը], այլ հափշտակում է Աստծու՝ վրեժխնդրության իշխանությունը և իր զրկանքի համար ինքն է վրեժ պահանջում, իր վրա է արթնացնում Աստծու ահեղ բարկությունն ու խիստ սրտմտությունը՝ չարչարելու և տանջելու նրան անողորմ ու անվերջանալի տանջանքներով գեհենի հրի և անլույս խավարի մեջ, ուր ահավոր տանջանքների նեղություններից մեծ ողբով ու դառը տանջանքներով լաց կլինի և կկոծի, բայց նրան ոչինչ չի օգնի, որովհետև չվստահեց Աստծու վրեժխնդրությանն ու դատաստանին, այլ արհամարհեց Աստծու դատավորության իշխանությու-

նը և ինքը դատեց Աստծու դատաստանը՝ իր վրեժխնդրությամբ վնասելով իրեն զրկողին։ Եվ ինչպես որ դատեց իրեն զրկողին, ինքը դրանից բազմապատիկ առավել տանջանքներով պիտի դատվի Աստծու կողմից, որովհետև զրկվողը պիտի դատվի սակավ զրկած լինելու համար, իսկ քեն հանողը անհամար կորուստ պատճառելու. և՛ բոլոր ստացվածքները ոչնչացնելու, և՛ բազում արյուն թափելու համար պիտի դատվի և անվերջանալի տանջանքների պիտի մատնվի։ Քանզի թեպետև ինչքերը, տունն ու բնակիչները փրկվեցին հրից, բայց նա իր անօրեն գործը կատարեց և այն ամենի փոխարեն, ինչ կամեցավ կորստյան մատնել, պարտական է պատուհասների պատժի և սաստիկ տանջանքների։

Արդ, թող ոչ ոք չհանդգնի քինահանության ահավոր անօրինությունը [գործել] և իր անձի համար վրեժ չլուծի, այլ թող անսա դատավոր Աստծուն, որ ասում է. «Իմն է վրեժխնդրությունը, և ես եմ հատուցելու,- ասում է Տերը» [Բ Օր. ԼԲ 35]: *Դու չարի փոխարեն չար մի՛ հատուցիր, այլ.* «Եթե քաղցած է քո թշնամին, հա՛ց տուր նրան, և եթե ծարավ է, ջո՛ւր. չարերին ես եմ հատուցելու, -ասում է Տերը» [տե՛ս Մատթ. ԻԵ 37]: *Եվ արդ, քանի որ Տերն է վրեժխնդիրը և զրկողներին ու զրկվողներին հատուցողը, ոչ ոք թող վրեժ չլուծի և ոչ էլ իրեն զրկողից [հաշիվ] պահանջի, քանզի այս անօրինությունը գերազանցում է հեթանոսների ամբարշտությանը, դրանից ամենայն զգուշությամբ հեռանա՛նք, որպեսզի սատանայի հետ չիջնենք կորստյան խորխորատն ու չայրվենք, չկվենք անքակտելի կապանքներով և չտանջվենք անլույս խավարի մեջ։ Այլ փախչե՛նք սատանայի որոգայթներից, անարգե՛նք նրա հրամանները, հեռո՛ւ վանենք չարի կողմից հուշված ոխակալությունը և փարատե՛նք մեր սրտի կսկիծը, որ սատանան կրակի պես այրում և բոցի պես բորբոքում է մեր մեջ՝ կատա-*

ռելու քինահանության անօրեն [գործը]։ Արհամարհե՛նք այդ և մեզ զրկողի հետ խաղաղությամբ վարվենք, սիրենք մեր թշնամիներին, օրհնենք մեզ ատողներին, մեզ չարիք գործողներին բարիք անենք և ամեն բան անենք այնպես, ինչպես Աստծուն է հաճելի, որպեսզի լինենք երկնավոր Հոր կատարյալ որդիներ և ժառանգենք անանց բարիքների վայելչությունները մեր Տեր Հիսուս Քրիստոսով. Նրան փառք հավիտյանս. ամեն։

ԺԴ. *Սակավ գողության մասին, որի համար չեն ապաշխարում*

Սատանան հանկարծակի գողանում, աներևույթ կերպով հափշտակում է շատերի մտքերը և մոռացնել է տալիս Աստծու պատվիրանները։ Եվ երբ գրավում է մարդկանց բոլոր մտքերն ու զգայարանները, նրանց մտքերից ծածկում է ճշմարտությունը և սերմանում է անօրինության որոմը, և երբ մեղանչում են Աստծու պատվիրանների դեմ, նրանց սրտում փոքր բան է կարծել տալիս այդ։ Աստծու պատվիրաններից լսեցինք, թե՝ «Մի հովտ անգամ, որ մի նշանախեց է, Աստծու օրենքից ու մարգարեներից չի կորչելու» [տես Մատթ. Ե 18], *և պիտի դատվենք մեր դատարկ խոսքերի, անպատեհ խորհուրդների և մտքերի համար։ Իսկ ի՞նչ պիտի անեն նրանք, ովքեր գործում են Աստծու պատվիրանների դեմ և փոքր բան են կարծում այդ, մինչև իսկ փոքր ու սակավ բան են համարում հայտնի գողությունը և ոչինչ համարելով սոսկալին՝ առանց ապաշխարելու են թողնում այն։ Կոտրված սրտով ու ցավագին հոգով չեն խոստովանում և բազում պաղատանքներով չեն ապաշխարում, այլ չարի խորհուրդներով անխտիր մոտենում են ամեն բանի և ոչինչ են համարում՝ ասելով, թե՝ «Աստված չի քննում և դատում տանը կամ դրսում [արված] փոքրիկ գողությունները»։ Այս խոսքն ամբարիշտ ու սատանայական է.այն լի է բազում անօրինությամբ։ Եթե ողորմած մարդը միայն իր բարի կամեցողության համար է արքայությունն ընդունում և [իր տված] մի բաժակ ջրի*

համար՝ մեծ վարձ, ապա ինչպե՞ս [Աստված] այս հայտնի մեղքը կթողնի առանց դրա համար հաշիվ պահանջելու։

Արդ, թող սատանան այդպես կարծել չտա քեզ. նույնիսկ եթե հանցանքներդ մի լումայի արժեք ունենան, միևնույն է, ոտնահարել ես Աստծու հրամանները և արհամարհել Նրա բոլոր պատվիրանները։ Նա, ով սայթաքում է մեկ պատվիրանից, բոլոր օրենքների հանդեպ է մեղանչած լինում։ Քանզի ոչ թե [գողացված] ինչքերի չափն է ծանրացնում մեղքերի վերքերը, այլ հրամանները ոտնահարելն է կորստյան մատնում պատվիրանազանցներին։ Եթե մեկը պատռի արքունական հրովարտակները, նրանից ոչ միայն կպահանջեն թուղթ թղթի փոխարեն, որ կարելի է հատուցել մի քանի լումայով և կամ թղթի չափով պատժով, այլ զանազան տանջանքներ ու դառը մահեր կան թագավորի հրամանները արհամարհելու համար։ Մեծ չէր Ադամի գողոնը, այլ՝ ընդամենը մեկ պտուղ, և տե՛ս պատուհասների, անեծքների ու մահերի բազում հույլերը ոչ միայն Ադամի, այլ նաև նրա բոլոր ծնունդների վրա։ Որովհետև նա ոչ թե գողացված պտղի, այլ Արարչի հրամանների և Նրա բերանի խոսքի պարտապանը եղավ, քանզի Նա, ով ասաց, թե՝ «Մի՛ սպանիր», *նույն Ինքն ասաց, թե՝* «Մի՛ գողանա» [Ելք Ի 13, 15]: *Ոչ թե մեծ կամ փոքր մեղքի խնդիրն է, այլ պատվիրանազանցության ու [Աստծու] հրամաններն արհամարհելու, որի մասին Տերն Ինքն է ասում.* «Դրա համար պիտի պահանջվի և վերջին դահեկանդ» [հմմտ. Մատթ. Ե 26], *և՝* «Եթե մեկը ջնջի Աստծու պատվիրաններից որևէ մեկը՝ փոքր կամ մեծ, նա փոքր կկոչվի արքայության մեջ» [Մատթ. Ե 19]: *Քանզի ինչ էլ որ լինի մեղքի վերքը, եթե մարդ փոքր համարի այն և չապաշխարի, մահացու մեղք է այն։*

Տե՛ս, թե որքան փոքրիկ է մանանեխի հատիկը, որ

աճում ու ծառ է դառնում։ Սակավ է նաև խմորը և ամբողջ զանգվածն իրեն է նմանեցնում։ Փոքր է նաև կայծակի փայլակը, բայց նյութի մեջ մտնելով՝ բազում վայրեր է հրդեհում։ Նեղ ու նուրբ է օձի խայթոցը, և փոքրիկ է նրա վերքը, բայց նրա դաժան թույնը պատճառ է դառնում դառը մահվան։ Չի երևում նաև կարիճի հարվածը, բայց ամբողջ մարմնի մեջ մինչև սիրտը [հասնող] սաստիկ կսկիծ է առաջացնում։ Որքա՜ն առավել դառնամահ տանջանքով է Աստծու բերանի խոսքի հրամանը տանջում իրեն արհամարհողներին։ Ահա Քամը փոքր համարեց իր հորից չպատկառելը և իր զաւակներով հանդերձ անեծքի ու ծառայության մատնվեց [տես Ծնն. Թ 22-24]: *Ահարոնի որդիները նույնպես փոքր բան համարեցին իրենց ծառայությունը չարաշահելը, և մի օտար կրակ կլանեց նրանց* [տես Ղևտ. Ժ 1-2]: *Կայենը փոքր բան համարեց ընտիրը չզոհաբերելը, և Աստված նրան մերժեց և չընդունեց* [տես Ծնն. Դ 5]: *Նաև մարգարեն փոքր համարեց հացը չուտելու հրամանը, և առյուծը ճանապարհին հոշոտեց նրան* [տես Գ Թագ. ԺԳ 21-23]: *Եվ ամեն ոք, ով փոքր համարեց Աստծու պատվիրանների հրամանները, ընդունեց մեծամեծ պատիժներ ո՛չ միայն հավիտենական տանջանքներով, այլ պատժվեց նաև անցավոր և առժամանակյա [այս կյանքում]։ Քանզի ինչպես որ երկու լումա ողորմություն տվողն ընդունեց բոլոր ողորմությունների համար վարձատրությունը, այդպես էլ պատվիրանազանց լինելիս. եթե մեկը երկու լումային հավասար մեղք գործի և չապաշխարի, պատվիրանազանցության համար բոլոր պատիժներն ու տանջանքները կընդունի։ Քանզի նա, որ մտածում է երկաթի կտոր գողանալու մասին, մի՞թե գողություն չի անի, եթե ոսկի հանդիպի իրեն։ Քանզի Ինքն իսկ՝ Հիսուս է ասում.* «Նա, ով անիրավ է քչի մեջ, անիրավ է նաև շատի մեջ, իսկ նա,

ով հավատարիմ է քչի մեջ, հավատարիմ է նաև շատի մեջ» [Ղուկ. ԺԶ 10]: *Քանզի թեև ոմանց սպանությունը մեծ կամ փոքր է թվում, բայց մեկն է Աստծու հրամանը.* «Մի՛ գողանա, մի՛ շնանա, մի՛ սպանիր» [Ելք Ի 13-15]. *ահա մեկ հրաման է տրված և՛ շատի, և՛ քչի համար։ Քանզի եթե մեկը սպանում է թագավորի թե աղքատի, նույն սպանությունն է [գործում], նույնն է ծերի սպանությունը և երիտասարդի սպանությունը,և եթե մեկը շնանում է թագուհու թե աղքատի հետ, նույն շնությունն է [գործում]։ Այդպես նաև եթե մեկը գողանում է ոսկի թե կապար, նույն պատվիրանն է զանց առնում։*

Բայց առավել մեղադրելի է ոչնչի համար Աստծու հրամանն արհամարհելը, քանզի եթե մեկը շատ ոսկու համար մարդ սպանի, թերևս ասեն, թե ոսկուց խաբվեց, իսկ եթե մի լումայի համար մարդ սպանի, առավել շատ տանջանքների պիտի ենթարկվի։ Այդպես նաև նա, ով Աստծու պատվիրանն արհամարհում է փոքր բանի համար, եղկելի և բազում տանջանքների արժանի թշվառական է։ Առավել մեծ չարիք է հարազատի և մտերմի հանդեպ մեղք գործելը և անձնասպան լինելն առավել չար է, քան ուրիշին սպանելը. ընչասիրության ախտն այնքան բորբոքվեց, որ մինչև իսկ հարազատի ու մերձավորի դեմ մեղանչել տվեց։ Եվ արդ, ոչ ոք թող չասի, թե՝ «Հարազատիցս եմ կորզում, և դա սխալ չէ»։ Դա գողություն է և առավել [մեծ] մեղք, քան երբ օտարներից են գողանում, որովհետև մեղանչում են հարազատների ու մտերիմների դեմ. ինչպես որ վերևում ասացի, ինքնասպանությունն առավել [մեծ] չարիք է, քան օտարասպանությունը։

Եվ արդ, հեռո՛ւ վանենք այսպիսի խաբող կեղծավորությունը և մեծ զգուշությամբ պահե՛նք Աստծու պատվիրանները, որովհետև Աստված մեզ ոչ թե ստիպում է

ակամա բարիք գործել, այլ թողնում է մեր ազատ կամքին։ Եվ եթե երկյուղով չպահենք Նրա պատվիրանները, մեր բոլոր հանցանքները կպահի դատաստանի մեծ Օրվան և սոսկալի բեմի հանդիմանությանը, երբ դրվի դատաստանի աթոռը, նստի Հինավուրցը, հրեղեն գետերը հորդելով ելնեն, հնոցները բորբոքվեն, խավարային տարտարոսները, աչքերի լացը, ատամների կափկափումն ու անմխիթար սուգը [տիրեն] մեղավորներին։ Արդ, այս ամենը մտաբերելով՝ դադարեցնե՛նք մեր դատարկախոսությունը, փութաջանությա՛ն վերածենք մեր ծուլությունը, զգուշանա՛նք պահելու Նրա պատվիրանները և մաքրե՛նք մեր հոգիները, սրբությա՛մբ անցկացնենք մեր օրերը և անմեղությա՛մբ հասնենք մեր վախճանին, դրա՛խտը ժառանգենք և հավիտենական բարիքները վայելենք մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք և պատիվ հավիտյանս հավիտենից. ամեն։

ԺԵ. *Երդվելու չար սովորության մասին*

Այժմ չար են չարի սովորությունները ամեն տեղ, բայց առավել չար ախտ ու անօրեն սովորություն են երդումները. [սատանան] ախտի սովորությամբ այնքան է հիմարացնում, մինչև ընտելացած սովորությամբ չարիքներն իսկ այլևս չարիք չեն երևում։ Ինչպես որ այժմ տեսնում ենք, որ սատանան շատերին սովորեցրեց անօրեն երդումները, և ոչ ոք իր սրտում չի վախենում այդ անօրեն մեղքը գործել։ Թեև Հին Օրենքում ասաց, թե՝ «Միայն քո Տեր Աստծով երդվիր» [Բ Օր. Զ 13], *բայց [դրանով] ոչ թե երդվելու հրաման հաստատեց, այլ կամեցավ նրանց տղայական միտքը հեռացնել կուռքերի անուններով երդվելուց։ Քանի որ նրանք միանգամից բոլոր կատարելություններն ընդունել չէին կարող, նրանց ընտելացնում էր, ինչպես ընտելացնում են անվարժ ավանակներին։ Եթե ասեր՝ ամենևին մի՛ երդվեք, թերևս չէին էլ երդվի, այլ [ասաց]. «Եթե երդվելու լինես, քո Տեր Աստծով երդվիր»։ Իսկ Նորում Քրիստոս պատվիրեց կատարելության [հասցնող] բոլոր հրամանները և ամբողջովին հանեց սատանայական երդումները։* «Եվ Մովսեսն ասում է՝ սուտ մի՛ երդվիր, իսկ ես ասում եմ՝ ամենևին մի՛ երդվիր. ո՛չ երկնքի վրա, որովհետև Աստծու աթոռն է, ո՛չ երկրի վրա, որովհետև Նրա ոտքերի պատվանդանն է և ո՛չ Երուսաղեմի վրա, որովհետև մեծ Արքայի քաղաքն է։ Ո՛չ էլ քո գլխով երդվիր, որովհետև չես կարող մի մազ անգամ սև կամ սպիտակ դարձնել» [տես Մատթ. Ե 33-36]։ *Եվ արդ, տե՛ս նոր պատվիրանի առավելությունը։ Մովսեսն ասաց.* «Սուտ մի՛ երդվիր», *իսկ Ես ասում եմ՝ ամենևին մի՛ երդվիր. ո՛չ սուտ և ո՛չ արդար, որովհետև երդումը եր-*

բե՛ք արդար չի լինում, այլ սատանայից է։ Քանզի Ինքը՝ Քրիստոս, ասաց, թե՝ «Այն, ինչ ավելի է այո-ից ու ոչ-ից, սատանայից է» [տես Մատթ. Ե 37]։ *Արդ, եթե չի հրամայում երդվել Աստծու աթոռով, ապա քանի՛ գեհենի և ահեղ հրի կմատնվեն նրանք, ովքեր Աստծով են երդվում։ Եվ եթե չի հրամայում [Աստծու ոտքերի] պատվանդանով երդվել, ապա ո՛ր խավարի մեջ պիտի գնա նա, ով Նրա խաչով ու չարչարանքներով է երդվում։ Եվ եթե չի հրամայում [քո իսկ] գլխով երդվել, ուրեմն հայտնի է, որ քո իսկ գլխի իշխանը դու չես, այլ՝ Նա է, Ով սպիտակեցնում է, և եթե քո իսկ գլխի իշխանը չես, ապա որքա՜ն առավել՝ ընկերոջդ։ Իսկ ինչպիսի՛ տանջանքներով պիտի դատապարտվեն նրանք, ովքեր երդվում են մարգարեներով, առաքյալներով ու մարտիրոսներով։ Եվ եթե չի հրամայում երդվել Երուսաղեմով, ուրեմն հայտնի է, որ նաև նրա սուրբ բնակիչներով, և եթե երկնքով երդվել չի հրամայում, հայտնի է, որ [չի հրամայում] նաև երկնավորով [երդվել]։ Արդ, ո՞ւր է արդար երդումը, երբ ասում է, թե՝ ամենևին մի՛ երդվիր. ո՛չ Աստծով, ո՛չ երկնքով, ո՛չ երկրով և ո՛չ նրանցում եղած որևէ բանով»* [հմմտ. Մատթ. Ե 34-36], *ամբողջովին արգելեց և վերացրեց երդվելու սատանայական սովորությունը։ Իսկ ի՞նչ [անել]*։ «Թող ձեր այո-ն այո լինի, և ոչ-ը՝ ոչ. և սրանից ավելին՝ երդումը, սատանայից է» [Մատթ. Ե 37]։ *Արդ, ո՞ւր է արդար երդումը, երբ ասում է, թե՝* «Եթե մեկը այո-ից ու ոչ-ից ավելին է ասում, չարից է» [Մատթ. Ե 37]։

Եվ արդ, եթե մեկն ասի, թե երդումն արդար է, հայտնի է, որ սատանային է արդարացնում։ Քրիստոս սատանայի ծնունդ է ասում բոլոր երդումները, բացի այն երդումից, որն Ինքը հրամայեց, թե՝ այո-ն՝ այո, և ոչ-ը՝ ոչ լինի, որ նաև Ինքը կիրառելով՝ Աբրահամին երդվեց և ասաց. «Այո՛, օրհնելով օրհնելու եմ քեզ» [Ծնն. ԻԲ 17]։ *Մեկ այլ*

տեղում ասում է. «Արդարև, ասում եմ ձեզ» [Ղուկ. Դ 25], *իսկ մեկ ուրիշ տեղում՝* «Ճշմարիտ եմ ասում ձեզ» [Հովհ. ԺԲ 24]: *Ա՛յս է երդումը, որ հրամայեց մեզ, և այսպիսի երդումով էին հաստատվում [խոսքերը], և վստահում էին բոլոր հավատացյալները։ Իսկ չարերն ու հակառակվողներն [ասված խոսքի] հաստատ լինելու վճիռը սատանայական երդումներից են առնում, ինչպես Պողոսն է ասում.* «Նրանց մեջ եղած ամեն հակառակության վերջնական վճիռը երդումն է» [Եբր. Զ 16]. *հակառակվողների, այլ ոչ թե հավատացյալ քրիստոնյաների։ Հավատացյալների այոն հաստատուն այո է, իսկ ոչը՝ ոչ, և Աստծու պաշտոնյան, եթե այո-ից ու ոչ-ից առավել երդում տա, թեև մկրտության համար անվանվում է քրիստոնյա, բայց հավատացյալ չէ, այլ հակառակվող։ Ինչպես որ քրիստոնյա են և գող, քրիստոնյա են և պոռնիկ, այդպես էլ քրիստոնյա են և հակառավողներ, երդմնահարներ և երդմնակերներ։ Հավատացյալները պահում են երդման մասին պատվիրանը. Տիրոջ եղբայրը՝ Հակոբոսը, նույնպես զգուշացնում է դրանից՝ ասելով.* «Ամեն բանից առաջ, եղբայրնե՛ր իմ, մի՛ երդվեք ո՛չ երկնքով, ո՛չ երկրով, ո՛չ էլ այլ երդումով» [Հակ. Ե 12]: *Ասում է՝ ամեն բանից առաջ, որովհետև երդումն առավել մեծ անօրինություն է, քան բոլոր մեղքերի ամբարշտությունները։*

Ահա Իսրայելի որդիները մեղքեր գործեցին և անօրինացան, ոմանք չաչաչար սպանություններ գործեցին ու պոռնկացան, ոմանք սպանեցին իրենց իսկ հորն ու մորը, ոմանք հափշտակեցին իրենց ընկերների կանանց, ոմանք իրենց ուստերին ու դուստերին զոհաբերեցին դևերին, ոմանք թողեցին Աստծուն և կուռքերին երկրպագեցին, այսուամենայնիվ Աստծու բարկությունը չարթնացավ նրանց վրա, ինչպես երբ նրանք երդվեցին ու ստեցին։ Քանզի հորթ մորթեցին տաճարի մեջ, և

քահանաներն ու Սեդեկիա թագավորը մեջտեղ անցան և երդում տվեցին բաբելացիների արքային, թե՝ «Զենք ապստամբի», բայց ապստամբեցին։ Եվ աստված ասաց. «Որովհետև Սեդեկիան դրժեց իմ [անվամբ] երդումը, ահա ես պիտի կտրեմ նրա գլուխը»։ Ապա Աստված բաբելացիների արքային հանեց Երուսաղեմի վրա, և քաղդեացիների զորքերը եկան շրջապատեցին այն, քաղաքն հիմն ի վեր արեցին, տաճարն ավերեցին, կուրացրեցին թագավորի աչքերը, գլխատեցին նրա որդիներին, նրա մեծամեծներին սրի քաշեցին և ժողովրդին գերեվարեցին [տես Բ Մն. ԼԶ 13-20]: *Այսպիսի՜ն են երդման անօրինությունները. առավել են բոլոր ամբարշտություններից։ Ինչպես որ գրված է, թե՝* «Իսրայելը արդարացրեց իր ապստամբությունը ուխտազանց Հուդայի համեմատությամբ» [Երեմ. Գ 11]: *Իսրայելի ապստամբությունը կռապաշտությունն էր, իսկ Հուդայի ուխտազանցությունը՝ Սեդեկիայի երդումը։ Եվ Հուդայի առավել երդվելու պատճառով Իսրայելի կռապաշտությունը որպես արդարություն համարեց։ Ինչպես որ երբ մեկը փոքր-ինչ ցավ է ունենում, իսկ երբ հետո սաստիկ ցավեր են վրա հասնում, վերջին աղետների պատճառով առաջինն առողջություն են համարում, այդպես էլ առավել մեղքերի և երդումի չարության առջև մյուս անօրինություններն արդարություն էին համարվում։*

Եվ արդ, այս ախտի չար սովորությունը ոչ ոք մեծ մեղք ու անօրինություն չի համարում, այլ՝ երդվելու սովորությունը կրակի պես բերանում վառելով՝ հանապազ այրում են և չեն զգում, նաև հրապարակներում են մշտապես երդվում։ Բայց երբ գնում մտնում էեկեղեցի՝ ներսում երդվելու համար, սթափվում է և խորհում. «Ինչո՞ւ եմ գնում երդվելու»։ Բայց նա, ով դրսում է երդվում, չի մտածում այդ մասին, արդեն ընտելացած սովո-

ությամբ ոչինչ է համարում այդ։ Մի՞թե Աստված ներսում է և դրսում չէ. Նա և՛ դրսում է, և՛ ներսում, և բոլոր նրանք, ովքեր մեղքեր ու անօրինություններ են գործում, ներսում լինեն, թե դրսում, Աստծու առջև են։ Իսկ հրապարակի երդումը դու փոքր և անկարևոր մի՛ համարիր։ Հիշի՛ր ինչ որ ասում եմ. ամեն մի սպանություն, դրսում է գործվել, թե ակամայից, սպանություն է. և ամեն մի գողություն՝ դրսում գործվեց ,թե ներսում, խաղի համար, թե ակամայից, գողություն է, և ամենայն պոռնկություն՝ դրսում, թե ներսում գործված, ինչպես էլ որ գործվեց, պոռնկություն է։ Այդպես էլ բոլոր երդումները. դրսում են երդվում, թե ներսում, կամ թե խաղի համար թե ոչ, ինչպիսին էլ որ այն լինի, երդման չար գործն է կատարվում։ Կարծել մի՛ տուր, թե փոքր բան է այն, որ այստեղ ու այնտեղ երդվեցիր, այստեղ ու այնտեղ ստեցիր Աստծուն, այստեղ ու այնտեղ ուրացար և ամենուր երդվեցիր, Աստծու առջև երդվեցիր, Աստծու առջև ստեցիր, Աստծու առջև ուրացար։

Արդ, ի՞նչ անենք այս ահավոր ամբարիշտ ախտը, որովհետև հրի պես տարածվեց ամբողջ աշխարհում, և բոլոր բերանները լցվեցին անօրենության ախտի բոցով։ Հրապարակներում են, և երդումը նրանց բերաններում է, մանուկները խաղում են, երդումը նրանց բերաններում է, վաճառականները վաճառում են և երդվում, անարգողներն անարգում են և երդվում, դատավորը դատում է և երդվում, բոլորի բերանում խոսքից առաջ սատանայական երդումն է, և բոլոր թուլամորթների ու կեղծավորների խոսքը դեռ սրտում՝ երդումը լեզվի վրա կա պատրաստ։ Եվ արդ, այդպիսիներին ո՞վ մարդ կանվանի. ո՛չ և չպե՛տք է մարդ անվանել, այլ՝ չար օձ և չարի՝ սատանայի սպասավոր։ Այդպիսի մարդու բերանը պիղծ է, գարշահոտ կրակ է ցոլալով հանապազ ելնում նրա

բերանից։ Ինչո՞ւ ես մշտապես հայհոյում Աստծու առջև՝ երդվում և ուրանում։ Ինչո՞ւ բերանիդ մեջ առար կրակ, որ մշտապես այրում է քեզ։ Ինչո՞ւ ես սրված սուսեր պահում լեզվիդ վրա, որ անդադար խոցոտում է քեզ. մի՞թե չգիտես, որ երդումը սատանայի սուր տեգերն է, որ որքան անգամ երդվում ես, ցցվում են քո սրտում։ Երդումը սատանայի կապանքն է. կապում է մարդկանց, և չի քանդվում։ Երդումը մարդկանց խեղդողն է. այն խեղդող պարան է, որով խեղդում է մարդկանց մահվան պահին և առնելով՝ տանում է դժոխք։

Եվ արդ, եղբայրնե՛ր, բոլոր մեղքերից ու բոլոր անօրենություններից առավել երդվելո՛ւց վախեցեք, որովհետև այն բոլոր մեղքերից առավել է հեռացնում Աստծուց։ Անիծյալ թշնամին իմացավ, թե՝ «Մկրտության ժամանակ երդումով են հրաժարվում ինձնից, երդումով են ուրանում ինձ, երդումով են հեռանում ինձնից՝ ասելով. «Հրաժարվո՛ւմ ենք քեզնից, սատանա՛, հրաժարվո՛ւմ ենք քո պաշտամունքից, հրաժարվո՛ւմ ենք քո հրեշտակներից, հրաժարվո՛ւմ ենք քո բոլոր խաբեություններից»։ Երեք անգամ երդվեցին և հավատացին Սուրբ Երրորդությանը՝ ասելով. «Հավատում ենք Հորը, հավատում ենք Որդուն, հավատում ենք Սուրբ Հոգուն», իրենց կնքեցին Հոր, Որդու և Սուրբ Հոգու եռյակ զորությամբ՝ սուրբ խաչը կնիք դնելով։ Եվ ես, երբ նայում եմ մարդկանց երեսին և տեսնում եմ սուրբ խաչի նշանը՝ դրոշմված նրանց երեսներին, հեռանում եմ սուրբ նշանից և փախչում գնում եմ՝ չկարողանալով ոչինչ անել»։ Նա մտածեց և ասաց. «Ի՞նչ անեմ և կամ ի՞նչ գործեմ, ինչպե՞ս կարողանամ հեռացնել քրիստոնյաներին Սուրբ Երրորդության հավատի մեծությունից և հիմքից, սուրբ խաչի զորությունից և նրա պահպանությունից։ Ես, ասում է, գիտեմ, թե ինչ կանեմ. որովհետև երդումով ուրացան ինձ, ուրեմն ես էլ կսովո-

րեցնեմ առհասարակ բոլոր մարդկանց՝ թագավորներին և իշխաններին, եպիսկոպոսներին ու քահանաներին, երիտասարդներին ու ծերերին, տղամարդկանց և կանանց սուտ երդումներ անել հրապարակներում, վաճառատեղիներում, տներում, եկեղեցիներում արեգակով ու լուսինով, աստղերով և իրենց գլխով, աչքերով և Իրենով իսկ՝ Աստծով և Քրիստոսի սուրբ խաչով, որ կատարյալ ուրացություն է, հեռացում քրիստոնեությունից և սուրբ խաչի զորությունից, և ապա կկարողանամ հաղթել բոլոր մարդկանց»։

Եվ արդ, չվախենա՞նք ահավոր, անկանգնելիորեն կործանող այս չարիքից, չդողա՞նք և գետինը չմտնե՞նք, որ հեռացնում է մեզ Աստծուց և տալիս է սատանայի ձեռքը։

Բայց երդումով ենք հաստատում մեր բերանի խոսքը, որովհետև առանց երդումի չե՞ն հավատում։ Դա [խոսքի] հաստատում չէ, այլ սատանայական սովորություն, որովհետև առաքինի մտքերն ընտրում են խոսքը և ոչ երդումները, որովհետև առաքինիներն ու երկյուղածները եթե չերդվեն էլ, նրանց հավատում են, իսկ անառակներին ու շողոքորթներին ոչ ոք չի հավատում, եթե բյուր անգամ էլ երդվում են, որովհետև ամեն ոք նայում է մտքերի հաստատությանն ու առաքինությանը, այլ ո՛չ շողոքորթ խոսքերին ու շատախոս լեզվին։ Քանզի մտքով, խոսքով կամ երդումով հաստատուն մնալը շատ ավելի մեծ առաքինություն է, քան՝ ողորմություն տալն ու զոհեր մատուցելը, որ կապ ունի հարստության հետ։ Բայց խոսքին ու երդումին հավատարիմ մնալը մտքի առաքինություն է։ Եվ ում միտքը առաքինի է, նրանից ոչ ոք երդում չի պահանջում։ Իսկ երդվելու սովորությունը առաջ է գալիս երկյուղ չունենալուց և չհասկանալու հիմարությունից. երդվողը իր խոսքը հանապազ կապում է

երդումով, իսկ իր հոգին կապում է գեհենի հրին։

Արդ, իմանալով այս ամենը՝ թոթափե՛նք մեր հիմարության թմբիրը, երկյուղե՛նք ահավոր և մեծ Աստծու ահից և մեծ զգուշությամբ պահե՛նք Աստծու՝ ամեն բան քննող, ճշմարիտ ահեղ Դատավորի պատվիրանների հրամանները և մեր լեզվից հեռո՛ւ վանենք չար սովորությունը, առավել փութով հեռանա՛նք երդման սատանայական և սպանիչ ախտից։ Զուր տեղը Աստծու հետ ուխտի մեջ չմտնե՛նք և Աստծու սուրբ անունը երդումին չկապե՛նք, այլ վստահեցնե՛նք մարդկանց՝ հավատալու մեր ոչ-ին ու այո-ին։ Որովհետև հավատացյալ քրիստոնյաների երդումը դրա՛նք են։ Ամենևին չնեղեն՛ք ու չզրկենք ոչ ոքի և ո՛չ էլ հակառակվելով՝ Աստծու Եկեղեցի մտցնենք սատանայական երդումը։ «Որովհետև, ասում է, ձեր մեջ կան դատաստաններ։ Ինչո՞ւ դուք զրկանք չեք կրում, և առավել ևս ինքներդ նեղություն չեք քաշում, այլ դուք եք նեղում ու զրկում նրանց, ուրեմն այլևս քրիստոնյա հավատացյալներ չեք, այլ՝ անօրեն հեթանոսներ» [տես Ա Կորնթ. Զ 7-8]։ *Ուրեմն՝հեռո՛ւ վանենք այս ամենը, Աստծու երկյուղով սանձե՛ր դնենք մեր լեզվին և կապ՝ մեր բերանին, որպեսզի ըստ Նրա կամքի խոսենք, Նրա կամքը կատարենք, ապրենք առաքինությամբ, վախճանվենք հավատով և գնալով այնտեղ՝ ժառանգենք երկինքը և վայելենք խոստացված բարիքները Քրիստոսով, Որին փառք և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։*

ԺԶ. *Հարբեցողների անօրինության մասին*

Մեծ սգով ու ցավագին արտասուքներով պիտի խոսեմ այս ճառի դիտավորության մասին և պիտի ցույց տամ հարբեցողների անզղջում չարիքները, բամբասողների անապաշավ[1] *անօրինությունները, որոնք մշտապես իրենց որովայնի ծառաներն են և բռնադատված են արբեցողության չար դևի կողմից։ Նրանք Աստծու պատվիրանների մշտապես հայհոյողները, արհամարհողներն ու անարգողներն են։ Պողոսը լաց լինելով ողբում էր՝ [նրանց անվանելով] Քրիստոսի խաչի թշնամիներ,* «որոնց վախճանը կորուստ է. նրանց Աստվածը իրենց որովայնն է, և փառքը՝ իրենց ամոթը։ Նրանք միայն երկրավոր բաների մասին են խորհում» [Փիլիպ. Գ 19-20] *և երկնային առաքինի վարքի մասին չեն խորհում երբեք։ Եվ [չնայած] մեծ խոհեմություն ունեն՝ նմանվում են ամեն ժամ խոտ ճարակող անմիտ անասուններին, որովհետև որկրամոլներն ու հարբեցողները խաչի և Քրիստոսի չարչարանքների թշնամիներն են, նրանք պաշտում են իրենց որովայնը, այլ ոչ Քրիստոսին, և իրենց կյանքն անցկացնում են աներևակայելի անզգայությամբ։ Հայտնի է, որ մարգարեն նրանց մասին է աղաղակում՝ ասելով, թե՝* «Անզգամներն ու անմիտները պիտի կորչեն» [տես Սաղմ. ԽԸ 11]։

Որտե՞ղ կարելի է գտնել այնպիսի անզգամի ու անմիտի, որ չկարողանա գիտենալ, որ կույրի համար մեծ պակասություն է արեգակի լույսից զրկված լինելը։ Եվ եթե պակասություն է այս, պետք է իմանալ, թե որքան

[1] Իր արածի համար չտրտմող, չզղջացող։

առավել մեծ պակասություն ունեն և աներևակայելի կույր են բոլոր նրանք, ովքեր խավարել են [Աստծու] պատվիրանների լույսից, հեռացել են [Սուրբ] Գրքի ուսուցումներից, չեն կարողանում տարբերել չարը բարուց և ոչ էլ միմյանց հավասար իմանալ։ Ահա թե ինչ եմ ուզում ասել. ինչպես եթե մեկին հանդիպի երկու խիստ թունավոր օձ, և նա, մեկին թունավոր կարծելով, փախչի նրանից, իսկ մյուսին, որ նույն մահացու թույնն ունի, աներկյուղ մոտենա, և օձը նրան դաժան մահով սպանի։ Այդպիսիք են նրանք, ովքեր լսում ու երկյուղով պահում են պատվիրաններից մեկը և նրան հավասար [մեկ ուրիշ պատվիրան] արհամարհում են ու անարգում, նրանով էլ չարաչար կորստյան մատնվում։ Այս է, որով կորստյան են մատնվում. լսեցինք Պողոսին, մանավանդ Քրիստոսից իսկ լսեցինք, որ ասում է. «Ո՛չ գողերը, ո՛չ պոռնիկները, ո՛չ հարբեցողները, ո՛չ բամբասողները Աստծու արքայությունը չեն ժառանգելու» [Ա Կորնթ. Զ 10]։

Եվ արդ, որտե՞ղ կարող է այսպիսի կույր հիմարություն լինել, որ [մարդ] այս ամենը մեկ չարիք չհամարի։ Այլ ոմանցից զգուշանա և հեռանա, ոմանց արհամարհի ու անարգի, իսկ ոմանց էլ, որոնք նույն չարությունն ունեն, աներկյուղ մոտենա։ Արդարև, անզգամ ու անմիտ են այդպիսիները և նման են մոլորված կույրերի, որոնք խարխափում են խավարի մեջ։ Այդպես և սրանք են առանց խտրություն դնելու մոտենում ամեն ինչի և սաստիկ ծուլությունից թուլացած՝ աներկյուղ գործում են պատվիրաններով արգելվածը։ Քանզի եթե արգելվեցին պոռնկությունն ու գողությունը, արգելվեցին նաև հարբեցողությունն ու բամբասանքը. միապես, հավասարապես, մեկ պատվիրանով արգելվեցին դրանք։ Դու ինչո՞ւ ես միանման, միահավասար [չարիքներից] ոմանցից՝ իբրև չարիքից, աներկյուղ հեռանում, իսկ ոմանց՝ իբրև

բարու, առանց երկմտելու մոտենում։ Եթե պղծություն են գողությունն ու պոռնկությունը, ապա պղծություն են նաև բամբասանքն ու հարբեցողությունը։ Ինչո՞ւ ես պոռնկության համար զղջում և ապաշխարում, և ինչո՞ւ ես անտարբեր լինում և արհամարհում հարբեցողությունդ. դրանք միապես են վիրավորում, երկուսն էլ [միապես] են սպանում։ Քանի որ օրենսդիրը դրանք միմյանց հավասար չարիք և համանման պղծություն է ներկայացնում, իսկ նա, ով ասում է, թե՝ «Գողերն ու պոռնիկները Աստծու արքայությունը չպիտի ժառանգեն» [Ա Կորնթ. Զ 10], *նաև ասում է, թե՝* «Բամբասողներն ու հարբեցողները Աստծու արքայությունը ժառանգել չեն կարող» [Ա Կորնթ. Զ 10]։

Արդ, եթե պոռնկությունը չարիք է, ապա չարիք է նաև հարբեցողությունը։ Ինչո՞ւ հարբեցողությունից չես վախենում ու խորշում այնպես, ինչպես պոռնկությունից, այլ առանց երկյուղելու մոտենում և առանց երկմտելու պղծվում ես արբեցողությամբ։ Չլսեցի՞ր Պողոսից, որ միևնույն պատժով էր պատժում պոռնիկին ու հարբեցողին։ Իսկ ովքեր կարծում են, թե Աստված պոռնիկներին դատում է, իսկ հարբեցողներին՝ ոչ, այդպիսիները մտքով հիմարացած ու կուրացած են, որովհետև նույն կրակը, նույն վայն ու նույն տանջանքներն են [սպասում] հարբեցողին ու պոռնիկին։ Եվ ինչպես մարգարեն է գեհենի ողբը ցույց տալիս՝ ասելով. «Վա՛յ ձեր այդ հզորներին, որոնք գինի են ըմպում, և ձեր իշխաններին, որոնք խառնված թունդ օղի են խմում» [Ես. Ե 22], *որովհետև, ասում էր, չափն անցնելու և հարբելու պատճառով գինին այրում էր նրանց։*

Բայց կան ոմանք, որ չեն էլ տեսնում, որ այրվում են. բռնում են թունավոր օձին և չեն տեսնում, որ այն սպանում է իրենց դառնագույն մահով։ Ձեխ հարբեցողությունը սպանում է ոչ միայն նրանց հոգին, գինու նե-

խությունը պատառոտում ու ապականում է նրանց մարմինը, տաղտկացնում սիրտը, տառապեցնում սրտխառնուքով ու փսխուքով, ուռեցնում է որովայնը, մշտապես նեղում և թշնամու նման չարչարում է նրանց ողորմելի հոգին, արգելափակված է պահում մթի ու խավարի մեջ. երբ առատ կերակուրներն ու խմիչքները ամբարում են իրենց ներսում, որդերն են լողում աղբի ու տիղմի մեջ և ողողում աղիքների ծալքերը, փտեցնում և ապականում նրանց աղբաբույն որովայնը։ Եվ միշտ հեծեծում ու հառաչում են որովայնի ծանրությունից և նեխ աղբի գարշահոտը զզվեցնում է նրանց մերձ գտնվողներին, դիզված- բարձրացած աղբի առատությունից նրանց ներսից վեր է բարձրանում փսխուքը, և խոխոջանքներ են արձակվում, աղտեղի դարձած գոլորշին արձակվում է նրա դեմքից ու տարածվում օդի մեջ՝ մարմնին տեսակ-տեսակ ցավեր պատճառելով. թուլացնում է սիրտը, տկարացնում է մարմինը, խանգարում ստամոքսը, ապականում է ուղեղը, թացացնում է աչքերը, ջրգողեցնում է բոլոր անդամները, ավելին՝ նեխած ու լճացած աղբի մեջ զեռում են զեռուններ և ծնում են ճիճուներ, որոնք շատ անգամ սիրտը ճնշելով՝ հանկարծամահ սպանում են նրան։ Արդ, զեխությունն ու հարբեցողությունն այս և այսպիսի ցավեր ու տառապանքներ են պատճառում մարմնին։

Իսկ ի՞նչ ասեմ հոգու ցավերի մասին, կամ ո՞ր բերանը կարող է պատմել այն ցավերի, այն անհնարին աղետների մասին, որ պիտի հայտնվի դատաստանի մեծ օրը. ատյանից սոսկումը, դատաստանի արհավիրքը, դառը դատաստանը, անողորմ տանջանքները, անվերջանալի պապակումը, գեհենի շոշափելի խավարը, ներքին տարտարոսներն ու վառված հնոցները, որոնցում կրակը հոսելով իջնում է հորդահոս հրեղեն գետերից. այդ ամենը

կան և պահվում են՝ վրեժ լուծելու համար բոլոր մեղավորներից ու հարբեցողներից։ Եվ եթե հնարավոր լիներ դեմ հանդիման ցույց տալ, թե այստեղ իսկ՝ [այս աշխարհում], ինչ տանջանքների և դատապարտության մեջ են գտնվում հարբեցողների հոգիները, որովհետև հարբեցողության թմրությունը նրանց մշտապես պահում է մթի ու խավարի մեջ, և հոգին մարմնի մեջ ապրում է, ինչպես խավար անդունդի մեջ, և մշտապես նեղվելով գինու գիջությունից՝ մեռածի պես թաղված է գերեզմանում կիսամահ ու տխուր, և որքան մարմինն ավելացնում է իր ծանրությունը, այդքան տկարանում է հոգին։ Արդարև այսպիսի խավարի մեջ են հարբեցողների հոգիները, որոնք ամբողջ ցերեկը մաշվում են հարբեցողության մեջ, իսկ ամբողջ գիշերը քնով են անցկացնում՝ առավոտյան դժվարությամբ արթնանալով, դողդողում են խելագարի նման, իսկ իրիկունը, դեռ չձերբազատված իրենց թմրությունից, դառնում են նույն վիճակին՝ անտեսելով Աստծու երկյուղը և առաքինի կյանքի հորդորները։

Արդ, մի՞թե այդպիսիներն անլույս խավարի մեջ չեն, մի՞թե նրանք մեգի ու մոլորության մեջ մեռած չեն, մի՞թե թաղված չեն բարիքի համար, և միայն չարիքի համար կենդանի չեն. նրանք իրենց շվայտ հարբեցողության համար անօրեն խոսքերով արդարացումներ են հորինում՝ ասելով, թե՝ «Նա, ով հարբում է, բայց ո՛չ գողանում է, ո՛չ պոռնկանում և ո՛չ սպանում, միայն հարբելով՝ չի մեղանչում»։ Սրանք բարբաջանքներ են մտածելու ընդունակությունը կորցրած մարդկանց, որոնք հարբեցողության անունն իսկ չգիտեն։ Քանզի նա, ով հարբում է և սպանում, երկու տեսակի չարա[գործ] է՝ հարբեցող է և մարդասպան, այդպես նաև նա, ով հարբում է և պոռնկանում, պոռնիկ է և հարբեցող, իսկ անառակ միայն

հարբեցողներն են։

Գինեսեր են նրանք, ովքեր հանդուգն ցանկությամբ գինի են փնտրում, կապվում են նրան և ժառանգում են պատվիրանազանցների նզովքները։ Ինչպես Սողոմոնն է ասում. «Ո՞ւմ համար է վայ-ը, ո՞ւմ համար է խռովությունը. ո՞չ արդյոք նրանց, ովքեր տարվում են գինով, ովքեր նայում են, թե որտեղ գինարբուք կա» [Առակ. ԻԳ 29-30], *և չափից ավելի խմելով գինի՝ հիմարանում են, թմրում անբան անասունների նման։ Զե՞ս իմանում, որ Աստված քեզ իմաստուն և բանական է ստեղծել, իսկ դու թմրում ես անառակ հարբեցողությամբ, հիմարանում ու կորցնում ես բանականությունդ և չես նմանվում մարդու, այլ անասուններից էլ ավելի ցած ես իջնում՝ անզգայանում հիմարությամբդ և անբանությամբդ, գինու զեխությունից փայտի ու քարի պես անզգա ես դառնում։ Թեև հարբեցողը մարմին ունի, բայց նրա ձեռքերը դադարում են գործել, ոտքերը չեն կարողանում քայլել, լեզուն համրանում է խոսելիս, ականջները փակվում են, [և չի կարողանում] լսել, աչքերը կուրանում են [և չեն] տեսնում, սիրտը չիմարանում է և զրկվում իմաստությունից, բոլոր անդամներով է խավարի մեջ՝ խելացնոր և մտակորույս։*

Սրանք են հարբեցողության չարիքներն ու անօրինությունները։ Նրանք չեն ժառանգում Աստծու արքայությունը, այլ դատվում են պոռնիկների և մարդասպանների հետ, որովհետև Աստծու ստեղծած իմաստունին հիմար դարձրեցին գինու և խմելու ցանկությամբ։ Նրանք չգիտեն, թե որտեղ են, ուր են գնում և որտեղից են գալիս, որովհետև գինու թմրությունը, ըմբռնելով նրանց զգայարանները, հիմարության է վերածում իմաստությունը, թուլացնում ու թմրեցնում է, քայքայում է մտածումները և զրկում ուժից։ Մի՞թե այսպիսի մարդիկ արժանի չեն մեծամեծ տանջանքների և ահեղ

բարկության ի վերուստ, որ չափն անցնելով և հարբելով՝ խոսուն և բանական [կերտվածքը] անբան անասուն են երևացնում։ Դրա համար է Պողոսը պատվիրում. «Մի՛ հարբեք գինով, որի մեջ զեխություն կա» [Եփես. Ե 18]: *Քանզի եթե Հնում երբեք գինի չէին խմում նրանք, ովքեր խորան էին մտնում, ապա որքա՜ն առավել պարկեշտությամբ Նորում պետք է մտնենք Աստծու առջև, որպեսզի հարբեցությամբ չզեխանանք և չհանդիմանվենք ու չդատապարտվենք, ինչպես Ահարոնի որդիները, ովքեր շվայտության պատճառով մի օտար կրակի ճարակ դարձան, և դա օրինակ եղավ անառակ քահանաներին։ Այդ պատճառով է Գիրքն ասում.* «Գինին անառակության է մղում, հարբեցողությունը՝ թշնամության, և ով անձնատուր է լինում դրանց, իմաստուն չէ» [Առակ. Ի 1]: *Իմաստուն մարդուն ծարավը հագեցնելու և խելքին զվարթություն տալու համար բավական է միայն ջուրը, քանզի*

ասված է՝ ջուր խմողների խելքը միշտ զվարթ է, և բանջարեղեն ուտողների մարմինը՝ միշտ առողջ։ Բոլոր արարածների Տերը նույնպես այդպիսի սեղաններով էր անապատում հագեցնում ժողովրդին, իսկ գինին ամենևին չհիշվեց, քանզի Քրիստոսի [կողմից մատուցված] ճաշը օրինակ պիտի լիներ ամբողջ աշխարհի համար։

Բայց գիտեմ, որ կհարցնես, թե՝ «Հապա ինչո՞ւ ստեղծեց գինին, երբ արգելում է խմելը»։ Ո՛չ թե արգելելեց գինի խմել, այլ՝ արգելեց հարբել։ Ինչպես որ կնոջն ստեղծեց ամուսնության համար, իսկ պոռնկությունն արգելեց, երկաթը ստեղծեց երկրագործության համար և սպանելն արգելեց. ստեղծեց և գինին մեր տկարության համար, բայց չափից ավելին արգելեց։ Ոչ թե խմելն է արգելում, այլ հարբելն է պատժում։ Բայց գինին անհրաժեշտ է հիվանդներին, սգավորներին և մեծ խորհուրդին, ինչպես որ ասում է՝ գինին սգավորների

և տրտմության մեջ գտնվողների համար է։ Իսկ կյանքի կարիքները բավարարվում են հացով, ջրով և [անհրաժեշտ] հագուստներով, մնացած ամեն բան ցանկություն է և ոչ կարևոր, որոնց ոմանք կապվում են սովորությամբ և իրենք կամքով, իսկ ոմանք էլ իրենց կամքով և սովորությամբ հեռանում։

Եվ արդ, մենք սովորությամբ չկապվե՛նք հարբեցողության չարիքին, այլ մեր կամքով հեռանա՛նք որկրամոլությունից և անառակ հարբեցողությունից, որով [կարողանանք] ընդունել Նրա օրենքները, ուղղե՛նք մեր վարքը և առաքինի դառնանք, սիրե՛նք սուրբ սերը, ամո՛ւր լինենք պահքի մեջ, աղոթե՛նք, ողորմությո՛ւն տանք, պարկեշտությո՛ւնն ընդունենք, արդարացնե՛նք մեր անձերը, փրկե՛նք մեր հոգիները, ընդունե՛նք բարի վախճանը, որպեսզի փառավորվենք անանց կյանքում և դասակից լինենք հոգեղեններին, ժառանգենք փափագելի դրախտը և վայելնեք անմահ բարիքները մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք հավիտյանս հավիտենից. ամեն։

ԺԷ. *Անօրեն և դիվական թատերախաղերի մասին*

Ո՞ւր գնամ, կանգ առնեմ և լաց լինեմ այս ահավոր անօրինության համար, որ ճմլում է սիրտս, կամ ո՞ւր թաքնվեմ ու լռեմ այս մեղքերի պատճառով կսկծանքով տրտմելով և մաշվելով զազրելի ու չարալուր ձայներից, որոնք մշտապես ճզմում են սիրտս, գալարում աղիքներս ու որովայնս։ Ողբում եմ, և տրտմություններս հանապազ հալումաշ են անում ու խեղդում են ինձ, որովհետև ամեն ժամ լսում եմ անառակ պղծություններ ու տեսնում եմ անօրեն ամբարշտություններ։ Իմ սրտի մեծ նեղությունից ոսկորներս կցվեցին հողին, իսկ մարմինս գետնի վրա քաշկռտվեց, բազում խուռն մտքերի ալեկոծությունից նմանվեցի չորացած ճյուղի և անշունչ արձանի։ Մտքիս ապշությունից մոռանալով իմ սխալները և ետևում թողնելով դրանք՝ հանապազ ձեր [սխալներն] եմ քննում։ Քանզի մեր ականջներին մշտապես հասնում են չար հնչյուններն ու ամոթալի ձայները, որոնցից բխում է սաստիկ չարություն և նեխած ու փտած թարախ, իսկ սաստիկ գարշահոտը, վեր բարձրանալով, զզվեցնում է սուրբ Եկեղեցուն. դրանից բոլոր արդար անձինք ահով զարմանալով՝ ողբում են անօրինությունը։

Եվ ես, որ լի եմ բոլոր մեղքերով, միշտ հառաչում ու սգում եմ նույն բանի համար, որովհետև ձեր զազրելի անօրինություններից ամեն ժամ ուրախանում ու ցնծում են սատանայական թատրոնները, իսկ Քրիստոսի Եկեղեցին ողբում է դառնապես,որովհետև առնելով սուրբ Եկեղեցու մանուկներին՝ սատանան իրեն է ընծայում նրանց՝ պղծելով և աղտոտելով անառակ թատրոնների տեսարաններով։ Նա կամենում է մշտապես հեռացնել

մարդկանց Աստծու ողորմությունից, ամենապայծառ ու անանց բարիքներից և տանել ու բաժնեկից դարձնել իր սարսափելի պատիժներին ու տանջանքներին։ Այդ պատճառով էլ անտեսում եմ իմ բազում հանցանքներն ու վշտակից եմ լինում ձեր վշտերին, ողբում եմ ձեր անեւևույթ հարվածների վերքերը, քանզի մերժեցիք ու արհամարհեցիք Աստծու պատվիրանների պատվերները և ոտնահարեցիք առաքելական Եկեղեցու հավատը, ոչինչ համարեցիք Քրիստոսի սուրբ մարմինն ու արյունը, որ հանապազ ընդունում եք ահավոր ու սոսկալի սեղանից։

Եվ այժմ ամբողջովին թաղվել եք դիվական մոլորությունների մեջ, գերվել ու գրավվել եք սատանայի խորհուրդներից. փութացիք ընկնել դառը մահվան տանող նրա որոգայթների մեջ, գնացիք՝ մտնելու ապականիչ թատերախաղերի մեջ, լսելու ականջ խաբող, աղտեղի ձայներ զազրելի, պիղծ, անօրեն, չարալուկ և կատաղի դերասաններից։ Նրանք միշտ հալածում են Սուրբ Հոգու շնորհները և ձեր սրտերում ու մտքերում սերմանում են սատանայի մահացու, պիղծ խորհուրդը, որից վառվում, այրվում է ցանկությունների կրակը, և նրա բոցը բորբոքվելով՝ մարմնական տեսակ-տեսակ ախտերով այրում է հնազանդվողներին։ Դրանք փշերի ու տատասկների պես վիրավորում են [իրենց մեջ] թաղված անձանց և դժվարակիր բեռներ են մթերում և կուտակում կորստյան մատնված հոգիների վրա։ Եվ մարդիկ պիղծ թատրոնից ելնում են՝ իրենց վրա ստացած այրող կրակն ու սպանող սուրը, սատանայի գաղտնի նետերից ծանր վիրավորված ու ծանր խոցեր ստացած։ Սատանան լուրջ կերպով վիրավորում է հոգին և փոքր բան է ցույց տալիս մեծագույն անօրինությունները։ Նրանից մշտապես պետք է սարսռալ ու դողալ, մեծ վախով փախչել ու հեռանալ, որովհետև չար է սովորությունը,

չար են նաև դրան մղողները՝ գինին, դերասանը և սատանան։ Եվ ցոփությամբ, վավաշոտ հափրանքով մոլորված մտքերը հոժար կամքով ու դյուրահավանությամբ են ընդունում սատանայի չար սերմերը, մանավանդ անհամեստ կանանց թեթևամիտ ու շեղաբարո ազգը, որ շուտ լսող, շուտ համոզվող և շուտ խաբվող է։ Նրանք նողկալի անամոթությամբ միշտ թատրոն են շտապում՝ առանց վախանալու դիտելու սատանայական հրապարակի անօրեն խաղերը, վեր ելնելով՝ նստում են երևացող տեղում, մտածում ու նայում են չարությամբ իրենց նմանվողներին. նրանք թեև անօրինության գործին անմիջապես մասնակից չեն, այսուհանդերձ սպանող նետերից հարվածներ ստանալով՝ իրենց սրտերում են կրում դրանք, որոնցից հետո մեռնում են անխուսափելիորեն, ինչպես որսորդների նետերից վիրավորված գազանը, որ թեև սկզբում ազատվում է թակարդներից, բայց սատկում է նետերն իր մեջ կրելու պատճառով։

Ուրեմն ինչպե՞ս դադարեցնենք այս այրող բոցի ահավոր բռնկումը և կամ ինչպե՞ս աներևույթ վերքերին բժշկության հնար գտնենք, ինչպե՞ս կործանենք պիղծ թատերախաղերի տեղերը, որոնք մահաբեր որոգայթներ են, բազում չարիքով լցված ժողովարաններ, բոլոր ախտերի արվեստանոցներ։ Քանզի կույսերն այնտեղից են մղվում պոռնկության, ամուսնացածները՝ շնության, այնտեղից է, որ կանայք ատելի են դառնում իրենց ամուսիններին, իսկ ամուսիններն արհամարհելի են դառնում իրենց կանանց աչքում, այնտեղից է, որ զավակները թշնամի են դառնում հայրերին, և ծառաները՝ իրենց տերերին, այնտեղից է ծերերի անմտությունն ու երիտասարդների վավաշոտությունը, պառավների պագշոտությունը, երիտասարդ աղջիկների գեշությունը, տղամարդկանց լկտիությունն ու կանանց կատա-

ղությունը, այնտեղից են կանանց՝ մարդկանց հրապուրելը, ամուսնալուծությունները, մանկասպանությունները, պճնվելու արդուզարդերը, այնտեղից են սնափառությունն ու զարդարանքները և այլ չարիքներ, այնտեղից են նաև զանազան պղծությունները, որոնց մասին խոսելն իսկ աղտեղի է։ Դրանք անհատին ուսուցանում են լկտիություն, թուլացնում են նրա հոգին, քայքայում են միտքը, աչքերը դարձնում են լիրբ, դատարկախոս են դարձնում լեզուն, ծուլացնում են գործերում, զբաղեցնում բոլոր չարիքներով, որոնք կլանելով մարդուն՝ հեռացնում են Աստծու սիրուց և դուրս են հանում քրիստոնեական կարգից։ Չեմ կարող պատմել նաև զանազան այլ չարիքների մասին, որոնք սովորեցնում են թատրոնները՝ ամբարտավանություն, հայհոյություն, նենգություն, կեղծիք, չարակնություն, նախանձ, բամբասանք, որոնց պատճառով էլ Աստծու պատիժներն են թափվում երկրի վրա, և [Աստված] սաստիկ բարկությամբ տանջանքների է դատապարտում մարդկանց։ Ահա այս բոլոր անօրինություններն են ստանում նրանք, ովքեր մտնում են թատրոն և իրենց մարմիններում աճեցնում են սատանայի սերմերի չար պտուղները։

Արդ, ո՞ր բերանը կարող է ողբալ և լաց լինել այսպիսի աղտեղությամբ ու պղծությամբ լցված մարդկանց վրա, և կամ ո՞ր լեզուն կարող է խոսել այն անթիվ աղետների մասին, որ ստանում են այնտեղից, ո՞ր միտքը կարող է ցույց տալ ահավոր տանջանքների բազմությունը, որ գեհենի կրակի հոսանքի մեջ աստվածամարտ սատանայի հետ միասին պատրաստված է նրանց համար, ովքեր ախորժեցին և ընդունեցին խավարայինը։ Ուրեմն ինչի՞ համար մատնվես այդպիսի տանջանքների և կամ ի՞նչ ստացար այդ պիղծ խաղերից՝ թուլություն, անառակություն, թեթևամտություն և այլ անթիվ ահավոր աղետնե-

րի բազմություն ու ոչ մի օգուտ։ Թեպետև պիղծ թատերախաղեր նայելը կարող է ցանկալի լինել պագշոտների համար, որոնք միշտ հալումաշ են լինում ախտերի ցանկությունից, բայց մաքուր մարդկանց դրանք տաղտկալի պղծություն և ամոթալի վավաշոտություն են երևում։

Կանայք առնում են բոզերի, իսկ տղամարդիկ՝ իգամոլ ձիերի կերպարանք, անօրեն զազրախոսությամբ անասուններից էլ ավելի ցած են իջնում և փսխում շների փսխածից առավել զազրելի ու գարշելի խոսքեր, որոնցից նեխած թարախ և գարշահոտ է ելնում, որ զզվեցնում է երկյուղածներին և ցանկալի է դևերին, որովհետև այդպիսի վատահամբավ մարդկանց մեջ սատանան է շրջում, որովհետև այնտեղ, ուր կատակներ են, դերասաններ, լկտի խաղեր ու ծաղրանք, այնտեղ դևերն են նրանց հետ պարում, սերմանում բազում աղտեղություններ զեխացածների մտքերի մեջ և է՛լ ավելի մոլեգնության մղում պիղծերին և սրբության շնորհներն հալածողներին, ցանկության հուրը բորբոքողներին, պատվիրաններն արհամարհողներին, սատանայի խորհուրդների կարապետներին, անօրեններին ու ամենայն արդարության թշնամիներին՝ դերասաններին։ Ում որ հարկ էր շատ քարերով քարկոծել և երկրից հալածել, նրանցից գրավված՝ անառակները զվարճանում են թատրոններում, ուր մտնում են ողջանդամ և ելնում են վիրավորված, Քրիստոսից մերկացած և սատանային հագած, շնորհների Հոգին հալածած և դևերի պիղծ հոգով լցված։ Քանզի բոլոր նրանք, ովքեր հավատով և երկյուղով մոտենում են Քրիստոսին, լուսավորվում են Սուրբ Հոգով և առաքինության գործերով օրըստօրե բարձրանում են վեր և բաժանվում հեռանում են սատանայի բոլոր խաբեություններից։ Իսկ նրանք, ովքեր պիղծ թատերախաղերով մշտապես շփվում են դևերի հետ, խավար վարքով

պատված՝ մթնում են, լցվում սատանայի պիղծ հոգով և անօրինությամբ ծանրացած՝ օրըստօրե ցած են ընկնում, մինչև որ հեռանում են Աստծու պատվիրանների երկյուղից և դառնում սատանայի խորհուրդների ամաններ։ Ուստի և առավել մեծ հաճույքով են գնում դևերի բանակատեղին, ավելի են շտապում դեպի սատանան, քան դեպի Քրիստոսի սուրբ Եկեղեցին։ Դևերի բանակատեղիները թատերական տեսարանների վայրերն են, բոլոր անառակ ու գուսանամոլ գինի խմողները, որ անօրինաբար ու անաստվածների նման զեխանում ու պագշոտանում են, թուլացնելով իրենց լեզվի սանձերը և արձակելով իրենց բերանների կապերը՝ ուտում ու շվայտանում են համադամ խորտիկներով, իսկ նրանց բերանից ելնող հոտը բազում գարշահոտություններ է արձակում։ Նրանք խորհում ու խոսում են սատանայի կամքով՝ առանց ճանաչելու նրա չար նետերը։ Սատանան հարվածում է, ապա հանգստացնում է վերքը և զգացնել չի տալիս, որպեսզի ապաշխարությամբ չբժշկվենք, որովհետև նա գող է և չի գնում հայտնի ճանապարհով, որ չզգուշանանք, այլ հետևում է գաղտնի և անսպասելիորեն արհամարհել է տալիս պատվիրաններից մեծամեծերը և փոքր է կարծել տալիս, որպեսզի չզգուշանանք։ Նա գիտի, որ պատվիրաններն արգելում են տգեղ ու դատարկ խոսել, բամբասել ու հայհոյել և վավաշոտ դերասանների բերաններում առավել չափով է հեղում խեղկատակ ու հիմար, գարշելի ու դատարկ խոսքեր, և նրանցից մշտապես արհամարհանք, ծաղր ու հայհոյություն է հոսում։ Քանզի դևերը արագ են հասնում ծաղրանքի, լկտի և անմաքուր խոսակցությունների մեջ և բազում ախտեր բերելով՝ ուտեցնում և խմեցնում են նրանց, ովքեր շվայտանում են այնտեղ։ Ուստիև հարկ է լաց լինել ու ողբալ այդպիսի անառակությունների, մանավանդ հիմար

խեղկատակների համար, որոնք բազմության մեջ ցույց են տալիս իրենց անխոհեմությունը. այսահարների պես ծամածռվում են, ոլորվում, գալարվում, աքացի են տալիս և իրենց բերանի աղտով զզվեցնում բոլորին. ոմանց հայհոյում են, ոմանց՝ բամբասում, ոմանց՝ անարգում, ոմանց՝ ծաղրում, ամոթով կուրացնում, ոմանց՝ խաբում և կեղծ հարգանքով սնափառ դարձնում, կատաղած շան պես բոլորին առհասարակ խածատում։

Ի՞նչ ես անում, թշվառակա՛ն, ինչո՞ւ չես շտապում՝ ազատվելու չարաչար ամբարշտությունից և վերադառնելու ինքդ քեզ, ինչո՞ւ չես ողորմում կորստյան մատնված հոգուդ, ինչո՞ւ լաց չես լինում և չես ողբում անօրինություններդ, ինչո՞ւ ես կրակի վրա կրակ ավելացնում՝ դառնապես այրվելու համար, ինչո՞ւ ես մշտապես գնում կայծերի ու փշերի վրայով, ինչո՞ւ ես միշտ գամված մեղքերի բեռներին, ինչո՞ւ ես վախից վերից վայր ընկնում ու վիրավորվում, ինչո՞ւ ես սուր սրում և վիրավորվում նրանով. ոչ ոք չի կարող կրակով հանգցնել կրակը և չարիքով բարիքի հանդիպել։ Ո՞վ է փուշ տնկում և խաղող քաղում կամ որոմ ցանում և հնձում ցորեն։ Անառակ վարք ունենալով՝ ոչ ոք Քրիստոսին չի տեսնի և արքայությունը չի ժառանգի, այլ կդատապարտվի գեհենի կրակին թունավոր որդերի մեջ։ Եվ նա, ով ապրի անօրն կտիությամբ և գինեմոլ զեխությամբ և գնա դիվական թատրոններ ու ծաղրածու դերասանների մոտ, թող հույս չունենա, որ կփրկվի կրակի տանջանքներից։ Հիշի՛ր այն ահեղ խոսքը, որ ասում է. «Վա՛յ նրանց, ովքեր ծիծաղում են այժմ, որովհետև նրանք պիտի սգան, և վա՛յ նրանց, ովքեր այժմ ուրախանում են, որովհետև նրանք պիտի լաց լինեն ու ողբան, վա՛յ նրանց, ովքեր գինի են խմում հարբելու համար և օծվում են անուշահոտ յուղերով։ Վա՛յ ձեզ՝ հարուստներիդ, որովհետև այստեղ ստացաք հատուցումը ձեր գործած բարիքի համար» [տե՛ս

Ղուկ. Զ 24-25], *որովհետև.* «Բազում նեղություններ կրելով է, որ մենք պետք է մտնենք Աստծու արքայության մեջ» [Գործք ԺԴ 21]: *Չէ՞ որ Քրիստոս ասաց, որ լաց լինենք ու սգանք այս աշխարհում* [տես Հովհ. ԺԶ 20], *իսկ դու ծիծաղում և ցնծում ես և չես զարհուրում ու դողում Աստծու ահեղ դատաստանից, որ արդարությամբ քննում է կամա և ակամա, ծուլությամբ և մոռացությամբ գործած մեղքերդ։*

Արդ, փութա՛, մաքրի՛ր անձդ անպարկեշտությունից, լեզուդ՝ դատարկախոսությունից, ականջներդ՝ պիղծ բաներ լսելու սովորությունից, միտքդ՝ սատանայական մահաբեր խորհուրդներից։ Ընկի՛ր Աստծու առջև և ասա՛. «Մեղա՛ երկնքի դեմ և Քո առջև» [Ղուկ. ԺԵ 18]: *Մի՛ ծուլանա ապաշխարության գործերի մեջ, քանի դեռ ցերեկ է. ահա վրա է հասնում գիշերը՝ սոսկալի խավարն ու աղջամուղջը։ Ճանաչի՛ր մեղքերիդ բազմությունը, հիշի՛ր, որ մեռնելու ես, նկատի՛ ունեցիր, որ հոգիդ մարմնիցդ պիտի պահանջվի և մտաբերի՛ր դատաստանի մեծ Օրը, անշեջ հուրը, շոշափելի խավարը, ապականության գուբը, գեհենի տարտարոսը, մեղավորների դառը ողբը ահավոր Դատավորի ահեղ դատաստաններից, ուր խոսքերը պիտի սպառվեն, և գործերը պիտի թագավորեն, ուր հաշիվ պիտի պահանջվի խոսքերի ու գործերի համար, ուր տեղի պիտի ունենա դատարկ խոսքերի քննությունն ու անպատեհ մտածումների հաշվետվություն։ Արդ, ա՛յս ամենը հիշիր հանապազ, ա՛յս հիշիր միշտ, հոգոց հանիր և ողբա՛, հեծեծիր և լա՛ց եղիր անդադար, որպեսզի թերևս կարողանաս փրկվել տանջանքների ահավոր աղետներից, անլույս խավարից և հանդիպել խոստացված անանց բարիքներին մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք հավիտյանս. ամեն։*

ԺԸ. *Թողթ կնաթողների մասին*

Տեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Իր փրկող հանդիմանական խոսքերի պատճառով չարչարանքներով խաչվեց աստվածամարտ ազգի և ընդդիմացող ժողովրդի կողմից։ Այժմ էլ նրանք, ովքեր հոգիների փրկության համար ուղիղ և փրկական խոսքեր են ասում, անարգվում ու բամբասվում են կարծեցյալ իմաստունների կողմից։ Բայց դա իմաստություն չէ, այլ՝ իշխանության անիրավություն, «Իմաստությունը Տիրոջ երկյուղն է» [տես Առակ. Ա 7], *և նա, ով գտավ Տիրոջ երկյուղը, գտավ նաև իմաստությունը։ Եվ եթե [մարդ] իմաստուն լինի, չի արհամարհի իրեն օգնողին։ Իմաստուն էր Մովսեսը, բայց լսեց Հոթորի խրատը* [տես Ելք ԺԸ 17-24]. *հոգևոր էր Դավիթը, բայց նրան պետք եղավ Նաթանի հանդիմանությունը* [տես Բ Թագ. ԺԲ 1-13]: *Իմաստունները լսում են իմաստուններին, և խոնարհները հնազանդվում են խոնարհներին։ Քանզի նրանք, ովքեր մտքի աչքով ուղղապես նայեն Աստծու պատվիրաններին և հոգևոր վարքով և ազնիվ բարքի հանդարտությամբ ստանան սրտի քաղցրություն, չեն արհամարհի այսպիսի դիտողությունները։ Քանզի երանելի Պետրոսն ասում է.* «Տղամարդիկ թող իմաստությամբ ապրեն իրենց կանանց հետ, հարգեն նրանց՝ իբրև դյուրաբեկ անոթի» [Ա Պետր. Գ 7]: *Եվ չի հրամայում ատելությամբ հեռանալ [նրանցից], քանի որ.* «Ամեն ոք, ով ատում է եղբորը, մարդասպան է» [Ա Հովհ. Գ 15], *իսկ նա, ով ատում է իր կնոջը, անձնասպան է* [հմմտ. Եփես. Ե 28]: *Եվ նա, ով զավակ չունենալու պատճառով ատում է իր կնոջը, չար է Աստծու առջև։ Ի՞նչ օգուտ ու-*

նի որդիներ խնդրելը և անիրավ ատելությամբ հոգին կորստյան մատնելը։ Քանզի Աստծու մոտ խնդիրը ոչ թե որդիներ, այլ անարատ հոգի ունենալն է։ Քանզի մարգարեն նույնպես անիրավ որդիներ ունենալու մասին է ասում, թե՝ «Նրա վարձքը Աստծու մոտ է. այն է նրա որովայնի պտուղը և սուրբ զավակն ու հիշատակը» [հմմտ. Առակ. Գ 13]: *Նա չգիտի՝ Աստված իր ամուսնու մեղքերի պատճառո՞վ է մերժում իր որովայնին պտուղ տալ, կամ էլ այլ բարիքի համա՞ր արդյոք իրեն զավակներ չտվեց,որովհետև շատ զավակներ կան, որ բարկացում են իրենց ծնողներին, արյան մեջ են թաթախում նրանց կյանքը. այդ պատճառո՞վ է արդյոք, որ Աստված իրենց զավակներ չի տալիս։ Մեկ այլ անիրավություն է Աստծու գործը մարդուց պահանջելը, իսկ Պողոս առաքյալն ասում է, թե՝* «Անիրավներն Աստծու արքայությունը չեն ժառանգելու» [Ա Կորնթ. Զ 9], *որովհետև ռամիկների անիրավության համար...*[1]*։ Իսկ թագավորների և իշխանների անիրավության հանդիմանիչներն ու արգելողները Աստծու պատվիրաններն են։*

Արդ, իսկ որդիներն ի՞նչ օգուտ ունեն հոգիների համար, երբ [Գիրքն] ասում է. «Ահա մարդն ու իր գործերը»։ Արդ, մտաբերի՛ր այն ահագին Օրվա ահեղ արհավիրքները և Աստծու կամքին ընդդեմ ոչինչ մի՛ արա, որի համար սոսկալի դատաստանից հետո կմատնվես տանջանքների։ Ոչ ոք թող չկարծի, թե [այն չարչարանքները] նման են այստեղի չարչարանքներին, որ երկրավոր թագավորներն են ենթարկում մահապարտներին։ Այնտեղի չարչարանքները դառը լացուկոծով ու սարսափելի կսկիծներով են, աղեխարշ ցավեր՝ հրեղեն հորդահոս գետերից [ծնված], որոնք վերից պիտի հոսեն հրացայտ կայծերով հնոցի փոսերի մեջ, ուր չարչարվում ու այր-

[1] Այս պարբերությունը թերի է:

վում են մեղավորների մարմինները՝ տարտարոսների խորքերում և անլույս խավարի ու թունավոր որդերի մեջ։ Ոչ ոք խոսքերով նկարագրել չի կարող այդ դժնդակ աղետներն ու չարչարանքները, խղճալի վարանումները, անվերջանալի տանջանքների համար ահավոր ողբ, եթե ամբողջ աշխարհը մեծ սգով ողբա, նաև փայտերն ու քարերը լաց լինեն ողորմելի ողբի ձայներով, չեն կարող արժանապես ողբալ ու սգալ նրանց, ովքեր մատնվեցին այն չարատանջ գեհենին ու անվերջանալի տանջանքներին։ Այստեղ պետք է այդ ամենի մասին հիշել և զգուշությամբ անցնել այս անցավոր, ալեկոծ ու մեղսասեր կյանքի միջով։ Իսկ հավիտենականներն անվերջանալի են, պատիր և երազ են սիրելի երկրավորները և սարդոստայնից առավել տկար։ Ահա այսօր և վաղը կանք, հետո չենք լինելու. երկօրյա է այս աշխարհի հանգիստը, և հավիտենական են տանջանքներն ու ամոթը։ Ահա ուրիշ երկիր անցնել կա, փառքի Տիրոջը տեսնել կա։ Սրտով մեր սիրտը քննենք և այստե՛ղ մաքրենք, որովհետև քիչ օրեր հետո պիտի գնանք այն ահեղ ու չխաբվող Դատավորի մոտ, ում հայտնի են մեր գաղտնիքները, ով հանդիմանում է մեր սրտի խորհուրդները, ում ճշմարտատես ու քննող աչքից ոչ մի բան չի ծածկվում։

Ուրեմն, վախեցի՛ր այն ահեղ դատաստանից, այլևս մի՛ վիրավորվիր աներևույթ սրով և չարիքի վրա չարիք մի՛ ավելացրու՝ մարմնիդ անդամները թողնելով անվերջ տրտմության մեջ, որի համար պետք է երկար ժամանակի ապաշխարություն, եթե երկյուղած ես Աստծուց։ Արդ, քահանաներին այլևս մի՛ չարչարիր և մի՛ տրտմեցրու Եկեղեցուն. մոտ է բոլորի վախճանը, փութա՛ մոտենալ Աստծուն, և Աստված քեզ կմոտենա։ Ահա գող է մահվան օրը, գուցե տարաժամ հասնի։ «Արթո՛ւն եղեք, ասում է [Տերը], որովհետև չգիտեք օրն ու ժամը» [Մատթ. ԻԴ 42], *որ հան-*

կարծակի, որոգայթի պես անակնկալ կհասնի քեզ վրա։

Արդ, վախեցի՛ր դու այն օրից, փութով զղջա՛ գործածդ մեղքերի համար, քանի դեռ այս աշխարհում ես, մի՛ զբաղվիր երկրավոր բաներով, որովհետև մոտ ժամանակից պիտի փոխվենք վերին քաղաք, իսկ այն ամենն, ինչ հավաքեցինք այս աշխարհում, պիտի մնա այստեղ, որովհետև ո՛չ հետներս որևէ բան բերել ենք այս աշխարհ և ոչ էլ որևէ բան կարող ենք տանել։ Մերկ մտանք այս աշխարհ և մերկ էլ պիտի վերադառնանք այստեղից։ Ուստի և մշտապես հիշի՛ր այն ահագին Օրվա երկյուղը և մի՛ մոռացի՛ր բոցը, որը երբեք չի հանգչելու, շտապի՛ր փախչել սատանայի ձախ կողմից, և Աստված մշտապես կլինի քո աջ կողմում։ Լսի՛ր Սուրբ Հոգուն, և Աստված կլսի քեզ այն տագնապի ահավոր Օրը։ Բարեխոսության համար մի՛ փնտրիր ո՛չ չմքեղ դեմքերի խոսքերը և ո՛չ էլ նախագահության պատիվը, որից քիչ վարձատրություն կստանաս։ Այլ հիշի՛ր, որ կան դատաստաններ, կան տանջանքներ, պիտի լինի հարություն և բոլոր գործերի համար քննություն, և այս երկյուղով հնազանդվի՛ր, որպեսզի մեծամեծ վարձատրություններ ստանաս։

Մեծ բան է լսել Ավետարանի ձայնը՝ ի բարեխոսություն մահկանացու մարդկանց։ Լսի՛ր մարգարեական հրամաններն ու առաքելական պատվիրանները՝ իբրև քեզ բարեխոսություն, և հնազանդվի՛ր աստվածային այս պատգամիս. մտաբերի՛ր մեղքերիդ բազմությունը։ Ուրիշի քիչը մի՛ պահանջիր, հիշի՛ր պատվիրանների բարձր ձայնը, որ քեզ վկայեցին։ Իմացի՛ր, որ և՛ խոսքերիդ, և՛ խորհուրդներիդ, և՛ քո փոքրիկ քենի համար հաշիվ պիտի պահանջվի քեզնից։ Նայի՛ր այս աշխարհի կյանքին, որն անցնում է ստվերի պես, և շտապում է դատաստանի Օրը։ Վախեցի՛ր սոսկալի ատյանից և Դատավորի ահավոր դեմքից և զգաստացի՛ր. դողա՛ դառը դա-

տաստանից և անտանելի ամոթից և շտապի՛ր հաշտեցնել Նրան. զարհուրի՛ր սարսափելի տանջանքներից ու անլույս խավարից և դարձի՛ր դեպի լույսի ճանապարհը, փափագի՛ր անբավ բարիքներն ու անվերջանալի փափկությունը և հանի՛ր, հալածի՛ր քեզնից սատանայի հոգեկորույս խորհուրդները, հնազանդվի՛ր Սուրբ Հոգու հրամաններին և Աստծու բերանի խոսքին, որը քեզ ասվեց այս թղթում, որպեսզի քո հնազանդության վարձատրությունը՝ երկնքի արքայությունը, շնորհի քեզ անվերջանալի բարիքների հետ միասին, որպեսզի քեզ այստեղ առողջ մարմնով հեռու պահի ցավերից և քավված հոգով՝ մեղքերից, և քո ամբողջ հոգին, շունչն ու մարմինը անարատ պահվի մինչև մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալուստը, Որին փառք և պատիվ հավիտյանս հավիտենից. ամեն։



ԺԹ. *Անասնամոլների, իգացողների և արվամոլների մասին*

Հոգիս ողբում է իմ մեջ, ապշում ու զարմանում, սոսկալի զարհուրանքով ու դողով անդադար հեծեծում եմ՝ հանապազ խոկալով, թե խավարային ախտերի ինչպիսի՜ անդունդներն է սողում իջնում մեր հանդգնությունը, այդ ախտից տարակուսած՝ տկարանում է լեզուս՝ չկարողանալով ցույց տալ ահավոր ախտերի պղծությունները, որոնք իրենց անօրինությամբ առավել են և գերազանցում են բոլոր մեղքերին։ Քանզի բոլոր հայտնի ամբարշտություններից առավել ավազակություն է սա, առավել է, քան գաղտնի գողությունների չարիքները, քան ամուսնացածների շնությունը, քան կույսերի պոռնկության պղծությունները, քան արյունահեղ սպանություններն ու չարչարանքները։ Իսկ այս բոլոր չար ու ամբարիշտ մեղքերից առավել ահավոր ամբարշտություն ու սարսափելի պղծություն է այն, որ դիվական մոլությամբ արուներն արուների հետ են գործում զազրելի անօրինություններ, և էգերն էգերի հետ են հագուրդ տալիս իրենց անառակ ցանկություններին ու սատանայական կրքերին, իսկ [դրանցից] առավելն այն է, երբ պղծվում են անբան անասունների հետ։

Սրա վրա վերին զորություններն էլ են ապշում ու զարմանում, սրա վրա տխրելով՝ սգում են սուրբերի դասերը, սրա վրա ողբում են բոլոր արդարները, որովհետև անօրեն պղծություններով անարգեցին ու արհամարհեցին արարածների Արարչին։ Սրանցից գարշում, փախչում ու հեռանում է Սուրբ Հոգին և այլևս չի վերադառնում սրանց մոտ, որից հետո սրանք դառնում են սատանայի

ու դևերի բնակարան և ողորմելի բոլորի համար։ Քանզի ոչ մի ամբարշտություն չի հավասարվում այս ախտին, այլ բոլոր [տեսակի] դիվահարներից առավել են անզգայացած նրանց անձերը, [քանի որ] նրանք ախտավոր ցանկություններով կատաղում են իրար հետ. արուները վավաշոտելով՝ իգացնում են արուների արուական բնությունը, իսկ էգերն անամոթանալով ու լրբանալով՝ իգական բնությունն են արուացնում։ Նաև անբան անասունների հետ ապականվեցին, որ առավել է, քան բոլոր պղծությունները։

Բայց ես հիանում ու զարմանում եմ Աստծու համբերության վրա, որ երկնքից շուտափույթ կայծակներ չի իջեցնում այդպիսի ամբարիշտների վրա և ոչ էլ երկիրն է բացում և ընկղմում գարշելի տիղմով զազրացածներին։ Քանզի նրանք պղծվեցին օրենքից դուրս, և նրանց անօրինությունները գերազանցեցին մեղքերի բոլոր սահմանները։ Չեմ կարողանում ցույց տալ դառը, ողբալի ախտի վտանգավորությունը և առավել զարմանում ու ապշում եմ, երբ կանայք են գործում այդպիսի մոլեկան կատաղությունը և այս մտքից դուրս պղծությունները գործում։ Քանզի ի սկզբանե տղամարդը տղամարդ ստեղծվեց կանանց պետքերի համար, իսկ կինը կին ստեղծվեց՝ տղամարդկանց օգնական լինելու համար։ Բայց այս անզգայական ախտերն ու անօրեն անառակությունները աստվածադիր օրենքները փոխեցին ամբարշտությամբ, և բնական պետքերը, որ այրերը պետք է ընդունեին կանանցից, իսկ կանայք՝ այրերից, նրանք նաև ուրիշ աղտեղությունների փոխեցին և վերածեցին անհանդուրժելի գարշանքի, որ նողկանք է պատճառում բոլոր լսողներին, որի մասին պատմելը զարհուրեցնում է ինձ։

Արդ, դուք նույնպես, խոսքերս լսելով, գարշեցե՛ք և երանի թե զզվեիք ու նողկայիք այդ ամենից, որովհետև

դրանք զազրելի են բոլոր ախտերից։ Այդպիսի մարդու հետ չի կարելի բնակվել, ո՛չ էլ նրա հետ հաց ուտել, այլ պետք է փախչել նրանից, ինչպես դևից։ Պիղծ է այն ամենը, ինչին դիպչում են նրա ձեռքերը, բոլոր պղծություններից առավել պիղծ է նա, արժանի՝ մեծագույն պատուհասների և բազում հրեղեն շանթերի ի վերուստ։ Նաև առավել ժանտամահ [պիտի լինեն] այդպիսի մարդիկ, ինչպես պոռնիկները, պիտի դատապարտվեն ահավոր չարչարանքների։ Քանզի պոռնկությունը, թեպետև անօրեն ու աստվածային պատվիրաններին հակառակ [ախտ] է, այսուհանդերձ ըստ բնության է այս մեղքը, մինչդեռ անասնամոլների, իգացողների և արվագետների պղծություններն առավել են, քան բոլոր մեծագույն անօրինությունները, և արթնացնում են Աստծու բարկությունն ու սաստիկ ցասումը։ Քանզի ասում է. «Բոլոր մեղքերը, որ գործում է մարդը, իր մարմնից դուրս են, իսկ ով պոռնկանում է, իր մարմնի դեմ է մեղք գործում» [Ա Կորնթ. Զ 18]: *Այնքան զազրելի ու դժնդակ է այս մոլությունը և բոլոր պոռնկություններից առավել ահավոր պղծություն, որ դրա առավել ամբարշտության համեմատությամբ արդարանում են բոլոր մեղքերի սաստիկ անօրինությունները։ Ինչպես որ գրված է.* «Հուդայի ուխտազանցության համեմատ արդարացավ Իսրայելի կռապաշտությունը» [տե՛ս Երեմ. Գ 11], *այդպես բոլոր անօրեն ախտերի չարությունից առավել եռաց այս ամբարշտությունը, որի պղծության մասին անհնարին է խոսքերով պատմել, քանզի խառնակեցին, փոխեցին իրենց բնությունը. տղամարդկային բնությունը կանացի դարձավ, իսկ կանացի բնությունը՝ առնացի, և առավել սողալով՝ ապականվեցին անբան անասուններով. անօրե՛ն, ահավո՛ր անօրինություններ, արհավիրքներ, սոսկալի ահուդող։*

Արդ, ի՜նչ ասեմ, ինչպիսի՜ խոսքերով ճանաչեցնեմ այս չար ախտի դառնությունները. այս ախտից բացվում են գարշահոտ անդունդներ, ականջները չեն հանդուրժի լսել այդ մասին։ Քանզի եթե այս ախտի բնությունը խոսքերով մերկացնելով՝ ճշմարտապես ճանաչեցնեմ ձեզ, որպեսզի լավ հասկանաք, կաղտոտեմ, կապականեմ և տիղմով կշաղախեմ լեզուս, իսկ եթե զզջալով՝ քողարկելով խոսեմ, կծածկվի այս մոլեկան ախտի չարությունը։

Արդ, դադարեմ այս ախտի մասին պատմելուց, որպեսզի հանդարտվեն ձեր ականջները. մտքով ձեր մտքում իմացեք այս զազրելի ախտը, և մենք ամբողջապես չբացահայտենք նրա զազրելիությունը, որպեսզի դուք նույնպես զզվանք ու նողկանք չզգաք ձեր ականջների՝ [այդ ամենը] չտանելու պատճառով, քանզի իմաստունին բավական է և մեկ խոսքը՝ հոգու խրատի ու զգուշության համար։ Քանզի եթե մեկը մտքով անգամ անցկացնի այնպիսի մոլեգնությունները, որոնցով պղծվում են անասնամոլները, կամ էգերն՝ էգերի և արուներն արուների հետ են գործում, կպղծի իր հոգին, ապա ուրեմն՝ որքա՜ն կայրի գործը։ Քանզի. «Եթե արդարը հազիվ է ապրում, ապա ի՞նչ պիտի լինի մեղավորը» [Առակ. ԺԱ 31]: *Նրանց մարմիններում անհանգչելի կրակ բորբոքվեց և վեր բարձրացավ, և պղծվեցին ոչ նման բնությամբ. տղամարդը տղամարդ էր, ախորժեց կին լինել և կորցրեց իր բնույթը, կինը կին էր, կամեցավ տղամարդ լինել և կորցրեց իր կանացի էությունը։ Նրանց պետք էր հալածել կանանց և տղամարդկանց միջից, որովհետև թողեցին բնական պետքերն ու անբնականներով պղծվեցին։ Այդ մասին և Պողոսն էր ողբալով ասում, թե՝* «Նրանց էգերը բնական կարիքները փոխանակեցին անբնական կարիքներով, նաև արուները, թողնելով էգերի հանդեպ բնական կարիքները, բորբոքվեցին միմյանց ցանկությամբ, և արուներն արուներ-

րի հետ խայտառակություն գործեցին» [Հռոմ. Ա 26-27]: *Նրանք, պիղծ խորհուրդներով չար ցանկությունները լցնելով իրենց մարմինների մեջ, անբան անասունների հանդեպ բորբոքվեցին և բոլոր տեսակի չարիքները գործեցին և պղծվեցին առավել, քան եկեղեցի կողոպտողները, քան գերեզման քանդողները, և մարդասպաններից առավել անօրինացան, քանզի մարդասպանը միայն մարմինն է սպանում, այն էլ՝ միայն այստեղ, իսկ սրանք հոգին ու մարմինն են սպանում հավիտենական տանջանքներով։*

Սա առավել մեծ ամբարշտություն է, քան հեթանոսությունը. սրա պատճառով սաստիկ բարկություններ են հեղվում երկրի վրա, սրա պատճառով երկինքը կա՛մ փակվում է չարաչար, կա՛մ բացվում խստությամբ, սրա պատճառով տարաժամ մահեր ու զանազան պատուհասներ են լինում, սրա պատճառով ջրհեղեղը կորստյան մատնեց ամբողջ աշխարհը, սրա՝ արվամոլության ախտի և իգական կատաղությունների պատճառով կայծակների հրացայտ անձրև տեղաց Սոդոմի վրա և այրեց նրա բոլոր սահմանները։ Ո՛վ անօրեն մոլորություն, ո՛վ սաստիկ կուրություն և միգապատ հիմարություն. սկզբից իսկ սարսռում եմ, վախից հիմարանում է միտքս, և չեմ կարողանում խոսքս բովանդակել։ Ո՞վ տեսավ, կամ ո՞վ լսեց այսպիսի ահավոր արհավիրքներ, անօրեն ամբարշտություններ և զազրելի պղծություններ։ Ո՛վ սատանա և ի սկզբանե մարդասպան, ո՛ր խավարն ու անօրինության ինչպիսի՛ խորքերն իջեցրիր մարդուն, մինչև իսկ արվամոլ, անասնամոլ ու իգացող ես դարձնում նրան։

Եվ այժմ ի՞նչ անվանենք նրանց, ովքեր այդպիսի մոլեգնություններով մոլեգնեցին. դրանք մարդ չե՛ն։ Անասո՞ւն կոչենք նրանց, բայց նրանք անասունից ավելի անմիտ են, որովհետև երբեք չենք տեսնում, որ անասունը

մարդկային բնությունն ախորժի։ Կատաղած շո՞ւն անվանենք, բայց նրանք անամոթանալով՝ շներից առավել են կատաղում։ Քանզի շներն իրենց նմաններին են ախորժում և ըստ իրենց բնության օրենքի են մոտենում, մինչդեռ իգացողները, արվագետները և անասնամոլները շներից ավելի են կատաղում, և իրենց գործած չարիքներով գերազանցում են դևերին։

Ո՛վ Աստծո մեծ համբերությանը, ո՛վ Բարերարի մեծ սիրուն և անբավ երախտիքներին, որ երկինքը չի կործանում այդպես ամբարշտացողների գլխին, երկիրը չի ճեղքում և չի ծածկում ապականվածներին ու [այդպիսի մեղքերով] ծանրացածներին, ոչ էլ սաստիկ փայլակներ է իջեցնում վերևից և կրակի շանթերով այրում, այլ համբերությամբ սպասում է, մինչև վրեժխնդրության ժամանակը և ահեղ դատաստանի Օրը։ Եվ արդ, քանի՛ գեհեն ու հրացայտ հնոց բավական կլինեն այդպիսի անձանց, ներքին քանի՛ տարտարոս ու խավարի աղջամուղջ՝ այդպիսի անօրեն զեխության փոխարեն, քանի՛ որդնալից գուբ է սպառնում և տանջանքների [ինչպիսի՛] բազմություն. չեմ կարող ասել հրեղեն հորդահոս գետերի մասին, որոնք հոսելով իջնում են ամբարշտությունների վրա, ուր ահավոր արհավիրքներ են, անդադար լաց ու ողբ։

Արդ, ողորմելի՛ և թշվառակա՛ն, չարաչար վախճանիդ օրը ի՞նչ պիտի անես հիմար կույսերի սաստիկ դառնությունը, երբ հոգուդ անողորմ պահանջողները ահավոր կերպարանքներով եկած՝ հասնեն քեզ վրա՝ փութով հոգիդ հափշտակելու մարմնիցդ, իսկ սարսափած հոգիդ ահագին ահով ու դողով ջանա ետ դառնալ և թաքնվել մարմնիդ հարկի տակ. չպիտի կարողանա հանդարտ նայել իր դեմ եկող հրեշտակներին, որոնք սաստիկ սպառնալիքներով պիտի ջանան հոգիդ հանել

մարմնիցդ։ Այնժամ քեզ պիտի պատեն ահեղ ատյանի սոսկալի արհավիրքներն ու չարաղետ տանջանքների տագնապն ու սարսափը։

Եվ արդ, դառնորեն լաց չե՞ս լինում՝ հիշելով այն սարսափի մասին, և անդադար ողբերով չե՞ս հառաչում քո բազմաթիվ չարաչար ամբարշտությունների համար. թերևս Տերը ներողամտաբար կգթա քո վշտագնած սրտի ջերմեռանդ արտասուքների համար և գորովագութ ողորմությամբ կընդունի քո՝ հեծեծանքով պաղատանքները։ Արդ, շտապի՛ր ապաշխարել, քանի դեռ ժամանակը մերն է, որպեսզի չլինի թե Օրը գա, «քեզ հափշտակի, և չլինի մեկը, որ քեզ փրկի» (տես Սաղմ. Է 3)։ *Այլ փութա՛ ձերբազատվել պղծությունից՝ ապավինելով Աստծու մարդասիրությանը։ Թեպետև անթիվ են քո անօրինությունները, բայց անսահման է Աստծու մարդասիրությունը, թեպետև չարաչար գլորվեցիր, բայց շտապի՛ր. աղաչի՛ր Քրիստոսին, Ով կանգնեցնում է գլորվածներին։ Թեպետև ամբողջովին տիղմով թաթախված՝ զազրելի դարձար, բայց ունես արտասուքների աղբյուր, որ մաքրում ու լվանում է։ Թեպետև կործանվեցիր մեղքերի ահավոր աղտեղությունների մեջ, այլևս մի՛ հապաղիր, մի՛ մնա կործանումիդ մեջ և կգտնես թողություն ու փրկություն։ Թեպետև քո սև ամբարշտությունների մեջ թաթախվելով՝ նեխեցիր, բայց մոտեցի՛ր Քրիստոսին ջերմեռանդ արտասուքներով, և Նա լուսավորելով՝ կպայծառացնի քեզ։ Թեպետև սաստիկ բարկացրիր [Նրան]՝ ապականված մնալով քո խավարային ընթացքի մեջ, շտապի՛ր խոստովանել, և կընդունվես, ինչպես անառակ որդին։ Թեպետև ոտքից գլուխ ծանր վիրավորվեցիր, բայց կարո՛ղ ես բժշկվել ողորմությամբ և տնանկներին գթալով։ Թեպետև կապվեցիր սատանայի շղթաներով և պատվեցիր նրա լարերով, քո խիստ պահեցողությունն ու ջերմագին*

աղոթքները կքակտեն սատանայի մեղքերի շղթաներն ու կապանքները։ Թեպետև քո ահավոր անօրինությունները քեզ խավարային անդունդի խորքերն իջեցրին, կամավոր ապաշխարությանդ խնդրանքներն ու հառաչանքները քեզ կհանեն խորին խավարից և կբարձրացնեն դեպի երկնային կամարը, ուր արդարների [համար պատրաստված] բարիքներն են։ Թեպետև գարշահոտ պղծությամբ խավարային դևերի բնակարան եղար, սրբվի՛ր զազրելի նեխությունից, քրձով, մոխրով ու պաղատանքներով Աստծու տաճար բարձրացիր։ Թեպետև սաստիկ են չարիքներդ, բայց հաղթող է Նրա մարդասիրությունը։ Թեպետև առավել պիղծ ես, քան [կուռքերին] զոհաբերվածն ու մեռելոտին, բայց առաքինի վարքով կարո՛ղ ես մաքրվել և հաճոյանալ Աստծուն։ Թեպետև մեղքերի զազրելի ախտերով չարաչար նեխեցրիր և քայքայեցիր մարմինդ և շաղախվեցիր, թաղվեցիր անօրինությանդ մեջ, կոտրված հոգով և խոնարհ սրտով ջնջի՛ր քեզնից անօրինություններդ և անմիջապես կլուսավորվես Սուրբ Հոգու շնորհներով։

Շատերը խոտորվեցին ճշմարտությունից, իսկ հետո գտան փրկության ճանապարհը, շատերը չարաչար գլորվեցին, բայց կրկին կանգնեցին, շատերը, [իրենց դեմ] կռվողներից խոցվելով, մահացու վիրավորվեցին, բայց դարձյալ հաղթեցին,շատերն աղքատացան նավաբեկությունից, բայց դարձյալ հարստացան, շատերն ընկղմվեցին չարիքների խորքերը, բայց արդարացան ապաշխարությամբ. հիվանդներից շատերը անհույս լինելուց հետո բժշկվեցին. շատ մեղքերով ծանրաբեռնվածներ թեթևացան ջերմեռանդ ապաշխարությամբ։ Արդ, դու նույնպես հույսդ մի՛ կտրիր մարդասեր Աստծու ողորմությունից. հիշի՛ր, որ բազում մաքսավորներ արդարացան, բազում պոռնիկներ սրբվեցին, բազում

ավազակներ արդարացան և բացեցին դրախտի դուռը։ Դու նույնպես փութա՛, կանգնի՛ր գլորումիցդ, հեռո՛ւ վանիր քեզնից անօրինությունդ և կհասնես փրկության։ Անզգջությամբդ մի՛ նմանվիր սոդոմցիներին, որպեսզի նրանց հետ չայրվես գեհենի հրում, այլ ապաշխարությամբ Նինվեի՛ն նմանվիր և ե՛տ դարձիր չար ճանապարհից։ Ահա քո մեջ դեռևս բնակվում է անօրեն թշնամին և խստացնում է քո սիրտը՝ չդառնալու դեպի զղջումն ու ապաշխարությունը։ Ճանաչի՛ր սատանայի գաղտնի նետերը և փութա՛ ազատվել նրա որոգայթներից։ Ահա քո շուրջը դևերի անթիվ բանակներ են հսկում և պատում ու պաշարում են խորհուրդներդ, որպեսզի չխոստովանես ու չապաշխարես. ցատկի՛ր նրանց միջից, ինչպես կցատկեիր կայծակների հրի միջից, և փութա՛ նետվել Աստծու ողորմության մեջ։ Ողբա՞ ասելով. «Հայր, մեղանչել եմ երկնքի դեմ և Քո առջև» [Ղուկ. ԺԵ 18], *մի՛ մերժիր ինձ Քո ողորմությունը, որովհետև մարգարեից լսել եմ.* «Թող ներված լինեն քո մեղքերը» [հմմտ. Բ Թագ. ԺԲ 13]: *Որին մենք նույնպես թող արժանանանք շնորհներով և մարդասիրությամբ Հոր, Որդու և Սուրբ Հոգու. [Նրան փառք, պատիվ և երկրպագություն] այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։*



Ի. *Աստծու թշնամիներին չսիրելու և նրանց հետ բարեկամություն չանելու մասին*

Շտապես զարհուրում եմ, երբ խորհում եմ այս ահավոր հանցանքի մասին, խորհուրդներս փոթորկվում են անդադար, սիրտս ահից սարսափում է, որովհետև միշտ եմ վիրավորվում այս ախտից, որի՝ ընտելացած սովորություն դառնալու պատճառով վերքն այլևս վերք չի երևում։ Զարաչար խոցոտվում ենք չարիքներից և անհոգ ենք առողջների պես. միշտ սարսափում ու զարմանում եմ և հանապազ սգում, որովհետև գիտեմ վերքի ծանրությունը, գիտեմ և վերքերից [ազատվելու համար ջանքեր թափելու] ծուլությունս։ Ուստի և պետք է առավել սգալ դողալով և անդադար ողբալ մեր հիմարության ու կուրության համար, քանի որ գիտեմ, որ եթե այս աշխարհի թագավորների հրամաններն արհամարհողներին են սպասում ահավոր բանտ, մեծամեծ կապանքներ, զանազան տանջանքներ ու պատիժներ, ապա որքա՜ն առավել հուր ու ահավոր տանջանքների բազմություն են սպասում նրանց, ովքեր արհամարհում են Հոգու հրամանն ու Աստծու պատվիրանները և բարեկամ են դառնում Աստծու թշնամիներին, ովքեր իրենց անօրեն ընթացքով հանապազ հայհոյում և տրտմեցնում են Սուրբ Հոգուն, ետ չեն դառնում և չեն զղջում, այլ մշտապես մնում են նույնի մեջ։ Հարկ է, որ աստվածապաշտներն ու Քրիստոսին սիրողները հեռանա՜ն նրանցից, ըստ Պողոսի այն խոսքի, որ ասում է. «Եթե եղբայր կոչված մեկը պոռնիկ լինի, կամ կռապաշտ, կամ ագահ, կամ բամբասող, կամ հարբեցող, կամ հափշտակող, այդպիսի մեկի հետ հաց էլ չուտեք» [Ա Կորնթ. Ե 11]։

Եղբայր անվանվեց նա, ով լուսավորվեց Ավազանից ծննդյամբ և սուրբ սեղանից հաղորդությամբ, բայց որովհետև անսուրբ վարքով և անապաշխար անօրենություններով պղծեց և կորցրեց սուրբ Ավազանի մաքրությունը, հեռացավ և բաժանվեց մեզնից և քրիստոնեության սուրբ հավատից. կա՛մ շնությամբ աղտեղի դառնալով՝ պղծվեց անօրենների հետ և կամ զազրելի ու գարշելի անկողիններում ամուսնությունը սրբապղծեց՝ խոզի նման ցեխի ու տիղմի մեջ թավալվելով։ Այդպիսին, եթե անգամ եղբայր լինի և կամ քույր, որդի կամ դուստր, թող նզովվի՛ և մերժվի՛ մեր սիրուց, խնամքից ու բարեկամությունից։ Այդպիսի մարդու հետ հաց անգամ չուտես, որովհետև նա ուրացավ Քրիստոսին, թքեց [մկրտության սուրբ] Ավազանի մեջ և հավատաց սատանայի անօրեն խաբեությանը։

Արդ, ո՞ւմն են այս հրամանները, ո՞ւմն են այս պատվիրանները. մի՞թե Աստծու Միածնինը և թագավորների Թագավորինը չեն, Ով առաքյալի բերանով Սուրբ Հոգով պատվիրեց։ Իսկ այժմ անարգվում ու արհամարհվում են Սուրբ Հոգու պատգամներն ու Աստծու պատվիրանները, որովհետև չենք հրաժարվում անօրենների սիրուց ու անարժան խնամությունից, որ հանապազ պոռնկություն է։ Եվ այժմ ի՞նչ ներման ու թողության պիտի արժանանանք մենք, որ ոտնահարեցինք Աստծու հրամաններն ու պատվիրանները. Նա մեզ չհրամայեց բարեկամություն անել ագահ ու հարբեցող մարդու հետ, իսկ մենք բարեկամանում ու խնամանում ենք թե՛ հրեաների, թե՛ հեթանոսների և թե՛ հերձվածողների հետ։ Ո՞ր խավարի մեջ պիտի գնանք կամ ո՛ւր պիտի սուզվենք մեր անսահման ծուլության ու վատ սովորությունների պատճառով, [այն պատճառով], որ արհամարհում ենք Աստծու պատվիրանները։ Եվ կամ ի՞նչ պատասխան պիտի տանք ահեղ

դատաստանի այն Օրը, երբ հանդիմանվենք ու կշտամբվենք տիեզերական հրապարակի առջև, ի՞նչ պիտի ասենք. պիտի ասենք, թե՝ երբևէ չլսեցի՞նք որևէ մեկից, կամ՝ ոչ մեկը չուսուցանե՞ց մեզ։ Ահա Պողոսը բողոքում և ասում է. «Եթե եղբայր կոչված մեկը պոռնիկ լինի, կամ կռապաշտ, կամ ագահ, կամ բամբասող, կամ հարբեցող, կամ հափշտակող, այդպիսի մեկի հետ հաց էլ չուտեք» [Ա Կորնթ. Ե 11], *այլ.* «Ելե՛ք այդտեղից և հեռացե՛ք նրանցից, նրանց հետ հաց մի՛ կերեք և մի՛ մոտեցեք» [տե՛ս Ես. ԾԲ 11], *որովհետև մշտապես Աստծուն անարգողներ են և Նրա պատվիրաններն արհամարհողներ։ Պողոսից, մանավանդ Սուրբ Հոգուց ամեն ժամ այս ենք լսում, թե՝* «Աստծու թշնամիների հետ չպե՛տք է բարեկամ լինել» [հմմտ. Բ Մն. ԺԹ 2]։ *Ահա նաև մարգարեն է ասում.* «Քեզ ատողներին ատեցի, Տե՛ր, և Քո թշնամիների պատճառով մաշվեցի։ Կատարյալ ատելությամբ ատեցի նրանց, և նրանք թշնամի դարձան ինձ, որովհետև չպահեցին Քո օրենքները» [Սաղմ. ՃԼԸ 21-22]։ *Ահա մարգարեն ուսուցանում է, թե հարկ է ատել Աստծու թշնամիներին, այլ ո՛չ թե բարեկամություն անել Աստծու թշնամիների հետ։ Նաև մյուս մարգարեն է ասում.* «Եվ այն պատճառով խորտակեց քո նավերը, որ Աստծու թշնամիներին բարեկամ եղար» [տե՛ս Բ Մն. Ի 37]։ *Ահա նա նույնպես բողոքում է, թե չպե՛տք է բարեկամություն և խնամություն անել Աստծու թշնամիների հետ և ատելի և թշնամի լինել Աստծուն։ Այս մասին և մեկ ուրիշ մարգարե է ասում, թե՝* «Ով ամբարտավան էր աչքով և ագահ՝ սրտով, նրա հետ հաց իսկ չկերա, անօրինություն գործողն իմ տան մեջ չբնակվեց» [Սաղմ. Ճ 5, 7]։

Արդ, այս ամենն իմանալով՝ մենք նույնպես հեռանա՛նք Աստծու թշնամիներից, քանզի քրիստոսասերներն ու աստվածապաշտները չպետք է սեր և բարեկամություն անեն Աստծուն ատողների և Քրիստոսի թշնամիների հետ, այլ պետք է ատեն և իբրև թշնամի համարեն

նրանց։ Եթե մի որևէ կին տեսնի, որ անարգում են իր ամուսնուն, ոչ միայն կթշնամանա նրան անարգողի հետ, այլ նաև քեն ու ոխ կպահի նրա դեմ։ Մենք Քրիստոսի համար երբեք չենք ատում և քեն չենք պահում ո՛չ գողերի, ո՛չ պոռնիկների, ո՛չ բամբասողների և ո՛չ Աստծու բոլոր թշնամիների դեմ, որոնք իրենց անօրեն ընթացքով ամեն ժամ բարկացնում են Նրան։ Որդին անարգում ու թշնամի է դառնում իր հորն անարգողին, իսկ մենք սիրում ու պատվում ենք Աստծու՝ մեր Հոր թշնամիներին և բարեկամություն ենք անում նրանց հետ։ Շատ ծառաներ մեռնում են իրենց տիրոջ համար, իսկ մենք Աստծու՝ մեր Հոր և Արարչի համար չենք կամենում ատելի լինել Նրա թշնամիներին։ Եվ ինչպե՞ս ենք անվանվում աստվածասերներ ու աստվածապաշտներ և հավիտենական կյանքի ակնկալիք էլ ունենում, և կամ ինչպե՞ս կսիրվենք Նրա կողմից, մենք, որ սրտով չենք սիրում Նրան. «Որովհետև ինչ դատաստանով որ դատեք, նրանով եք դատվելու» [Մատթ. Է 2]: *Քանզի ասում է. «Եթե ինձ Հայր եք անվանում, և չեք անում այն, ինչ ասում եմ, ես էլ որդի պիտի կոչեմ ձեզ, բայց իմ ժառանգությունից հեռու պիտի վանեմ»։ «Ինչո՞ւ, Տե՛ր, և ինչի՞ համար»։ «Որովհետև սիրեցիք իմ թշնամիներին և ինձ ատողներին ձեզ բարեկամ դարձրեցիք»։*

Իսկ այժմ շատերն են ոչինչ համարում այդ, այլ խառն ու առանց խտրություն դնելու ուտում ենք [Աստծու] թշնամիների՝ շնացողների, գողերի, պոռնիկների, ագահների, հափշտակողների, բամբասողների, զրկողների հետ և հարգանքով մեր տուն ենք ընդունում նրանց, պատվում ենք Աստծուն անարգողներին և վնասելով՝ կորստյան ենք մատնում մեր հոգին։ Եվ բոլոր չարիքներից առավել մեծ անօրինություն և կռապաշտությանը հավասար է այն, որ քրիստոնյա լինելով՝ խառնակվում են անօրենների հետ, ամուսնանում էլ են [նրանց հետ] և անասնա-

մոլներին հավասար են համարում իրենց անձերը, Սուրբ Հոգուն հալածում են իրենցից, իրենց տնից, իրենց ծնողներից, եղբայրներից, ազգատոհմից և չեն իմանում, չեն զղջում, չեն դառնում և չեն ապաշխարում։ Եվ սատանան այն փոքր բան է կարծել տալիս, թույլ չի տալիս իմանալ, թե մահացու մեղք է այդ։ Ուստի և չպե՛տք է այդպիսի մարդկանց մոտենալ, նրանց հետ հաց ուտել, այլ ինչպես օձից՝ փախչել նրանց հետ հաղորդակցությունից, որպէսզի չլինի, թե մեկը ուսանի այդ գործերը։ Եթե մեզ չի հրամայում հաց ուտել նախանձոտ մարդու հետ [տես Առակ. ԻԳ 6], *ապա որքա՜ն ավելի նրա հետ, ով չարիք է գործում, որով ապականվում են մեր հոգիները։ Եթե հրամայում է հեռանալ պոռնիկ ամուսնուց* [հմմտ. Ա Կորնթ. Ե 11], *ապա որքա՜ն առավել՝ օտար պոռնիկից, որը մեզ Աստծուց է հեռացնում։ Եթե մեզ հրամայում է փախչել դատարկապորտներից, նրանցից, ովքեր շրջում են անգործ, դատարկ ու անկարգ, ապա որքա՜ն առավել՝ բամբասողներից ու հարբեցողներից։ Քանզի եթե չի հրամայում ապրել բարկացող մարդու հետ, որպեսզի չսովորեն նրա ճանապարհները, ապա որքա՜ն առավել պետք է հեռանալ նրանցից, ովքեր Աստծուն են անընդհատ բարկացնում։*

Ինչո՞ւ չարչարվենք այդ օտարի չարիքներով և դատապարտվենք ուրիշների մեղքերի համար։ Տե՛ս, եթե մեկը մաքուր հագուստներ ունենա և շփվի տիղմի մեջ թաթախվածների հետ, մի՞թե չի կեղտոտվի նրանց հետ շփվելով։ Այդպես էլ նա, ով սրբություն ստացած լինի, բայց սեր և բարեկամություն անի ագահների, հափշտակողների և բոլոր մեղքերի մեջ շաղախվածների հետ, իր մաքրությունը կապականի անմաքուրների պղծությամբ։ Եթե մեկը տեսնի նեխած, փտած, գարշատոտ վերքերով պատված մեկին, չի կամենա նույնիսկ նրա մահճին մոտենալ, իսկ մենք խառնակվում ենք անօրենների, ան-

կնունքների և հերձվածողների հետ, որոնցից նեխահոտից ու փտության [գարշահոտից] առավել բուրում է մեղքերի ծանրությունը, որ պղծում և ապականում է մեր մարմինն ու հոգին, դուրս է հանում արքայությունից, ժառանգակից է դարձնում սատանային ու դևերին, որոնք բարկացնում են Քրիստոսին՝ անօրեն անկողիններում պղծվելով։ Իսկ քրիստոնյա նրանք են, ովքեր հանապազ կատարում ու պահում են Քրիստոսի պատվիրանները։

Իսկ մշտամեղ քրիստոնյաները, ովքեր անառականում են անօրենների հետ, հեթանոսներից առավել են դատապարտվում [համաձայն Տիրոջ այն խոսքի, թե]՝ «Այն ծառան, որ գիտե իր տիրոջ կամքը, բայց նրա կամքի համաձայն չի պատրաստի, շատ ծեծ կուտի» [Ղուկ. ԺԲ 47]։ *Իսկ Պողոսն ասում է.* «Եթե եղբայր կոչված մեկը ագահ լինի կամ կռապաշտ, նրա հետ հաց անգամ չուտես» [տե՛ս Ա Կորնթ. Ե 11]։ *Ահա երանելի Պողոսը կռապաշտ է համարում նրանց, ովքեր իրենց կամքով հարաժամ պոռնկանում են անօրենների հետ և ամուսնություն են համարում այդ, պատվում են թլպատությունը և անարգում են Քրիստոսի Ավազանն ու լուսավորությունը և չգիտեն, որ նմանություն չկա լույսի ու խավարի, Քրիստոսի և սատանայի միջև, ոչ էլ հավատացյալը բաժին [ունի] անհավատի հետ։ Արդ, եթե սիրում ես Քրիստոսին, ատի՛ր Նրա թշնամիներին, եթե բարեկամ ես Քրիստոսին, թշնամի՛ եղիր Նրան ատողներին, քանզի բոլոր նրանք, ովքեր անօրենություն են գործում, արհամարհում են Նրա պատվիրանները և թշնամի են Աստծուն. ով սրտով աստվածապաշտ է, մերժում և հեռանում է նրանցից, ինչպես թշնամուց, անգամ եթե շատ սիրելի են նրանք և ընտանիքի մտերիմ անդամներ։*

Մեծ առաքինություն է Աստծուն արհամարհողների դեմ կռվելն ու նրանցից հեռանալը, Նրան անարգողներին թշնամի լինելը։ Դրանց համար կան մեծամեծ հա-

տուցումներ, զանազան պարգևներ ու պատիվներ Աստծուն մերձ գտնվողների հետ։ Լա՛վ, հարցրո՛ւ այս աշխարհի թագավորներին և տես, որ եթե տեսնեն իրենց ծառաներից [որևէ մեկին] թշնամացած իրենց թշնամիների դեմ, ինչպիսի վայելչությամբ ու պատվով կփառավորեն նրան իրենց մեծամեծերի առջև։ Իսկ եթե լսեն, թե իրենց ծառան սիրում է իրենց թշնամիներին և բարեկամություն է անում նրանց հետ, մտածի՛ր, թե ինչպիսի ծեծերով, բանտերով ու զանազան տանջանքներով կմաշեցնեն և դժնդակ մահով կհեռացնեն այս աշխարհից։ Իսկ մենք ինչպիսի՞ ներման ու թողության արժանի կլինենք, եթե սեր և բարեկամություն անենք Աստծո թշնամիների հետ, ովքեր իրենց անօրեն ընթացքով մշտապես հայհոյում ու անարգում են Նրան։ Հարկ է մեծ երկյուղով զգուշանալ նրանց սեղանից ու սիրուց, քանզի անօրինություններից են կերակուրները հափշտակողների և գողերի, պիղծ են կերակուրները պոռնիկների և բամբասողների, հավիտենական տանջանքների առիթ են հարբեցողների խրախճանքները, մարդկային զոհերի արյունով են շաղախված ագահների սեղանները, և անմաքուր ու պիղծ են բոլոր անօրենների և Աստծու դեմ ապստամբողների կերակուրները. նրանցից Պողոսն էլ է պատվիրում հեռու մնալ, քանզի եթե պիղծ է մատուցողը, առավել պիղծ է նրա զոհը, և նրանք, որոնց վարքը, մաքուր չեն նաև նրա կերակուրները։ Եվ դու, եթե սրտով ես աստվածապաշտ, մերժի՛ր և հեռո՛ւ մնա նրա սեղանից ու սիրուց։ Տե՛ս, որ աշխարհի դատավորներն էլ ում որ գտնում են գողերի ու մարդասպանների հետ, նրանց հետ էլ դատում են, մանավանդ նրանց մտերիմներին ու օթևան տվողներին։ Ուստի և մենք էլ հեռանա՛նք նրանցից, ում Աստված պիտի դատի, որպեսզի նրանց հետ չդատվենք [և չմատնվենք] գեհենի ահեղ հրին և անվերջանալի տանջանքներին։

Արդ, այս ամենն իմանալով՝ հեռո՛ւ մնանք հրեաների, հեթանոսների, հերձվածողների, գողերի ու մարդասպանների, պոռնիկների և բամբասողների, հարբեցողների, ագահների և հափշտակողների բարեկամությունից, առավելապես նրանցից, ովքեր մնում են առանց ապաշխարելու՝ չարիքների մեջ և անօրենների հետ. հեռո՛ւ մնանք այդպիսիներից, որովհետև չկա՛ միաբանություն արդարի և անօրենի միջև, որովհետև արդարությունը թշնամի է անօրինությանը։ «Ինչ միաբանություն լույսի և խավարի միջև, կամ ինչ առնչություն ունի հավատացյալը անհավատի հետ» [տես Բ Կորնթ. Զ 14], *քանզի հավատացյալների* «բաժինը Տերն է» [տես Սաղմ. ԺԵ 5, ՀԲ 26], *իսկ անհավատների ժառանգությունը հուրն է* [տես Մատթ. ԻԵ 41]։ *Եվ կամ.* «Ինչ նմանություն ունի Աստծու տաճարը մեհյանների հետ» [Բ Կորնթ. Զ 16], *քանի որ քրիստոնյան Աստծու բնակության տաճար է, իսկ անօրենը՝ դևերի բագին։ Այդպես նաև բոլոր մեղքով անօրինացածները սատանայի մեհյաններ են և դևերի բնակարաններ։ Ահա սրանք են բաժինները, սահմաններն ու բաժանումները և զատում են մեզ անօրենների սիրուց։ Որտե՞ղ է, որ աղավնիները բնակվում են ագռավների հետ, գառները մակաղում են գայլերի հետ, և կամ պիղծ դևերի միաբանությունները խառնվում են լուսեղեն հրեշտակներին։ Այլ սուրբերը սուրբերին են փնտրում, և անօրեններն անօրեններին են հարում։ Ասվում է, թե ամեն հավք իր երամի մեջ է իջնում, և ամեն մարդ իր նմանին է փնտրում։ Այդ պատճառով էլ մենք սուրբերին փնտրենք, սուրբերին հարենք, սուրբերին պատվենք, առաքյալներին սիրենք և բարեխոս դարձնենք, չհեռանա՛նք շնորհներից ու ողորմությունից և աղոթքից և նրանց հետ արժանի՛ լինենք աստվածային խոստացված բարիքներին մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք հավիտյանս. ամեն։*

ԻԱ. *Կարկուտի ահավոր հարվածների մասին*

Բազում տեսակների են Աստծու սպառնացող պատուհասները, որոնք Նա, մեզ գթալով, մատակարարում է մեր իսկ օգուտի համար։ Թեպետև դրանք երևում են իբրև ցասման արտահայտություններ, սակայն արտահայտությունն են [Տիրոջ]՝ մեր հանդեպ հայրական խնամքի և գութի։ Երբ արհամարհում ենք Աստծու պատվիրանները և մեր կամքով շարժվելով՝ մեղքեր ենք գործում, ներում և համբերում է՝ սպասելով մեր դարձին ու ապաշխարությանը։ Բայց երբ ո՛չ գեհենից վախենալով և ո՛չ էլ անանց բարիքների փափագով չենք շտապում ապաշխարել, կամենում է փոքր-ինչ արթնացնել մեր ծուլությունն ու դանդաղկոտությունը փոքրիկ պատուհասներով, որպեսզի խրատվենք ու զգուշանանք, որպեսզի յուրաքանչյուր ոք, իր սիրտը քննելով, ճանաչի իր անօրինությունները և զերծ մնա, հեռանա մեղանչելու չար սովորությունից, և փրկվեն [հավիտենական] տանջանքների ահավոր աղետներից։ Իսկ եթե այս էլ արհամարհենք և չփութանք ապաշխարությամբ հաշտեցնել Աստծուն, Նա մեզ ճաշակել և ըմպել կտա ուրիշ դառը պատուհասներ. մեզ վրա կհեղի, կթափի ահավոր պատիժների բազմությունը, չարաչար սպառնալիքներով մեզ կխմեցնի Իր բարկության ահագին մրուրը, որովհետև խրատի գավազանի միջոցով նախապես չփութացինք հաշտեցնել Իրեն։

Եթե փարավոնը խրատվեր առաջին պատժով, մյուս տասը հարվածները չէր ճաշակի։ Եթե Ամովս մարգարեի [օրերին] ժողովուրդը ապաշխարեր առաջին պատժով, ատամնացավը, դալկությունը, մարախը, կարկուտը,

սաստիկ երաշտը, սոսկալի սովը, չարաչար հարվածներն ու տարաժամ մահերը չէր ճաշակի։ Այդ պատճառով էլ հարկ է, որ յուրաքանչյուր ոք զգուշանա չար ճանապարհից, որպեսզի ուրիշ չարաչար պատուհասների բազմություններ չավելանան իր վրա։ Որովհետև երբ ավելանում են մեր անօրինությունները, այն ժամանակ էլ պատիժներն են թափվում մեզ վրա։ Բայց Աստծու նախախնամությունն այդ ամենը նույնպես մեզ վրա բերում է [մեզ նախա]խնամելով։ Քանզի երբ մոռանում ենք Աստծու երկյուղը և ավելացնում ենք մեր չարիքները, Նա չի կամենում հենց այդ ժամանակ, մեղքի մեջ, առանց ապաշխարելու [հնարավորություն տալու] կորստյան մատնել որևէ մեկին, այլ ապաշխարության ժամանակ է շնորհում։ Եթե չենք ապաշխարում, կրկին խնայում է մեզ, որպեսզի դառնանք [մեղքերից], և կարկուտով, մորեխով և կամ այլ տեսակի պատուհասներով հարվածում է մեր անդաստաններին, որպեսզի մենք ճանաչենք մեր մեղքերը և ապաշխարենք։ Եթե այդպես չենք ապաշխարում, մեր պատճառով զանազան հարվածներով հարվածում է մեր անասուններին՝ իբրև պատժապարտների, որպեսզի մենք զղջանք։ Եթե դրանից հետո չենք ապաշխարում, կա՛մ մեզ վրա դժնդակ երաշտով փակում է երկինքը, կա՛մ բացում է չարաչար առատությամբ, որպեսզի փչանա [ամեն բան]։ Եթե այդպես չենք ապաշխարում, մեր ոտքերի տակ դողացնելով՝ շարժում է երկիրը և ասես ձայն է տալիս մեզ՝ մեր մեղքերը ճանաչեցնելու համար, բայց չի ընկղմում մեզ, որպեսզի դառնանք [մեր մեղքերից] և ապաշխարենք։ Եվ եթե այդպես էլ չենք ապաշխարում, մեզ վրա է առաքում չարաչար հիվանդություններ. կա՛մ անժամանակ մահեր, կա՛մ մարմնի խեղություն, կա՛մ անբժշկելի հիվանդություններ, կա՛մ դիվական ցավեր և պես-պես հիվանդություններ։ Ինչ-

պես Պողոսն է ասում. «Դրա համար ձեր մեջ բազում հիվանդներ ու ցավագարներ կան, և շատերն էլ անժամանակ մեռան» [Ա Կորնթ. ԺԱ 30]: *Ուստի և հարկ է, որ դուք պատուհասների պատճառով դառնաք և ապաշխարեք և չընդունեք բազում և սոսկալի պատիժների հույլերը, դրանցից հետո էլ՝ անշեջ հուրն ու հավիտենից տանջանքները։*

Արդ, յուրաքանչյուր ոք թող քննի իր խիղճը, ճանաչի իր հանցանքների բազմությունը և չկարծի, թե Աստված անիրավ է, երբ հեղում է Իր բարկությունն ու ցասումը։ Այլ գոհություն տուր Նրան՝ ներող և արդար Դատավորին, որովհետև այն, ինչ անում է Աստված, ոչ թե Նրա բարկության, այլ Նրա ողորմության արտահայտությունն է։ Ահա համայն աշխարհը ջնջած ջրհեղեղը ո՛չ թե Նրա բարկության, այլ Նրա ողորմության նշանակն էր. որովհետև երբ [մարդիկ] չկամեցան զղջալ և ապաշխարել տապանագործ Նոյի քարոզությամբ, որ ուրագի ձայնով հնչեցնում էր բոլորի ականջներին, արագ վրա հասած մահվամբ դադարեցին իրենց անթիվ մեղ[սագործություն]երից։ Թեև իրենց չար գործերի համար սաստիկ տանջանքներ ընդունեցին, բայց մահվամբ փրկվեցին այն ամենից, ինչ հաջորդ օրն էին կամենում գործել։ Պարզ է, որ ջրհեղեղը ողորմության նշանակ եղավ նրանց համար, ովքեր չկամեցան զղջալ և ապաշխարել։ Նույնը նաև սոդոմայեցիների մասին իմացիր, քանզի նրանք հրի պես թափվող կայծակներից կործանվեցին ոչ թե իրենց բարի գործերի, այլ իրենց սաստիկ անօրինությունների և ապականիչ ընթացքի համար, որովհետև նրանք բանտարկված էին իրենց զազրելի գործերի մեջ, արագ մահվամբ փրկվեցին բազում պղծություններից։

Բայց ձեզ Աստված մոտեցել է իբրև որդիների՝ խրատելու և բժշկելու և ոչ վիրավորելու, այժմ հայտնի դարձնելու ձեր անօրինությունները, այլ ո՛չ թե պահելու հավի-

տենական ամոթի ու տանջանքների համար։ Ձեր անդաստաններին հարվածում է ձեզ համար, որպեսզի զղջան ձեր անձերը։ Թերևս ագահության չար ախտով լցված՝ ընչաքաղց ու շահամոլ էիք, և Նա կարճել կամեցավ, և կամ ձեր ցոփ ընթացքից ու հաճույքից հափրացել էիք, և չքավորությամբ խոնարհեցնել կամեցավ, կամ առատությունից կշտացած՝ մարմնապարար ցոփությամբ հոռի ու անպիտան եք դարձել և մոռացել եք Աստծու երկյուղը և այժմ փոքր-ինչ աղքատության ու նեղության միջոցով հիշեք, խնդրեք և աղաչեք Նրան, և կամ էլ ձեր մեղքերով բարկացնում եք Նրան, և Նա արթնացրեց ձեզ, որպեսզի ապաշխարեք։ Ահա Նրա բարկությունն ու ցասումը նշանակը եղան Նրա ողորմածության և ո՛չ բարկության։ Այլ՝ երբ Իր ողորմածությունը ցասմամբ է ցույց տալիս, դադարում են մեղքերի բազմությունները։

Ստուգեցե՛ք ձեր խորհուրդները, քննեցե՛ք ձեր սրտերը և գտե՛ք ձեր բազում մեղքերը, որոնց պատճառով երկրի վրա են թափվում բազմաթիվ պատուհասները,որովհետև չար սատանան միշտ դեպի չարիքն է մղում մեզ և մեր մտքում փոքր բան է կարծել տալիս այդ, որ չապաշխարենք, և մենք անմտաբար արհամարհում և չնչին մեղք ենք համարում, և մեզ վրա դիզվում կուտակվում են մեղքերի շեղջերը։ Ոմանք նեղացնում և կտրում են ընկերոջ արտերի սահմանները, որի մասին մարգարեն ասում է. «Վա՛յ նրանց, ովքեր անօրինաբար տանը տուն են կցում» [տե՛ս Ես. Ե 8], *և սատանան այն փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարեն։ Ոմանք կտրում են իրենց աշխատողների վարձը (նրանք արյուն թափողների պես են համարվելու), և սատանան փոքր բան է կարծել տալիս այդ, որ չապաշխարեն։ Ոմանք նախանձով են նայում Եկեղեցու նվերներին և խաբում են Աստծուն. իրենց ոչխարների, կալի և հնձանի լավագույնը իրենց*

են պահում և խաբում են Աստծուն՝ Նրան մատուցելով խոտանն ու անօգուտը, որի մասին մարգարեն ասում է. «Անիծյալ լինի այն մարդը, ով ընտիրն իրեն է պահում և արատավորն է մատուցում է Աստծուն» [տես Մաղաք. Ա 14] *(Կայենը նույնպես դրա համար անիծվեց), և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք շատախոս լեզվով չեն դադարում բամբասելուց՝ իրենց ընկերոջ մասին գաղտնի խոսելով, որի մասին ասում է. «Եթե մեկը հաղորդվում է Տիրոջ մարմնից և ընկերոջ մասին չար է խոսում, երկնային սուրը կշողա նրա շրթունքների վրա», և սատանան փոքր բան է կարծել տալիս այդ, որ չապաշխարենք։ Ոմանք ապականված են որկրամոլության մեջ, որոնց մասին Պողոսն ասում է, թե՝* «Հարբեցողներն ու բամբասողները Աստծու արքայությունը չեն ժառանգելու» [Ա Կորնթ. Զ 10], *և սատանան փոքր բան է կարծել տալիս այդ, որ չապաշխարենք։ Ոմանք՝ աներկյուղներն և պակասամիտները, անամոթաբար թատրոն են գնում և աներևույթ նետերով վիրավորվում են դիվամոլ տեսարանից, թեև մարմինները՝ ոչ, բայց հոգիները պղծելով՝ ապականում են, և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք ոչ թե Աստծու երկյուղով, այլ միայն ըստ սովորության են Եկեղեցի մտնում, իրենց անձերը դատարկ խոսքերով են զբաղեցնում և արհամարհելով Աստծուն փառաբանող պաշտոնյաներին՝ աղոթքները մեղքի են վերածում և գնում են դատապարտված, և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք Աստծու սիրուց հեռանալով և Սուրբ Հոգու շնորհներից անջատվելով՝ կա՛մ պղծությամբ են հաղորդվում սուրբ Խորհուրդին և կա՛մ հանդգնությամբ հեռանում են նրանից. երկուսն էլ դատապարտվում են չարաչար տանջանքների, և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարեն։ Ոմանք*

արհամարհում են Նրա մկրտությունն ու հարության հույսը և հեթանոսական անհուսությամբ են ապրում. լաց են լինում մեռելների վրա, որ սուրբ առաքյալներն արգելում են քրիստոնյաներին, և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք թողնում են քրիստոնեական հավատն ու խաչի զորությունը և հմայությունների, հուռութքների, ավելորդապաշտության, դյութանքների և դիվական հրապուրանքների են հետևում, որ կատարյալ կռապաշտություն է և աստվածային օրենքների մերժում, և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք իրենց լեզուն սովորեցնում են աներկյուղ երդվելու և սուտ երդումի, որի մասին Քրիստոս պատվիրեց, թե՝ «Ամենևին մի՛ երդվիր. այլ թող ձեր այո-ն այո լինի, և ոչ-ը՝ ոչ։ Դրանից ավելին չարից է» [Մատթ. Ե 34, 37], *և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք հարստահարում են որբերին, այրիներին ու պանդուխտներին և իրենց զրպարտողների առջև հառաչել են տալիս նրանց, և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք նեղում են իրենց դրացիներին՝ իրենց տարածքներն ընդարձակելով և նվազեցնելով ընկերոջ բաժինը, որի մասին մարգարեն ասում է.* «Վա՛յ նրան, ով տանը տուն է կցում և ընկերոջն արտաքսում» [Ես. Ե 8], *և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք դատաստանի առջև խլում են այրու իրավունքը և մեծարում են հարուստներին և անօրեն կաշառքներով դրժում են օրենքը, որի մասին Գիրքն ասում է.* «Կաշառք վերցնողները հրապարակներում պիտի անիծվեն, և անեծք պիտի բնակվի նրանց տներում» [տե՛ս Հոբ, ԺԵ 34], *և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք վաշխի տոկոսներով հարստություն են հավաքում, լցնում են իրենց տները, որի մասին մարգարեն*

ասում է ողբալով. «Վա՛յ նրան, ով անօրինությամբ է հարստություն հավաքում» [Երեմ. ԺԷ 11], *և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք վաճառելիս խնայում են և կսկծեցնում են գնողների սրտերը, չնայելով արդարակշիռ վաճառողներին, ջանում են փոքր բաները՝ թանկ և մեծ բաները էժան վաճառել, և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ուրիշները չունեն արդար չափ ու կշեռք, այլ նվազեցնում ու բարձրացնում են՝ մարդկանց շփոթեցնելու և խաբելու համար։ Այս մասին մարգարեն ասում է.* «Աստծու առջև պիղծ է երկակի չափը» [տես Առակ. Ի 10], *և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք վրեժ լուծելու համար ընկերոջ արտերն ու շտեմարաններն են ավերում, առավել մոլորվածները սատանայի խորհրդով հանդգնում են հրդեհել նրանց տները, և նրանք բազում արյան պարտապան են դառնում (թեև մարդիկ փրկվեն էլ մահվան հրից, սակայն նա, ով գցում է կրակը, ըստ [հրդեհից փրկված] մարդկանց թվի՝ պարտապան պիտի լինի մարդասպանության վրեժին), և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք առանց հոգևոր պատճառների հարկադրանքի հոժարում են Աստծու թշնամիների հետ սեր և բարեկամություն անել և բարեկամանում են անհավատների, հրեաների, հեթանոսների և հերձվածողների հետ, որի մասին մարգարեն ասում է.* «Քո նավերը խորտակեց այն պատճառով, որ բարեկամացար Աստծու թշնամիների հետ» [հմմտ. Բ Մն. Ի 37], *և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք, ինչպես պակասամիտներն ու Աստծուց երկյուղ չունեցողները, թեև ոչ պոռնկությամբ, բայց չարաչար նախանձից ու շվայտաբարո անպարկեշտությունից թելադրված՝ չարաչար տանջում են իրենց ամուսիններին կարծեցյալ*

պոռնկությամբ և երբեք չեն դադարում մեղանչելուց և խռովությունից, այլ մշտապես անդադար մեղանչում են քենով և աղաղակով (և վա՛յ նրան, ով կասկածում է, վա՛յ նրան, ով կասկածի տեղիք է տալիս), և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։ Ոմանք տրտմեցնում են իրենց ծնողներին և անարգանքով ցավ են պատճառում նրանց սրտին, որ պատվիրանն հրամայում է պատժել։ Ոմանք չեն խրատում իրենց զավակներին, այլ անուս ու թափառական են թողնում նրանց, և նրանց փոխարեն իրենք են պատիժներ ստանալու։ Ոմանք՝ ստահակ ծառաները, մարդկանց հաճելի երևալու համար արհամարհում են իրենց տերերին՝ հասնելով իրենց իսկ դատապարտությանն ու պատժին։ Ուխտավորներից ոմանք, որ ոչխարներ էին ընծայաբերում, դրժեցին իրենց ուխտը, ստեցին և երդման դաշինքն արհամարհեցին։ Կուսաններից ոմանք կամեցան Քրիստոսին հաճելի լինել հագուստներով ու [արտաքին] կերպարանքով, որ չարաչար շնություն է։ Կրոնավորներից ոմանք Աստծու երկյուղով չեն պարկեշտանում, այլ մարդկանց աչքին [կրոնավոր] երևալու համար են մնում այդ վիճակի մեջ և սնափառության ախտով հիմարացած՝ Աստծուն անգետ են դարձնում, որի փոխարեն պոռնիկներից ու հարբեցողներից առավել պիտի դատապարտվեն։ Ոմանք մոլությամբ ու չարությամբ նախատում ու բամբասում են եղբայրներին, և նրանց թշնամանքը առ Աստված է բարձրանում, որովհետև Նրա գործերն են հայհոյում, որովհետև երբ անարգվում է գործը, անարգվում է նաև գործողը։ Ոմանք չարակնում ու նախանձում են եղբոր առաջադիմությանը և ուրախանում ու ցնծում են նրա անկումով ու աղքատությամբ, որ Աստծու առջև ահավոր մեղք և խիստ մեծ անօրինություն է, և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։

Նաև ըստ սովորության և մարդկանց հաճելի լինելու համար ենք աղոթում, ըստ սովորության ենք հաղորդվում [Տիրոջ մարմնին ու արյանը], ըստ սովորության ենք ծառայություն կատարում, այլ ոչ թե ահով, երկյուղով, Հոգու սիրով և ամենայն հոժարությամբ։ Թողնե՛նք և չխոսե՛նք անթիվ ու բազում ուրիշ հանցանքների՝ ամբարտավանությունների, գողությունների, պոռնկությունների, սպանությունների, նենգությունների, կռապաշտությունների և առավել արյունարբու նախանձի, պիղծ ոխակալության, ընկերոջ հանդեպ անհաշտ թշնամության մասին. դրանք գործողները մշտապես մարդասպաններ են, մշտապես մեղքերի մեջ, և սատանան այդ փոքր բան է կարծել տալիս, որ չապաշխարենք։

Եվ արդ, անօրինությունների այս բոլոր բազմությունները մշտապես խլրտում են մեր մեջ. արդյոք կհամարձակվե՞նք ասել, թե ինչու են մեզ վրա թափվում Աստծու պատիժներն ու ցասումը։ Իր ողորմածությամբ Նա երկար ժամանակ համբերեց և արգելեց Իր բարկության ու սրտմտության՝ ձեզ վրա թափվելը՝ ակնկալելով ձեր դարձն ու ապաշխարությունը։ Եվ որովհետև մնացիք առանց զղջումի և ապաշխարելու, ձեզ փոքր-ինչ համտեսել տվեց Իր սպառնալիքներից, որպեսզի ճանաչեք, որ կա Մեկը, Ով դատում է մեր անօրինությունների ողջ բազմությունը։ Նա Իր բարկությունը չի թափում մեր մեղքերի չափով, այլ բազումից մի մասը միայն, որպեսզի մեզ խրատի, որպեսզի իմանանք, որ կա գեհեն և հավիտենական տանջանք, որով դատելու է մեր անթիվ ամբարշտությունները։

Եվ արդ, ահա իմացե՛ք Աստծու զորությունը, ճանաչեցե՛ք Նրա մարդասիրությունը։ Այսուհետ մի՛ նմանվեք փարավոնի ամբարշտությանը և մի՛ խստացրեք ձեր սրտերը, այլ հիշեցե՛ք ձեր անուղիղ գործերը, յուրաքանչ-

յուրդ է՛տ դարձէք ձեր ճանապարհից և աղաչանքով ու պաղատանքով խնդրեցե՛ք ուղիղ ճանապարհ, որպեսզի ձեզնից վերանան այլ պատուհասների բազմություններ-ը, դադարեն ահեղ տանջանքների սպառնալիքները, և եկած պատուհասներն ու ցասումը մեղքերի թողություն համարվեն։ Ինչպես մարգարեն է ասում. «Տեր, տուր մեզ Քո խաղաղությունը, քանզի ըստ մեր բոլոր գործերի հատուցվեց մեզ» [տես Ես. ԻՁ 12]: *Դուք նույնպես Տիրոջ ձեռքից ստացաք ձեր մեղքերի փոքր-ինչ հատուցումը, որ ձեզ համար փրկության դեղ եղավ՝ արթնացնելով ձեզ ապաշխարելու։*

Արդ, սոդոմաբար մի՛ պարծեցեք անզղջությամբ, այլ նինվեաբար ապաշխարեցե՛ք, լաց լինելով ու հառաչանքներով ձեզ հետ հաշտեցրե՛ք երկնավոր Հորը, Ով խրատում է ձեզ, իբրև սիրելիների, այլ ոչ թե անտեսում է՝ իբրև խորթերի և ատելիների։ Եվ թեև միառժամանակ տրտմություն եք համարում այդ խրատը, բայց հետո կհասկանաք, որ նրանով ընդունեցիք զղջում, ապաշխարություն և մեղքերի թողություն, «որովհետև Տերը խրատում է նրան, ում սիրում է» [Եբր. ԺԲ 6], *որպեսզի սրբված և մեղքերից քավված պահի։ Եվ եթե գոհանաք Աստծու արդար դատաստանից, թե հիրավի ստացաք այն, ինչ որ գործեցիք, Աստված կարո՞ղ է ձեր անդաստաններում մնացած սակավ պտուղը բազմացնել, ինչպես այն հինգ նկանակը, որպեսզի բավականանաք և լիանաք։*

Բայց դուք չափազանց առատություն մի՛ խնդրեք, այլ նախ խնդրեցե՛ք մեղքերի թողություն և ձեր հոգու բժշկություն, և այդ ամենը կավելանա ձեզ։ Եվ Աստված, որ մեծ է ողորմությամբ, «սերմ կտա սերմնացանին, ուտելու հաց կպարգևի ձեզ և կաճեցնի ձեր արդարության պտուղները» [տես Բ Կորնթ. Թ 10]: *Դուք ձեր ամբողջ լիությունը ստացած և Աստծու ողորմությամբ առատացած կլինեք, որ-*

պեսզի լիացնեք չքավորների, որբերի ու նեղության մեջ գտնվողների կարոտությունը։ Ա՛յդ է ձեր բոլոր մեղքերի և անօրինությունների քավությունը, ա՛յդ է ճանապարհը, որ տանում է ձեզ դեպի արքայության օթևանները, ա՛յդ է նավը, որ տանում է դեպի խաղաղության նավահանգիստ, և ա՛յդ է դուռը, որ մտցնում է ձեզ անշաբույր դրախտի փափկության մեջ՝ սուրբերի ու արդարների լուսեղեն ու հավիտենական խորանները։ Նրանց հետ նաև մեզ թող արժանի դարձնի վայելելու Հոր, Որդու և Սուրբ Հոգու փառքի շնորհները այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։

ԻԲ. *Տարբ Խորհուրդին զգուշությամբ ու երկյուղով մոտենալու մասին*

Երբ հիշում եմ ահագին և մեծ Խորհուրդին մերձենալու մասին, ոսկորներս սոսկում են դողալով, հոգիս սարսափում է ահից, միտքս, երկու կողմ ընթանալով, ալեկոծվում է հանապազ. կամենում եմ մոտենալ Փափագելիին, բայց անարժան լինելս արգելում է, իսկ այն մերժելն ու հեռանալը կորուստ է հոգուս։

Շատերն են մոտենում վատաբար, [շատերն էլ] հեռու են մնում անօրինաբար. երկուսն էլ սատանայից են, որովհետև մեկը, չիմանալով ահեղ Խորհուրդի զորությունը, ընտելացած սովորությամբ մոտենում է խղճմտանքով ոչ թե փրկության, այլ դատապարտության, ոչ թե մեղքերի թողության, այլ իր անօրենությունն ավելացնելու համար։ Իսկ մյուսը հեռանում է՝ արհամարհելով, կարևոր չհամարելով այն, որովհետև չի ճանաչում մեծ Խորհուրդի զորությունն ու շնորհները։ Կամ էլ, Խորհուրդը պատիվ համարելով, հաճախ չի մոտենում։

Կյանքից հեռանալն ու խավարն ու մահը փափագելը ո՛չ թե պատիվ են, այլ՝ հիմարություն ու ծուլություն։ Այդ մասին Տերն Ինքն է ասում, թե՝ «Ես եմ կենդանի հացը. եթե մեկն այս հացից ուտի, հավիտյան կապրի, և այն հացը, որ ես տալիս եմ, իմ մարմինն է, որ ես տալիս եմ, որպեսզի աշխարհը կյանք ունենա» [Հովհ. Զ 51-52]:

Եվ արդ, ամեն ոք, ով հեռանում է Քրիստոսի մարմնից ու արյունից, ինչպես որ առավել հաստատելու համար ավելացնում է «ճշմարիտ»*ը.* «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք մարդու Որդու մարմինը և չխմեք Նրա արյունը,

ձեր մեջ կյանք չեք ունենա» [Հովհ. Զ 54]: *Իսկ ովքեր չունեն հավիտենական կյանք, նրանց ժառանգությունը մութ խավարն է և գեհենի հուրը, որովհետև ամեն ոք, ով հեռու է սուրբ Խորհուրդից, հեշտությամբ է ընդունում սատանայական ախտը և մշտապես օթևան է լինում նրա համար։ Մարդը պետք է կա՛մ Հոգու շնորհներից վայելի, կա՛մ պիղծ հոգուց ընդունի։* «Տիրոջ Հոգին վերացավ Սավուղից, և չար այսը նեղում էր նրան» [տե՛ս Ա Թագ. ԺԶ 14]: *Ապականող գազաններն ու անտառի խոզերն են մտնում այն այգին, որը չունի պարիսպ, և ապականում են այն։ Եվ նրանք, ովքեր չեն պարսպվում սուրբ Խորհուրդով, դևերի բնակարան են. փախչելով հրեշտակների ժողովից՝ դևերի բանակն են ընկնում, դևերը հեշտությամբ բռնում են նրանց, տանջում են նրանց հոգին և չարաչար լկում են նրանց մարմինները երբեմն հրով, երբեմն՝ ջրով։ Եվ արդ, տե՛ս և ձերբազատվի՛ր հիմարությունից, ուղղի՛ր թերահավատությունդ, ծուլությունդ փութկոտությա՛ն վերածիր, շտապի՛ր սրբվել մեղքերից և մեծ փափագով փութա՛ դեպի հոգևոր սուրբ սեղանը, որպեսզի չհեռանաս քրիստոնյա անունից։ Քանզի քրիստոնեական հավատքը մկրտությունն ու սուրբ Խորհուրդի վայելումն են, իսկ ով հեռու և թերի է նրանցից, թերի է քրիստոնեությունից, որովհետև Քրիստոս չի բնակվում նրա մեջ, ոչ էլ ինքը՝ Քրիստոսի մեջ, քանզի* «Ով ուտում է իմ մարմնից, ասում է, նա բնակվում է իմ մեջ, և ես՝ նրա մեջ» [Հովհ. Զ 57]:

Եվ արդ, ով կամենում է բնակվել Նրա մեջ, պետք է գնա այնպես, ինչպես որ Նա գնաց։ Եվ ով ունենա այն հույսը, թե Աստված կբնակվի իր մեջ, և ինքը՝ Աստծու մեջ, պետք է լինի այնպես սուրբ (մարդկային տկարության չափով), ինչպես որ Նա է սուրբ, ապա միայն մոտենա։ Իսկ նա, ով այդպես չի մոտենում, հայտնի է, որ մոտենում է իր անձի դատապարտությանը։ Քանզի

տերունական սուրբ մարմնին մոտենալը սուրբերի համար լույս է և լուսավորում է հոգու մերձավորութեամբ, իսկ անմաքուրների համար կրակ է, այրում և ապականում է խղճմտանքով մոտենալու համար։ Քանզի երբ քո միտքը չի վկայում քո սրբության մասին, հայտնի է, որ քո՝ սուրբ Խորհուրդին մոտենալը Աստծու կամքով չէ։ Ինչպես Պողոսն է ասում, թե՝ «Աստծու կամքը ձեր մտքի վկայությունն է» [հմմտ. Բ Կորնթ. Ա 12, Ա Թեսաղ. Դ 3]: *Եվ եթե քո միտքը վկայում է քո սրբության մասին, ուրեմն քո՝ [սուրբ Խորհուրդին] մոտենալը Աստծու կամքով է։ Բայց եթե անմաքրությամբ ես մոտենում, իմացի՛ր, որ դատապարտված կելնես և բոլոր անօրեններից առավել անօրեն [կլինես], որովհետև սա ավելի մեծ անօրենություն է, քան մարդասպանների, արյուն թափողների չար[ագործ]ությունը, որովհետև եթե մարդը մարդ է սպանում, մարդասպան է անվանվում, իսկ Տիրոջ մարմնին անարժանաբար հաղորդվողը աստվածասպան է, որովհետև* «Վերստին խաչ է հանում Աստծու Որդուն» [Եբր. Զ 6]:

Եվ արդ, տե՛ս թե ո՞ր սեղանին ես անօրենությամբ մոտենում. որից սոսկում ու սարսափում են վերին զորությունները, իսկ դու հանդգնում ես մոտենալ պիղծ շրթունքներովդ։ Եթե քեզնից վատ հոտ գար, չէիր համարձակվի մոտենալ որևէ թագավորի, իսկ հոտած հոգումդ ընդունում ես երկնավոր Թագավորին և մեծ սարսափով չես սարսափում. ցեխոտ ձեռքերով չես ուզում կերակուրին մոտենալ, իսկ տղմաթաթախ հոգովդ համարձակ հաղորդվում ես։ Ո՛վ խորք անօրենության, ո՛վ ահեղ արհավիրք, ո՛վ անամոթ լրբություն և սաստիկ ամբարշտություն. անմաքրությամբ և աղտեղի հոգով գնում մոտենում ես մեծ Խորհուրդի սրբությանը։ Չկա և հնարավոր չէ տեսնել մի մարդու, որն ավելի մեծ անօրենություն հանդգնի գործել։ «Եթե մարդը մեղանչում է մարդու

դեմ, ապա պետք է աղաչի Աստծուն, իսկ եթե Աստծու դեմ է մեղանչում, ո՞ւմ պիտի աղաչի» [տես Ա Թագ. Բ 25], *քանզի ոչ թե մարդու արյան պարտական եղան, այլ՝ Աստծու Որդու մարմնին ու արյանը։ Լա՛վ մտածիր և տե՛ս, թե ինչպես ես հաղորդվում սուրբ Խորհուրդին, քանզի եթե վստահ ես, որ Աստծու արքայությունն ես մտնելու, առանց տարակուսելու հաղորդվի՛ր Խորհուրդին, իսկ եթե թերահավատ ես երկնային արքայություն [մտնելուդ հանդեպ], ապա ուրեմն՝ արժանի չես Խորհուրդի սրբությանը։ Քանի որ հնարավոր չէ սուրբ Խորհուրդին արժանի լինել, իսկ արքայությանը՝ ոչ, որովհետև երկուսին էլ միևնույն սրբությամբ ենք արժանի լինում։*

Թեև ոմանք խղճմտանքի պատճառով չեն հաղորդվում, սակայն կեղծավորելով մնում են [եկեղեցու] ներսում՝ դրսում եղողներին կարծել տալով, թե հաղորդվողների մեջ են։ Քանզի բոլոր նրանք, ովքեր արժանի չեն Խորհուրդին, [արժանի չեն] նաև ներսում մնալու, աղոթքների և հաղորդության, այլ՝ դուրս ելնելու անարժանների հետ։ Մի՛ կեղծավորիր՝ արժանավորի նման ներսում մնալով և անարժանների նման չհաղորդվելով։ Ինչո՞ւ ես արհամարհում ահավոր և մեծ Խորհուրդը. չգիտե՞ս, որ երբ Սուրբ Խորհուրդը սուրբ սեղանին է ելնում, այնժամ ի վերուստ բացվում է երկինքը, և Քրիստոս իջնելով՝ հասնում է այնտեղ, հրեշտակների զորքերը ծավալվում են երկնքից երկիր և բոլորում են սեղանի շուրջը, ուր տերունական ահավոր Խորհուրդն է, և բոլորը լցվում են Սուրբ Հոգով։ Այնժամ խղճմտանք ունեցողները արժանի չեն հաղորդվելու այդպիսի Խորհուրդին, մինչև որ ապաշխարությամբ չուղղվեն։ Լսի՛ր քարոզչի ձայնը. «Ոչ ոք երախաներից[1]*, ոչ ոք թերահավատներից և ոչ ոք ան-*

[1] *Երախա* այստեղ նշանակում է անկնունք, որ մեծ տարիքում պիտի մկրտուի, նոր հավատի եկած։

հույսներից, ովքեր պատրաստ չեն սրբությամբ», նրանց դուրս է ուղարկում և ներսում մնացողներին ասում է. «Նայեցե՛ք ձեր անձերին և քննեցե՛ք ձեր սրտերը. թող ոչ ոք մեղքով, նենգությամբ, խորամանկությամբ, պատրանքով, երկմտությամբ և թերահավատությամբ չմոտենա՛», որովհետև Խորհուրդի սրբությունը վայել է սուրբերին ու անարատներին։ Եվ այս լսելով՝ չենք դողում ու սոսկում ահավոր ու մեծ Խորհուրդից, որից սարսափում են սերովբեները, իսկ քերովբեները չեն համարձակվում մերձենալ, հրեշտակներն ու հրեշտակապետերը սոսկում են դողալով, և վերնային բոլոր զորությունները հիացած սարսում են։ Իսկ նա, ով հանցավոր խղճով մոտենա նրան, որքա՜ն սաստիկ տանջանքով պիտի մաշվի, ինչպես չոր ճյուղ, որ հրին հպվելով՝ այրվում ու ոչնչանում է, քանի որ փոքր բան համարելով Քրիստոսի մարմինը՝ անարգեց այն։

Նաև իբրև լոկ հացի մի՛ նայիր և [լոկ] իբրև գինի մի՛ համարիր և տես, որովհետև սուրբ Խորհուրդի ահավորությունը տեսանելի չէ, այլ իմանալի զորություն է այն։ Քանզի Քրիստոս [սուրբ] Խորհուրդի և մկրտության մեջ տեսանելի ոչինչ չավանդեց մեզ, այլ՝ իմանալի։ Տեսնում ենք ջուր, բայց հավատում ենք աստվածային այն խոսքին, որ ասում է, թե՝ «Սա իմ մարմինն ու արյունն է, ով ուտի իմ մարմնից և խմի իմ արյունից, նա կբնակվի իմ մեջ, և ես՝ նրա մեջ։ Եվ վերջին օրը ես նրան հարություն առնել կտամ» [Հովհ. Զ 55, 57]։ *Եվ մենք ճշմարիտ հավատով հավատում ենք, որ Քրիստո՛սն է [սուրբ] սեղանի վրա. Նրա՛ն ենք մոտենում, Նրա՛ն ենք տեսնում, Նրա՛ն ենք շոշափում, Նրա՛ն ենք համբուրում, Նրա՛ն ենք մեր ներսն ընդունում և դառնում մարմին, անդամ և որդիներ Աստծու։*

Արդ, նա, ով այսպիսի հավատով չի հավատում և չի ընդունում, որ Աստծու Որդու մարմինն է այն, հեռու է

Աստծու օգնությունից, հեռու է Սուրբ Հոգու շնորհներից, հեռու է մեղքերի թողությունից և հավիտենական կյանքից, չի ակնկալում հարություն և փրկության հույս չունի, զուրկ է քրիստոնեական հավատքից, որով՝ Քրիստոսի արյան հեղումով, մեզ փրկություն եղավ։ Եվ արդ, ոչ ոք թող խղճմտանքով չմոտենա՛ Նրան, ոչ ոք թող թերահավատությամբ չմոտենա՛ Նրան, ոչ ոք թող անտարբերությամբ չմոտենա՛ Նրան, այլ ճշմարտապես թող հավատա, որ մեծ ու ահեղ խորհուրդի ժամանակ եկեղեցին երկինք է դառնում, Խորհուրդի սեղանը՝ փառքի աթոռ, որի վրա իջնում և բազմում է Քրիստոս, որ միշտ բաշխվում է բոլորի փրկության համար։

Եվ արդ, ո՛վ մարդ, նայի՛ր քեզ և տե՛ս, թե որտե՞ղ ես, Ո՞ւմ ես տեսնում, Ո՞ւմ ես համբուրում և քո ներսն ընդունում. երկնային զորությունների հետ ես, հրեշտակների հետ օրհնում, սերովբեների հետ բարեբանում ես, Քրիստոսի՛ն ես տեսնում, Քրիստոսի՛ն ես համբուրում, Քրիստոսի՛ն ես առնում ու ճաշակում և Սուրբ Հոգով լցված և աստվածային շնորհներով պայծառացած՝ զորանում հանապազ։ Ուստի և դուք՝ քահանանե՛ր և սպասավորնե՛ր՝ սուրբ Խորհուրդի մատակարարնե՛ր, ահո՛վ մոտեցեք, երկյուղո՛վ պահեցեք, սրբությա՛մբ սպասավորեցեք և զգուշությա՛մբ մատակարարեցեք. արքունական գանձ ունեք, մեծ երկյուղով զգուշացե՛ք պահպանել, քանզի ձեզ դաժան տանջանքներ են [սպասում], եթե գիտեք մեկի չարագործությունները, և նա եկած լինի և հանդգնի մոտենալ Քրիստոսի սուրբ մարմնին, իսկ դու վախենաս խրատել, մերժել ու հանդիմանել նրան, այլ ծուլության ու երեսպաշտության պատճառով Քրիստոսի սուրբ մարմինը բաշխեք անօրեններին ու անարժաններին, ինչպես շներին ու խոզերին եք նետում, ինչպիսի՛ ներում ու թողություն պիտի ունենաք, որքա՛ն պատիժ-

ների ու սարսափելի տանջանքների պիտի մատնվեք, որ տերունական մարմնի մատնիչներ ու հանցապարտներ եղաք։ Ահա Քրիստոսի համար եք իշխում, Քրիստոսի համար եք կերակրվում, իսկ Քրիստոսին անօրեններին եք մատնում և անօրենների պիղծ վարքով շարշարում։

Արդ, նայի՛ր քո անձին, ո՛վ քահանա, և ճանաչի՛ր ինքդ քեզ՝ թե որն է քահանայությանդ գործը, և ինչ գործ ունես ստացած։ Ո՛չ ժողովրդիդ սերմնացանն ես, ո՛չ նրա արտը հնձողն ու կալսողը, այլ՝ կարգվեցիր ուսուցանելու և խրատելու, մերժելու և հանդիմանելու։ Ա՛յդ է քահանայության գործը և ամենօրյա պարտականությունը,որովհետև այդպիսի պատվով պատվվեցիք և իշխում եք բոլորին այն բանի համար, որ քննեք այնպիսիներին և հանդիմանելով մերժեք։ Իսկ այն, որ չգիտեն քահանաները, նրանք առավել դաժան տանջանքների են պարտական, ինչպես Պողոսն է ասում. «Ով ուտում և խմում է անարժանորեն, պարտական պիտի լինի Տիրոջ մարմնին ու արյանը» [տես Ա Կորնթ. ԺԱ 27]: *[Առաքյալը] շատերին է խմեցնում դատաստանի դատապարտությունը, չարաչար ախտերով ու հիվանդությունների դառնությամբ հեռացնում այս աշխարհից, ինչպես որ ասում է.* «Տիրոջ արյունին անարժանորեն հաղորդվելու պատճառով ձեր մեջ շատ հիվանդներ ու ցավագարներ կան, և նաև շատ են նրանք, ովքեր տարաժամ մեռան» [տես Ա Կորնթ. ԺԱ 29-30]: *Քանզի Խորհուրդին անարժանաբար մոտենալու պատճառով լկվում են չարորակ հիվանդություններից, նույն պատճառով ոմանք խեղանդամ ու անդամալույծ են [իրենց կյանքի] բոլոր օրերում, ոմանք նույն պատճառով հարվածների և անբժշկելի ցավերի մեջ են, ոմանք նույն պատճառով բանտերի ու կապանքների մեջ են մտնում, ոմանք նույն պատճառով անզավակ են ելնում այս աշխարհից։ Տիրոջ մարմնին և արյանը անարժանաբար հաղորդվելու պատճառով բա-*

զում ցասմունք ի հիւթոցս, պտուղների կորուստ, մարդկանց և անասունների տարաժամ մահեր էլ են լինում։

Ուստի և մոտեցեք մեծ երկյուղով. մեծ զգուշությամբ քննե՛նք մեր սրտերը, ծուլության պատճառով հաղորդության համար տոներ չնշանակենք, ([միայն] տոները չնշանակենք), որովհետև ուրբաթ, կիրակի և Պենտեկոստեին և Զատիկներին միևնույն զոհաբերությունն է, և նույն Խորհուրդն է կատարվում, և դու [հաղորդությանը] մոտենալու ժամանակ միայն միտքդ սուրբ պահիր և մի՛ ուշացնիր հաղորդվելդ։ Սուրբ սրտով բազում անգամ մոտենալը հանդգնություն չէ, որովհետև առավել ես ապրեցնում ու նորոգում հոգիդ, իսկ եթե անարժանությամբ ու խղճմտանքով կյանքումդ եթե մեկ անգամ մոտենաս, կորցրեցիր հոգիդ։ Տե՛ս, որ Կայենը մեկ մեղք գործեց և կորավ, մեկ մեղք գործեց Քանանը և կորավ, մեկ հանցանք գործեց Աքաաբը և կորավ, մեկ հանցանք գործեց Հուդան և կորավ, Քրիստոսին սպանողները մեկ անգամ սպանություն գործեցին և կորան։ Դու էլ, եթե քո ամբողջ կյանքում մեկ անգամ անարժանաբար մոտենաս սուրբ Խորհուրդին, սպանեցիր հոգիդ հավիտենական տանջանքների կորստյամբ։

Բայց կասես, թե՝ «Քառասնօրյա պահքի օրերին սրբվելով եմ մոտենում»։ Ի՞նչ օգուտ պիտի ունենաս մեկ անգամ սրբվելուց, երբ կրկին ես աղտոտվում, ի՞նչ օգուտ ունի լվանալը, երբ կրկին ես ցեխոտվում, ի՞նչ օգուտ է շինելը, երբ դարձյալ պիտի քանդես։ Տոնի օրն ես միայն կամենում առողջ լինել ցավերից, իսկ դրանից հետո մաշվել ցավերի մեջ. մեկ օր բժշկվել մեղքերի վերքերից և ապա նույն վերքերն ստանալ ես ախորժում, մեկ օր հեռանում ես դևից և ապա նրանով լցվում հանապազ։ Այսպես են բոլոր նրանք, ովքեր մեկ անգամ հաղորդվում են սուրբ Խորհուրդին, իսկ հետո հանա-

պազ մաշվում մեղքերի մեջ։ Ի՞նչ օգուտ ունի մեկ անգամ հեռանալ սպանողի սրից, երբ հաջորդ օրը նրա ձեռքն ես մատնվելու, և կամ մեկ օր թագավորի հետ սեղան նստել, իսկ հաջորդ օրը մատնվել անողորմ դահիճների ձեռքը։ Այդպես էլ ոչ մի շահ և օգուտ չունի միայն Զատկի տոնին սուրբ սեղանից վայելելը և ապա պիղծ գործերով հեռանալը և մշտապես սատանայի հետ լինելը։ Ի՞նչ օգուտ ունի տոնի օրը թանկարժեք ակներ գտնելը, իսկ հաջորդ օրը դրանք կորցնելը. ոչ էլ տոնի օրը հաղորդվելն է օգուտ, երբ դարձյալ անարժան վարքով կորցնելու ես այն։ Ի՞նչ օգուտ ունի Քրիստոսին մոտենալը, երբ դարձյալ սատանային պիտի հարես։ Ո՛չ մի օգուտ չունի այսօր հրից ազատվելն ու վաղը չարաչար այրվելը, և ո՛չ էլ մխիթարություն է մի օր բանտից ելնելն ու թագավոր լինելը և ապա դատապարտյալների հետ անողորմ տանջանքներ կրելը, և ոչ մի օգուտ չունի Խորհուրդից վայելելը, ապա դատապարտվածների հետ դուրս ելնելը։ Ինչո՞ւ ես կաղում երկու ոտքով և երկու մտքով նեղսրտում. կա՛մ դևերի ծառա եղիր, կա՛մ Քրիստոսի խորհրդակից։ Մի օր սպիտակ ոչխար ես երևում, մի օր՝ սևաթույր այծ, այսօր՝հոգելից Դավիթ, վաղը՝ այսահար Սավուղ, այսօր՝ հնազանդ Պետրոս, վաղը՝ ապստամբ Հուդա, այսօր՝ Քրիստոսի խորհրդակից, վաղը՝ սատանայի կամքը կատարող, այսօր իբրև քրիստոնյա վայելում ես Տիրոջ մարմնից, վաղը անկնունքի պես հեռանում ես Նրանից, այսօր խոստովանողների հետ ես, վաղը՝ ուրացողների հետ դրսում, այսօր հավատացյալների հետ մասնակցում ես Խորհուրդին, վաղը անհավատների հետ դուրս ես ելնում։ Քեզ ի՞նչ կոչեմ, կամ ի՞նչ անվանեմ քեզ. երբեմն գառ ես դառնում, երբեմն՝ գազան, երբեմն լույս ես հագնում, երբեմն՝ խավարով պատվում, այսօր Թագավորից պատիվ ես առնում, իսկ վաղը չես ընդունում և երես

ես դարձնում։ Այդպիսին են նրանք, ովքեր որոշ օրերի հաղորդվում են Խորհուրդին և ապա չմկրտվածների պես երես դարձնելով ելնում։ Եթե արժանի ես Խորհուրդին, միշտ վայելի՛ր համարձակորեն, որ Հոգով լցված, Քրիստոս զգեցած և Քրիստոսին ընդունած լինես, իսկ եթե վարքուբարքովդ անարժան ես, ուրեմն տոն օրերին էլ արժանի չես [հաղորդության]։

Բայց եթե ասես, թե՝ «Քառասնօրյա պահքով սրբվեցի և կամենում եմ մոտենալ սուրբ Խորհուրդին»։ Լավ է, և ես կգովեմ։ Բայց ինչո՞ւ մշտապես չես մոտենում։ «Ձեմ կարողանում, ասում ես, ինձ միշտ մաքուր պահել»։ Արդ, եթե քո մտքում այդպես է, թե՝ «Մի անգամ սուրբ Խորհուրդին հաղորդվեմ և ապա հեռանամ», ապա տոնին էլ արժանի չես [հաղորդվելու], որովհետև չարի խորհուրդներն են քո մեջ։ Ի՞նչ օգուտ ունի Քրիստոսին մոտենալ և չհեռանալ սատանայից,ի՞նչ օգուտ ունի լավագույն դեղը ճաշակելը, երբ ցավը պահում ես քո ներսում, ի՞նչ օգուտ ունի բժշկի մոտ գնալ, երբ չես կամենում ազատվել վերքերից։ Հաղորդվելուց նույնպես ոչ մի օգուտ չես գտնի, երբ չես կամենում մեղքերից հեռանալ, այլ ավելացնում ես դատապարտություն ու տանջանքներ։ Եթե թագավորը լսեր, որ մի իշխան այսօր խորհրդակից է իրեն, իսկ վաղը կհեռանար իրենից և թշնամիներին խորհրդակից կլիներ, մի՞թե նրան կընդուներ խորհրդում. [ամենևին]. այլ կկապեր, կտանջեր ու կսպաներ նրան։ Որքա՜ն ավելի Քրիստոս կդատապարտի և կտանջի նրան, ով այսօր կամենում է Իր հետ տերունական խորհուրդ մտնել և վաղը հեռանալ խորհուրդից և թշնամու կամքը կատարել։ Մի՞թե այսօր մաքուր ես մեղքերից, եթե մտքումդ խորհում ես, թե՝ «Վաղը հեռանամ և իմ անձի կամքը կատարեմ»։ Սա ավելի մեծ չարիք է Աստծու առջև։ Նա, ով խորհում է մոտենալ Քրիստոսի սուրբ մարմնին, իսկ հետո

հեռանալ Նրանից և Աստծու հրամաններից, հենց սա՛ է խղճմտանքով մոտենալը, հենց սա՛ է երկմտությամբ ընդունելը, հենց սա՛ է նենգությամբ հաղորդվելը և պատրանքով, խաբեությամբ ու թերահավատությամբ ճաշակելը։ Բոլոր պղծություններից առավել աղտեղի է, երբ մտածում ես հեռանալ և կրկին նախկին չարիքներին մերձենալ։ Քանզի [առաքյալն] ասում է, թե՝ «Այն մարդը, ով հեռանում է մեղքերից և կրկին դրանց է դառնում, նման է այն շանը, որ վերստին դառնում է իր փսխածին» [տես Բ Պետր. Բ 22]:

Եվ այժմ, այս ամենը իմանալով, արժանավոր լինելով (արժանավորությամբ) երկար ժամանակով չհեռանա՛նք սուրբ Խորհուրդից, ո՛չ էլ անարժանությամբ հանդգնելով՝ մոտենանք ահեղ սուրբ Խորհուրդին, որովհետև անարժաններին՝ նրանց, ովքեր հանդգնում են և խղճմտանքով հաղորդվում), սաստիկ պատիժներ են սպասում։ Պատիժներ են սպասում նաև այն արժանավորներին, ովքեր հեղգանում, ծուլանում և երկար ժամանակ [չեն հաղորդվում]։ Այլ հոգու մեծ երկյուղով զգուշանա՛նք և մեծ փութով փարատե՛նք անգիտության խավարը՝ անիրավ բարկությունը, թշնամանքը, հիշաչար ոխակալությունը հեռո՛ւ վանենք, խորամանկությունը, վրեժխնդրությունը, նախանձը մերժե՛նք, տրտմությունն ու լուռ ցասումը թոթափե՛նք մեզնից, ագահներից, բամբասողներից, հարբեցողներից ու անառակներից հեռո՛ւ փախչենք, նախանձը, ատելությունը, գաղտնի նենգությունը դադարեցնե՛նք, հաշտվե՛նք մեր թշնամիների հետ, սիրե՛նք մեզ ատողներին, ներե՛նք միմյանց հանցանքները, ամբողջ սրտով ծառայե՛նք իրար, հնազանդվե՛նք միմյանց, միմյանց բեռները վերցնենք, սիրե՛նք միմյանց, մեր ընկերոջը մեզնից լավ համարե՛նք, սրբե՛նք մեր սրտերը, խոնարհեցնե՛նք մեր աչքերը, մեր լեզուները դադարեցնե՛նք բամբասելուց, ապաշխարե՛նք մեր մեղքերը,

փարատե՛նք մեր տարակույսները, թոթափե՛նք հիմարությունը և ծուլությունը փութաջանության վերածե՛նք, պահքո՛վ պնդվենք, աղոթքո՛վ աշխատենք, հոժարե՛նք ողորմություն տալ, գործերով առաքինանանք, չարիքից [հեռանալով]՝ մաքո՛ւր դառնանք և հավատով կատարյա՛լ լինենք, որպեսզի այսպես բոլոր առաքինություններով արժանանանք ահավոր և մեծ Խորհուրդին, մեծ փափագով և կատարյալ սրբությամբ վայելենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի ամենասուրբ և կենարար մարմնից ու արյունից։ Նրան փառք և զորություն հավիտյանս հավիտենից. ամեն։

ԻԳ. *Մխիթարության թռղթ վախճանվածների՝ այս աշխարհից [մեկնածների] մասին*

Դու, որ իջնում ես սգիդ խավար խորքերը, նայի՛ր վերին հույսին. փութա՛, փարատի՛ր քեզնից չարի հիմարացնող խորհուրդները, արթնացի՛ր և սթափվի՛ր, հիշի՛ր Աստծու պատվիրանների պատվերները և թոթափի՛ր քեզնից սատանայական տրտմությունը, հիշի՛ր թշնամու հույժ չար հնարքները և խուսափի՛ր նրա նետերից, վախեցի՛ր նրա խորամանկությունից ու աներևույթ թույնից, փախի՛ր նրա դառը վերքերից ու սաստիկ հարվածներից։ Նայի՛ր մտքիդ պղտորությանը և ճանաչի՛ր, որ դրանք թշնամու սերմերն են քո մեջ, վե՛ր կաց, ընկի՛ր Աստծու առջև, որպեսզի փրկվես սատանայի չար խաբեությունից և անօրեն տրտմությունից։

Քանզի երբ սատանան ամբողջովին գերում է մարդու միտքը, նրա վրա տրտմություն և խորհուրդների հուզում է բերում։ Թեև տխրությունը քիչ էլ լինի, նա մարդու պղտորված մտքի մեջ անչափ կարծրացնում է այն, որով և հիմարացնում է նրա սիրտը և թուլացնում է սովորական աղոթքներից և Աստծու երկյուղից։ Մանավանդ երբ որևէ մահվան առիթ է գտնում, [ննջեցյալի] մերձավորների վրա է նետում սգի և տրտմության սաստիկ մեծ բեռները և ներքուստ այրում է նրանց սիրտը, տկարացնում մտքերը, ամբողջովին ապշեցնելով՝ զրկում է մտածելու կարողությունից և թույլ չի տալիս լսելու իրենց մխիթարողների ու սփոփողների խոսքերը, այլ համառելով մնում են սգի և տրտմության մեջ, որովհետև թշնամու ցնորքները սաստիկ թախիծով հիմարեցնում ու ապշեց-

նում են առավել, քան արբեցությամբ, և ամենևին թույլ չեն տալիս նայել Աստծու պատվիրաններին, որ ասում է. «Մահվան օրն ավելի լավ է, քան՝ ծննդյան օրը» (Ժող. է 2)։ Ինչո՞ւ։ Որովհետև ծննդյան օրը սկիզբն է մեղքերի և անօրենությունների, և այն ժամանակից են սկսում մարդու մեջ աճել ցավերը, հոգսերը, տրտմությունները, զրպարտությունները, աղքատությունը, այրիությունը, որբությունը, անզավակությունը և այս աշխարհի նեղությունների ու տառապանքների բոլոր տեսակի չարչարանքները։ Նաև սատանան նրա վրա է հեղում բոլոր տեսակի մեղքերի ախտերի բազմությունները՝ չարչարելով, նեղելով, վիրավորելով նրան թշնամությամբ, գողությամբ, սպանությամբ, բամբասանքով, երդումով, նախանձով, չարակնությամբ, ոխակալությամբ, ագահությամբ, ուրիշներին զրկելով, նենգությամբ, կախարդությամբ և հմայությամբ և անթիվ ախտերի ամբողջ բազմությամբ, որոնց հատուցումը անշեջ հուրն է և մշտնջենավոր տանջանքները։ Իսկ մահվան շնորհիվ մարդը բուժվում և դադարում է այդ ամենից,քանզի թեև արդար վարք չուներ, բայց մեղանչելուց դադարեց, իսկ եթե ուղիղ վարք էր ստացել, ազատվեց մեղանչելու վախից և այս աշխարհի հոգսերից և վերանալով՝ խառնվեց սուրբերի և արդարների բանակներին։

Արդ, այսպիսի լուսավոր կյանքի համար հիմարություն է անառակությամբ և հեթանոսաբար լաց լինելն ու սգալը. Պողոսը նույնպես արգելեց տրտմել՝ ասելով. «Ննջեցյալների համար մի՛ տրտմեք, ինչպես հեթանոսները, որոնք չեն ճանաչում Աստծուն» (Ա Թեսաղ. Դ 12)։ Իսկ որքա՜ն պատիժների պիտի արժանանան նրանք, ովքեր սգում, ողբում ու կոծում են [իրենց ննջեցյալին], որովհետև [այդ ամենն] արգելված է հավատացյալ քրիստոնյաներին, ովքեր լուսավորվեցին սուրբ Ավազա-

նով, որոնց վրա անվանվեց մեծ և ահեղ Երրորդության անունը , ովքեր խաչով կնքվելով՝ Աստծուն նվիրվեցին. ամենևին իշխանություն չունեն Աստծուն նվիրվածներին խայտառակել հեթանոսական անօրենություններով և ո՛չ այտերը ճանկռոտել, ո՛չ մազերը փետել, ո՛չ նվիրյալ գլխին մոխիր ցանել, այլ հարկ է ամբողջովին հեռանալ անօրեն ու սատանայական վայրերից, ողբերից, անօրեն ծեծերից։ Քրիստոնյաներին չի հրամայվում ո՛չ մազերը փետել, ո՛չ այտերը ճանկռոտել, ո՛չ լացուկոծ անել, ո՛չ ծածկոցով փակվել, ո՛չ ուսերը մերկացնել, ո՛չ ճակատը խփել, ո՛չ քուրձ հագնել, ո՛չ մոխիր ցանել և ճչալ և ո՛չ արցունքներով ողողվել, որովհետև այդ ամենը սատանայից են և հեթանոսական [սովորություն], որ կեղծավորաբար և ի ցույց մարդկանց անում են անմիտ կանայք և կռապաշտների գործն են գործում քրիստոնյաների վրա՝ ողբեր ողբալով ու ճչալով, ցավագին ոռնոցներ արձակելով, անհուսորեն իրենց մարմինը ծեծելով վախճանված քրիստոնյայի համար, ում հարկ էր դեպի հավիտենական կյանք ճանապարհել սաղմոսներով, օրհնություններով և պատվված երգերով։

Ինչո՞ւ եք խայտառակ ու անարգ սգով անարգում հոգեկիր և քրիստոսազգյաց մարմինը։ Ինչպե՞ս քրիստոնյա անվանենք նրանց, ովքեր սատանայական մոլորություններով մոլորվեցին մեռյալի պատճառով. այդպես անօրենացածներին դևերն էլ են խառնվում և կոծատեղ մտնում։ Հենց նրանք էլ սովորեցրեցին անհույս կոծելն ու տրտմությունը, լաց լինելն ու սգալը, որպեսզի կոծողներին էլ իրենց հետ գեհենի հրին դատապարտեն։ Իսկ դուք հարկ էր, որ ամաչեիք հրեաներից, հեթանոսներից ու այլ աղանդներից, ովքեր չարախոսում են մեր հավատը և ասում են. «Ո՞ւր է ձեր հարության հույսը, երբ այդպիսի ողբերով, սգով, լացով ու զազրելի խայտառա-

կութեամբ, վայերով ու ձեր մազերը փետելով արյունահան ու արյունահեղ եք լինում, ձեր ճիչերով, ոռնոցներով ու կոծերով ողբում եք քրիստոնյա անվանվածին։

Ինչո՞ւ եք պարծենում, ո՛վ քրիստոնյաներ, դուք ձեր երգերով նման եք հրեաներին ու հեթանոսներին, իսկ օրինավորներիդ սուգն ու տրտմությունը տեսնում ենք, որ առավել է, քան անօրեններինը։ Տղամարդիկ չարաձայն կառանչով, վայերով ու մազերը փետելով՝ խեղդվում, ողբում ու ողողվում են հուսահատ արցունքներով, դիվահարի նման իրենց ճակատն են խփում և անզգամաբար բախում են իրենց կուրծքը այսահարի նման, իսկ կանայք հերարձակ գոռոցներով իրենց այտերն են ճանկռոտում, ստինքներն են կեղեքում, անամոթաբար մերկացած՝ իրենց մազերն են փետում ու կոծում են այսահարի պես, խենթանում են՝ եղինջով, արյունով, մոխրով և պատառոտված հագուստներով։ Այսպիսի խայտառակություններով նրանք ծաղրուծանակի են ենթարկում քրիստոնյաների պատկերը։Այդպիսի բաներ չեն լսվում ո՛չ հեթանոսների, ո՛չ հրեաների և ո՛չ էլ հերձվածողների մեջ, որոնք երբեք չընդունեցին մեռելների հարության հույսը։

Եվ արդ, մենք քրիստոնյաների միջից հեռացնե՛նք այդպիսի անօրինացած սգավորներին և Եկեղեցուց հանելով՝ համարենք երախաների հետ և սգանք նրանց համար, իբրև հեթանոսների, որովհետև այդպիսիներն են արժանի սգի, ողբի, լացի ու մեծ կոծի, որոնք դատապարտվում են գեհենի հրին և անհավատների հետ մաս ունեն, որովհետև անհուսության հեթանոսական չարաչար ախտը Եկեղեցի ներմուծեցին։

Եվ արդ, ասա՛ ինձ, ո՛վ քահանա, ինչպե՞ս ես [Եկեղեցու] ծառայողների ու սաղմոսողների խմբերը մտցնում մերկանդամ խայտառակողների դասերի մեջ. ի՞նչ կա

սրբված ծառայողների և սատանային զգեցած դիվամոլ լացուկոծ անողների միջև։ Ինչո՞ւ ես խառնում օրհնողներին՝ անիծողների, գոհացողներին՝ անարգողների, փառավորողներին՝ հայհոյողների հետ։ Օրենք չէ սատանայական անօրեն ժողովների մեջ հրեշտակական երգեր մտցնել, ո՛չ նրանց դևերի պիղծ մեհյաններում սուրբ աղոթքներ մատուցել և ո՛չ էլ բագինների զոհարաններին պատարագներ նվիրել, քանզի պիղծերը պիղծերի մոտ են հավաքվում, և սուրբերին սրբություններ են վայելում։ Հրեաներն ու հեթանոսները մեկ ժողովուրդ չեն, ո՛չ էլ քրիստոնյաներն ու հերձվածողները, քանի որ նրանք իրար հակառակ ու խափանիչ են, իսկ դու, խառնելով իրար, միավորում ես, և նույն խմբում առաքում եք օրհնություններ և անեծքներ։ Կոծողները [Աստծուն] բարկացնում են անօրեն անառակությամբ, իսկ [Եկեղեցու] ծառայողները աղոթքներով ու սաղմոսներով բարեխոսում են [Աստծու առջև]։ Երբ վախճանվածի հարազատները անօրեն սգով ու լացուկոծով անարգում ու բարկացնում են Աստծուն, ինչո՞ւ ես աղաչում, խնդրում ու բարեխոսում վախճանվածի մեղքերի թողության համար. [Աստված] ո՞ւմ լսի, կամ ո՞ւմ ընդունի։ Եթե մտահոգվում ես ննջեցյալի համար, հիշի՛ր նրան եկեղեցուդ մեջ և քո աղոթքներում աղաչի՛ր Աստծուն. իզուր է և վայել չէ սուրբ Եկեղեցու պաշտոնյաներին խառնվել լացուկոծ անողների սատանայական պիղծ խմբի մեջ՝ ի տես անամոթ, հերարձակ, երեսները ճանկռոտած ու գլխներին մոխիր ցանած կանանց, որոնք եթե վախճանվածի թշնամիները լինեին, կարող էին նույնքան տրտմեցնել և չարիք անել նրան, որքան անում են այդ ժամանակ ննջեցյալի հոգուն։ Նրանք չլսեցին մարգարեի խոսքը, որ ասում է. «Դարձի՛ր, հոգի՛ իմ, դեպի քո հանգիստը, որովհետև Տերը բարիք արեց քեզ» (Սաղմ. ՃԺԴ 7)։ *Տերը բարերարություն է ցույց տալիս մահ-*

վան օրը, իսկ դու լաց ես լինում, կոծում ու ողբում ես դառնապես։ Ահա մարգարեն քեզ ասում է. «Վա՜յ նրան, ով չարիքը բարիք է անվանում, իսկ բարիքը՝ չարիք» (Ես. Ե 20). քանզի չար է մեղավորի կյանքը. ավելի ու ավելի է մխրճվում մեղքերի մեջ, և բարի է նրա մահը, որովհետև դադարում է մեղանչելուց։

Բայց կասես, թե՝ «Եթե մնար, թերևս կապաշխարեր, կաղաչեր, ողորմություններ կաներ և արտասուքներով կհաշտեցներ Աստծուն»։ Այդպիսի բաներ մի՛ մտածիր և անգետ մի՛ կարծել տուր Ամենագետին, Ով «չի կամենում մեղավորի մահը» (Եզեկ. ԺԸ 23)։ Սրտագետ Աստված գիտեր, որ նա չի ապաշխարելու, և մահը իբրև ողորմություն է պարգևում նրան, որպեսզի դադարի առաջիկա մեղքերը գործելուց։ Իսկ արդարի մահը ամբողջովին ցնծություն և ուրախություն է՝ փոխվել այս աշխարհի մեղսասեր ու սին հոգսերից և համբել ու զգուշութեամբ պահել իր առաքինության վարձքի գանձերը, որ ամբարեց ու տարավ իր հետ։ Իսկ եթէ փոքր-ինչ մեղադրվել է, օգնենք նրան՝ տնանկներին գթալով, յիշենք նրան [Սուրբ Պատարագի] ահավոր Խորհուրդի ժամանակ, նրա համար ողորմություններ անենք. այդ ամենը վարձք են բարերար Աստծուն, Ով բարերարություն է անում վախճանվածին, ինչպես որ Ինքը գիտի։ Եվ այժմ, այս լսելով, փարատի՛ր թանձրամած սուգդ ահեղ Օրվա հարության հույսով և ամբողջովին հեռո՛ւ վանիր քեզնից սուգդ և տխրությունդ, որպեսզի քրիստոնյա կոչվես, ուրախությամբ սթափվի՛ր, ակնկալի՛ր հավիտենական փափագելի կյանքը և մխիթարվի՛ր նրանով, որ քո վախճանվածին չպատահեց սոսկալի պատիժներով մահ։

Քանզի շատ են չարաչար մահերը. մարդիկ տարաժամ մեռնում են հանկարծակի որոգայթներից։ Դու մխիթարվի՛ր նրանով և գոհացի՛ր Աստծուց, որ քո [հարազատը]

խաղաղությամբ վախճանվեց իր անկողնում։ Դաժան է նրանց մահը, ովքեր վախճանվում են գետերում, քարերով ծեծվում ու պատառոտվում են. դու մխիթարվիր և գոհացի՛ր Աստծուց, որ քոնը քո գրկում վախճանվեց և ողջերին մխիթարական կտակ թողեց։ Դաժան է նրանց մահը, ովքեր օձերի թույնից են մեռնում, կամ չարաժանիք գազանները կտոր-կտոր են անում նրանց, և ոչ ոք չի լսում նրանց վերջին խոսքը և ոչ ոք չի տեսնում նրանց ձեռքերն ո ոտքերը։ Իսկ դու մխիթարվիր նրանով և գոհացիր Աստծուց, որ քոնին դու քո ձեռքով թաղեցիր և լսեցիր նրա վերջին խոսքը։ Չար է նրանց մահը, ովքեր մեռնում են պատերազմների ժամանակ և տեսնում են շողացող սուրը. ողջ-ողջ խավարն է պատում նրանց աչքերը, թշնամին դիաթավալ անելով՝ նրանց գիշատիչ գազաններին առջև է նետում։ Իսկ դու մխիթարվիր նրանով և գոհացիր Աստծուց, որ քոնը հիվանդացավ անկողնու մեջ և պատվով Աստծուն նվիրվեց։ Չար է նրանց մահը, ովքեր իրենց մեղքերի պատճառով դահիճների ձեռքը մատնվեցին, և նրանց մարմինները ամոթալի կերպով փայտի վրա ողջ-ողջ հոշոտեցին ու պատառոտեցին ագռավներն ու անգղները։ Իսկ դու մխիթարվիր և գոհացիր Աստծուց, որ քոնը գոհությամբ հիվանդացավ, խոստովանությամբ մահացավ և ողջույնի համբույրով իր հայրերի գերեզմանում դրվեց։ Չար է նրանց մահը, ովքեր լկվեցին դևերից և անզգա դառնալով՝ իրենց մարմնի անդամները կերան, դաժան ձեռնակապերով բանտ նետվեցին և սովամահ լինելով՝ մեռան։ Իսկ դու մխիթարվիր և գոհացիր Աստծուց, որ քոնը հանգիստ հիվանդացավ, օրհնությամբ վախճանվեց, պատանքով պատվեց, սաղմոսներով հուղարկավորվեց, քահանայական աղոթքներով ու պատարագներով երկինք առաքվեց և հանապազ օրհնվում և հիշվում է իր հիշատակը կատարողների կողմից։

Արդ, ո՞վ կունենա այնքան ապաշնորհ ու անհասկացող միտք, որ այս ամենն հիշելով՝ մեծապես չմխիթարվի և անդադար Աստծուց չգոհանա այն բանի համար, որ իր ննջեցյալը այդպիսի փառքով ու պատիվներով կանչվեց երկինք, որտեղ գտնվում են բոլոր տիեզերաժողովները, արդարների բանակները, սուրբերի գնդերը, մարգարեների երամները, առաքյալների դասերն ու մարտիրոսների անթիվ հույլերը, պայծառազարդ խորանները, լուսեղեն բնակարանները, մշտնջենավոր վայելչությունները, փափագելի դրախտը, անանց բարիքները, անտրտում ուրախությունները, անծերանալի երիտասարդությունը, անխախտելի առողջությունը, սուրբ սերը, ցանկալի տեղը, փափագելի կյանքը, հոգևոր կերակուրների անհագ ցանկությունը, հրաշալի հրճվանքը, գգվանքների գգվանքները, փափկության սփոփանքը և բոլոր ընտրյալների հոգևոր հանգիստը, որոնց հետ նաև քո վախճանվածը ուրախությամբ պիտի հանգստանա։

Եվ արդ, դու պետք է ամենայն ուրախությամբ մխիթարվես, որ նա երկինք թռավ, մարդկանցից հրեշտակայինի փոխվեց, մահվանից կյանք ընկավ, խավարից դեպի լույս ձգվեց, աղքատությունից թագավորության կոչվեց, ծառայությունից՝ դեպի ազատություն, հոգնությունից՝ դեպի հանգիստ, հոգսերից՝ դեպի անհոգություն, մեղքերից՝ դեպի արդարություն, հողեղեններիս միջից հոգեղենների մոտ փոխվեց և հրեղեններին դասակից եղավ։ Արդ, դու այդ ամենով մխիթարվի՛ր, եթե հարության հույս ունես, նաև մտածի՛ր, որ մահն ամբողջ աշխարհի ճանապարհն է, և բոլորս գնալու ենք այդ ճանապարհով։ Ադամը, Աբելը, Սեթը, Նոյը և բոլոր արդարները մահացան, որով պետք է և դու մխիթարվես։ Աբրահամը, Իսահակը, Հակոբը, Մովսեսը և Դավիթը՝ Աստծուն տեսնողները, և արդար ու աստուածախոս բոլոր նահապետները

մահացան, որով պետք է և դու մխիթարվես։ Ահա բոլոր սուրբ և արդար թագավորները մահացան, որով պետք է և դու մխիթարվես։ Ահա և մարգարեները, առաքյալները, մարտիրոսներն ու սուրբ կույս Աստվածածինը մահացան, որով պետք է և դու մխիթարվես։ Ահա և Քրիստոս՝ Աստծու Որդին, մեր փրկության համար մահացավ, որպեսզի մեզ անմահացնի անմահ կյանքի մեջ, որի համար պետք է գոհանալ և մխիթարվել բոլոր արդարների հարության հույսի նորոգությամբ, որոնց հետ նաև մենք պիտի հարություն առնենք և մեր վախճանվածներին ուրախությամբ ընդունենք։

Արդ, լսեցե՛ք Պողոսին, որ մխիթարում է մեզ՝ ասելով, թե՝ «Ննջեցյալների համար մի՛ տրտմեք, ինչպես հեթանոսները, որոնք Աստծուն չեն ճանաչում» (Ա Թեսաղ. Դ 12)։ *Լսի՛ր նաև մարգարեին, որ ասում է.* «Երեկոյան լացը կդադարի, իսկ առավոտյան ուրախություն կլինի» (Սաղմ. Լ 6)։ *Արդ, եթե քրիստոնյա եք անվանվում և հավատում եք հարությանը, մխիթարեցե՛ք ձեզ մարգարեական և առաքելական մխիթարությամբ, որովհետև սուգը անհույսներինն է, ոչ թե իմաստուններինն ու հավատացյալներինը, ովքեր սպասում են բոլոր ննջեցյալների նորոգմանը, որովհետև քրիստոնյայի մահը կորստյան համար չէ, այլ՝ հավիտենական կյանքում նորոգության, այդ պատճառով ենք մեր ննջեցյալների հոգին սաղմոսներով ու օրհնություններով ուղարկում հավիտենական կյանք, իբրև մի ընծա՝ Աստծուն նվիրում։ Ուստի և քրիստոնյան չպետք է սգա և լաց լինի մեռելների վրա. թող հրեաները լաց լինեն, և թող հերետիկոսները ողբան, թող սգան ու կոծեն բոլոր թերահավատներն ու հերձվածողները, որովհետև նրանք են արժանի լացի ու ողբի, հեծեծանքի ու մեծ կոծի, իսկ մենք մխիթարվենք հավիտենական կյանքի նորոգությամբ։*

Ուստի և վերացրե՛ք ողբը, հեռացրե՛ք տրտմությունը, դադարեցրե՛ք արտասուքները, արգելե՛ք լաց լինողներին, լռեցրե՛ք լացի ու վայերի կառաչյունը, արհամարհեցե՛ք լաց լինող եղերամայրերին, անարգեցե՛ք մազերը փետողներին, վարսերը կտրողներին, հալածեցե՛ք իրենց արյունը հանողներին և իրենց վրա մոխիր ցանողներին, նախատեցե՛ք իրենց մերկացնողներին ու խայտառակվողներին։

Հեռանա՛նք անօրեն մոլորությունից, հեռանա՛նք հեթանոսական ամբարշտությունից, ամբողջովին դո՛ւրս նետենք սատանայական սուգն ու անհույս սուգը, որպեսզի ապրենք քրիստոնեաբար և վախճանվենք աստվածպաշտությամբ, արժանի լինենք հանգստյան և երկնային արքայության մեր Տիրոջով, Որին փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։

ԻԴ. *Ողբեր*

Խոստովանողնե՛ր, շտապեցե՛ք
Փրկվել ջանալ մեր օրերում,
Քանզի ահեղ Օր կա մեր առջև՝
Ահեղ ատյան և հուր անշեջ։

Այժմ իսկ լաց լինենք և ողբանք
Եվ խնդրենք թողություն,
Որ փրկվենք անշեջ հրից,
Որ սպառնում է մեղավորներին։

Միշտ, հանապազ արտասվենք.
Գորովագին պաղատանքով,
Աղերսալի հառաչանքով
Հաշտեցնենք մեղքերը Քավողին։

Ընկնենք Նրա առջև՝ խոստովանելու,
Այն ամենն, ինչ արեցինք ծածուկ այստեղ,
Հայտնելու, ասելու և ցույց տալու
Բազմությունները գաղտնի մեղքերի։

Քանզի այնտեղ՝ աշխարհատես հրապարակում,
Քննվում են մեր խորհուրդները,
Ցույց են տրվում մեր հանցանքները,
Հայտնվում են մեր սրտի գաղտնիքները։

Ես զարհուրում ու դողում եմ,
Երբ լսում եմ ձայնը փողի,

Որ տագնապով կանչում է ազգերին
Մեծ և ահեղ Օրվա ատյանին։

Քանզի չարաչար մարտնչեց ինձ հետ
Ամենամեղ սատանան
Եվ խիստ ծանր վիրավորած՝
Հանեց գցեց անմահ փառքից։

Դառը չարիք նա պատրաստեց՝
Տարտարոսը գեհենի,
Որ մեղավորիս սպառնում է՝
Այրել հնոցում կայծակների։

Դուք, որ ունեք սրբության սեր,
Ողբալով ինձ համար արտասվեցեք,
Ջերմագութ պաղատանքով
Ինձ համար թողություն խնդրեցեք։

Քրիստոսասերնե՛ր իմ սիրելի,
Օգնեցե՛ք ինձ՝ վիրավորիս,
Եվ գորովով մեծ, «ողորմի՛ր»ով
Տիրոջն աղաչեցեք ինձ համար։

Հառաչանքով աղաչում եմ ձեզ,
Ողբակցեցե՛ք մեղավորիս,
Պաղատանքով լա՛ց եղեք ինձ հետ՝
Ձայնակցելով իմ վշտին։

Կական բարձրացնելով՝ ինձ ողբացե՛ք,
Եվ ողբի ձայն արձակեցեք,
Քանզի չարաչար բռնվեցի
Չար նետերից սատանայի։

Թշնամին ինձ միգապատեց
Իր խավարին ցանկություններով,
Սուր հանելով՝ վիրավորեց.
Որից, աղաչո՛ւմ եմ ձեզ՝ բժշկեցե՛ք։

Սուրբ հավատի մանկունք, ո՞ւր եք,
Ողորմեցե՛ք ինձ՝ նեղվածիս,
Եվ գթագին պաղատանքով
Մեղքերը Քավողին աղաչեցեք։

Ձեր աղոթքին եմ ապավինում,
Եվ խնդրում եմ ինձ թողություն,
Քանզի զանազան մեղքերով եմ մեղանչել
Եվ չեմ կարողանում ապաշխարել։

Զարհուրել եմ ու դողում եմ,
Երբ հիշում եմ, որ մեծամեղս
Այն երկիրը պիտի անցնեմ
Եվ փառքի Տիրոջը պիտի տեսնեմ։

Քրիստո՛ս գթած և ողորմած,
Գթա՛ և ինձ՝ բազմամեղիս,
Որ ես գտնեմ ողորմություն,
Երբ գումարվի մեծ ատյանդ։

Քանզի ահեղ և սոսկալի
Օրն է սպասում մեղավորիս,
Որ քննում է գաղտնիքները սրտի
Եվ հայտնում ծածուկ խորհուրդները։

Արդ, աղաչում եմ, մարդասե՛ր Տեր,
Այն Օրը ինձ մի՛ պահանջիր,

Մի՛ մատնիր չար տանջանքների
Եվ անշեջ հրի կայծակների։

Որ փառք տամ և օրհնեմ Քեզ՝
Հորը, Որդուդ և Սուրբ Հոգուդ,
Որ օրհնյալ ես միշտ՝ հավիտյանս,
Փառավորված հավիտյանում։

Նրա աղոթքը[1]

Ո՛վ, որ անեղ, անսկիզբ ես և Արարիչը բոլոր արարածների, Ում ո՛չ երկիրը տանել կարող է, և ո՛չ էլ երկինքը՝ բովանդակել։ Այլ վեր ես երկնքից և ծագերից անդին, և բոլոր երևացողներս ու աներևույթները Քո մեջ ենք բովանդակված։ Դու ես տիրում ամեն բանի, և Քո հրամանն է կառավարում բոլոր արարածներին. Դու ես աղքատացնում և Դու ես հարստացնում, Դու ես հարվածում և Դու ես բժշկում։ Դու ես սատանայից վտանգվածիս Սփոփողն ու մեղքերով հիվանդացածիս Առողջացնողը, Դու ես աղոթքներն Ընդունողն ու խնդրվածքները Կատարողը։

«Խոնարհեցրո՛ւ, Տե՛ր, քո ականջը և լսի՛ր Քո ծառային» [Սաղմ. ՁԵ 1], *Տե՛ս, Տե՛ր, իմ տառապանքները և գթությա՛մբ ընդունիր ինձ,* «Տե՛ր, քո զայրույթով մի՛ հանդիմանիր ինձ և քո բարկությամբ ինձ մի՛ խրատիր» [Սաղմ. Զ 2]։ *Որովհետև գթությունների Աստված ես, գթա՛ և ինձ՝ մեղավորիս, որ բազում հեծեծանքներով ու պաղատանքներով խնդրում և աղաչում եմ Քեզ։ Քանզի ծանր վիրավորվել եմ մեղքե-*

[1] Այս աղոթքի սկզբից ս. Եփրեմի անունով մի մաս կա «Հարանց վարք»-ում։ Սուրբ Մեսրոպի անունով Աղոթագրքերում կա նաեւ չորս այլ օրինակ՝ միայն կիսով չափ նման երկաթագիր օրինակին։

րով և ցավագնել անօրենությամբ, չարաչար ախտերով հանցավոր և պիղծ խորհուրդներով ամբարիշտ եմ դարձել, մեղավոր հոգով՝ աղտեղի և մեղքերի մեջ թավալված մարմնով զազրելի եմ դարձել. ամոթահար երեսով եմ կանգնած Քո առջև և ամոթահար եմ ինձ նայողների առջև։

Արդ, Դու, Տե՛ր, քաղցր ու ներող, մեղավորների համար համբերող կոչվեցիր, որ ասացիր. «Անօրենը եթե ետ կանգնի իր գործած անօրենություններից, չեմ հիշի անիրավությունները, որ նա գործեց» [Եզեկ. ԺԸ 21-22]: *Եվ այժմ ահա մեղավոր ծառաս եկել ընկել եմ Քո առջև և աղաչում ու խնդրում եմ Քեզնից ողորմություն. մի՛ հիշիր իմ բազում մեղքերը, մի՛ հանդիմանիր իմ անօրենությունները, եթե իմ կամքով և եթե ակամայից մեղք գործեցի, եթե խոսքերով, գործերով և անվայել մտածումներով պղծվեցի, եթե անգիտությամբ, ծուլությամբ և մոռացությամբ գործեցի, որովհետև Դու, Տե՛ր, սովոր ես գթալու և ողորմելու, թողություն շնորհելու բազում մեղքերին և քավելու անօրենության բոլոր հույլերը։ Որ սրբեցիր պոռնիկներին, ազատեցիր ավազակին, արդարացրիր մաքսավորին և թեթևացրիր մեղքերով ծանրաբեռնվածներին։ Քանի որ ողորմած Աստված ես և գթում ես մեղավորներին, ովքեր հավատով դիմում են Քեզ, գթա՛, Տե՛ր, նաև ինձ՝ բազմամեղիս, և փրկի՛ր ինձ թշնամու թույնից։ Ցրի՛ր, Տե՛ր, իմ՝ [այս ու այն կողմ] հածող աչքերի խավարը և բա՛ց արա իմ՝ անվայել բաներ լսելուց խլացած ականջները, բժշկի՛ր բամբասանքներից վիրավորված լեզուս և սրբի՛ր իմ սիրտը չար խորհուրդներից։*

Քեզ եմ ցանկանում, բարերա՛ր Տեր, և փափագում եմ իմ գթած Հորը. գթա՛ մեղավորիս և ընդունի՛ր, ինչպես անառակ որդուն։ Հագեցրո՛ւ իմ քաղցը Քո սիրով և առատաբուխ շնորհովդ լցրո՛ւ իմ ծարավը, քանզի միշտ

առ Քեզ մոտենալ եմ կամենում և Քեզ նայել եմ բաղձում հարաժամ, Քո շնորհներն եմ փափագում մշտապես և հանապազ Քո ողորմությանն եմ կարոտում։ Պատժվածների հետ մի՛ մեղադրիր և ատելիների հետ մի՛ դատապարտիր, այլ ընդունի՛ր Քո կամքը կատարողների և պահպանի՛ր Քո պատվիրանները պահողների հետ։ Քանզի եթե առանց ներելու քննես հանցանքներս, զուր է ինձ համար հարության խոստումը, որովհետև գեհենի կրակն է իմ ժառանգությունը։ Քանզի եթե իմ մեղքերն ու անվայել մտքերը դատես, ապա ես երանի կտամ որովայնում չեղածին, այլ նայի՛ր իմ խնդրանքներին ու պաղատանքներին և Քո ողորմությունից մի՛ հեռացրու ինձ, որ բաղձում եմ Քո ողորմությունը և Քո գթությանն եմ կարոտում, որովհետև միշտ պղծեցի իմ մարմինը և հանապազ աղտեղի դարձրի հոգիս ո՛չ միայն չարաչար վարքով, այլ նաև զազրելի խորհուրդներով։

Եվ այժմ լվա՛ մեղքերից և մաքրի՛ր ցեխաթաթախ տիղմից։ Քեզ խնդրեցի և Քեզ եմ աղաչում. կատարի՛ր իմ փափագը. խառնի՛ր ինձ սուրբերի դասերին և արդարների ժողովին՝ նրանց, ովքեր հարաժամ վայելում եմ Քո բաղձալի տեսությունը։ Համարձակ երեսով չեմ հայցում բարեգործի պես, այլ աղերսանքով խնդրում եմ՝ իբրև պարտապան և բազմամեղ։ Ո՛չ ...[1] *ունենալով համարձակվում եմ, իբրև մաքուր, այլ Քո մաքրությամբ իմ գարշահոտությունը մաքրել եմ աղաչում։ Քանզի անթիվ են մեղքերիս բազմությունները և անօրենությանս հույլերը հանապազ խեղդում են ինձ, մշտապես ճմլում են սիրտս և հալում ու մաշում են մարմինս ու ոսկորներս։ Այն պատճառով եմ համարձակվում հանապազ պաղատել, աղաչել ու խնդրել, որովհետև Դու իմ Հայրն*

[1] Օրինակում՝ մեկ անընթեռնելի բառ։

ու Տերն ես, իմ Արարիչն ու Ստեղծողը. ո՞ւմ մոտ գնամ և կամ ումի՞ց օգնություն խնդրեմ։ Քո հանդեպ մեղանչեցի և Քո առջև եմ խոստովանում ու Քեզ եմ աղաչում. մի՛ զրկիր ինձ Քո ողորմությունից և մի՛ գցիր Քո երեսից։ Խնդրում եմ Քեզ՝ բարերար Տիրոջդ ու իմ բազմագութ Արարչիդ, հավիտենական ամոթով մի՛ ամաչեցրու ինձ և այն մեծ Օրը մի՛ դատապարտիր, տիեզերական հրապարակում ինձ մի՛ հանդիմանիր, անողորմ տանջանքովդ մի՛ տանջիր և սոսկալի գեհենովդ մի՛ պատուհասիր։ Այլ փրկի՛ր հրացայտ հնոցներից ու հրեղեն հրահոսան գետերից, չարաժանիք որդերից ու անլույս խավարից, դառը դատաստաններից ու դաժան տանջանքներից, անքակտելի կապանքներից և անդադրում նեղություններից, մշտատև ողբերից ու ատամների կրճտոցից,այլ գթա՛ մեղքերով վիրավորվածիս և բժշկի՛ր անօրենությամբ հիվանդացածիս, ընդունի՛ր, ինչպես այն հայհոյողին ու հալածչին, և ցրի՛ր իմ մեղքերի բազմությունները, սրբի՛ր պղծություններիցս, ինչպես այն պոռնիկին, և արդարացրո՛ւ, ինչպես մաքսավորին։ Ողորմի՛ր ինձ, ինչպես այն քանանացուն, և ների՛ր իմ հանցանքները, ինչպես ավազակինը։ Բնակեցրո՛ւ ինձ սուրբերի դասերում և արդարների՝ [Քո] կամքը կատարողների խորաններում՝ անանց կյանքի վայելչության և անբավ բարիքների ուրախության մեջ մեր Տեր Հիսուս Քրիստոսով, Որին փառք հավիտյան. ամեն։



ԻԵ. *Խրատի [խոսք] զանազան առաքինությունների մասին*

Բոլոր առաքինություններից առաջ խոնարհությունն է, բոլոր ախտերից առաջ փառասիրությունն է։

Առաքինությունների գլուխը սերն է, ախտերի գլուխը իրեն արդարացնելն է։

Աստծու երկյուղը հալածում է բոլոր մեղքերը. ծուլությունը հալածում է Աստծու երկյուղը, իսկ գերությունը հոգուց հալածում է առաքինությունը։

Առաքինությունները չորսն են՝ լռություն, խոնարհություն, Աստծու պատվիրանների պահում և նեղություն։

Չորսն են առաքինությունները, որ պահում են հոգին. բոլորին ողորմություն անել, չբարկանալ, համբերել և զգուշանալ՝ չմոռանալու։ Այս առաքինությունները հարաժամ պետք են. պետք է անդադար իր սրտում ընկնել Աստծու առջև, իրեն միշտ մեղավոր համարել, ոչ ոքի չդատել. այնժամ կդադարեն խորհուրդները։

Չորսն են այս առաքինությունները, որոնք օգնում են երիտասարդ աբեղային. ամեն ժամ խոկալ Սուրբ Գրքերի մասին, տքնել և ձեռքի աշխատանք կատարել, հնազանդ և հպատակ լինել հորը, իրեն երբեք և ոչ մի տեղ առաջ չնետել։

Այս չորս բաների պատճառով են հոգիները պղծվում. առաջին՝ քաղաքում շրջելով և աչքերին պահապան չդնելով, երկրորդ՝ կանանց հետ ծանոթությամբ, երրորդ՝ երկրի պաշտոնյաների հանդեպ սեր տածելով, մարմնավոր խոսակցություններ և դատարկաբանություններ սիրելով։

Չորս բանի պատճառով է լինում պոռնկություն. կուշտ ուտելուց և խմելուց, քնից հագենալուց և անգործ մնալուց, դատարկաբանելուց, կատակել- ծիծաղելուց և հագուստները զարդարելուց։

Չորս բանի պատճառով է միտքը խավարում. ընկերոջը նեղացնելուց, ընկերոջն արհամարհելուց, ընկերոջը նախատելուց և ընկերոջը չարախոսելուց։

Չորս բանի պատճառով են հոգիները խոպան և անպտուղ դառնում. առաջին՝ իր տեղում՝ տանը չմնալուց, երկրորդ՝ ոչինչ չանելուց, երրորդ՝ մարդկորեն զբաղմունքները սիրելուց և չորրորդ՝ երկրի նյութերն ու ագահությունը սիրելուց։

Չորս բանի պատճառով է բարկություն գալիս. իր կամքի մեջ մնալուց, հակառակվելուց, շատերին ուսուցիչ լինելը սիրելուց, իրեն ուրիշներից առավել իմաստուն կարծելուց։

Չորսն են առաքինությունները, որոնք դժվարությամբ է մարդն ստանում, որոնք ունեցողները պահում են բոլոր առաքինությունները. հարաժամ սգալն ու միշտ միայն իր մեղքերը տեսնելը, ոչ ոքի չդատելը, իրեն մեղավորների մեջ դասելը և աչքերի առջև մշապես սեփական մահն ունենալը։

Արդ, նա, ով կամենում է պահել այս առաքինությունները, կարո՛ղ է փրկվել. Աստված զորեղ է՝ պահելու մեզ բոլոր չարիքներից ու փորձություններից, որոնք գալու են ամբողջ աշխարհի վրա, որպեսզի Սուրբ Հոգու միջոցով ողորմություն գտնենք Քրիստոսից։

Պես-պես ախտերի մասին

Աստված արարեց մարդուն և նրան դրեց փափկության դրախտում՝ իր բնության մեջ ողջ ունենալով բոլոր զգայությունները։ Երբ մարդը լսեց նրան, ով խաբեց իրեն, այնժամ առավ բոլոր ախտերը և իսկույն դուրս եկավ իր մեծ ու չքնաղ փառքից, որպեսզի ճանաչի, որ կան ախտեր, որոնք իրեն հեռացնում են Աստծուց, և որպեսզի աղաչի բարերար Աստծուն, որ օգնի իրեն, և ապա միայն կկարողանա իրենից հեռու վանել բոլոր ախտերը։

Մարդու մեջ գտնվող այս բոլոր վերքերն են, որ քակում բաժանում են նրան Աստծուց։ Երանի՜ նրանց, ովքեր իրենց հոգին և մարմինը սրբում են բոլոր ախտերից ու բոլոր պղծություններից, քանզի բանական ոչխար, Աստծուն ընդունելի զոհ են նրանք և լսում են այն ձայնը, որ ասում է. «Բարի և հավատարիմ ծառա, այդ քչի մեջ հավատարիմ եղար, շատի վրա կկարգեմ քեզ, եկ, մտի՛ր քո Տիրոջ ուրախության մեջ» [Մատթ. ԻԵ 21]: *Իսկ նրանք, ովքեր կամենում են կատարել իրենց մարմնի կամքը և չեն կամենում բժշկել իրենց սուրբ առաքինությունների բժշկությամբ, անհրաժեշտ ժամին սուրբ պատվիրանից մերկ կլինեն և կընկնեն արտաքին խավարը, որտեղ սատանան է և կապվածները։*

Պղծությունների պատմուճանները սրանք են՝ պոռնկություն, արծաթասիրություն, չարակնություն, բանսարկություն, նախանձ, փառասիրություն, հպարտություն. սրանք և սրանց նման բաները։ Ի՞նչ է պոռնկությունը՝ ցանկություն, որկրամոլություն, քնից հագեցում, անգործություն, դատարկախոսություն, մարմնի զար-

դարանք, ծաղրանք, անամոթություն, թուլություն, ծուլություն։

Ի՞նչ է արծաթասիրությունը. փողասիրություն, անհավատություն, անհուսություն, անգթություն, անողորմություն, ագահություն, արհամարհանք, անբարի ստություն, ինքնահավանություն և Աստծու պատվիրանների անտեսում։

Ի՞նչ է չարակնությունը. չարակնությունը չարախոսություն է, նախանձ, մարդահաճություն, եսասիրություն, տգիտություն, ստություն և սուտ վկայություն։

Ի՞նչ է բարկությունը. բարկությունը սեփական կամքը պարտադրելն է, հակառակությունը, վեճը, նենգությունը, սուտ գիտությունը, կարճամտությունը, նեղսրտությունը, ձանձրույթը, թշնամանքը մտքից չհեռացնելը, [չարի փոխարեն չարով] հատուցելն ու [վրեժ] առնելը։

Ի՞նչ է նախանձը. նախանձը ատելություն է, ընկերոջ փառքը չտանելն ու ընկերոջը գայթակղելը։

Ի՞նչ է փառասիրությունը. փառասիրությունը անզգամություն է, այս աշխարհը և նրանում եղած ամեն բան սիրելն է, մարդկանց մեջ անվանի լինելը սիրելն է և հանդգնաբար սեփական կամքը կատարելը։

Ի՞նչ է հպարտությունը. հպարտությունը խստասիրություն է, ոչ ոքի հնազանդ չլինելը և իր զորությանը վստահելը, իրեն իմաստուն համարելով՝ մշտապես իր կամքը կատարելը, ընկերոջն արհամարհելը և իրեն իմաստուն կարծելը, իրեն ոչնչի կարոտ չհամարելը։

Այս ամենը գործում են մարդու մեջ, մինչև որ բաժանում են նրան Աստծուց։ Ա՛յս [ամենն] են, որ իր վրա առավ Ադամը, երբ կերավ այն ծառի պտղից և ընկավ մահվան ոտքերի տակ։

ԻԶ. *Թողոթ հմայության, գուշակության և անօրեն կախարդների մասին*

«Քանի՞ թե մեկը իմ գլուխը շատ ջրերի շտեմարան, իսկ աչքերս արտասուքների հորդառատ աղբյուր դարձներ, և գիշեր-ցերեկ դառնապես ողբայի մեր մեղքերը» [տե՛ս Երեմ. Ը 1]: *Որովհետև կորավ երկրից [Աստծուց] երկյուղ ունեցողը, մարդկանց մեջ չկա արդար, մեր երկիրը լցվեց սուտ գուշակություններով, ինչպես նախկինում, և մեր իսկ կամքով իջանք մտանք սատանայի իշխանության տակ։ Քանզի լեզվով խոստովանում ենք, թե ճանաչում ենք Աստծուն, իսկ գործերով ուրանում ենք Նրան։ Աստված ասում է, թե՝* «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ էությամբ և քո ամբողջ զորությամբ» [Բ Օր. Զ 5]: «Էությամբ», *այսինքն՝ պիտի պաշտես և քո Տերն ու Արարիչը պիտի կոչես միայն Նրան, «զորությամբ», այսինքն՝ քո անձի զորությունը նախ պիտի դնես աղոթքների և հոգևոր գործերի մեջ,* «ամբողջ սրտով», *այսինքն՝ ո՛չ հեթանոսների տներում, ո՛չ մարտիրոսների հավաքներում, ո՛չ մեհեաններում և եկեղեցիներում, ո՛չ բախտի և ո՛չ շնորհների համար, ո՛չ խաչի և ո՛չ ճակատագրի, ո՛չ կախարդների և ո՛չ քահանաների, ո՛չ աղօթքի և ո՛չ պահպանության համար թող չլինի այնպես, որ լեզվով խոստովանենք և սրտով չհավատանք, չլինի, թե սրտով հավատանք և լեզվով ուրանանք, չլինի, որ խոսքով պատվենք Աստծուն, իսկ գործերով բարկացնենք, հավատով մեծարենք, իսկ գործերով տրտմեցնենք, այլ մեր ամբողջ սրտով, էությամբ, զորությամբ և մտքով սիրենք Աստծուն և Քրիստոսի անունը կրելով՝ քրիստոնյա [անվանվենք]։*

Իսկ եթե լեզվով Աստծուն անվանում ես Արարիչ, [պարգևներ] Տվող, Փրկիչ և Ապրեցնող, մահվան և կյանքի Իշխան, բայց սրտովդ և անձովդ գնում ես վհուկների, կախարդների, գուշակների և հարցուկների մոտ, գերվում ես գուշակություններով, սնոտիապաշտությամբ և հմայություններով, չե՛ս կարող քրիստոնյա կոչվել, որովհետև հեռացել ես Քրիստոսից և սատանայի լծի տակ ես հնազանդվել, որովհետև լքել ես Արարչին ու Ապրեցնողին և ապավինել ես սատանային, որովհետև եթե իսկապես հավատայիր, որ Աստված է Արարիչը ամեն բանի, ապա [կհավատայիր], որ միայն Արարիչն իշխանություն ունի ապրեցնելու և մեռցնելու, հարվածելու և բժշկելու։ Եվ ո՞վ կհամարձակվեր մոտենալ վհուկներին, որոնք նույնիսկ իրենց անձին չեն կարող առողջություն և անմահություն շնորհել։ Լա՛վ, ցո՛ւյց տուր կախարդներից գոնե մեկին, որ առանց ցավերի ու անմահ եղավ։ Իսկ եթե ասում ես, թե՝ «Հարցուկների մոտ չէ, որ գնում եմ. նա բժիշկ է, և բժշկի մոտ եմ գնում»։ Բժշկի գործն այս է. այրել, կտրել, արյուն հանել և ցավերին համապատասխան դարման մատուցել, այլ ոչ թե հուռութքներով կախարդելն ու սատանայական բարբաջանքներ բարբաջելը, կամ աղը, ածուխն ու ասեղները կարմրեցնելը, երկաթով, ջրով և ուլունքներով կախարդելը, գրերի ծրար մարդու վրա դնելը, և կամ ձկների ու սողունների ոսկորները, բժժանքների ծրարը ձեռքերի, անձի կամ պարանոցի վրա կապելը։

Արդ, ողորմելի՛ և թշվառակա՛ն, ինչո՞ւ ես թողնում Արարիչ և բժիշկ Աստծուն և պահապան խաչը և ապավինում հիմար կախարդներին ու դևերից ապականվածներին։ Լա՛վ տես, թե ի՞նչ է անում չար կախարդը. կանգնում է մեջտեղում և սկսում է կախարդել, և կախարդելու ժամանակ նրան են մոտենում դևերը, երբ մտնում են

նրա մեջ, սկսում է հորանջել. ձախ կողմում կախարդում է, աջ կողմում՝ թքթքում, անարգում է խաչը, թշնամաբար անարգում է Քրիստոսին և չի հասկանում։ Եթե նա ցույց տա իր հուռութքները, մանուկների համար անգամ ծաղրուծանակի ու ծիծաղի առարկա կդառնա։ Եթե ժամանակ ունենայի՝ մեկ առ մեկ նկարագրելու նրա մարմնի վրայի հուռութքները, բոլորի ծաղրին կենթարկեի կախարդի հիմարացած մտքերը,որովհետև կախարդի, թովչի և հարցուկի բոլոր հուռութքներն ու ծրարները սուտ են և ողորմելի, առիթ են գեհենի ու հավիտենական կրակի, և նրանք, ովքեր մոտենում են նրանց, դատապարտվում են գեհենի կրակին և անօրենների հետ մաս ունեն, որովհետև արհամարհում են բժշկության շնորհները. հարկ էր, որ բժշկվեին բժշկության արվեստի շնորհիվ՝ այրելով, կտրելով և իրենց ցավերին դարման առնելով։ Նրանք առավել ևս արհամարհում են շնորհների պարգևները, որովհետև ասում է. «Հիվանդ է ձեզնից մեկը, թող կանչի Եկեղեցու երեցներին, և նրանք նրա վրա թող աղոթք անեն, թող յուղով օծեն նրան Տիրոջ անունով։ Եվ հավատով արված աղոթքը կփրկի հիվանդին» [Հակ. Ե 14-15]։ *Նրանց համար, ում չարչարում է դևը, հրամայեց, որ պահքով, աղոթքով և ամենահաղթ խաչի նշանով հալածեն [դևին]* [տես Մատթ. ԺԷ 20]։ *Իսկ նրանք, ովքեր անարգում են փրկական խաչը, արհամարհում են Քրիստոսի շնորհները և գնում են կախարդների մոտ, որոնք հմայում, ծրարներ, հուռութքներ ու գրեր են դնում նրանց վրա, նրանց մասին Քրիստոս ասում է.* «Անիծյալներ, գնացեք հավիտենական հրի մեջ, չեմ ճանաչում ձեզ» [Մատթ. ԻԵ 41], *որովհետև անում են այն, ինչ Նա չի հրամայում։*

Արդ, եթե ասես, թե նրանք նույնպես քրիստոնյաներ են և Քրիստոսի անվամբ են կախարդություններ անում, նաև, որ Եկեղեցու սպասավորներն ու աբեղաներն էլ են

գիր գրում, լսի՛ր ավետարանչին. «Շատ մարգարեներ, ասում է, այն օրը պիտի ասեն. «Տեր, չէ՞ որ Քո անունով մարգարեացանք և Քո անունով դևեր հանեցինք և Քո անունով բազում զորավոր գործեր արեցինք, մեր առջև նույնպես բաց արա»: *Եվ Տերը պիտի ասի.* «Չեմ ճանաչում ձեզ» [տես Մատթ. Է 22-23], *որովհետև արեցին այն, ինչ Նա չհրամայեց։ Ինչո՞ւ եմ մարգարեների մասին ասում. չէ՞ որ Նրա աշակերտը՝ Հուդան, որ մարգարեներից առավել նշաններ ու բժշկություններ էր անում, չթվվեց առաքյալների հետ, այլ գեհենի խորքերը նետվեց։ Ինչո՞ւ եմ աշակերտի մասին ասում, երբ հրեշտակը չպահեց իր բնակության [վայրը], ուր դրվել էր, այլ անիծվեց, ընկավ, սատանա*[1] *դարձավ և խոտան անունը ժառանգեց։ Արդ, դու, որ ապավինում ես այն բանին, թե նրանք էլ են քրիստոնյաներ և Եկեղեցու սպասավորներ և Քրիստոսի անունով են գրում ծրարների երդումները, ո՛վ անմիտ, որո՞նք են ընդդեմ դևերի երդումները. մի՞թե դրանք պահքը և հավատով աղոթքները չեն հաղթող խաչի միջոցով, որից դողում են դևերի բոլոր բնությունները։ Իսկ գիր պահպանարանները հակառակ են Աստծու պատվիրաններին ու շնորհներին, ինչպես սուտ մարգարեներն էին ժողովրդին շեղում ճշմարիտ մարգարեներից, խափանում էին ճշմարտության խոսքերը և մոլորության էին դարձնում։ Արդ, եթե այն օրը չլսեց սուտն ուսուցանող մարգարեներին, Իր Հուդա աշակերտին հանեց [առաքյալների] գնդից, նաև չխնայեց մեղանչած հրեշտակներին, այլ որպես օրինակ ներկայիս մեղավորների՝ խավարային կապանքներով տարտարոսի մեջ գցեց՝ չսպասելով դատաստանի Օրվան* [տես Բ Պետր. Բ 4], *ապա պետք է իմանալ, որ չի խնայի նաև սրանց, ովքեր ոչ թե հավատով,*

[1] Այստեղ՝ հակառակորդ:

այլ միայն անունով են իրենց անձերը նվիրում Աստծուն, Աստծու տանը կերակրվում են, Աստծու համար պատիվներ են ընդունում և Եկեղեցու գլուխ են համարվում, ընթերցում են Աստծու օրենքները, տգետների վարդապետ և մոլորվածների առաջնորդ են անվանվում, բայց իրենք են մոլորված. թողած Աստծու շնորհները, աղոթքներն ու օծության յուղը, որով նրանց պատվիրված էր օծել հիվանդին, տառապողների համար պահքն ու աղոթքը՝ խոտորվում են դեպի կախարդություններն և գրերը։

Նաև, երբ մարմնից միս է կտրվում, և կամ երբ ինչոր արագ ցավ է սկսվում, առաջնորդները կախարդներ են տուն բերում, որպեսզի կախարդություն անեն, և ոչ միայն կախարդների ասածով են շարժվում, այլ իրենք էլ են սովորում կախարդություններ անել, գրեր գրել, հիվանդների բերանի մեջ մտացածին բաների բժժանքներ են դնում, նաև խոսքեր, որ բնավ չեն ասվում պատվիրանների մեջ, Քրիստոսի անունն էլ խառնում են դրանց, որպեսզի գրվածը աստվածային համարվի։ Սատանան այնքան հանդուգն է դարձնում նրանց, որ մինչև իսկ սուրբ Աստծու անունն են գրում դյութական պահպանարանների մեջ և կախարդությունների մեջ դնում, և այդ ոչ թե պատիվ է Աստծուն, այլ՝ արհամարհանք։ Նրանք առավել են դատապարտվում, երբ Աստծուն հուռութքների և պահպանարանների մեջ դևերի հետ են դնում և չեն իմանում սատանայի աներևույթ նետերը, քանզի թալիսմաններն ու ծրարված գրերը դևերի հրամաններն են և ոչ թե Աստծու։ Ահա թե ինչու սատանան թույլ չի տալիս, որ զգանք իր չար նետերը, որովհետև նա չարաչար կերպով Աստծու սուրբ անունն է դնել տալիս իր հրամանների մեջ, որպեսզի Աստծու անվան պատճառով ոչ ոք չկարողանա հասկանալ իր խավարային խորհուրդները։ Նրանք հիմարացած մտքով միայն անվամբ են քրիստոն-

յա, իսկ իրենց գործերով հիմարացած՝ իջնում են իրենց իմաստությունից։ Մի՞թե դևերին պաշտողը նրանց աչքերն ու բերանը կհամբուրի։ Ո՛չ։ Այլ կատարյալ դիվապաշտությունը դևերի հրամանը կատարելն է։

Արդ, երբ գուշակության, հմայության, դյութության, թովչության, հատահարցության, հավահմայության, մաղերի, վիճակ գցելու միջոցով բախտագուշակության, հմայությունների, միջագիտության[1]*, գրարարության, աստղագուշակության, դիվահարցության, օրահմայության, լուսնի օրերի, շեղջերի միջև խտրություն դնելով հմայության, քաղաքներին կամ գյուղերին, գեղեցիկ կամ տգեղ բաներին նայելով, գարընկեցության, հուռութքներով [գուշակությունների], բախտի, ճակատագրի, ծրարված գրությունների, բոլոր բժժանքների՝ կախարդական խոսքերի, հմայությունների, դյութությունների մեջ երևում է կևոսը, նրանք կանչում են դևերին աղով, երկաթով, ջրով, նարոտով, յուղով, գարիով, ուլունքներով, մոմով, գլխի մազով և բոլոր պղծություններով, որոնցով պղծում և կորստյան են մատնում հնազանդվողների հոգին։*

Մի՞թե այս ամենը մեծագույն սգի, արտասուքների և մեծ բարկության արժանի չէ, որ [Աստծու]՝ Իր Որդուն առաքելուց հետո դեռևս համարձակվում ենք մտածել այդպիսի բաներ։ Պե՞տք է արդյոք իրեն քրիստոնյա կոչի նա, ով հնազանդվում է այս ամենին, ով հեռացել է Քրիստոսից և հնազանդվել է դևերի կամքին, սատանային է ծառայում և մշտապես նրա հրամաններն է կատարում գուշակություններով, կախարդություններով և գրեր անելով, որ գրում են անեծքի որդիները և համարում են, թե սպասավորում են Աստծու սուրբ սեղանին։

[1] Միջագիտություն - գուշակություն կամ հմայություն փակ տեղում գտնվող բաները իմանալու միջոցով:

Ո՛վ անմիտներ ու տգետներ. մի՞թե չես լսում, թե ինչ է ասում Աստված մեղավորին. «Դու ինչո՞ւ ես պատմում իմ արդարությունը կամ բերանդ առնում իմ ուխտը» [Սաղմ. ԽԹ 16]: *Դարձյալ ասում է.* «Եթե իմ սրտում մեղքերը տեսնեի, մի՞թե կլսեր ինձ Տերը» [Սաղմ. ԿԵ 18]: *Եվ դարձյալ ասում է.* «Հեռացեք ինձնից ամենքդ, որ անօրենություն եք գործում» [Սաղմ. Ջ 8]: *Արդ, մարգարեն քեզ [հրամայում] է հրաժարվել սնոտի աղոթքներից, իսկ դու չես հասկանում։ Երբ ասում ես.* «Հեռացեք ինձնից ամենքդ, որ անօրենություն եք գործում», *պիղծդ և անօրենդ մի՞թե քո իսկ անձին չէ, որ հեռանալ ես հրամայում։ Երբ քո խնդրվածքի մեջ ասում ես. «Դու ինչո՞ւ ես պատմում իմ արդարությունը», մի՞թե քեզ չես ասում. ինչո՞ւ ես համարձակվում բացել քո ամենապիղծ բերանը և պատմել Աստծու արդարությունը. չէ՞ որ հակառակ քեզ ես բարբառում և չես իմանում։ Եվ երբ քո իսկ բերանից լսում ես. «Եթե իմ սրտում մեղքերը տեսնեի, մի՞թե կլսեր ինձ Տերը», ահա իմացիր, որ մեղքեր ունես քո սրտում, և Տերը չի լսում քեզ, որովհետև դու քո բերանով հանապազ ասում ես այդ։ Եվ արդ, եթե չես լսում քո իսկ բերանի խոսքը, ինչպե՞ս կկարողանաս իմանալ սատանայի հնարները. ծանր վիրավորել է քեզ, և չգիտես. կարդում ես Գիրքը, բայց գրվածները չես հասկանում։*

Ի՞նչ են հրամայում մեզ Աստծու պատվիրանները. մի՞թե չեն հրամայում մեր բոլոր գործերում պահապան ունենալ խաչը, հիվանդների համար աղոթքն ու յուղով օծումը, սատանայի կողմից չարչարվողների համար պահքն ու աղոթքը, և նա, ով արհամարհում է այս ամենը և գրերով ու կախարդություններով է շարժվում և ձեռնածու կանանց է տուն բերում, հեռու է պատվիրաններից և քրիստոնեությունից և առաքյալների նզովքի տակ է, որովհետև նրանց կողմից այդ չքարոզվեց, այլ [առաքյալը] նզովք դրեց՝ ասելով. «Եթե որևէ մեկը սրանից

ավելին ուսուցանի, նզովյալ լինի» [տես Գաղ. Ա 9], *և դարձյալ ասում է.* «Ավելի բան չիմանալ, քան ինչ կա գրվածքներում» [Ա Կորնթ. Դ 6]: *Եվ դարձյալ ասում է.* «Անիծյալ լինի այն մարդը, ով չի պահում օրենքներում գրվածները» [Բ Օր. ԻԷ 26]: *Եվ Քրիստոս ասում* է. «Եթե որևէ մեկը մի բան անգամ ջնջի այս պատվիրաններից, փոքր կկոչվի» [Մատթ. Ե 19]: *Արդ, ահա ջնջում ես Աստծու շնորհները և սուրբ խաչի զորությունը, պահքն ու աղոթքները, որ հրամայում են պատվիրանները, և բերում ես պահապան գիրը և կախարդների կախարդությունները, որոնք Աստծու պատվերները չեն, այլ՝ դյութողների միջոցով՝ սատանայի գաղտնի նետերը, որ մեգի նման տարածված է ամբողջ աշխարհում, սակայն չեն իմանում։*

Նաև ասում ես, թե կախարդներն ինչ որ անում կամ ասում են, այդպես էլ լինում է։ Եթե երբևէ այդ պատահի, մի՛ խաբվիր, ո՛վ մարդ. կախարդը չէ, որ անում է այդ,եթե նրա մոտ չգնայիր էլ, այդ պիտի պատահեր քեզ այդ ժամին, բայց դու Աստծու ողորմությունը կախարդի զորությանն ես վերագրում։ Բազում անգամ չի լինում կախարդների միջոցով և եթե երբեմն լինում է, լինում է ո՛չ թե նրա զորությամբ, այլ այնպես, ինչպես կույրերն են խարփափելով գտնում իրենց ոտքերի մոտ ընկած իրը. ահա խարխափելով ես գտնում, ոչ թե նախապես տեսնում ես աչքով. [հենց] այդպես էլ կախարդների [գործերը] կտեսնես։ Հիմար մարդիկ չեն նայում չկատարվածներին, իսկ երբ մի բան կատարված են տեսնում, առնելով՝ բարձրացնում են այն և բոլորին պատմում։ Դյութի ու կախարդի զորություն չի լինում, իսկ եթե հանկարծ եղած տեսնես, ինչպես վերևում ասացի, ոչ թե կախարդից կամ դյութողից եղավ, այլ որովհետև դու այդպես հավատացիր, Աստված թույլ տվեց, որ այդպես լինի ըստ քո հավատի, որպեսզի մեծապես դատապարտվես՝ Աստծու

փոխարեն կախարդների մոտ գնալուդ համար։ Քանզի երբ թողնում ես պատվիրանները և ապավինում ես դյութողներին ու կախարդներին, կամավորապես մտնում ես սատանայի հնազանդության տակ, և նա դառնում է քո կամքի տերը, ինչպես երբ թագավորի որդին կամավորապես թողնում է թագավորին և գնում է լեռները՝ մի ավազակապետի մոտ, և դառնում է նրա ծառան, ավազակապետն է դառնում նրա մահվան ու կյանքի տերը։

Արդ, աշխարհի մեծ մասը կախարդների ու վհուկների միջոցով մտել է սատանայի հնազանդության տակ, և չկա մեկը, որ հասկանա մեր սաստիկ ամբարշտությունը՝ այն, որ Արարիչ Աստծուն թողած՝ գնում են վհուկների, կախարդների, գուշակների, կախարդական գրեր [անողների] ու հմայողների մոտ և հանապազ բարկացնում են Արարչին։ Այս ամենի համար ի՞նչ պետք է անել, եթե ոչ միայն սգալ ու լաց լինել, որովհետև աշխարհի մի փոքրիկ մասը հազիվ թե փրկվի, որովհետև Աստծուն վայել պատիվն առնելով՝ մատուցեցիք մահկանացու մարդու գիտությանը, այն գիտությանը, որը երևում էր առաջիններին, ինչպես որ Սավուղին հայտնվեց կորած էշի մասին [տես Ա Թագ. Ժ 2]. *քանի որ նրանք տակավին մանուկներ էին, և նրանց ժամանակ դեռևս չկար կատարյալ գիտությունը։ Բայց մենք կատարելությամբ ունենք հոգիների ճշմարիտ գիտությունը, քանզի Ինքը՝ Քրիստոս եկավ, ավետարանեց, քանդեց օրենքի կապանքները, շնորհները բերեց, մահը խափանեց, հարություն, արքայություն և հավիտենական կյանք խոստացավ։ Սա՛ է կատարյալ գիտությունը, այլ ո՛չ թե կորած էշը գտնելը. անգիտությունը վերացրեց և այս բերեց Նա, Ով չի կամենում, որ մենք մարմնավոր բաներ խնդրենք, այլ որ մենք հոգևորի մասին հոգանք, իսկ մարմնավորը թողնենք, որ Ինքը հոգա. ա՛յս պատճառով մեզնից ծածկեց այն գիտությունը։*

Արդ, մի՛ հավատացեք, եթե մեկը անամոթ և պիղծ շահախնդրությամբ ձեզ կարծել տա, թե Աստծու և սուրբերի զորությամբ գիտի այն, [քանզի] այն արգելված է մեզ, որովհետև ավելի մեծ չէ, քան այն շնորհները, որ [Տերը] տվել է մեզ։ Եթե մեկը հավատով Աստծու առջև ընկնի, աղաչանքներով ապավինի մարտիրոսների նշխարներին, կընդունի հիվանդությունների բժշկություն, կհալածվեն ախտերը, դուրս կելնեն դևերը, և կթողնվեն մեղքերը։ Նաև ծածկված մարգարեությունը մեր ժամանակի մարդու համար չէ, քանզի մարտիրոսների նշխարները չեն հանդիմանում որևէ մեկի մեղքերը և ոչ էլ ակամայից ապաշխարել են պարտադրում, որովհետև Աստված երբեք չի բռնադատում մարդուն, այլ նրան թողնում է իր կամքին, որպեսզի նա վարձատրություն ընդունի իր գործերի համար. Նա [չի պարտադրում] եկեղեցիներ ու մատուռներ կառուցել. Աստված սովոր չէ այդպիսի բան անել, որպեսզի մեր բարի գործերը պարտադրաբար չլինեն, այլ թողել է մեր կամքին, որպեսզի վարձատրի մեզ մեր արածի համար։ Իսկ այս ամենը դևերի կեղծ գործերն են՝ մարդկանց անվարձ չարչարելու և ծաղրելու համար։

Դևերը չունեն նաև ապագայի գիտությունը. միմիայն մեկն է սրտերը ճանաչողը՝ ամեն բանի Արարիչը, իսկ դևերն ու կախարդներն արարածներ են և ոչ արարիչ, և կյանք ու մահ, առողջություն և հիվանդություն, բժշկություն, հարստություն և աղքատություն Իր արարածներին տալը վայել է միայն Արարչին, այլ ոչ թե դևերին ու կախարդներին, որոնց Իշխանն ու Արարիչը Աստված է։ Նրանք ինչպե՞ս են համարձակվում հրամայել այլ արարածներին, որոնց Արարիչը չեն, քանզի արարածներն հնազանդվում են միայն Արարչին, Ով կարող է քանդել և նորոգել, այլ ոչ դևերին ու կախարդներին, որոնք իշխանություն չունեն անգամ իրենց վրա։

Արդ, իմանալով, որ միայն Աստված է Արարիչ, ինչո՞ւ ես քեզ դնում վհուկների ու հմայողների կապանքների տակ և ամբարշտանում օրահմայությամբ՝ համարելով, թե նրանով են փչանում կամ նորոգվում խոտը, որթատունկի, կալի, հնձանի, սերմերի պտուղները և բոլոր գործերը, որ անում ես։ Ինչո՞ւ ես ընկնում օրահմայության ու իրերի մեջ խտրություն դնելու մեջ. պատասխանի՛ր ինձ՝ ինչո՞վ են վնասակար շաբաթը և չորեքշաբթին,քանզի սրանք միայն Քրիստոսի անունով են քրիստոնյա. անունը որևէ բան նորոգել կամ փչացնել չի կարող առանց լույսի ու տոթի։ Լույսն ու տոթը արեգակից են, իսկ արեգակը չորեքշաբթի և շաբաթ օրերին տարբեր կերպ չի ծագում, քան մյուս օրերին, այլ մշտապես միևնույն է նրա ծագումը։ Արդ, եթե արեգակի ծագումը նույնն է չորեքշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին, ապա ինչո՞ւ մի[ևնույն] ծագումից սրանք վնասվում են, նրանք՝ ոչ, պատասխա՛ն տուր ինձ, ո՛վ խտրողադյութ հիմարդ, հմայության ծառադ և Աստծու շնորհներից հեռացածդ, մի՞թե բոլոր օրերը Տիրոջը չեն և [մի՞թե] բոլոր այն օրերին, երբ բարիք ենք գործում, մեր հոժարությամբ և Աստծու կամքով չէ, իսկ երբ չարիք ենք գործում, մեր չարությամբ և Աստծու թույլտվությամբ և բարիք կատարողն Աստված է, իսկ չարիք գործելու տերը մենք ենք։ Արդ, շաբաթ կամ չորեքշաբթի օրերի անունները ինչպե՞ս կարող են նորոգել կամ փչացնել որևէ բան, երբ անկարող են որևէ բան անելու,որովհետև անունը չունի հոգի կամ միտք, իսկ հոգի և միտք չունեցող որևէ բան ինչպե՞ս կարող է արարել։ Սատանան քեզ շփոթեցրեց, որպեսզի դու այդպես կարծես, որպեսզի Արարիչ Աստծու պատիվը նվիրես շաբաթ և չորեքշաբթի օրերի անշունչ անուններին և դատապարտվես կռապաշտների հետ։

Արդ, թո՛ղ օրերի միջև խտրություն դնելու հիմարությունդ, որովհետև ոչ մի պատասխան տալ չես կարող, այլ միայն անօրեն մոլորությունդ է, որ քաշում է քեզ՝ գործելու այդ։ Բայց լավ, ցո՛ւյց տուր. ինչո՞ւ ես ամբարշանում նաև լուսնով. եղծիչ ու նորոգիչ ես համարում լուսինը։ Եթե արեգակով ամբարշտանայիր, թերևս կպատասխանեիր ինձ, թե արեգակի մեջ ջերմություն կա և կարող է Արարչի հրամանով հասցնել ու առատացնել, ցամաքեցնել ու դատարկեցնել, քանզի չորս տարրերը՝ կրակը, ջուրը, հողը և օդն են, որ Աստծու հրամանով դարմանում են Աստծու արարածներին։ Եթե դրանցից մեկը պակասի, հողը բերք չի տա։ Այս տարրերը լուսինը չունի։ Ինչո՞ւ ես փչացնելու և նորոգելու պատճառը լուսինը համարում. հողը երկրից է, կրակը՝ արեգակից, ջուրը՝ անձրևներից, օդը՝ մրրկածին. սրանք են, որ Աստծու հրամանով դարմանում են արարածներին։ Լուսինն ի՞նչ իշխանություն ունի փչացնելու և նորոգելու, քանի որ այն ո՛չ ջերմություն ունի, ո՛չ օդ, ո՛չ հող է և ո՛չ ջուր, այլ ստեղծվել է միայն գիշերը մեզ լուսավորելու համար և ծածկվում-թաղվում է՝ կենարարի օրինակը ներկայացնելով։ Այն ինքն իրեն չգիտի, [չգիտի], թե ինչ է կամ չէ, որովհետև շունչ և կենդանություն չունի, բայց շարժվում և գնում է, ինչպես կրակն ու ջուրը, մեզ անհրաժեշտ լինելու պատճառով կա և Արարչի հրամանով ծառայում է մեզ, իշխանություն չունի խոտի ու սերմերի վրա, որովհետև անշունչ է։ Արդ, որքա՜ն տանջանքների և գեհենի արժանի կհամարես նրան, ով անշունչին շնչավոր է կարծել տալիս, Արարչի պատիվն ու իշխանությունը տալիս է սատանային և աստղագուշակներին և պաշտում է արարածներին և ոչ Արարչին։ Եթե փչացնելու իշխանությունը օրերի վրա նշան դրեցիր և դրանց որպես տեր և արարիչ կարծել տվեցիր, ահա քո գործերով ծա-

ռա և երկրպագու եղար լուսնի և օրահմայության և քեզ վրա անջնջելիորեն բերեցիր այն անեծքը, որ ասում է. «Թող անիծյալ լինի նա, ով կպաշտի և կերկրպագի արեգակին, լուսնին և երկնային զորություններին» [հմմտ. Բ Օր. ԺԷ 3]: *Ո՛վ թշվառական, ինչո՞ւ ես վիրավորվում սատանայի անեռևույթ նետից՝ գործերիդ վրա օրահմայություններ ու կախարդություններ ավելացնելով, որոնցից ոչ մի օգուտ չես ստանում, և որոնք առիթ են միայն հոգուդ պատիժների ու գեհենի։*

Իսկ եթե ասես, թե՝ «Ինչո՞ւ չհավատամ հմայություններին, երբ օրահմայության օրերին ամեն բան եղծված ենք տեսնում»։ Մի՛ խաբվիր, ո՛վ մարդ, քանզի Աստծու արարածների մեջ առանց ախտերի, առանց ապականության ու փոփոխությունների ոչինչ չկա, միայն Արարիչն է անեղծ ու անփոփոխելի։ Իսկ մեզ հասու արարածները ենթակա են ախտերի, ապականության, եղծման և վերանորոգման։ Եղծումն ու վերանորոգումը անձրևների առատությունից և արեգակի ջերմությունից են լինում, այլ ոչ թե օդի կռվելուց, ոչ թե լուսնից, որովհետև լուսնի մեջ ո՛չ անձրև կա, ո՛չ ջերմություն և ո՛չ օդ, որ վնասի խոտին, սերմերին և բոլոր գործերին, որ դու խորություն ես դնում նրա օրերին գործելու. այն ընդամենը արարածներին լույս տվող է։ Եվ քեզ լուսնից երբեք վտանգ չի լինի, այլ միայն արեգակի ջերմությունից և լուսնի խոնավությունից։ Ինչպես որ վնասակար հոտ չի լինում չոր ու ցամաք [տեղում], իսկ երբ արեգակը ջերմացնում է հողի խոնավությունը, այն հոտ և որդեր է ծնում. ինչպես որ հագուստների մեջ որդեր չեն ծնվում, երբ նրանց մեջ չկա խոնավություն, ջերմություն և փոշի, իսկ երբ մարմնի ջերմությունը, քրտինքի թացությունն ու փոշին իրար են խառնվում, բազմաթիվ որդեր են ծնվում հագուստների մեջ, այդպես էլ փոշին խոտից, խոնավությունից,

օրվա տաքությունից է լինում և տարրերի՝ իրար նկատմամբ հավասարակշռությունից։ Շաբաթն ու չորեքշաբթին տարրեր չունեն և չեն իշխում Աստծու արարածներին, նրանք ո՛չ կարող են նորոգել և ո՛չ փչացնել։

Արդ, ո՛վ հիմար ու տգետ մարդ, եթե կամենում ես քո գործերի համար օր] ընտրել, ընտրիր տարրերի՝ ջերմության ու սառնության, խոնավության ու չորության խառնուրդը և գարնանային ու աշնանային օրերը, այլ ոչ թե ամբարշտացիր՝ շաբաթ օրը [խտրելով] և համարելով, թե նրանից է կախված գործիդ ձախողումն ու հաջողությունը։ Իսկ եթե դարձյալ ասես, թե պատահում է, որ որոշված օրերին խաթարվում են որթատունկն ու գինին և այն բոլոր գործերը, որ անում ենք այդ օրերին, արդ, դու այդպես համարիր, և այդպես էլ կլինի, բայց հիշի՛ր, մի՛ կարծիր, թե օրերն են իշխում, որովհետև Աստված միայն օրերի լույսը տվեց մեզ, և մեր կամքն է այդ օրվա ընթացքում բարիք կամ չարիք գործելը։ Եվ եթե համարում ես, թե քո գործերի ձախողումը սատանայից է, սատանան առանց քո կամքի և Աստծու թողտվության չի իշխում Աստծու արարածներին։ Դու իմացի՛ր, որ նա չհամարձակվեց մտնել խոզերի երամակի մեջ, մինչև որ [Տերը] չհրամայեց նրան, և չհամարձակվեց կորստյան մատնել նրանց ունեցվածքը, մինչև Տիրոջից հրաման չստացավ։ Եվ եթե առանց մեր կամքի սատանան իշխեր մեր մտքերին, ապա նա ոչ ոքի թույլ չէր տա Աստծուն հաճելի լինել, այլ բոլորին կորստյան կմատներ՝ մեղքերի մեջ գցելով։ Եթե այդպես լիներ, ապա ո՛չ մարգարեները մարգարեներ կլինեին, ո՛չ առաքյալները՝ առաքյալներ, և ո՛չ էլ բոլոր արդարները՝ արդար, որովհետև նա այդպես է կամենում։ Բայց այդպես չէ. նա իշխում է միայն նրան, ով հնազանդվում է իրեն։ Դու լավ գիտես, որ սատանան ատում է մարդուն, այլ ոչ թե սիրում

է, և եթե իշխանություն ունենար խանգարելու մեր ձեռքերի գործերը և կամ ապրեցնելու, վաղուց կորստյան մատնած կլիներ ոչ միայն մեր գործերը, այլ նաև մեզ ամբողջովին, որովհետև նրա կամքն էլ հենց այդ է,բայց նա չի համարձակվում։ Իսկ եթե քո գործը ձախողվում է, ապա ա՛յս իմացիր. Աստված քեզ Իր պատկերով ստեղծեց, Իր բոլոր արարածների իշխան [քեզ կարգեց] և քեզ հրամայեց ամեն բան անել հավատով, շնորհներով և սուրբ խաչի նշանի պահպանությամբ, իսկ դու թողնում ես ճշմարիտ Աստծուն, հավատն ու պահապան խաչը և օրահմայությամբ քո գործերի իշխան ես դարձնում շաբաթը։ Աստված թույլ է տալիս, որ ձախողվեն գործերդ քո՝ հմայության [դիմելու] պատճառով,որովհետև փոխանակ ճշմարտությունն ընդունելու, ստին հավատացիր, մեծապես դատապարտվեցիր։ Պողոսը Նեռի և այսպիսի անիրավությունների մասին ասում է. «Այն բանի փոխարեն, որ չհավատացին ճշմարտությանը, այլ հաճեցին անիրավությունը, Աստված նրանց պիտի ուղարկի զորավոր մի մոլորություն, որ նրանք հավատան մոլորությանը, որպեսզի դատապարտվեն բոլոր նրանք, ովքեր չհավատացին ճշմարտությանը, այլ հաճույք գտան անօրենության մեջ» [տես Բ Թեսաղ. Բ 10-11]:

Արդ, ինչպե՞ս չես զարհուրում, ո՛վ մարդ, որ թողնելով քո Արարիչ Աստծուն՝ սովոր մտքով արարածներին ես պաշտում հմայություններովդ։ Մի՞թե չես լսում գրվածը, որ ասում է, թե՝ «Կախարդությունները միայն նեղություն ու ցավեր են բերում» [Ա Թագ. ԺԵ 23], *և մարգարեին, որ ասում է, թե՝* «Մեր երկիրը, ինչպես այլազգիներինը, առաջվա պես լցվեց կախարդություններով» [տես Ես. Բ 6], *իսկ առաքյալն ասում է.* «Խտրություն եք դնում օրերի, ամիսների ու ժամանակների միջև, վախենում եմ ձեզնից» [տես Գաղ. 4, 10-11]:

Արդ, հարկ է, որ մենք էլ երկնչենք պատվիրաններից և հավանենք ճշմարտությունը, պիղծ համարենք նրանց,

ովքեր կախարդություններով ու գուշակությամբ են շարժվում և մոլորվում են՝ սուտ երազներից խաբվելով։ Եվ չեն հասկանում, որ եթե մեկը թողնում է աստվածպաշտության ճշմարիտ ճանապարհը և լսում է այդպիսիներին, [դրանք] բազում անգամ սուտը որպես ճշմարտություն են ցույց տալիս նրան, որպեսզի նա չարաչար դատապարտվի, որովհետև չհավատաց ճշմարտությանը, այլ հաճեց անիրավությունը։ Երրորդ Թագավորությունների գրքում գրված է. «Երբ Աքաաբը մեղանչեց, Միքիա մարգարեն տեսավ Տիրոջը, և երկնքի բոլոր զորքերը աջից ու ձախից կանգնած էին Նրա մոտ։ Տերն ասաց. «Ո՞վ կելնի և կխաբի Աքաաբին, որ ելնի հարձակվի Գաղաադի Հռամաթ քաղաքի վրա և սպանվի»։ Եվ ահա մի ոգի ելավ և կանգնեց Տիրոջ առջև և ասաց. «Ես կգնամ կխաբեմ նրան, և կմեռնի»։ Եվ Տերն ասաց. «Ինչպե՞ս»։ Ասաց. «Սուտ ոգի կդառնամ նրա մարգարեների բերանում, և կելնի Գաղաադի Հռամաթ քաղաք և կսպանվի» [տե՛ս Գ Թագ. ԻԲ 19-22]։

Տերը մեղավոր չէ այս պատրանքների համար, բայց թույլ տվեց, որ դրանք լինեն, որպեսզի նրանք պատրանքների փոխարեն սուրբ մարգարեներին հավատան։

Արդ, նա, ով վարժվում է հավատալ դևերի խաբեություններին, Աստված թույլ է տալիս, որ նրան խաբեն, որպեսզի դատապարտվի ստությանը հավատալու պատճառով։ Ուրեմն փախչե՛նք մոլորեցնող մարդկանց խաբեություններից, երազների տեսիլքներից, սուտ նշխարների դիվացույց գյուտից և սատանայի խաբող, մոլորված, երազախոս սպասավորների հրամաններից. նրանք իրենց սուտ մարգարեությամբ չարչարում են շատերին և հափշտակելով Աստծու պատիվը, անուշահոտ խունկերի ծուխն ու լույսի պայծառությունը, որ հարկ էր Աստծու տանը՝ սուրբ խաչի և սուրբ վկաների առջև մատուցել, ստության առջև են մատուցում։ Ո՛վ բոլոր

մոլորությունների հիմար ընթերցող, քեզ բավական չե՞ն մարտիրոսների նշխարները, որոնք քեզ մոտ են և հանապազ խնդրում են քեզ համար, և կամ սուրբ խաչի նշանը, որ կրում ես և քո տանն է մշտապես։ Ինչո՞ւ նրանցից չես խնդրում խնդրելին, ինչո՞ւ ես պատիր բաներ փնտրում. մի՞թե Աստված կբարկանա քեզ վրա՝ նրանց մոտ չգնալուդ համար, մի՞թե Նա չի ասում. «Եթե մեկը ձեզ ասի, թե՝ «Ահա այստեղ է Քրիստոսը կամ այնտեղ, չհավատա՛ք, որովհետև սուտ մարգարեներ և սուտ քրիստոսներ պիտի ելնեն աշխարհ և պիտի մոլորեցնեն, ասում է, եթե հնար լինի, նույնիսկ ընտրյալներին» [տե՛ս Մարկ. ԺԳ 21-23]: *Ահա այդպես էլ եղավ, և տեսանք մարգարեներից հետո սուտ մարգարեների, առաքյալներից հետո սուտ առաքյալների և մարտիրոսներից հետո ահա այժմ տեսնում ենք, որ սուտ մարտիրոսները խաբում են մարդկանց։ Իսկ տգետների մասին, ովքեր չգիտեն Զորության և Ճշմարտության Հոգուն, Տիրոջից այսպիսի պատվեր ստացանք.* «Եթե ձեզ ասեն, թե՝ «Ահա անապատում է», չելնեք. կամ թե՝ «Ահա մառանում է», չհավատաք» [Մատթ. ԻԴ 26]:

Արդ, հարկ է, որ մենք պահենք Քրիստոսի պատվերը և չխաբվենք դևերի պատրանքներից, անգամ եթե սուտ տանջանքներով չարչարեն մեզ, որովհետև լավ է Քրիստոսի օրենքներով չարչարվել, քան թե դևերի հրամաններին հնազանդվել։ Թեև նա նշաններ ու սքանչելիքներ է գործում. սատանան սովոր է սուտ նշաններով, որպես ճշմարիտ ցասմամբ, խաբել մարդկանց, որոնք անտեղյակ են նրա աներևույթ նետերին, որոնք ցույց տվեց առաջ էլ՝ Երեմիա մարգարեի օրերին, Մովսեսի ժամանակ՝ Հանեսի, Պետրոսի ժամանակ՝ Սիմոն [մոգի] և բազում ուրիշների միջոցով, որոնք ծառայում էին սատանային և սուտ նշաններ էին անում, իսկ իշխաններն ու ժողովուրդը հավատում էին, մինչև իսկ հալա-

ծում էին սուրբ առաքյալներին, մոլորություն էին համարում Քրիստոսի ճշմարիտ քարոզությունը և բազում նեղություններ էին հասցնում հավատացյալներին։

Արդ, մի՛ հավատա սուտ մարգարեներին, սուտ առաքյալներին և սուտ մարտիրոսներին նրանց սուտ նշանների համար, որովհետև սատանան սովոր է այդ ամենն անելու։ Նա, ով այն ժամանակ Մովսեսի և Պողոսի հոգելից և իմաստուն հետևողներին էր նեղում, ապա որքան ավելի կնեղի անուսներին ու տգետներին։

Արդ, ի՞նչ պիտի անենք սատանայի այս բոլոր աներևույթ հնարների դեմ, եթե ոչ այն, որ զգուշանանք՝ պահելու Աստծու պատվիրանները, սիրելու Նրան մեր ամբողջ սրտով, մեր ամբողջ էությամբ և մեր ամբողջ զորությամբ և գիշեր- ցերեկ անդադար աղոթելու։ Քանի որ աղոթքները հանգցրեցին հնոցի կրակը, սանձեցին առյուծներին, խաղաղեցրին գազանացած ձկանը, ճեղքեցին ծովը և փրկեցին ժողովրդին։ Եվ պետք է ամրացնես քեզ պահեցողությամբ, որովհետև պահքը առաքինության զենք է. պահքի շնորհիվ փառավոր երևաց Մովսեսի դեմքը, պահքի շնորհիվ [կործանումից] փրկվեց Նինվեն, մարգարեն երկինք բարձրացավ։ Քո դանդաղ ու հիմար մտքով փոքր մի՛ համարիր այդ մեծ օրհնությունները։ Հիշի՛ր, որ Ադամը, փոքր բան կարծելով Աստծու պատվիրանը, ելավ դրախտից, Քամը, փոքր բան կարծելով հոր ամոթը հայտնելը, անեծքի և ծառայության տակ ընկավ, Եսավը, փոքր բան կարծելով անդրանիկությունից հրաժարվելը, ապաշխարության տեղ չգտավ, Կայենը, փոքր բան կարծելով Աբելի սպանության մասին Աստծու չիմանալը, ահուդողի և երերման մատնվեց, Կորխը, Դաթանը և Աբիրոնը քահանայության պատվին մերձենալը փոքր բան կարծելու պատճառով կենդանի ընկղմվեցին դժոխքում, Զամբրիի՝ պոռնկությունը փոքր համարելու

պատճառով քսաներեք հազար մարդ մեռավ, Սեդեկիայի՝ երդումը փոքր համարելու պատճառով Երուսաղեմն ավար առնվեց, Սավուղի՝ Աստծու առջև ստելն ու Ագագին չսպանելը փոքր բան համարելու պատճառով նրա թագավորությունը պառակտվեց, Դավթի՝ Իսրայելի ժողովրդին հաշվելը փոքր բան համարելու պատճառով յոթանասուն հազար մարդ սպանվեց, Անանիան և Սափիրան, որովհետև ստելը փոքր բան համարեցին, դառը մահով մեռան, և շատերը Աստծու պատվիրանները փոքր բան կարծելու պատճառով այստեղ տանջվեցին և այնտեղ տանջանքների են սպասում։

Ուրեմն պետք է պահել գրված պատվիրանները. ո՛չ շտեմարաններ մտնել, ո՛չ անապատ ելնել և ո՛չ էլ երկյուղով երկրպագել օտարի, այլ պահել Նրա պատվիրանները՝ առանց որևէ բան ավելացնելու կամ պակասեցնելու։

Մի՞թե մեզ բավական չեն մեր [ունեցած] նշխարները, ինչո՞ւ ենք գնում և խաբվում դևերից։ Մի՞թե մեզ բավական չեն հոգեկիր մարգարեները, ինչո՞ւ ենք լսում երազներին։ Մի՞թե մեզ բավական չեն Աստծու քահանաները, ինչո՞ւ ենք գնում մոլորված գուշակների մոտ։ Մի՞թե մեզ բավական չեն Սուրբ Գրքում գրված օրենքները, որ բովանդակում են Աստծու կամքը. ինչո՞ւ ենք վերցնում նոր տրված հրամաններ և խաբող թղթեր, որոնք կարծել են տալիս, թե թերի և պակաս են հոգելից մարգարեների պատգամները, սուրբ առաքյալների քարոզությունն ու Սուրբ Ավետարանի վարդապետությունը, և ստիպում են անել այն, ինչ արգելում են պատվիրանները, իրենց երկնքից [ուղարկված] են ցույց տալիս, իսկ իրենց գրածը՝ Աստծու ձեռքով գրուած։ Ինչո՞ւ չենք լսում Պողոսին, որ ասում է. «Դուք չխռովվեք ոչ խոսքով, ոչ թղթերով, իբրև թե մեր կողմից գրված» [Բ Թեսաղ. Բ 2]։ *Հիշի՛ր, ո՛վ հիմար ու չարիք հնարող, որ Ադամը մեկ մեղքի պատճառով ելավ*

դրախտից, մեկ սպանության պատճառով Կայենն ահուդողի մատնվեց, աշխարհի ջրհեղեղը անառակության պատճառով եղավ, իր ամբարտավանության պատճառով [հրեշտակն] ընկավ [երկնային փառքից] և սատանա [դարձաւ], ամբարշտության պատճառով լեզուները խառնվեցին, արվամոլության պատճառով Սոդոմը կործանվեց, սուտ երդման պատճառով Երուսաղեմն ավերվեց, ծնողներին արհամարհելու պատճառով անեծքի և ծառայության մատնվեցին, Շուշանի մասին սուտ վկայելու պատճառով սղոցվեցին ծերերը, չգոհանալու պատճառով Հերովդեսը մեռավ, խստասրտության պատճառով փարավոնը խորտակվեց, գողության պատճառով Աքարը քարկոծվեց, տրտնջալու պատճառով օձերից [խայթվեցին անապատում] և մեռան, պոռնկության պատճառով մեկ օրում քսանչորս հազար հոգի սպանվեց։

Եկեղեցու քարոզն ասում է. «Որովհետև անխտիր սուտ աստվածներին ու կախարդներին եք հետևում, այդ պատճառով էլ ձեր մեջ շատ հիվանդներ ու ցավագարներ կան, նույն պատճառով էլ շատերը տարաժամ մեռնում են» [տե՛ս Ա Կորնթ. ԺԱ 30]: *Այդ պատճառով են բազում նեղությունները, այդ պատճառով են անզավակ մնում և բնավ զավակներ չեն ունենում, այդ պատճառով են դևերից լկվում, այդ պատճառով են տնանկությունն ու աղքատությունը, այդ պատճառով են երկնային պատուհասները, այդ պատճառով անդաստանները բերք չեն տալիս, այդ պատճառով են անդադար երկրաշարժեր լինում, այդ պատճառով են անասունները նվազում, այդ պատճառով են գողերը զրկում, այդ պատճառով են գեհենի կրակը, հավիտենական խավարն ու մշտնջենավոր տանջանքները։*

Եթե վերցնենք այն ոսկե բաժակը, որը մատուցում ենք թագավորին նրա սեղանին սպասավորելիս, և լցնենք աղբով, ցեխով կամ աղտեղությամբ, և թագավո-

ը տեսնի այդ, մի՞թե կհամարձակվենք կրկին մատուցել այն նրա սեղանին։ Անշուշտ՝ ո՛չ։ Ինչո՞ւ։ Որովհետև այն պղծեցինք աղբով, և թագավորը կթշնամանա, կբարկանա և կգարշի դրանից։ Եվ կամ՝ պատվիրաններն ի՞նչ են ասում երդումի մասին. «Մարդիկ, ասում է, երդվում են այն բանով, ինչ որ մեծ է իրենցից», այդպես էլ Աստված, որովհետև չկա Իրենից մեծը, որով երդվեր, Իր անձով երդվեց՝ ասելով. «Անձովս եմ երդվում, որ անչափ պիտի օրհնեմ քեզ» [տես Ծննդ. ԻԲ 16-17]: *Անհնարին է, որ Աստված Իր արարածներով երդվի։ Եվ կամ Քրիստոսի գալուստից հետո Աստծու՝ մեզ համար Իր մատով գիր գրելն ու տալը անհնարին է, և ամբարշտություն է [այդպես կարծելը], որովհետև եթե դրանք մեզ կրկին պետք լինեին երկնքից, ուրեմն թերի և անկատար էր Քրիստոսի գալուստը։ Այդպես չէ՛. այլ օրենքի հրամանները երկրի վրա լրիվ կերպով մեզ տրվեցին Մովսեսի և Հիսուսի ձեռքով, իսկ դրանից հետո՝ տանջանքներ են կամ արքայություն։ Կրկին Աստծու մատով գրված երկնատուր օրենքներ այլևս մեզ չե՛ն առաքվում։ Բայց սատանան ոմանց աջ է շեղում, ոմանց՝ ձախ. ձախը բոլորս հասկանում ենք, որովհետև հայտնի են ձախակողմյան գործերը, բայց աջը չենք հասկանում, որովհետև աստվածպաշտության կերպարանքով է խոտորում։ Հենց այդ պատճառով էլ ստացանք այս պատվերը.* «Գրված պատվիրաններից ո՛չ աջ կշեղվես, ո՛չ ձախ» [տես Բ Օր. ԺԷ 11, Հեսու Ա 7]:

Եվ արդ, նայե՛նք Աստծու պատվիրաններին և կատարե՛նք, ինչ որ գրված է նրանց մեջ, բախտով, ճակատագրով և սուտ պատգամներով չմոլորվե՛նք, ինչպես հեթանոսները։ Որովհետև երբ ամբողջ աշխարհով տարածվում են ճակատագրերի մասին բանդագուշանքները, [մոլորեցնողները] սուտ են խոսում՝ ասելով, թե մարդը ըստ ճակատագրի է ապրում և գործում։ Եթե այդպես լի-

նի, և մարդը բախտով կամ ճակատագրով գործի, ապա պարզ է, որ չի դատվի իր մեղքերի համար, որովհետև [ճակատագրի] թելադրանքն է կատարել, նաև չի պսակվի արդարության համար, որովհետև իր կամքով չէ, որ բարիք է գործել, այլ [ճակատագրի] հարկադրանքով, ակամայից։ Ապա ուրեմն թագավորներն էլ չպետք է պատժեն գողերին ու պոռնիկներին, չպետք է տանջեն մարդասպաններին, որովհետև նրանք իրենց կամքով չէ, որ գործում են, այլ [ճակատագրի] թելադրանքով։ Եթե մի պիղծ մարդ մարդ է սպանում, կամ հարսը սպանում է սկեսուրին, հարևանը՝ հարևանին, ծառան՝ տիրոջը, աղախինը՝ տիկնոջը, կամ աշակերտն անարգում է իր վարժապետին և սպանում, ոչ ոք չպետք է մեղադրի և պատժի նրանց, որովհետև կատարում են [ճակատագրի] հրամանները։ Ուրեմն չպետք է մեղադրել ու հալածել նաև ավազակներին, որովհետև ինչպես դու ես ասում, ճակատագրի ազդեցությամբ են նրանք հարձակվում։

Բայց այդպես չէ. մյուս արարածները հարկադրանքով, ծառայաբար և հրամանով են շարժվում, և առանց հրամանի մի ճնճղուկ անգամ որոգայթի մեջ չի ընկնում. [Աստված] միայն մարդուն տեր և ճակատագրից վեր ստեղծեց։ Ինչպես որ Ինքը՝ Աստված, ճակատագրի ենթակա ծառա չէ, այլ ազատ է և ինքնակամ, այդպես էլ մարդուն Իր նմանությամբ ստեղծեց տեր, ազատ, ինքնիշխան և նրա կամքին թողեց բարիք կամ չարիք գործելը։ Եվ հոժար մտքով բարիք գործողներին խոստացավ արքայություն, իսկ չարիք գործողներին՝ դժոխք։ Ամենակարող և բարեգործ Աստված չի կամենում մեղավորի մահը, բայց նաև չի վերցնում ինքնիշխան կամքը մեզնից, քանզի ասում է. «Կամեցեք և լսե՛ք ինձ»։ [Նրան փառք հավիտյանս. ամեն]։

ԻԷ. *Տեր Հովհան Մանդակունու կանոնները*

Արդ, ես ըստ իմ իմանալու եմ ասում այս, թե նա, ով [քահանա է ձեռնադրում] տգետ ու տխմար երիտասարդին, որ չի կարողանում բեմից ի լուր ժողովրդի Ավետարան կարդալ և քահանայության կարգի [համար անհրաժեշտ] ամբողջ ուսումը չի ստացել, նրա քահանա դառնալու համար պատիժ է կրելու նա, ով ձեռնադրել է նրան. նրա տհասության և անուսության մեղքերի համար ձեռնադրողը հաշիվ պիտի տա։ Օրենք է առավել գիտունին և հասակով կատարյալներին արժանացնել ժողովրդին առաջնորդելու։ Այդ մասին մեծն Պողոսը, ձայնը բարձրացնելով, աղաղակում և ասում էր Տիմոթեոսին. «Ձեռքերդ շտապով որևէ մեկի վրա մի՛ դիր և ուրիշների մեղքերին մասնակից մի՛ եղիր» [Ա Տիմ. Ե 22]: *Եվ դարձյալ՝* «Ոչ էլ նորադարձի, որպեսզի գոռոզանալով՝ սատանային վիճակված դատապարտության մեջ չընկնի» [Ա Տիմ. Գ 6]: *Այլ հարկ է, որ քահանան, որպես Աստծու տնտես, վերակացու լինի անարատ, հավատարիմ վարդապետությամբ։*

Արդ, ինչպես որ Պողոսը Աստծու և մարդկանց միջև միջնորդ և ամբողջ աշխարհի փրկության երաշխավոր է դնում Քրիստոսին, մի՞թե նույն օրինակով էլ քահանայի համար օրենք չէ ամենայն անարատությամբ Աստծու ժողովրդի առաջնորդ և նրա մեղքերի քավության և փրկության [երաշխավոր] լինել։ Եթե մեծն Մովսեսի մասին Գիրքն ասում է, թե բոլոր մարդկանցից առավել հեզ, խոնարհ ու հանդարտ էր և սովորել էր եգիպտացիների ամբողջ իմաստությունը [տես Թվեր ԺԲ 3, Գործք Է 22]: *Եթե հեզը, հանդարտը, իմաստունը և արատներից*

մաքուրը, Աստծու հավատարիմ պատգամավորն ու ժողովրդի մտերիմ տեսուչը չկարողացավ ժողովրդին մեղքերից ողջ պահել, փրկել նրանց Աստծու հարվածներից և ժառանգեցնել նրանց պարգևական երկիրը, ապա տգետ ու արատավոր քահանաները ինչպե՞ս կարող են ժողովրդին փրկել մեղքերից, երբ իրենց անձերն անգամ չեն կարողանում զերծ պահել մեղքերից, ուր մնաց, թե Աստծու ժողովրդին առաջնորդեն և երաշխավոր լինեն՝ տանելու Աստծու արքայությունն։ Գրված է և պատվիրված է, թե՝ «Ո՛չ աջ կխոտորվես և ո՛չ ձախ» [տես Բ Օր. ԺԷ 11]:

Ուստիև պատվիրում եմ Եկեղեցու առաջնորդներին՝ զգուշանա՛լ տգետներին ձեռնադրելուց և ոչ ոքի դրամական կաշառքով չմոտեցնել եպիսկոպոսության, քահանայության, սարկավագության կամ այլ աստիճանի, ինչպես որ սուրբ Ավետարանում Փրկիչն է ասում Իր սուրբ աշակերտներին. «Զրի առաք, ձրի՛ էլ տվեք» [Մատթ. Ժ 8]:

ԻԸ. *Քառասնօրյա պահքի մասին և նրա բաղդատությունը զատկական քառասուն [օրերի] հետ*

Արդ, պահքի քառասուն օրերը կոչվում են մեկ օրվա [անվամբ]՝ ուրբաթ. այն Տիրոջ խաչելության և շարշարանքի [օրն է], այս աշխարհում շարշարվողների համար Տիրոջ շարշարանքներն իրենց համար օրինակ ունենալու, Տիրոջը շարշարակից եղողների և Տիրոջ պատվիրանները պահողների անձերի պահպանության առիթ, Տիրոջ խաչելությանը շարշարակից լինելու և Նրա հարությանը փառակից լինելու, մեղավորներին ապաշխարության կոչելու առիթ։

Արդ, կարգ է օրենքը ստանալուց հետո այս քառասնօրյայում շաբաթ և կիրակի օրերը պահել ուրբաթ և չորեքշաբթի օրերի պես. այն քառասնօրյայում կիրակին կոչվում է առաջին օր և հարության՝ աշխարհի ուրախության և արքայության ավետիսի օրերի սկիզբ, երբ արդարության պատվիրանները պահողները լի են ամենայն ուրախությամբ, օրենք է ուտել ուրբաթ և չորեքշաբթի օրերին, ինչպես շաբաթ և կիրակի օրերին։ Քանզի ինչպես որ Զատկից մինչև Տիրոջ համբարձում [ընկած օրերը] կիրակի են կոչվում, այդպես էլ [բուն] բարեկենդանից մինչև Զատիկ՝ ուրբաթ։

Արդ, ինքդ քեզ հավանության բեր և զուգորդիր քավության այս քառասունն ու ուրախության այն քառասունը, համեմատի՛ր քառասունը քառասունի հետ, ուրբաթն ու չորեքշաբթին շաբաթի ու կիրակիի հետ և կգտնես ընդհանուրը՝ ո՛չ սրա մեջ հագեցում և ուրախություն, ո՛չ

նրա մեջ պահք և տխրություն։ Այս քառասունը՝ տարվա մեղքերը քավելու առիթ, այն քառասունը՝ տարվա ուրախությունների առիթ։

Արդ, օրենք է բարեկենդանից մինչև Զատիկ հավասարապես պահել պահոց այս քառասունը, քանզի տարվա մեղքերի քավիչ ու թողիչ է կոչվում այն։ Եվ գինի, յուղ, ձու, ձուկ, պանիր, կարագ, կաղտի, բածին (թերևս մածուն), շճուկ, կաթ, կաթնասեր և ձկնամորե, այս ամենը ճաշակել օրենք չէ և վայել չէ, որ ճաշակի որևէ մեկը՝ մեծն ու փոքրը, արդարն ու մեղավորը։ Մեզ բավական են քառասուն օրերին թույլատրելի ուտելիքները՝ կանեփհատը, կտավատը, փոխինդը, հատիկները, սամթաջուրը։

Արդ, այս քառասուն օրերին Տերը Իր հետ փորձության լեռ տարավ փորձչին՝ սատանային, որ բոլոր հավատացյալների հաղթության օրինակը եղավ.մի՞թե Աստված պահքի կարիք ուներ։ Մի՞թե մարդկանց օրինակ լինելու համար չէր անում այդ։

Արդ, եթե չենք կարող, ինչպես Պողոսն է ասում, հանապազորդ մեռնել, այլ գոնե այս քառասուն օրով ջանանք հաղորդակից լինել Տիրոջ չարչարանքներին, որպեսզի այս քառասուն օրերով մեր անձերից հեռացնենք տարվա ընթացքում մեր գործած մեղքերը։ Չգիտե՞ս, որ Տիրոջ հարությանը փառակից կարող են լինել միայն նրանք, ովքեր հոժար մտքով չարչարակից են լինում Քրիստոսին, որովհետև ասում է. «Ոչ միայն պետք է հավատալ Քրիստոսին, այլ նաև Նրա անվան համար պետք է չարչարանքներ կրել» (Փիլիպ. Ա 29)։

Արդ, այս քառասունը Տիրոջ խաչելության ու չարչարանքերի [օրերն] են, իսկ այն քառասունը՝ Տիրոջ հարության, կենդանության քառասուն [օրերը]։ Այս քառասունը Տիրոջ չարչարանքների քացախն ու լեղին են,

իսկ այն քառասունը՝ մեղրի խորիսխը, խորոված ձուկը՝ մասը Տիրոջ հարության։ Այս քառասունը զինվորների՝ Տիրոջ գերեզմանը կնիքով պահպանելն է, իսկ այն քառասունը՝ հրեշտակների՝ մարդկանց՝ Մարիամին և նրա հետ եկողներին Տիրոջ հարության ավետիսը տալը։ Այս քառասունը միջնորդն է ապաշխարության, իսկ այն քառասունը՝ երաշխավորը թողության։ Այս քառասունը՝ հանցանքները քավող, այն քառասունը՝ մեղքերը թողնող։ Այս քառասունը լաց լինելու և արտասուքների, իսկ այն՝ ցնծության և ուրախության։ Այս քառասունը ցավով և տրտմությամբ սերմանելու, իսկ այն քառասունը՝ փառքով ու գովությամբ հավաքելու։

Այս քառասնօրյայով Մովսես մեծ մարգարեն ժողովրդին օրենքը տվեց, այն քառասնօրյայով քավեց Ահարոնի և ամբողջ ժողովրդի մեղքերը։ Այն քառասնօրյայով Եղիան գնաց Սինեական լեռը՝ Տիրոջից երկինք բարձրանալու հրաման ստանալու։ Այս պահքով երեք մանուկները փրկվեցին մահացու կրակի բարձրաբերձ բոցերից։ Այս պահքով նինվեացիները լուծեցին Տիրոջ հրամանով մահվան վճիռը. ընդունելի եղավ նրանց ապաշխարության պահքը և արագ ներվեցին նրանց մեղքերը։



ԻԹ. *Սուրբ Երրորդության և մեր Աստծու՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին*

Սուրբ և [զուգա]հավասար Երրորդության երեք Անձինք Մի Աստվածություն են, Մի էություն, Մի իսկություն, Մի անձնիշխան կամք. մի է թագավորությունը, մի է արքայությունը, մի է տերությունը, մի է իշխանությունը, մի է փառավորությունը, մի է բնությունը, մի է հավասարությունը, մի է սրբությունը, մի է կամքը, մի է խորհուրդը, մի է փառքը, մի է պատիվը. մի հույս, մի սեր, մի հավատ։ Մեծ է, հզոր, կարող, ամեն բանից վեր, անեղ, անանց, անսկիզբ, անվախճան, անվերջ, անհաս, անտես, անքնին, ոչ մի բանի կարիք չունի և ոչ մի բան չի ցանկանում։ Բոլորի Հայրն է, բոլորին Սիրողը, բոլորին Գթացողը , բոլորին Նախախնամողը, բոլորին Լսողը, ամենապարգև է, ամենահաս, ամենատես, ամեն բան գիտի, բոլորի Փրկիչն է, բոլորին Ապրեցնողը։ Որ միայն ակնարկելով՝ դարմանում է բոլոր արարածներին՝ երկնաւոր և երկրավոր, երևացող և աներևույթ, շեներում և անապատներում. երևացող և աներևույթ, երկնավոր և երկրավոր բոլոր արարածներից Նրան փառք հավիտյանս։

Միածին Խոսքը, Հոր կամքով երկիր գալով, սուրբ Կույսից մարմին առավ, շարշարվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ և նստեց Հոր աջ կողմում։ Դարձյալ պիտի գա՝ դատելու ողջերին ու մեռածներին։ Ով էությամբ անմայր և տեսչությամբ անհայր էր, եկավ փրկելու արարածներիս։ Անհնարին է, որ Աստված շարշարվեր, անհնարին է, որ Աստված մեռներ. է Աստված

եկավ, մարդ եղավ, մեռավ և փրկեց արարածներիս։ Այլ ոք Նրա նման Արարիչ, Փրկիչ և Ապրեցնող չեղավ, չկա և չի լինելու, այլ միայն Մեկը՝ Միածինը՝ Կույսից ծնված, մարդացած Աստված։ Մարդկանցից շատերը ճանաչեցին Աստծուն, տեսան Աստծուն, խոսեցին Աստծու հետ, բայց նրանք բնությամբ մարդիկ են անվանվում, այլ ոչ թե Աստված։ Ոմանք մարմնով երկինք ելան, սակայն այնտեղ էլ նրանք բնությամբ մարդիկ են կամ հրեշտակներ, այլ ոչ թե Աստված։ Նույն օրինակով էլ Աստծու Խոսքը երկիր եկավ, մարդ եղավ , մարդու պես մեռավ, բայց էությամբ Աստված է կոչվում, ոչ թե մարդ, տեսչությամբ՝ մարդացած Աստված, այլ ոչ թե Աստվածացած մարդ։ Մարդ երկնքում և երկրում՝ նույն Ինքը միացած, միավորված մարմնով և Աստվածությամբ, սուրբ Կույսից Հոր կամքով ծնված Խոսք և Միտք. սկզբում Հոր կամքով Նա ստեղծեց ամեն բան, իսկ վերջում երևաց մարդկանց՝ որպես Տեր և Տեսուչ երկնքում և երկրի վրա։ Նա, ով առաջ էր հավիտյաններից, վերջում իջավ երկիր՝ մարդկանց կյանքի և փրկության համար. [եղավ] միջնորդ Աստծու [և մարդկանց միջև] և աշխարհի [փրկության] երաշխավոր, Հորը՝ պատարագ և մարդկանց՝փրկություն, աշխարհի զատիկ, տիեզերքի տոն, մարդկանց հովիվ և պահապան թշնամիներից, կյանք տվող և հարության ավետավոր, կյանքի հաջողիչ և արքայության առիթ, աշխարհի խաղաղարար և խավարածների լուսատու, կյանք տվող և պարգևներ բաշխող, արդարների փառք, մեղավորների փրկություն և մեռածների հույս. Նրան փառք հավիտյանս. ամեն։

Լ. *Սիրո մասին*

«Աստված սեր է»,- *ասում է Որոտման որդին՝ Քրիստոսի սիրելի աշակերտ Հովհաննեսը, և՝* «Նա, ով սիրում է, բնակվում է Աստծու մեջ, Աստված էլ բնակվում է Նրա մեջ» (տես Ա Հովհ. Գ 24): *Եվ արդ, եղբայրնե՛ր, լսեցեք և հիշե՛ք սիրո մասին իմ խոսքերը։ Ամեն ոք, ով սիրում է Աստծուն, սիրում է նաև իր եղբորը, որովհետև Աստծու նկատմամբ սերը երևում է եղբոր նկատմամբ սիրով,որովհետև եթե [մարդ] չի սիրում եղբորը, ում տեսնում է, ինչպե՞ս կարող է սիրել Աստծուն, Ում չի տեսնում։ Սրանով ենք ճանաչում, թե սիրում ենք Աստծուն, երբ մեր եղբորը սիրում ենք հոգու և ոչ թե մարմնի սիրով։ Քանի որ ուրիշ է հոգու սերը, և ուրիշ է մարմնի սերը, որի մասին կխոսենք առաջ գնալով՝ իր տեղում։*

Բայց արդ, ամեն ոք, ով սիրում է, ճանաչվում է Աստծու կողմից, և ինքն էլ ճանաչում է Աստծուն, և ամեն ոք, ով չի սիրում իր եղբորը ցավակցաբար, օտար է Աստծուն և չի կարող ընդունել աստվածային շնորհները։ Ամեն ոք, ով սուրբ սրտով սիրում է իր եղբորը, դառնում է Աստծու բնակարան, և Աստված բնակվում է նրա մեջ։

Որովհետև Ինքը՝ Տերը, սիրեց մեզ և առաքեց Ճշմարտության Հոգուն՝ բնակվելու մեր մեջ, որպեսզի մեր իմանալի հոգիները սիրով կապակցի Աստծու անիմանալի Հոգուն. Նա կամենում է, որ մենք սիրենք միմյանց այնպես, ինչպես որ Ինքը սիրեց մեզ։

Տե՛ս, թե Աստծու մոտ որքան համարձակություն ունի սերը. այն մարդուն դարձնում է Աստծու նման,որովհետև Աստված Իր սիրով մարդկանց նման եղավ, ցույց տվեց,

որ մարդիկ էլ իրենց սիրով Աստծու նման պիտի լինեն։ Քանի որ. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհի փրկության համար» (տես Ա Հովհ. Դ 9): *Եթե մենք սիրենց միմյանց այնպես, ինչպես որ Աստված մեզ սիրեց, չարը չի կարող խափանել մեր սերը։ Ամեն ոք, ով սիրում է, հայտնի է մարդկանց առջև և համարձակ է Աստծու առջև, որովհետև մեղքերով մահվանից չի վախենում, այլ զինված է Աստծու սիրով և չի վախենում ոչ մի երկյուղական վտանգից։ Որտեղ սերն է, այնտեղ վախ չկա. ինչպես Հովհաննեսն է ասում.* «Սիրո մեջ երկյուղ չկա, և կատարյալ սերը հեռու է վանում երկյուղը» (Ա Հովհ. Դ 18): *Երկյուղը ենթակա է տանջանքների, իսկ սերը՝ համարձակության, երկյուղը հալածվում է սիրուց։ Այնտեղ, ուր սեր չկա, կա դատաստանի երկյուղը և այն մեծ Օրվա ահավոր ատյանի [ժամանակ] կորստյան [մատնվելու] սարսափը։ Սերը մարդուն աներկյուղ է դարձնում բոլոր տանջանքներից։ Սեր ասում եմ այն բանին, ինչ ամբողջովին հեռու է կասկածից, որովհետև կասկածն ու սերը միասին չեն բնակվում։*

Պետք է իմանալ, որ սերը ոչ միայն հավիտենական կյանքում է պտղաբերում է իր խաղաղության պտուղը, այլ նաև այս աշխարհում է հալածում ամենայն թշնամություն՝ նախանձն ու ատելությունը, ոխակալությունն ու չարակնությունը, չարախոսությունն ու հայհոյությունը, տրտունջքն ու բամբասանքը, հպարտությունն ու գոռոզությունը, մանավանդ բոլոր չարիքների մայր արծաթասիրությունն ու ագահությունը։

Արդ, նա, ով ունի սեր, հեռանում է այս բոլոր չարիքներից և հասնում է երկնային խաղաղության նավահանգիստ, հասնում է միայն բարուն։ Ի՞նչն է սիրուց առավել խաղաղ. ազատ լինել ամենայն խռովությունից և կատարել աստվածային կամքը։ Սերը երկնքի արքայության

բանալին է և հավիտենական կյանքի ճանապարհը։ Սերը մարդկանց Աստծու որդիներ և երկնային արքայության ժառանգորդներ է դարձնում։ Սերը անապական է դարձնում ապականացու բնությունը և մահկանացուներիս դեպի անմահություն է բարձրացնում։ Սերը երկրայիններիս երկնային և հողեղեններիս հրեղեն է դարձնում։

Եվ արդ, ո՞վ կարող է պատմել սիրո անչափ մեծության մասին, որովհետև անճառելի և անպատմելի է այն. ինչպես որ անքննելի է Աստվածության անեղ բնությունը, այդպես էլ սիրո բնությունն [է անքննելի]։ Եվ ինչպես որ Աստված է անբավ, բայց մերձ է բոլորիս և բնակվում է հեզերի, խոնարհների և բոլոր նրանց մեջ, ովքեր դողում են Նրա խոսքերից [տես Ես. ԿԶ 2], *այդպես էլ սերն է մերձ բոլոր նրանց, ովքեր կամենում են այն, և ինքը գալիս և բնակվում է իրեն փնտրողների մեջ։ Որովհետև սերը սիրում է իրեն սիրողներին և ատում է իրեն ատողներին։ Ովքեր փնտրում են նրան, աստվածապես մոտ է նրանց, քանզի Աստված սեր է և կամենում է, որ [մենք էլ] սուրբ սրտով և անկեղծավոր հավատով սիրենք [միմյանց]։*



ԼԱ. *Խրատի խոսք՝ ուղղված ճգնավորներին*

Գրված է և պատվիրված է. «Ո՛չ աջ խոտորվիր, ո՛չ ձախ» (Բ Օր. Ե 32). *հոգևոր ախտը անվանում է աջի, իսկ մարմնավոր ախտը՝ ձախի։ Շատերը, ովքեր իրենց օրերն անցկացրեցին անգործությամբ, շարժվում են այդ երկուսով. մեղանչում են և չգիտեն։ Աստծու և մարդկանց թշնամին այս ախտերով հաղթեց հողեղեն Ադամին և այս ախտերով հաղթվեց հոգեղեն Ադամի կողմից,այս ախերտով սպանեց երկրավոր Ադամին և այս ախտերով սպանվեց երկնավոր Ադամի կողմից, այս ախտերով խաբեց նախահայր Ադամին և այս ախտերով խաբվեց նոր ծնված Ադամի կողմից,այս ախտերով կուլ տվեց շնչավոր Ադամին և այս ախտերով [դուրս] թքվեց աստվածեղեն Ադամով. այս ախտերով Ադամին հանեց դրախտից և այս ախտերով էլ ինքը խեղդվեց ծովում, այս ախտերով դրախտում հաղթեց ուտող Ադամին և այս ախտերով անապատում հաղթվեց պահող Ադամից, այս ախտերով դրախտում խաբեց անգետ Ադամին, և հետո այս ախտերով փորձության լեռան վրա ինքը խաբվեց։*

Արդ, մարդկանց փորձիչը, մինչ կամենում էր փորձել Ստեղծողին՝ իբրև ստեղծվածի, փորձվեց ինքը՝ կորստյան որդին և խավարի ժառանգորդը։ Որովհետև չար հոգին հոգևոր ախտերով ընկավ երկնքից և մարմնավորին մարմնավոր ախտերով հանեց դրախտից, այդ պատճառով էլ բոլոր ախտերի և չար շնչերի հայր կոչվում է հպարտությունը, իսկ մարմնի բոլոր ախտերի հայր՝ որկրամոլությունը։

Արդ, այս ախտերից են ծնվում հոգևոր և մարմնավոր բոլոր ախտերը։ Այս ախտերով է [սատանան] գաղտնապես կռվում վանականների հետ, այս ախտերով նա գիշերը սերմանեց քնով, գիշերը նյութում է երազով և ցերեկը վայր է գցում է լեզվով։

Սրանք են, որ կոչվում են ձախի՝ որկրամոլություն, անառակություն, շվայտություն, հարբեցողություն, քնածություն, ստախոսություն, որովայնամոլություն։ Սրա մասին է առաքյալը ասում. «Ուտելիքը՝ որովայնի և որովայնը ուտելիքի համար է։ Բայց Աստված և՛ այս, "և՛ այն պիտի կործանի» (Ա Կորնթ. Զ 13)։

Պոռնկության մասին. ցանկություն, գիջություն, իգասիրություն, աչքով ցանկանալ, պագշոտություն, անամոթություն, լրբություն, անամոթ նայվածք, ծիծաղել, շվայտանալ, շնություն, պոռնկություն, իգանալ, արվագիտություն։ Այս մասին է առաքյալը ասում. «Մարդու գործած բոլոր մեղքերը մարմնից դուրս են, իսկ ով պոռնկանում է, իր մարմնի դեմ է մեղք գործում» (Ա Կորնթ. Զ 18)։

Ծուլության մասին. վատ, պարապ, անհարիր, ծույլ, անգործ, անպիտան, դատարկակյաց, ձրիակեր, անգութ, անամոթ, քնել սիրող, երազներ տեսնող, երազագետ, սուտ մարգարե, պայքարի մեջ անկարող, անմիտ, տգետ։ Սրանց համար առաքյալը պատվիրեց, թե՝ «Ովքեր չեն աշխատում, թող հաց էլ չուտեն» (Բ Թեսաղ. Գ10)։

Նենգության մասին՝ խորամանկ, խարդախ, չար, դաժան, դաժանամիտ, թունավոր, օձաբերան, ոխ պահող, ամենակեղծ, բյուրակեղծ, բյուրաբիծ, ամենաչար, խոժոռամիտ, խոժոռադեմ, տրտմող, տրտմությունից ուռչող, կախարդ, խառնակիչ, գոռոզ, կռվարար, խայթող, չարախոս, բանսարկու, հրապուրող, բաժանող, ոխապահ, քեն հանող, անհաշտ, ատող. սրանց մասին է ասում, թե

ախտեր են և կոչվում են ձախի, և սրանց պատճառով դատապարտվում ենք։

Իսկ աջինը սրանք են՝ ամբարտավանություն, գոռոզություն, սնափառություն, զուր նեղություն, արհամարհանք, չարակամություն, խստասրտություն, խստամտություն, խստապարանոց, համառ, անհավան, անհնազանդ, խստաբարո, խստախոս, չարամիտ, չարասիրտ, բարկացող, սրտմտող, ցասումնալի, զուր բարկացող, անհամբեր, անժուժկալ, բարկացկոտ, հպարտ, հարձակվող, խփող, կռվող, արյուններես, տրտմող, մինչև փղձկալը և բարկությունը թափելը միտքը հստակեցնել չկարողացող։ Եվ դարձյալ՝ եթե մեկն իրեն չաղաչի, չի կարող ուտել կամ աղոթել, այլ ցասումից հաղթված՝ ընկնում է անհաշտ։ Այս պատճառով է մարգարեն բողոքում. «Եթե բարկանաք, մի՛ մեղանչեք» (Սաղմ. Դ 5), *իսկ առաքյալն ասում է.* «Թող արեգակը ձեր բարկության վրա մայր չմտնի, և սատանային տեղ մի՛ տվեք» (Եփես. Դ 26-27)։ *Դարձյալ ասում* է. «Մարդու բարկությունը Աստծու արդարությունը չի գործում» (Հակ. Ա 20)։

Հպարտության մասին. հպարտ, ինքնիշխան, անզգամ, անսանձ, անհավան, անհնազանդ, ստահակ, անհաստատ, իրասածի, համառ, վիճող, հակառակվող, ընդդիմացող, վատախոս, կռվարար, թշնամացող, խռովող, խռովարար, խանգարիչ, չարամիտ, չարաբարո, չարակամ, չարալուր, չարատես, չարախոս, սուտ, ստապատում, կամակոր, կամապաշտ, իր կամքը՝ իր խելքի փչածը կատարող, անձնատյաց, հոգու կորստյան պատճառ։ Քանզի գրված է. «Ով սիրում է մեղքը, ատում է իր անձը» (Սաղմ. ԺԱ 6)։ *Եվ դարձյալ՝ եթե հանապազ քո աչքերի առջև Աստծուն տեսնես, չես մեղանչի և այդ ամենը չես գործի։ Փառասիրություն, անձնակամություն, անձնասիրություն, անձնահաճություն, պարապություն. այս*

բոլոր չարիքները մտնելով՝ բնակվում են մարդու մեջ և հեռացնում են նրան Աստծուց։ Ուստիև աղաչում եմ՝ հանուն Աստծու բոլորդ հեռո՛ւ պահեք ձեզ այս չար ախտերից, որովհետև Աստված բարկանում է, երբ մարդ սրանք կրում է իր մեջ։

Վարդապետների մասին. չեք գտնի խոնարհ վարդապետ և հնազանդ աշակերտ. ուսյալը հպարտանում է, տգետը՝ խստանում։ Չկա օրենքով ապրող մարդ, չկա արդարությամբ ապրող մարդ։ Գիտունը դառնում է սնափառ, տգետը՝ փառասեր, գիտունը չի խոնարհվում, իսկ տգետը չի հնազանդվում, ծերը հրամայում է սաստելով, փոքրը պատասխանում է սաստկությամբ, ծերը փնտրում է պատիվ, փոքրը՝ հանգիստ։ Չկա մեկը, որ իմանա, չկա մեկը, որ ուսանի և կատարի։ Չկա հոգեսեր և չկա անապատասեր. հրաժարվել են աշխարհից, բայց ստացվածքներից՝ ոչ, հրաժարվել են ծնողներից, բայց ծանոթներից՝ ոչ, հրաժարվել են հոգսերից, բայց չեն հրաժարվել խորհուրդներից, հրաժարվել են հոգիներից, բայց չեն հրաժարվել մեղքերից, քաշվել են լեռները, բայց չեն քաշվել հրապարակներից, հրաժարվել են ուտելիքից, բայց չեն հրաժարվել խմողներից։ «Բազում են կանչվածները, բայց սակավ են ընտրյալները» (Մատթ. ԻԲ 14)։

Արդ, ինչպես որ Եկեղեցին կոչվեց քահանայի [հարսը], և նրա համար օրենք չէ այլ կին ունենալ, բացի մեկից, քանզի եթե աշխարհականին չի հրամայվում երկու կին ունենալ, այլ՝մեկը, նրան հարել, նրան սիրել, նրա հետ ապրել, քանզի Տիրոջ հրամանն է այդ։ Եվ դարձեալ՝ հոգին ամուսին է կոչվում, նաև Եկեղեցուն է ամուսին կոչում, այդ նույն օրինակով էլ վանքն է վանականի [հարսը] կոչվում, որովհետև վանքերը ծնվել են Եկեղեցուց։ Ասում է. «Կնոջ գլուխը ամուսինն է» (Եփես. Ե 23), *ամուսինը կնոջ և՛ փառքն է, և՛ օրենքը։ Արդ, քանի որ վաներեցը*

վանքի գլուխը, փառքը և օրենքն է, ուրեմն պետք է մնա իր տեղում և տեսնի իր ժողովրդին, որովհետև եթե դու, առաջնորդ լինելով, քո տեղում չես, ինչպե՞ս կարող ես ուրիշներին ասել, թե՝ «Նստի՛ր քո տեղում, վախեցի՛ր Տիրոջից և հնազանդվի՛ր Աստծու վարդապետներին»։ Արդ, նրանք, ովքեր իրենց անձի պտուղը չեն կարողանում հավաստի կերպով պահանջել, ազատ համարձակ արածում են, նզովքներով հալումաշ են անում այլոց անձերը, իրենք սատանայի երիվարով պտտվում են տերերի ու տիկինների շուրջը, և գարշում ու խորշում են կրոնավորներից՝ իբրև անարգներից։

«Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել» (Մատթ. Զ 24)։

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ – Զ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՃԱՌԵՐ

Հրատարակչության տնօրեն՝	Տ. Արարատ քահանա Պողոսյան
Հրատարակչական բաժնի գլխավոր խմբագիր՝	Սարգիս Մելքոնյան
Հրատարակչական խորհրդի անդամներ՝	Տ. Մկրտիչ եպս. Պռոշյան, Տ. Ռուբեն վրդ. Զարգարյան, Տ. Ասողիկ աբդ. Կարապետյան, Տ. Արարատ քհն. Պողոսյան, Տ. Գաբրիել քհն. Վարդանյան, Գևորգ Տեր-Վարդանյան, Կարեն Մաթևոսյան
Սրբագրիչ՝	Հասմիկ Սրապիոնյան
Կազմի ձևավորումը՝	Գոռ Գրիգորյանի
Էջադրումը՝	Տ. Ղևոնդ ավ. քհն. Մայիլյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2021

Չափսը՝ 60x84 1/16, թուղթը՝ 80 գ.,
ծավալը՝ 288 էջ (18.0 տպ./մ.):